

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՇԽԵՆ ՄՆԱՑԱԿԱՆԻ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԶԱՓ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

(ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

Ա Տ Ե Ն Ա Խ Ո Ս ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Գիտական ղեկավար՝
տնտեսագիտության թեկնածու
պրոֆեսոր, Գ. Վ. Դավթյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
ԳԼՈՒԽ 1. ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՓ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ	12
1.1. Տարածքային զարգացման էությունը և քաղաքականությունը	12
1.2. Համայնքային զարգացման կառավարման բնորոշ գծերը և առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում	25
1.3. Համայնքային ծառայության կառավարման միջազգային փորձը	41
ԳԼՈՒԽ 2. ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏ- ԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՏԵՂԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ	53
2.1. Կոտայքի մարզի ընդհանուր բնութագիրը և ռեսուրսային ներուժը.....	53
2.2. ՀՀ Կոտայքի մարզի գյուղատնտեսության վիճակի տնտեսագիտական վերլուծությունը և զարգացման հիմնախնդիրները	62
2.3. Արտադրական ենթակառուցվածքների դերը ՀՀ Կոտայքի մարզի գյուղական համայնքների համաչափ զարգացման հիմնախնդիրների լուծման գործում	90
ԳԼՈՒԽ 3. ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՓ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ.....	106
3.1. ՀՀ Կոտայքի մարզի սոցիալական ոլորտի դերը գյուղական համայնքների համաչափ զարգացման խնդիրների լուծման գործում.....	106
3.2. Գյուղական համայնքների միավորումը, որպես դրանց համաչափ զարգացման հիմնախնդիրների լուծման ուղիներից մեկը.....	127
3.3. Գործարար ծրագրերի դերը համայնքների համաչափ զարգացման ապահովման գործում.....	141
3.4. Տարածքային կառավարումը և համայնքների փոխհարաբերությունների կատարելագործումը	152
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	163
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....	167
Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ.....	176

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հեղափոխական տարածքային արդիականությունը: Հայաստանի Հանրապետության տարածքային միավորների սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակների միջև ներկայումս ձևավորվել է զգալի անհավասարաչափություններ, որոնք իրենց բացասական ազդեցությունն են թողնում ընդհանուր տնտեսության զարգացման վրա և պատճառ են դառնում միգրացիայի ու ժողովրդագրական ցուցանիշների անցանկալի փոփոխություններին:¹ Մարզերի և համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակների միջև ձևավորված տարբերությունների մեղմացումը դասվում է երկրի տնտեսական քաղաքականության արդի ժամանակաշրջանի գերակա հիմնախնդիրներից մեկը, որը խիստ կարևորում է ՀՀ կառավարությունը և բազմաթիվ ծրագրեր է մշակում դրանց լուծման համար: Խնդիրը շարունակվում է մնալ մտահոգիչ, որն իր բացասական ազդեցությունն է թողնում երկրի տնտեսական աճի, աղքատության մակարդակի, արտագաղթի և մակրոտնտեսական մյուս ցուցանիշների վրա: «Տնտեսական տարածության անհավասարաչափությունն ու անհամաչափությունն էական ազդեցություն են ունենում պետականության, տնտեսության կառուցվածքի ու արդյունավետության, ենթակառուցվածքների բարեփոխումների ռազմավարության և մարտավարության, սոցիալ-տնտեսական քաղաքականության վրա»:²

20-րդ դարի կեսերից սկսած, այս խնդրին առնչվող հարցերի ուսումնասիրությանն են նվիրվել բազմաթիվ հետազոտություններ, սակայն որոշ հարցերի շուրջ մասնագետները ոչ միայն համակարծիք չեն, այլ արտահայտում են իրարամերժ տեսակետներ՝ հատկապես, երբ խոսքը վերաբերվում է համահարթեցման մոտեցումներին և այդ գործընթացին պետության միջամտության սահմաններին:

Տարածաշրջանային զարգացման անհամաչափությունները շուկայական տնտեսությանը բնորոշ գործընթացների արդյունք են, որտեղ շուկայական մեխանիզմները չեն կարող ապահովել երկրի տարածքային միավորների համաչափ զարգացումը: Հայտնի է, որ պլանային տնտեսության պայմաններում տարածաշրջանային քաղաքա-

¹ Տերտերյան Վ., Դարբինյան Ա., Սարգսյան Լ. Գյուղական համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակների ամփոփ գնահատման մեթոդաբանության շուրջ: Տնտեսության զարգացման և կառավարման հիմնախնդիրներ (գիտական աշխատանքների ժողովածու) գիրք 4. – Երևան.: ՕՐ-ԴԱՐ հրատ., 2012.- էջ 4

² Региональное развитие: Опыт России и Европейского Союза. Под ред. Гранберга. – М.: Экономика, 2000. – С. 41

կանության հիմնական նպատակը արտադրողական ուժերի ռացիոնալ տեղաբաշխումն էր, որը նաև ենթադրում էր աշխատանքային ռեսուրսների լրիվ զբաղվածության ապահովում հիմնականում բնակության վայրում: Շատ դեպքերում խնդրի լուծման ընթացքում որոշումներն ընդունվում էին ի օգուտ սոցիալական արդարության, այլ ոչ թե ներդրումների արդյունավետության: Չկարգավորվող շուկայական տնտեսության պայմաններում նման սկզբունք չէր կարող գործել և քանի որ ՀՀ տարածաշրջաններն էապես տարբերվում էին ներդրումային գրավչության առումով, պետության պասիվ քաղաքականության պայմաններում տարածաշրջանային զարգացման անհավասարաչափությունների ձևավորումն անխուսափելի էր:³

Դրա հետ միասին, անցումը պլանային տնտեսական համակարգից շուկայական հարաբերություններին, պահանջում էր մրցունակ ապրանքային արտադրանք թողարկելու նպատակով տնտեսության արմատական լուրջ կառուցվածքային փոփոխություններ, ինչը տեղի ունեցավ նաև ՀՀ-ում: Սկզբնական փուլում արագ տեմպերով զարգացան ծառայությունների և առևտրի ոլորտները:

Հայաստանի Հանրապետությունում տարածքային միավորների սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակների անհավասարաչափությունների վրա իր ազդեցությունը թողեց 1995 թվականին վարչատարածքային նոր ձևաչափի ձևավորումը, որի արդյունքում գյուղական համայնքների մի մասը ի զորու չէր «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով վերապահված լիազորությունների իրականացմանը, ինչն էլ ժամանակի ընթացքում իր ազդեցությունը թողեց բնակչության կյանքի որակի վրա և էլ ավելի խորացրեց համայնքների զարգացման անհավասարաչափության մակարդակների տարբերությունը:

Տարածքային միավորների համաչափ զարգացման համար անհրաժեշտ պայմանների ապահովումը հանդիսանում է պետության հիմնական ու կարևորագույն գործառույթներից մեկը: Երկրի քաղաքացիները, անկախ բնակության վայրից, պետք է հնարավորություն ունենան բարձրացնելու իրենց կենսամակարդակը և բավարարելու կյանքի պայմանները, իսկ վերջիններիս հնարավորությունը պետք է ապահովվի պե-

³ Դավթյան Գ., Հովհաննիսյան Ա. Տարածաշրջանային անհավասարությունների խնդիրը և դրա մեղմացման դրույթները: Տնտեսության զարգացման և կառավարման հիմնախնդիրներ, (գիտական աշխատանքների ժողովածու), գիրք 7. - Եր.: ՕՐ-ԴԱՐ հրատ., 2014, էջ 46-47

տության կողմից: Ոստի այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է մշակել և իրականացնել որոշակի տարածաշրջանային քաղաքականություն՝ ուղղված տարածքային միավորների միջև ձևավորված անհավասարաչափությունների մեղմացմանը:

Այլ հարց է, թե որքանո՞վ է արդարացված տարածաշրջանային զարգացման գործընթացին պետության մասնակցության բացակայությունը մինչև այդ անհավասարաչափությունների ոչ ընդունելի մակարդակին հասնելը: Այս առումով տարածաշրջանային քաղաքականության կարևոր նպատակներից է ոչ թե տարածքային միավորների սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակների արդեն ձևավորված անհավասարաչափությունների մեղմացումը, այլ դրանց համաչափ զարգացման ապահովումը, ինչը հնարավորություն կտա խուսափելու մի շարք բացասական երևույթներից: Մասնավորապես՝

- զարգացման ցածր մակարդակով տարածքային միավորների առկայությունը, հակասում է այդ երկրի քաղաքացիների հավասար հնարավորությունների ապահովման սոցիալական հիմանարար սկզբունքին, ինչն էլ նվազեցնում է տվյալ երկրի միջազգային վարկանիշը,
- անհավասարաչափ զարգացման մակարդակ ունեցող տարածաշրջաններով երկրներում տեղի է ունենում բնակչության միգրացիա՝ ցածր կենսամակարդակ ունեցող համայնքներից դեպի առավել բարձր եկամուտներով ապահովված համայնքեր,
- սեզոնային աշխատանքի մեկնողների թիվը զարգացման ցածր մակարդակ ունեցող համայնքներից աճի միտում է ցուցաբերում, որն էլ բացասական ազդեցություն է թողնում ինչպես տարածքային միավորների տնտեսական ցուցանիշների, այնպես էլ բարոյա հոգեբանական բնութագրերի վրա:

Այս տեսանկյունից, տարածքային միավորների զարգացման անհամաչափությունների դրսևորումների, պատճառների, հետևանքների փոփոխությունների և մյուս բնութագրերի ուսումնասիրությունը պետք է լինի կառավարության համապատասխան մարմինների գործառույթներից մեկը, իսկ կառավարությունը, որպես դրանց համակարգող պարտավոր է պայմաններ ապահովել տարածքային միավորների համաչափ զարգացման համար՝ մշակելով և իրականացնելով այդ նպատակին ուղղված հիմ-

նավոր տարածաշրջանային քաղաքականություն և դրա իրականացման համար համապատասխան ծրագրային ապահովում:

Հայաստանի Հանրապետության մարզերից յուրաքանչյուրն ունի իր բնորոշ գծերն ու առանձնահատկությունները՝ կապված բնակլիմայական և աշխարհագրական տեղաբաշխվածության հետ: Տասը մարզերից միայն Կոտայքի մարզն է, որ չունի պետական սահման, գտնվում է հանրապետության տարածքային կենտրոնում, և կարծես թե պետք է ունենա համաչափ զարգացած համայնքներ ու բնակավայրեր: Սակայն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այդ մարզին նույնպես բնորոշ է անհավասարաչափությունը, ինչը մի կողմից գալիս է նախկին վարչահրամայական համակարգի պարտադրված անհրաժեշտությունից (քաղաքային բնակչության աճի ավելի բարձր տեմպեր, նոր քաղաքների հիմնադրում՝ Չարենցավան, Աբովյան, Հրազդան քաղաքների ընդարձակում և այլն), իսկ մյուս կողմից՝ աշխարհագրական և ռելեֆային բնույթից բխող բնակչության բնակեցումից: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ էլ բնակավայրերի (համայնքների) զարգացման մակարդակների հիմնախնդիրների գիտական հետազոտության և վերլուծության արդյունքների հիման վրա մշակել և իրականացնել համայնքների համաչափ զարգացման այնպիսի քաղաքականություն, ինչը հնարավորություն կտա կրճատելու դրանց զարգացման մակարդակների տարբերությունները և հետագայում նպաստելու մարզի գյուղական համայնքների միջև առավել արդյունավետ համագործակցությանը:

Պետք է նշել, որ մինչ հանրապետության անկախացումը Կոտայքի մարզն ունեցել է դիվերսիֆիկացված զարգացած արդյունաբերություն, որում ընդգրկված էին նաև գյուղական աշխատավոր բնակչության մի մասը, մարզում համեմատաբար բարձր է եղել քաղաքային բնակչության տեսակարար կշիռը: Սակայն անկախացումից հետո արդյունաբերական ձեռնարկությունների գործունեության դադարեցման արդյունքում աշխատանքը կորցրած մարդկանց որոշակի մասը տեղափոխվեց գյուղական բնակավայրեր, մարզի արտադրական և սոցիալական ենթակառուցվածքների զգալի մասը դարձան ոչ պիտանի տնտեսավարման նոր պայմաններում:

ՀՀ Կոտայքի մարզի գյուղական համայնքերի անհամաչափ զարգացման վերաբերյալ ուսումնասիրություններն արդիական են նրանով, որ դրանց լուծումը կնպաստի բնակչության աղքատության կրճատմանը, ուրբանիզացիոն միտումների նվազեցմանը,

արտագաղթի դադարեցմանը, սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծմանը և այլն: Մարզի գյուղական համայնքների համաչափ զարգացման համար մակարդակների զգալի տարբերությունները պահանջում են այդ հիմնախնդիրների գիտական հետազոտություն և վերլուծության անհրաժեշտություն, դրանց արդյունքների հիման վրա կառավարման վերադաս մարմինների կողմից ռազմավարության մշակում և իրականացում:

Այստեղ առաջնայնությունը տրվում է գյուղատնտեսությանը, քանզի գյուղական համայնքների բնակչության բարեկեցության բարձրացման հիմնական գրավականը զարգացած ագրարային ոլորտն է: Պետք է նշել, որ կառավարման նախկին պլանային տնտեսական համակարգից ժառանգություն մնացած իներցիոն մտածողությունը շարունակում է իր ազդեցությունը թողնել հասարակական և սոցիալ-տնտեսական հարաբերությունների տրամաբանությունների վրա:

Տնտեսավարման արդի պայմաններում իրավիճակի բարելավման համար անհրաժեշտ է՝

- մարզի արտադրատնտեսական ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացման միջոցով նպաստել համայնքների համաչափ զարգացման գործընթացի բարելավմանը,

- ապահովել տարածաշրջանների և հանրապետության սոցիալ-տնտեսական ու քաղաքական կայունությունը,

- բնակչության նյութական և հոգևոր պահանջմունքների բավարարման միջոցով նպաստել նրանց բարոյա-հոգեբանական մտածողության մակարդակի բարձրացմանը,

գերակայություն տալ տարածաշրջանում ռազմավարական նշանակություն ունեցող ճյուղերի ու ոլորտների զարգացմանը և այլն:

Ինչպես ամբողջ հանրապետությունում, այնպես էլ ՀՀ Կոտայքի մարզում տարածքային համաչափ զարգացմանն ուղղված քաղաքականությունը կնպաստի վարչատարածքային սահմանների ներսում տնտեսական ու սոցիալական համաչափ զարգացմանը, կառավարման տարբեր մարմինների գործունեության համակարգմանը, «կառավարություն-մարզպետարան-համայնք» շղթայի ներդաշնակությանը, միջմարզա-

յին և ներմարզային համագործակցության կատարելագործմանը, ինչն իր հերթին պահանջում է.

- գյուղական համայնքների համաչափ զարգացման խնդիրների ուսումնասիրություն և վերլուծություն, պատճառահետևանքային կապերի բացահայտում, դրանց միջոցով ներկա վիճակի գնահատում,

- դրանց առանձնահատկություններից ու ռազմավարական հիմնախնդիրներից բխող տարածքային համաչափ զարգացման և անհավասարաչափության մեղմացումն ապահովող քաղաքականության մշակում:

Տարածքային համաչափ զարգացման ապահովման հիմնական խոչընդոտի պատճառն այն է, որ դեռևս ամբողջությամբ ուսումնասիրված և լիարժեք գնահատված չէ այդ հիմնախնդիրները: Ուստի, անհրաժեշտ է համակողմանի վերլուծել իրավիճակը, գնահատել հիմնախնդրի լուծման ուժեղ և թույլ կողմերը, առավելություններն ու թերությունները, նախանշել զարգացման հետագա ուղղությունները, դրա իրագործման փուլերը, որն էլ պայմանավորում է հետագուտվող թեմայի արդիականությունը և հրատապությունը:

Հեղազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակն է Հայաստանի Հանրապետությունում ձևավորված վարչատարածքային միավորների անհամաչափ զարգացման իրական վիճակի վերլուծության հիման վրա բացահայտել Կոտայքի մարզի գյուղական համայնքներում տեղ գտած անհամաչափությունները և առկա հիմնախնդիրները, միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա տալ այնպիսի առաջարկություններ, որոնք կնպաստեն Կոտայքի մարզում գյուղական համայնքների համաչափ զարգացմանը: Ներկայումս գյուղական համայնքների համաչափ զարգացման համար առկա են լուծում պահանջող մի շարք խնդիրներ, որոնցից մասնավորապես հետևյալն են՝

- բացահայտել ՀՀ-ում տարածքային զարգացման կառավարման էությունը և դրա իրականացման մեխանիզմները,

- ուսումնասիրել համայնքային ծառայության միջազգային փորձը և այդ կըտրվածքով բացահայտել Հայաստանում համայնքային զարգացման կառավարման բնորոշ գծերն ու առանձնահատկությունները,

- ուսումնասիրել ՀՀ Կոտայքի մարզի աշխարհագրական և բնական, տնտեսական առանձնահատկությունները, գնահատել ռեսուրսային ներուժը գյուղական համայնքների զարգացման գործում,

- ներկայացնել մարզի ագրոպարենային համակարգի զարգացման դինամիկան, ներկա վիճակը, զարգացման միտումները, նախանշել գյուղատնտեսության մասնագիտացման նախընտրելի ուղղությունները,

- գնահատել մարզի արտադրական ենթակառուցվածքների վիճակը և ներուժը, դերն ու նշանակությունը գյուղական համայնքների համաչափ զարգացման հիմնախնդիրների լուծման հարցում,

- վերլուծել Կոտայքի մարզի սոցիալական ոլորտի կառուցվածքը, արդի վիճակը և մշակել անհրաժեշտ հեռանկարային ռազմավարություններ,

- հետազոտել գյուղական համայնքների զարգացման անհամաչափությունների մեղմացման գործում դրանց խոշորացման կամ միավորման հնարավորությունները,

- բացահայտել գործարար ծրագրերի նշանակությունը գյուղական համայնքների սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծման և անհամաչափությունների մեղմացման հարցում,

- վերլուծել համայնքների համաչափ զարգացման խնդիրների լուծման համատեքստում տարածքային կառավարման ազդեցությունը,

- իրականացված հետազոտությունների արդյունքների վերլուծության հիման վրա, բացահայտված հիմնախնդիրների լուծման նպատակով, ներկայացնել գիտականորեն հիմնավորված մոտեցումներ գյուղական համայնքների համաչափ զարգացման ապահովման ուղղությամբ:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը մարզի գյուղական համայնքների կառավարման համակարգն է, իսկ առարկան՝ ՀՀ Կոտայքի մարզի գյուղական համայնքների համաչափ զարգացման ապահովման ուղղված միջոցառումներն են:

Հետազոտության տեսական, տեղեկատվական և տեսամեթոդական հիմքերը: Հետազոտության համար տեսական և տեսամեթոդական հիմք են հանդիսացել տնտեսագիտության տեսության դասական աշխատությունները, տարածքային կառավարման վերաբերյալ արտասահմանյան և հայրենական տնտեսագետների գիտական

հրապարակումները, տարածաշրջանների տնտեսական ռեսուրսների և զարգացման մակարդակների գնահատման մասին հրապարակված մասնագիտական գրականությունը, կառավարման հիմնախնդիրներին նվիրված հրապարակումները, ՀՀ Սահմանադրությունը, տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման ոլորտները կարգավորող ՀՀ օրենքները, ՀՀ Նախագահի հրամանագրերը, ՀՀ կառավարության և ՀՀ Կոտայքի մարզպետի որոշումներն ու ծրագրերը, որոնք անմիջականորեն վերաբերում են համայնքների համաչափ զարգացման հիմնախնդիրներին: Հետազոտության համար տեղեկատվական հիմք են ծառայել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նյութերը, ՀՀ գյուղատնտեսության, ՀՀ ֆինանսների, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունների վերլուծություններն ու ծրագրերը, միջազգային մի շարք կազմակերպությունների հրապարակած ՀՀ տնտեսության վերաբերյալ վիճակագրական ու վերլուծական նյութերը, սոցիոլոգիական հարցումների տվյալները, ՀՀ Կոտայքի մարզի 2015-2018 թթ. սոցիալ տնտեսական զարգացման ծրագիրը, մարզպետի տարեկան հաշվետվությունները:

Հետազոտության ընթացքում կիրառվել են համակարգային վերլուծության վիճակագրական, փորձագիտական հարցման և նորմատիվային մեթոդներ:

Հետազոտության հիմնական արդյունքները և գիտական նորույթը: Տարածքային զարգացման կառավարման հիմնախնդիրների համատեքստում կանխորոշվել են ՀՀ Կոտայքի մարզի գյուղական համայնքների համաչափ զարգացման հիմնախնդիրները, որի լուծման ուղիները հնարավորություն կտան բարձրացնելու տարածքային կառավարման արդյունավետությունը և նպաստելու գյուղական համայնքների համաչափ զարգացմանը, որով էլ պայմանավորվում է ատենախոսության գիտական նորույթը՝ մասնավորապես.

- բացահայտվել են ՀՀ Կոտայքի մարզի գյուղական համայնքների համաչափ զարգացմանը նպաստող գործոնների առանձնահատկությունները և դրանց համահունչ առաջարկվել են համայնքների խոշորացման ու միավորման նոր մոտեցումներ,

- վերլուծվել և դրանց արդյունքներով պայմանավորված մշակվել են գյուղական համայնքներում գյուղատնտեսության ոլորտում մարդկանց զբաղվածության և գործազրկության հաշվարկման նոր գործակիցներ՝ կիրառելով հողի կադաստրային արժեքի 100 բալանոց համակարգը,

- մշակվել է գյուղատնտեսության ոլորտում աշխատողների կենսաթոշակային ստաժի և կենսաթոշակի մեծության հաշվարկման նոր մոտեցում՝ հիմնավորելով դրա տնտեսական արդյունավետությունը:

Ատենախոսության արդյունքների կիրառումը և գործնական նշանակությունը: Հետազոտության կիրառական նշանակությունը պայմանավորված է գյուղական համայնքների համաչափ զարգացման և սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծման անհրաժեշտությամբ, ինչը կարող է նպաստել ՀՀ Կոտայքի մարզի տնտեսական ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը: Ատենախոսության արդյունքները կարող են օգտագործվել տարածքային զարգացման քաղաքականություն մշակողների և իրագործողների կողմից (ՀՀ Կոտայքի մարզպետարան, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, տեղական ինքնակառավարման մարմիններ, տվյալ հիմնախնդրով զբաղվող փորձագետներ և այլն):

Հեղափոխության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Աշխատության հիմնական դրույթները, կատարված հետազոտությունների արդյունքներն ու առաջարկությունները քննարկվել են Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Ագրոպարենային համակարգի էկոնոմիկայի, Ագրոբիզնեսի կազմակերպման, Ագրոբիզնեսի կառավարման, Ագրարային քաղաքականության և խորհրդատվության ամբիոնների համատեղ նիստում: Ատենախոսության հիմնական արդյունքները հրապարակվել են հեղինակի 7 գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, որը շարադրված է 175 էջի վրա, պարունակում է 19 աղյուսակ, 3 գծապատկեր, 120 անուն գրականության ցանկ, 3 համացանցային կայք և 2 հավելված:

ԳԼՈՒԽ 1. ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԶԱՓ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

1.1. Տարածքային զարգացման էությունը և քաղաքականությունը

Յուրաքանչյուր երկրի համար սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական նախադրյալներից մեկը մակրոտնտեսական հավասարակշռության ապահովումն է ազգային տնտեսության ճյուղերի, ոլորտների և տարածաշրջանների միջև, որտեղ վերջինս իր յուրահատուկ առանձնահատկությամբ էական դեր է խաղում տվյալ պետության վարած տնտեսական քաղաքականության հարցում, քանզի տարածաշրջանների, դրանցում ընդգրկված համայնքների ու բնակավայրերի համաչափ զարգացումը նպաստում է տնտեսական ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործմանը, ընդհանուր տնտեսության զարգացմանը, սոցիալական անարդարությունների մեղմացմանը, բնակչության միգրացիոն շարժի նվազեցմանը և աղքատության կրճատմանը: Տարածքային զարգացման հիմնախնդիրներն ամենուրեք գտնվում են պետական կառավարման մարմինների և տնտեսագետների ուշադրության կենտրոնում, որոնք աշխատում են գիտական կառավարման մեխանիզմների միջոցով լուծում տալ այդ խնդիրներին:

Տարածքային զարգացման անհամաչափությունները բնորոշ են գրեթե բոլոր երկրներին, որոնցից յուրաքանչյուրը ձգտում է հնարավորին չափով մեղմացնել առկա անհամաչափությունները, ինչի համար էլ մշակվում է տարածաշրջանների համահարթեցման քաղաքականություն, որի հիման վրա էլ իրականացվում է կառավարում, ինչպես պետական ու մարզային կառավարման, այնպես էլ տեղական ինքնակառավարման մակարդակներով: Առանց գիտականորեն հիմնավորված կառավարման գործընթացի հնարավոր չէ կյանքի կոչել ոչ մի սոցիալ-տնտեսական ծրագիր, որքան էլ այն լինի անհրաժեշտ տվյալ երկրի համար:

Կառավարումը աշխատանքի մասնագիտական բաժանման ու կոոպերացման հիման վրա տնտեսական գործունեությունն համակարգող մեխանիզմ է, ինչի անհրաժեշտությունը նպատակադրված արդյունքին հասնելու համար աշխատողների գործունեությունը կարգավորելն ու ուղղորդելն է: 20-րդ դարի անգլիացի խոշորագույն

տնտեսագետ, մակրոտնտեսագիտության հիմնադիր Ջոն Քեյնսը, կառավարումը բնորոշել է, որպես «գործողության հատուկ տեսակ, որն անկազմակերպ ամբոխը վերափոխում է արդյունավետ նպատակասլաց և արտադրողական խմբի»:⁴ Կառավարումն ունի կոնկրետ իմաստ, քանի որ մարդիկ որոշումներ են ընդունում, դրանք գնահատում, պլանավորում գործընթացը և իրականացնում վերահսկողություն:

Կառավարման միջոցով է կատարվում հանրային, պետական, գերատեսչական, տարածքային, սոցիալ-տնտեսական ծրագրերի իրականացումը: Պետք է նշել, որ ինչպես վարչահրամայական, այնպես էլ շուկայական տնտեսական համակարգերում հիմնականը հանդիսանում է պետական կառավարումը, ինչը կոչված է ապահովելու երկրում մակրոտնտեսական հավասարակշռություն, տնտեսական աճ և զարգացում: Տնտեսության բոլոր մակարդակներում (ճյուղ, ոլորտ, տարածաշրջան և այլն) ծրագրերի մշակումն ու կանխատեսումը հանդիսանում են համապատասխան կառավարման սուբյեկտների քաղաքականության ապահովման կարևոր գործառույթները: Տնտեսության արդյունավետ կառավարման համար պետական և տեղական ինքնակառավարման մարմինները (ՏԻՄ) պետք է համակարգեն իրենց գործունեությունները, մշակեն գիտականորեն հիմնավորված ծրագրեր, ունենան հստակ նպատակներ: Սակայն նշված համակարգերում, կառավարման բուն էությունը իրարից զգալիորեն տարբերվում է: Այսպես, պլանային տնտեսական համակարգում կառավարման գործունեությունը կատարվում է վերևից տվող կարգադրությունների, հրամանների և դիրեկտիվների ձևով, որտեղ տիրապետում է աստիճանակարգային ենթակայությունը, իսկ շուկայական հարաբերությունների պայմաններում դրանք երկրորդ պլան են մղվում, քանի որ տնտեսվող սուբյեկտները, տնտեսական և իրավական առումով լիովին անկախ են պետական կառավարման մարմիններից: Նրանց գործունեությունը կարգավորվում է նորմատիվային ակտերով և պայմանագրային հարաբերություններով: Այստեղ կառավարման և տնտեսական գործունեության շարժառիթը շուկայական կառուցակարգի տարրեն են՝ առաջարկը, պահանջարկը, մրցակցությունը և ազատ շուկայական գնակազմավորումը, իսկ նպատակը ոչ թե բարիքների արտադրությունն է, այլ շահույթի ստացումը:

Պետք է նշել, որ ազատ մրցակցային շուկայի պայմաններում կառավարումը, որպես տնտեսական կատեգորիա հիմնականում բնորոշ էր միկրոտնտեսությանը, իսկ

⁴ Кейнс Дж. Общая теория занятости, процента и денег. - М., 1977. - С. 39

երբ անցում կատարվեց մենաշնորհային մրցակցությանը, ձևավորվեցին անդրազգային կորպորացիաներ և բանկեր, շուկան աստիճանաբար կորցրեց իր «անտեսանելի ձեռքի» ուժը, այդ ժամանակ կառավարումը դարձավ օբյեկտիվ անհրաժեշտություն: Հետևաբար, լրիվ օրինաչափ է, որ կառավարման տեսությունը, որպես գիտություն ծագել է 19-րդ դարի վերջում և ունեցել է բազմաթիվ էվոլյուցիոն փոփոխություններ:⁵ Ֆրեդերիկ Թեյլորը, որը հանդիսանում է կառավարման տնտեսության հիմնադիրը, առաջին անգամ տնտեսագիտությունում շրջանառության մեջ դրեց «գիտական կառավարում» հասկացությունը և բնորոշեց այն հետևյալ կերպ՝ «Կառավարումը իսկական գիտություն է, հիմնված ճիշտ սահմանված օրենքների, կանոնների ու սկզբունքների վրա»:⁶

Կառավարումը բարդ ու բազմաբնույթ համակարգ է՝ պայմանավորված նրա կատարած գործառույթներով, սկզբունքներով և տարրերով: Կառավարման ոլորտի նշանավոր մասնագետ ֆրանսիացի Անրի Ֆայոլը տալիս է կառավարման հիմնական գործառույթները, որում առանձնահատուկ տեղ է հատկացնում վարչական գործառույթին:⁷

Ըստ ֆայոլի վարչական գործառույթն այնքան մեծ տեղ է զբաղեցնում ձեռնարկության կառավարողի պարտականությունների մեջ, որ թվում է թե վերջինիս դերը բացարձակապես վարչական է:

Կառավարման գործառույթը ղեկավարող անձնակազմի գործունեության տեսակ է, ինչը բնութագրում է նպատակային ուղղվածություն, միատարրություն, արտադրական առաջադրված նպատակի նվաճմանն ուղղված բովանդակության գործառույթ:⁸ Կառավարման գործառույթներով է իրականացվում ցանկացած պետական, գերատեսչական, սոցիալ-տնտեսական, տարածքային զարգացման քաղաքականությունները: Ֆոն Հայեկը՝ շուկայական տնտեսության նշանավոր տեսաբան, Նոբելյան մրցանակի դափնեկիր, նշում է, որ նպատակների համաձայնեցումը անհրաժեշտ է միայն կենսագործունեության պարզեցման համար, իսկ անհամաձայնության թույլատրելիությունը կամ ուղղակի պարտադրված կոնֆորտիզմի բացակայությունը քաղաքականության հիմքն է:

⁵ Современный менеджмент. Теория и практика. Под ред. А.Г. Комарова, Г.Г. Муфтиева, Киев-Харьков. 2004. – С. 218

⁶ Тейлор Ф.У. Принципы научного менеджмента. - М.: Косталтинг, 1991. – С. 37

⁷ Федкин А. Карьерный пост можно рассчитать (служба кадров), №1, 2002. – С. 69

⁸ Управление агропромышленным комплексом. - М.: ИКЦ, "Марц", 2003. – С. 53

Պետք է նշել, որ պետությունն էական դերակատարություն ունի տնտեսավարող սուբյեկտների միջև հարաբերությունները կարգավորելու և համակարգելու հարցերում: Պետությունը կոչված է իրականացնելու ոչ միայն մակրոտնտեսական հավասարակշռության ապահովումը և տնտեսական աճը, այլ նաև ազգային տնտեսության բոլոր մեզոմակարդակներում (ճյուղ, ոլորտ, գերատեսչություն, տարածաշրջան) ծրագրերի մշակումներն ու կանխատեսումները՝ կառավարման համապատասխան սուբյեկտների (կառավարություն, նախարարություններ, մարզպետարաններ, տեղական իշխանություններ) միջոցով:

Շուկայական տնտեսությանը բնորոշ է սեփականության բազմաձևությունը, հատկապես մասնավոր սեփականությունը, որտեղ որպես տնտեսության կարգավորման կառուցակարգ հանդես է գալիս «անտեսանելի ձեռքը», որը շուկայական մեխանիզմի տարրերի միջոցով կարգավորում է տնտեսությունը՝ սահմանափակ տնտեսական ռեսուրսներն ուղղորդելով դեպի այն ոլորտները, որտեղ ապահովում է ավելի բարձր արդյունք: Նշանակում է այս համակարգի հիմքում կառավարման տնտեսական մեթոդն է՝ «Կառավարման օբյեկտի վրա տնտեսական լծակներով ներգործելու եղանակ», իսկ կառավարման վարչական մեթոդը բնորոշվում է որպես՝ «Կառավարման օբյեկտի վրա վարչական լծակներով կառավարման սուբյեկտի ներգործելու եղանակ»,⁹ որն առավել կերպով դրսևորվում է պլանային տնտեսության պայմաններում:

Կառավարման տնտեսական մեթոդները առավելապես առանչվում են ժամանակի փորձությամբ ձևավորված տնտեսական հարաբերությունների ու կիրառվող իրավա-տնտեսական օրենքների հետ, ինչը կոչված է կարգավորելու տնտեսավարող սուբյեկտների հարաբերություններն այդ համակարգում:

Շուկայական տնտեսության համակարգի նկարագրության մեջ Ա. Սմիթը հիմնավորել է, որ հենց ձեռնարկատիրոջ ձգտումը պաշտպանել իր անձնական շահերը տնտեսական զարգացման գլխավոր շարժիչ ուժն է, վերջին հաշվով բարելավելով ինչպես իր, այնպես էլ հասարակության վիճակը: Կարևորն այն է, որ տնտեսական գործունեության բոլոր սուբյեկտների համար պետք է երաշխավորվեն հիմնական

⁹ «Մենեջմենթ», երրորդ՝ լրացված, բարեփոխված հրատ.Յու.Մ.Սուվարյանի խմբ. - Եր.: Տնտեսագետ, 2009, էջ 522

տնտեսական ազատությունները, այն է՝ գործունեության ոլորտի ազատ ընտրությունը, ազատ մրցակցությունը և առևտրի ազատությունը:¹⁰

Ընդհանուր առմամբ, կառավարման վարչական մեթոդներն առավել կոշտ են, որոնց հիմքում ընկած են նշանակված կամ ընտրված իշխանությունները, որտեղ կիրառվում են վարչական հարկադրանքի մեխանիզմները՝ հրամաններ, կարգադրություններ, ցուցումներ և այլն: Դրանք պարտադիր են կատարողների համար, շեղումներն ընդունվում են որպես կարգապահության խախտում, որը ենթակա է համապատասխան գնահատականների: Կառավարման վարչարարական մեթոդների հիմքում ընկած է վարչարարության սկզբունքները՝ կանոնները, նորմերը, իրականացման ռեժիմները, որոնց միջոցով էլ իրականացվում են տարածքային զարգացման կառավարման գործունեությունը: Փաստորեն պետությունը (վերադաս կառավարման մարմինները) օրենսդրորեն սահմանում է «խաղի կանոնները», իսկ ՏԻՄ-երն իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում իրենց հերթին կարող են ընդունել նորմատիվային և ոչ նորմատիվային ակտեր և դրանցում կատարել փոփոխություններ և լրացումներ: Կառավարման այս համակարգը ամբողջությամբ կանոնակարգում է գործընթացը, սահմանում լիազորությունների աստիճաններ:

Կառավարման մեթոդների ենթահամակարգում կարևոր տեղ է զբաղեցնում սոցիալ-հոգեբանական մեթոդները, որոնց օգտագործման հիմքում սոցիոլոգիական հետազոտություններն են, որտեղ կիրառվում են բազմաբնույթ մոտեցումներ՝ հարցում, դիտարկում (մոնիտորինգ), փաստաթղթերի վերլուծություն:¹¹

Սոցիալ-հոգեբանական մեթոդների մեջ առանցքային տեղ է զբաղեցնում սոցիալական գործընթացների պլանավորումը, ինչը բերում է աշխատանքի արտադրողականության բարձրացմանը, աշխատողների սոցիալական պահանջների բավարարման շրջանակների ընդլայնմանը, աշխատանքի պայմանների բարելավմանը և այլն: Սոցիալ-հոգեբանական մեթոդների օգտագործման նպատակով անհրաժեշտ է մշակել սոցիալական զարգացման պլաններ, որը սովորաբար ընդգրկում է հետևյալ 3 բաժինները.^{12,13}

¹⁰ Քոչարյան Տ.Լ. Պետությունը և շուկան (նյութեր դասախոսությունների համար). - Եր.: ԵՃՊՇՀ, 2005, էջ 4

¹¹ Как провести социологическое исследование. Под ред. М. Горшкова, Ф. Шеренги. - М.: Политиздат, 1990. - С. 73, 97, 121

¹² Дикарева А.А., Мирская М.И. Социология труда. - М.: Высшая школа, 1989. - С. 278.

Սոցիալական զարգացման առաջին բաժինը վերաբերվում է կոլեկտիվի սոցիալական զարգացման կառուցվածքին, որտեղ ներկայացվում է տնտեսական ռեսուրսներ և կոլեկտիվի սոցիալական ներուժը, վերջինիս մեջ առանձնացնելով մասնագիտական կրթության մակարդակը, որակավորումը, մասնագիտությունը, ընդհանուր աշխատողների սեռահասակային կազմը:

Երկրորդ բաժնում տրվում է արտադրական միջավայրի բարելավման հարցերը, որն ուղղված է աշխատանքի սանիտարահիգիենիկ պայմանների կարգավորմանը, արտադրական վնասվածքների և մասնագիտական հինվանդությունների նվազեցմանը, ինչպես նաև առողջապահական սպասարկման կատարելագործմանը:

Սոցիալական զարգացման պլանի երրորդ բաժինը նվիրվում է աշխատողների բնակարանային, կենցաղային, հանգստի, ժամանցի պայմանների պլանավորման հարցերին, աշխատավարձի ու մյուս տեսակի եկամուտների ավելացմանը, բարոյական խթանների բարելավմանը:

Ներկայումս գրեթե անհնար է մշակել տարածքային համաչափ զարգացման քաղաքականություն առանց նշանակալի ներդրումային ծրագրերի նախագծման և իրականացման: Համաչափ զարգացման փոխկապվածություններն ընդգրկում են համապետական և տարածքային զարգացման քաղաքականությունների համակարգումը, իշխանությունների միջև պատասխանատվությունների տարանջատումը՝ ներդրումային ծրագրերի կատարման և կառավարման համար:

Տարածաշրջանային քաղաքականությունը համարվում է պետության և իշխանության այն մարմինների քաղաքականության բաղկացուցիչ մաս, որն ուղղված է երկրի ընտրած ռազմավարությանը համապատասխան տարածաշրջանների կարգավորմանը:¹⁴

Տարածքային զարգացման քաղաքականության հիմնական դրույթների սահմանման անհրաժեշտությունը զգացվում է ներկայումս, երբ Հայաստանի մարզերը սոցիալ-տնտեսական զարգացման մշտական համակարգման կարիք ունեն: Գործնականում տարածքային զարգացման քաղաքականությունը միշտ էլ գոյություն ունի, քանզի դեռևս պաշտոնապես հայտարարված չէ, կամ էլ բացակայում են պաշտոնապես ընդուն-

¹³ Организация управления общественным производством. Под ред. Г.Х. Попова, Г.А. Джавадова. - М.: Изд. Моск. университета, 1979. - С. 59

¹⁴ Экономическая энциклопедия. - М. 1999. - С. 578

ված մեթոդներ և մոդելներ՝ նրա իրականացման համար: Տվյալ դեպքում առանցքային նշանակություն ունի երկրում ձևավորված և գործող տնտեսական համակարգը:

Այստեղ որոշակի տեղ է զբաղեցնում պլանավորումը, որը շուկայական տնտեսավարման պայմաններում, որպես կառավարման մեխանիզմի հիմնական օղակ, կարող է կիրառվել միայն վերապահումներով՝ որքանով դա անհարժեշտ է տնտեսավարող սուբյեկտներին իրենց գործունեությունը կազմակերպելու և իրականացնելու պարագայում: Շուկայական հարաբերություններին խորթ է պլանները տնտեսավարող սուբյեկտներին վարչական առումով պարտադրելու համակարգը, քանի որ նրանք իրական և տնտեսական տեսանկյուններից լրիվ անկախ են և՛ պետական իշխանության, և՛ կառավարման մարմիններից:¹⁵

Շուկայի պայմաններում մակրոտնտեսական կարգավորման և պլանավորման անհրաժեշտությունն առանչվում է այն խնդիրների լուծման կանոնությամբ, որոնք այդ համակարգը չեն կարող հաղթահարել:

Այստեղ մենք ամբողջովին համաձայն ենք Ա. Դարբինյանի և Լ. Սարգսյանի հետ, որոնք գրում են՝ «Գլոբալացման և ինտեգրման այսօրվա պայմաններում, երբ որևէ տարածաշրջանում իրականացվող գործունեությունը անմիջականորեն կամ միջնորդավորված ձևով անդրադառնում է մյուսների գործունեության արդյունքների վրա, անհրաժեշտություն է առաջանում կառավարման մարմնի կողմից տարածաշրջանային քաղաքականության ձևով «խաղի կանոններ» սահմանել, որը թույլ կտա պահպանել «Պարետտո արդյունավետության» սկզբունքը՝ թույլ չտա բարելավել տարածաշրջաններից որևէ մեկի վիճակը ի հաշիվ մյուսների վատացման»:¹⁶

Կառավարման միջոցով պետությունն իրականացնում է իր սոցիալ-տնտեսական քաղաքականությունը, որում անշուշտ առաջնայնությունը տրվում է տնտեսական քաղաքականությանը: Վերջինս տնտեսական միջոցառումների ամբողջություն է՝ կոչված իրականացնելու բնակչության կենսագործունեությունը, բնորոշվում է որպես մի բարդ համալիր և ընդգրկում է երկրի տնտեսական, ռազմավարական, մարտավարական գործողությունները և միջոցառումները: Անցումային փուլի տնտեսական քաղաքակա-

¹⁵ Մակրոտնտեսական կարգավորում, Հ. Ղուլջյանի խմբ. - Եր.: Տնտեսագետ, 2002, էջ 107

¹⁶ Դարբինյան Ա., Սարգսյան Լ. ՀՀ տարածքային միավորների զարգացման մակարդակների անհավասարաչափությունների մեղմացման հայեցակարգային մոտեցումներ: Տնտեսության զարգացման և կառավարման հիմնախնդիրներ, գիրք 3. - Եր.: ՕՐ-ԴԱՐ, 2011, էջ 4

նությունը պետք է կառուցվի որոշակի սկզբունքների վրա, որոնցից կարելի է առանձնացնել՝

- պետության կողմից տնտեսական գործընթացի վրա ակտիվ միջամտություն,
- տնտեսական գործընթացի վերլուծություն,
- տնտեսության զարգացման ծրագրերի հստակ սահմանում,
- տնտեսական իրավիճակի գնահատման համակարգի առկայություն:

Ելնելով նշված սկզբունքներից, երկրի տարածքային քաղաքականությունը կազմում է տնտեսական քաղաքականության կառավարման համակարգի բաղադրամաս, որն էլ արտահայտում է երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի և դրա իրականացման ամբողջությունը, ինչի պատճառով էլ տարածքային քաղաքականությունը ու տարածքային տնտեսական քաղաքականությունը հանդիսանում են որպես միասնական համակարգ: Սակայն այստեղ սոցիալական ծախսումները խորը չեն թափանցում տարածքային զարգացման ոլորտ: Սոցիալական հիմնախնդիրների լուծումը ոչ այնքան տարածքային, որքան համապետական քաղաքականության խնդիր է:¹⁷

Տարածքային զարգացման հիմնախնդիրների տնտեսագիտական բացահայտմամբ հունգարացի նշանավոր տնտեսագետ Զուդիտ Կալմանը Հունգարիայի տարածքային զարգացման վերաբերյալ իր հետազոտություններում նշում է, որ «տարածքային զարգացման հարցի հետ կապված անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հատվածային ծրագրերին, քանի որ այդ ծրագրերի ու նրանցում ուղենշված ֆինանսավորման մեխանիզմների միջոցով իրագործվում է անուղղակի կամ ուղղակի տարածքային քաղաքականություն, չնայած շատ դեպքերում, սրանք չեն դիտվում որպես ծրագրավորված արդյունք, այլ՝ ավելի շուտ ածանցյալ հետևանքներ, որոնք նույնպես անհրաժեշտ է հաշվի առնել տարածքային զարգացման հիմնախնդիրները վերլուծելիս»:¹⁸ Այս մոտեցումը կիրառելի է, նաև ՀՀ-ի համար, որտեղ նույնպես գերիշխում է կենտրոնացված ներդրումների սովորույթը և տարածքային զարգացման ծրագրերը: Ընդորում, որպես կանոն տեղական իշխանություններն ունենում են շատ քիչ հնարավորություններ իրականացնելու կապիտալ ներդրումներ:

¹⁷ Գևորգյան Մ., Մանասյան Հ. ՀՀ տնտեսական քաղաքականությունը և էկոնոմիկայի վրա դրա ազդեցության վերլուծությունը. – Եր., 1999, էջ 11

¹⁸ Kalman, J., Possible Structural Funds Absorption Problems: The Political Economy View with Application to the Hungarian Regional Development. Budapest, 2001

Ներկայումս ՀՀ կառավարման համակարգը հնարավորություն չի տալիս տարածքային կառավարման մարմիններին կատարել մեծածավալ տարածքային զարգացման ծրագրեր: Աշխարհում, չնչին բացառություններով, ազգային ներդրումների մեծ մասը միշտ էլ ուղղորդվում է կենտրոնական կառավարության խողովակներով և կառավարվում է հենց նրանց կողմից:¹⁹

Այդուհանդերձ, Եվրոպական մի շարք երկրներում փորձեր են կատարվել ձևավորել այնպիսի իրավական դաշտ, որը կնպաստի տարածքային քաղաքականության կենտրոնական կառավարման ներդրումային ֆոնդերի զգալի մասի կենտրոնացմանը, մեծացնելով տարածքային կառավարման մարմինների դերակատարությունը: Այս մոտեցումը ժամանակին պաշտպանում էր Եվրոխորհուրդը և փորձ արվեց այն իրագործել 1990-ական թվականների վերջին, որոշ երկրների՝ Եվրամիության կառուցվածքային ֆոնդերին անդամակցելու նախապատրաստությունների շրջանակներում:²⁰

Նկատի ունենալով, որ ՀՀ-ն հանդիսանում է Եվրոխորհրդի անդամ և զարգացման հայեցակարգային ուղի են ընտրել ժողովրդավարության ամրապնդումը և քաղաքացիական հասարակության կայացումը, գտնում ենք, որ գնալով մեծանում է տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման ու հանրային կառավարման համակարգում դրա դերի բարձրացման անհրաժեշտությունը: Այդ տեսակետից վարչատարածքային բարեփոխումների հայեցակարգային ուղղություն պետք է դիտարկել հատկապես համայնքների մակարդակում իրականացվելիք փոփոխությունները, որը հնարավոր կլինի միայն տեղական ինքնակառավարման զարգացմանն ուղղված քաղաքական կամքի դրսևորման և այդ ուղղությամբ շոշափելի և առարկայական որոշումների ընդունման դեպքում:²¹

Վարչատարածքային բաժանման քաղաքական դրսևորումներից է տարածաշրջանների նկատմամբ պետության վերաբերմունքը: Այսպես, Հայաստանի Հանրապետությունում գոյություն ունի համայնքների դասակարգման մոտեցում, ըստ որի ՀՀ կառավարության 1998 թ.-ի նոյեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության բնակա-

¹⁹ Kiskert, I.M. Klijn, E.H. Koppenjan I. F. M. (Eds) (1997) Managing Complex Networks: Strategies for the Public Sector, pp. 25

²⁰ Sykoral L. (2002) "Prague" in I. Berry and S. Mc Creal (eds) European Cities, Planning Systems and Property Markets, London, pp. 61

²¹ Ղազարյան Է. Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման կատարելագործման հայեցակարգային ուղղությունը. - Եր.: Հայագիտակ, 2004, էջ 49

վայրերն ըստ բարձրունքային նիշերի դասակարգելու մասին» թիվ 756 որոշումով, առանձին համայնքներ ստացել են առանձնահատուկ կարգավիճակ:

Լեռնային են համարվում այն բնակավայրերը, որոնք գտնվում են ծովի մակերևույթից 1700-2000 մետր բարձրության վրա, իսկ բարձր լեռնային են՝ 2000 մետրից ավել բարձրության վրա: Լեռնային բնակավայրի կարգավիճակ ունեն հանրապետության 157, իսկ բարձր լեռնային՝ 114 համայնքները, այդ թվում ՀՀ Կոտայքի մարզում համապատասխանաբար 15 և 4 բնակավայր:²²

Համայնքի հատուկ կարգավիճակը ենթադրում է պետության կողմից առանձնահատուկ ուշադրություն և աջակցություն տեղական նշանակության խնդիրների լուծմանը: Տարածքային զարգացման կառավարման քաղաքական դրսևորմանն են վերաբերվում այն համայնքները, որոնք առանձնանում են իրենց հիմնախնդիրների ընդհանրությամբ և ոչ սոցիալ-տնտեսական նշանակությամբ: Այդ չափանիշներով ՀՀ-ում առանձնանում են համայնքների 50 տոկոսից ավելին:

Նման իրավիճակում տարածքային զարգացման կառավարման իրականացման համար առաջանում են երկու խումբ հարցեր.

1. Անհարժեշտ է արդյո՞ք ու տնտեսապես իրագործելի տարածքային զարգացման կառավարումը և քաղաքականության իրականացումը,
2. Ռեսուրսների սահմանափակության պարագայում անհրաժեշտ է արդյո՞ք ներդրումների կենտրոնացումը զարգացած տարածաշրջաններում, որը կբերի ավելի մեծ արդյունքներ ամբողջ երկրի համար:

Սահմանափակ ռեսուրսների շրջանակներում տարածքային զարգացման ծրագրերը կարող են լինել տնտեսապես արդյունավետ, ինչը հնարավոր չէ անտեսել, քանի որ կան տարածքային զարգացման որոշակի չափանիշներ, որոնք չեն հանգեցնում տնտեսական կորուստների: Հնարավոր է նաև թույլ զարգացած տարածաշրջաններին աջակցման ծավալումը վնասի ամբողջ երկրի տնտեսական պոտենցիալին:

Տարածքային զարգացումը կարող է կազմված լինել որոշակի բաղադրիչներից՝ ընդգրկելով կենտրոնական կառավարության, տարածաշրջանային զարգացման, տարածքային մրցակցության և տեղական ինովացիոն քաղաքականությունը: Արդի տարածքային զարգացման տեսությունները պնդում են, որ տնտեսական գործունեության

²²Տեղական ինքնակառավարման հիմունքներ, Է. Օրդյանի խմբ. -Եր.: Պետական ծառայություն, 2002, էջ 87

տարածքային կենտրոնացումը անխուսափելի է, զարգացման խզումները հարուստ և աղքատ տարածաշրջանների միջև ակնկալում են հետագա աճի միտումներ: 20-րդ դարի կեսերին տնտեսագիտության մեջ ձևավորվեց «Զարգացման բևեռների» տեսական մոդելը, ըստ որի «տնտեսական տարածքը, որպես ուժերի վերացական ոլորտ, միտված է տնտեսական ուժերի վեկտորին, ինչը պատճառ է հանդիսանում զարգացման բևեռների ձևավորմանը՝ նպաստելով նրան, որ ներդրումները նույնպես կենտրոնացվեն ավելի հարուստ տարածքներում»:²³ Դա բացատրվում է նրանով, որ թերզարգացած տարածաշրջաններում ենթակառուցվածքների ստեղծումը և զարգացումը ավելի թանկ է ստացվում, այդ պատճառով էլ առավել արդյունավետ կլինի աջակցել «Զարգացման բևեռներին» ակնկալելով, որ դրանք տնտեսապես կընդլայնվեն, կզարգանան, դրական ազդեցություն թողելով ամբողջ երկրի և մնացած տարածաշրջանների վրա:

Դրան հակառակ, Արմստրոնգը և Թեյլորը գտնում են, որ տարածաշրջանային զարգացման քաղաքականությունը և թերզարգացված տարածաշրջանների համագործակցությունը կարող է շահավետ լինել տարբեր պատճառներով՝ սոցիալական լարվածության թուլացում, բնակչության կենսամակարդակների համահարթեցում, ագլոմերացիայի տեմպերի նվազում, արդյունաբերական և քաղաքային կուտակումների կրճատում և այլն: Անվիճելի է, որ արդյունաբերությունը զարգացած տարածաշրջաններում շահում են ագլոմերացիոն էֆեկտի շնորհիվ՝ բիզնես ծառայությունների կենտրոնացման շուրջ առաջացած ենթակառուցվածքների կենտրոնացումից, տեղեկատվության փոխանակման, նորություններին հարմարվելու, հատուկ հմտություն ունեցող անձնակազմ հավաքելու հնարավորությունից և բազմաթիվ շահավետ հնարավորություններից:²⁴

Տնտեսական և աշխարհագրական բևեռացումը սոցիալական բնույթի խնդիր է դառնում երկրի համար, թեև կենտրոնների զարգացումը շահեկան է նաև ծայրամասերի համար: Եկամուտների ոչ հավասար բաշխումը, ռեսուրսների թույլ շարժունակությունը, որոշ դեպքում կարող են հնարավորություն չտալ, որ ծայրամասերն օգուտ ստանան զարգացման արդյունքներից: Դրա պատճառով անհրաժեշտություն է առաջանում տարածքային քաղաքականության, սակայն ծայրամասերի աջակցման ու

²³ Lasuen I. R. On Growth, in Hansen N.M. (1972) Growth Center in Regional Economic Development, pp. 63

²⁴ Armstrong H., Taylor I., Regional Economics and Policy, 2000, pp. 89

կենտրոնի հզորացման անհամատեղելիությունը կարող են բերել «թանկ հաճույքի», որից կարող են օգտվել ֆինանսական ռեսուրսներով հարուստ տարածաշրջանները:

Տարածքային քաղաքականությունը, որպես սոցիալական հարցերի լուծմանը միտված կատեգորիա, արդարացված չէ, սոցիալական բնույթի ծախսերը չեն թափանցում տարածքային զարգացման ոլորտ: Հետևաբար սոցիալական հիմնախնդիրների լուծումը համապետական քաղաքականության խնդիր է, այլ ոչ թե տարածքային:

Տարածքային քաղաքականության ընտրության հարցում երկրները կարող են բաժանվել երեք հնարավոր խմբերի՝

ա) երկրներ, որոնք տարածքային քաղաքականության ընտրության հարցում որպես չափանիշ ընտրում են շուկայական հարաբերությունները,

բ) երկրներ, որոնք որպես չափանիշ ընտրում են միջամտողական (ինտերվենցիոնալ) մոտեցումները,

գ) կարող է լինել նաև երրորդ մոտեցումը, երբ տարածքային քաղաքականության հարցում առաջնությունը տրվում է ճյուղային ոլորտներին:

Շուկայական մոտեցման դեպքում խնդիրներ են առաջանում շուկայական տնտեսավարման թերությունների հետևանքով: Տվյալ դեպքում ճիշտ մոտեցումը կարգավորման դադարեցումն է, իսկ տարածքային քաղաքականության համար պետք է կատարել նվազագույն ծախսեր, կիրառել արդյունավետությունը բարձրացնող հարկաբյուջետային խթաններ:

Ինտերվենցիոնալը հիմնվում է այն մոտեցման վրա, որ հիմնախնդիրներն առաջանում են չափից ավելի միջամտության մասնակցության հետևանքով, իսկ դրա լուծումը հնարավոր է տարածքային զարգացման քաղաքականության հայեցակարգի մշակման, տարածաշրջանում տնտեսության զարգացման նպատակով գործած ծրագրերի իրականացման, ենթակառուցվածքներում ներդրումների ավելացման միջոցով, որոնք կնպաստեն տարածաշրջանների զարգացման մակարդակների համահարթեցմանը:

Հայաստանի Հանրապետությունում տարածքային քաղաքականության իրականացման հիմնական ուղղություններից է ագրարային քաղաքականությունը, ինչն անմիջապես շոշափում է գյուղական համայնքների բնակչության շահերը, որը ներկայումս ամենախոցելին է, պահանջում է համակողմանի լուծումներ. նախ գյուղական բնակավայրերում բարձր է աղքատության մակարդակը, արտագաղթը, գյուղի սոցիալական ենթակառուցվածքը թերզարգացած է, գյուղատնտեսական արտադրությունը բարձր

ռիսկային է և այլն: Այդ խնդիրների լուծման նպատակով ՀՀ կառավարությունը և ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը պարբերաբար մշակում և ընդունում են զարգացման տարբեր ծրագրեր գերատեսչական, մարզային և այլ մակարդակներով, որոնք սակայն միշտ չէ, որ իրականացվում են ամբողջությամբ՝ կապված ֆինանսական միջոցների սղության ու բազմաթիվ այլ օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներով: Նման ծրագրերի շարքին են դասվում նաև ՀՀ կառավարության 2015 թվականի հունվարի 15-ի № 40-Ն որոշմամբ ընդունված «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի 2015-2018 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման» ծրագիրը, որը ՀՀ Կոտայքի մարզի նախկին մարզպետ Ա. Հարությունյանի հավանությամբ «կնպաստի ՀՀ Կոտայքի մարզի համայնքներում առկա հիմնախնդիրների լուծմանը և այս ու նմանատիպ ծրագրերի իրականացման շնորհիվ կապահովի մարզի տնտեսության զարգացման շարունակականությունը և ազգաբնակչության կենսաապահովման պայմանների բարելավումը»:²⁵

Այսպիսով, համառոտակիորեն վերլուծելով տարածքային կառավարման էությունը և մեխանիզմները, կարելի է փաստել, որ թեև շուկայական մոտեցման ըտրության պարագայում տարածքային զարգացման քաղաքականությունը համեմատաբար քիչ ծախսատար է կենտրոնական կառավարության համար, այդուհանդերձ, ելնելով ՀՀ սոցիալ-տնտեսական և աշխարհաքաղաքական առանձնահատկություններից, հաշվի առնելով նաև անցումային երկրների փորձը, Հայաստանի համար ճիշտ չի լինի ինտերվենցիոնալ մոտեցման ընտրությունը, որը շատ դեպքերում խրախուսվում է, քանի որ շուկայական հարաբերությունները կարող են բերել թույլ զարգացած տարածաշրջաններից երիտասարդ կադրերի, մասնագետների արտահոսքի՝ ավելի սրելով հետագայում տարածքային զարգացման հիմնախնդիրները: Ինտերվենցիոնալ մոտեցումը երկարատև ժամկետով կարող է կասեցնել կամ դադարեցնել զարգացման անհամաչափությունների խորացումը, քանի որ կարծիքներ կան, որ հնարավոր չէ կրճատել տարածաշրջանների միջև զարգացման անհամաչափությունները:

Այնուամենայնիվ, ընդհանուր եզրահանգումն այն է, որ քննարկված տեսություններից ոչ մեկը չի պաշտպանում ռեսուրսների արդյունավետ տեղաբաշխումը թույլ զարգացած տարածաշրջաններում, քանի որ առաջին հերթին «զարգացած բևեռները» կարող են ապահովել ներդրումներից մեծ արդյունքներ: Բայց դրա հետ միասին, թույլ

²⁵ ՀՀ Կոտայքի մարզի 2015-2018 թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր, Հրազդան, 2014, էջ 5-6

զարգացած տարածաշրջաններում պետական ներդրումները կարող են համարվել տնտեսապես արդարացված, քանի որ այս պարագայում եկամուտների մեծացումը, հարստության անհավասարություններից ստացված սոցիալական էֆեկտը հնարավոր է գերազանցի զարգացած տարածաշրջաններում հետագա ավելի մեծ ներդրումներից ստացվող պոտենցիալ եկամտի ծավալը:

1.2. Համայնքային զարգացման կառավարման բնորոշ գծերը և առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում

Յուրաքանչյուր երկիր՝ ելնելով իր տնտեսական զարգացման առանձնահատկություններից, տնտեսական համակարգի բնույթից, ձևավորված ավանդույթներից, ընտրում է կառավարման այնպիսի համակարգ, որն առավել արդյունավետ կլինի պետական կառավարման և տեղական ինքնակառավարման զուգակցումով՝ կնպաստի երկրի սոցիալտնտեսական զարգացմանը: Աշխարհում տարածված կառավարման այդ համակարգերը բազմազան են, սակայն առանձնանում են տեղական ինքնակառավարման չորս ձևեր՝

- I. դասական (անգլո-սաքսոնական),
- II. մայրցամաքային (ֆրանսիական),
- III. խորհրդային (սոցիալիստական),
- IV. խառը:

Տեղական ինքնակառավարման հարցերը կանոնակարգվում են միջազգային համապատասխան իրավական փաստաթղթերով, օրենքներով և օրենսդրական ակտերով, որտեղ առանցքային տեղ է զբաղեցնում «Տեղական ինքնակառավարման մասին Եվրոպական խարտիան»: Այն մշակվել է 1985թ. Ստրասբուրգում Եվրոպայի խորհրդի անդամ երկրների կողմից, որտեղ սահմանվել է ինքնակառավարման սկզբունքները, հիմնարար գաղափարները, որոնք ընկած են բնակչության կողմից ձևավորվող և տեղական գործերն ինքնուրույն կառավարող մարմինների գործունեության հիմքում:²⁶ Դրանք են՝

- բնակչության կողմից տեղական նշանակության հարցերի լուծման ինքնուրույնությունը,

²⁶ «Տեղական ինքնակառավարման մասին Եվրոպական խարտիա», Ստրասբուրգ, 1985

- տեղական ինքնակառավարման, դրա մարմինների կազմակերպման առանձնացումը պետական կառավարման համակարգում և պետական իշխանության մարմինների հետ փոխգործակցությունն ընդհանուր խնդիրների և գործառույթների իրականացման հարցում,
- տեղական ինքնակառավարման նյութական և ֆինանսական ռեսուրսների համապատասխանությունը նրա լիազորություններին,
- ՏԻՄ-երի և պաշտոնատար անձանց պատասխանատվությունը բնակչության առջև,
- մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը,
- տեղական ինքնակառավարման կազմակերպման և գործունեության օրինականությունը,
- տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հրապարակայնությունը,
- տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության կոլեգիալությունը,
- տեղական ինքնակառավարման պետական երաշխիքները:

Հայաստանի Հանրապետությունը 2001 թվականին դարձավ Եվրոպայի խորհրդի անդամ, իսկ 2002 թվականի հունվարի 25-ին վավերացվեց Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան: Հայաստանը պարտավորվեց ձևավորել եվրոպական չափանիշներին համապատասխան տեղական ինքնակառավարման կարգավորման համակարգ, ՏԻՄ-երի լիազորություններ, տեղական ինքնակառավարման վարչական կառույցներ, տեղական մակարդակում լիազորությունների իրականացման պայմաններ: Եվրոպական խարտիայի համաձայն Հայաստանը ճանաչեց նաև ՏԻՄ-երի գործունեության ֆինանսավորման և վարչական հսկողության սկզբունքներն ու կառուցակարգերը, համայնքների միավորելու իրավունքը և տեղական ինքնակառավարման իրավական պաշտպանության սկզբունքը:

Հայաստանի Հանրապետությունը հիմք ընդունելով Եվրոպական խարտիայի սկզբունքները, 1995 թվականին ընդունված սահմանադրությամբ²⁷ պետությունը հռչակեց ժողովրդավարական, Սահմանադրության 104-110 հոդվածներով ճանաչում և երաշխավորում է տեղական ինքնակառավարումը, սահմանում է, որ տեղական ինքնակառավարումն իր լիազորությունների շրջանակներում ինքնուրույն է: Տեղական

²⁷ ՀՀ սահմանադրություն (փոփոխություններով), ՀՀ ՊՏ 2005 (հատ.թող) 05.12.2005

ինքնակառավարման ամրագրումը ենթադրում է տեղական նշանակության հարցերի հատուկ ոլորտի առանձնացում, որի սահմաններում ՏԻՄ-երը գործում են ինքնուրույն և պատասխանատու են առաջին հերթին իրենց ընտրողների առջև: Հիմնվելով Սահմանադրության դրույթների վրա՝ ՀՀ համապատասխան օրենքները սահմանում են տեղական ինքնակառավարման տնօրինման առարկաները, ինչպես նաև սահմանազատում տեղական ինքնակառավարման ու պետական իշխանության մարմինների լիազորությունները:

Ավելացնենք, որ հետագայում ընդունվեցին մի շարք օրենքներ և ենթաօրենսդրական ակտեր, որոնք հնարավորություն տվեցին կարճ ժամանակահատվածում ստեղծելու տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման նոր համակարգեր: Արդեն 1996 թվականի մայիսին «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին» և հուլիսին «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքների ընդունումից հետո՝ նույնիսկ ամսին կայացած ՏԻՄ-երի ընտրությունների արդյունքում Հայաստանում սկսեց ձևավորվել տեղական ինքնակառավարման համակարգը: Սահմանվեցին տեղական ինքնակառավարման հիմնական սկզբունքները, ինչպես նաև լիազորությունները:²⁸


ՀՀ-ում տարածքային կառավարումը իրականացվում է կառավարման մարզային մարմինների կողմից: Ըստ ՀՀ Սահմանադրության հանրապետության վարչատարածքային միավորներ են հանդիսանում մարզերը և համայնքները: Մարզերը բաղկացած են քաղաքային և գյուղական համայնքներից: Համաձայն գործող օրենսդրության, մարզերում իրականացվում է պետական կառավարում, որտեղ կառավարման մարզային մարմինները մարզում իրագործում են կառավարության տարածքային քաղաքականություն, համակարգում գործադիր իշխանության մարմինների տարածքային ծառայությունների գործունեությունը:²⁹

Պետական կառավարումը մարզում իրագործում է մարզպետը՝ մարզպետարանի միջոցով: Մարզպետին նշանակում և ազատում է վարչապետը, մարզպետը նշանակում է մարզպետի տեղակալին (ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ

²⁸ Մասնակցային ժողովրդավարությունը տեղական ինքնակառավարման համակարգում: Ձեռնարկ. - Եր.: Ասողիկ. 2013, էջ 19

²⁹ «Մենեջմենթ», երկրորդ լրացուցիչ բարեփոխված հրատարակչություն, Յու. Սուվարյանի խմբ. - Եր.: Տնտեսագետ, 2002, էջ 261

իրավիճակների նախարարի համաձայնությամբ) և ձևավորում մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումները, որը ներկայացվում է գծապատկեր 1-ում:



Գծապատկեր 1. Տարածքային կառավարման կազմակերպման կառուցվածքը:

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման ներկա համակարգը նախանշվել է ՀՀ Սահմանադրությամբ, ըստ որի Հայաստանում վարչատարածքային միավորները մարզերը և համայնքներն են, որով անցում կատարվեց վարչատարածքային բաժանման նոր երկաստիճան կառավարման համակարգին՝ պետական և տեղական ինքնակառավարման:

ՀՀ Սահմանադրությունը վարչատարածքային բաժանման հիմքում չափանիշ է ընդունել իշխանության տարբերակման ու տարանջատման սկզբունքը: Մարզերում պետական կառավարման համակարգի մեջ բացի մարզպետից և մարզպետարանից մտնում են նաև մարզային ենթակայության կազմակերպությունները, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունները, որոնք միաժամանակ ենթարկվում են հանրապետական վերադաս մարմիններին, սակայն հանդիսանալով պետական կառավարման մարմիններ, գտնվում են նաև մարզպետների համակարգման ոլորտում: Մարզպետը և մարզպետարանը իրականացնում են տարածքային կառավարման քաղաքականությունը, համակարգում գործադիր իշխանության տարածքային ծառայության գործունեությունը, ապահովում պետական կառավարման ու ՏԻՄ-երի կապերը, կարգավորում մարզերի իրավասության ներքո գտնվող միջհամայնքային հարցերը:³⁰

Մարզպետն իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում, մարզպետի տեղակալի, օգնականների, մարզպետարանի աշխատակազմի և մարզային ենթակայության կազմակերպությունների միջոցով իրականացնում է վերահսկողություն ֆինանսական և նյութական ռեսուրսների նպատակային ու արդյունավետ օգտագործման համար:³¹

Մարզերում տարածքային կառավարման գործընթացի բարելավման նպատակով մարզերին կից ստեղծվում է մարզային խորհուրդ, որը լիազորություններ չունի, զուտ խորհրդակցական մարմին է և ամրագրված է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով (հոդված 81): Նրա կազմի մեջ ընդգրկվում են մարզպետը և բոլոր համայնքների ղեկավարները: Մարզի խորհրդի նիստերին մարզպետը կարող է

³⁰ Խուդավերդյան Ա. Հանրային ոլորտի կառավարման բարեփոխումները Հայաստանի Հանրապետությունում. - Եր. 2008, էջ 115-116

³¹ ՀՀ կառավարության 2005 թ. մայիսի 19-ի թիվ 633-Ն որոշումը:

հրավիրել հանրապետական գործադիր մարմինների, տարածքային ծառայությունների ղեկավարներին, մարզպետարանի աշխատակազմի, կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին: Մարզի խորհրդի գործունեությունը սահմանված չէ օրենքով, կարգավորվում է ՀՀ նախագահի հրամանագրով: Խորհուրդն առավելապես քննարկում է տարածքային քաղաքականության և տարածքային զարգացման հարցեր, որոնց արդյունքները մարզպետը կարող է հաշվի առնել իր գործառնություններն ու լիազորություններն իրականացնելիս:

Հայաստանում 1996 թվականից սկսած, Համայնքների ֆինանսիստների միավորումը (ՀՖՄ), համագործակցելով տեղական և միջազգային կառույցների հետ, վերլուծում ու գնահատում է հանրապետությունում տեղական ինքնակառավարման վերափոխումների ընթացքը: «Քաղաքացիական հասարակության և տեղական ինքնակառավարման աջակցության ծրագրի» շրջանակներում վեց հասարակական կազմակերպություններ (ՀՖՄ, Հայաստանի համայնքների միություն, Հայաստանի ավագանիների ասոցիացիա, Մարդկային զարգացման միջազգային կենտրոն, Տեղեկատվական համակարգերի զարգացման ուսուցման կենտրոն, «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամ) համատեղ մշակել են «ՀՀ տեղական ինքնակառավարման հետագա զարգացման և իշխանության ապակենտրոնացման ռազմավարական մոտեցումները»:

Ծրագրի հեղինակները, ելնելով տեղական ինքնակառավարման մարմինների արդի իրավիճակի ուսումնասիրության արդյունքներից նշում են. «ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգի հետագա զարգացումն ուղղակիորեն կապված է ապակենտրոնացման և ժողովրդավարացման ընդհանուր գործընթացների խորացման հետ: Այդուհանդերձ, տեղական ինքնակառավարման ոլորտում բարեփոխումները Հայաստանում կատարվում են համակարգային և համալիր մոտեցումների բացակայության պայմաններում, ինչը վտանգում է այս ոլորտում իրականացվող պետական քաղաքականության արդյունավետությունը»:³²

ՀՀ կառավարությունը պետք է իրականացնի մարզպետարանների կառավարման կառուցվածքի բարեփոխում: Արդի հիմնախնդիրներից մեկն այն է, որ թեև

³² «Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման հետագա զարգացման և իշխանության ապակենտրոնացման ռազմավարական մոտեցումներ». - Եր. 2012, էջ 15

մարզպետներին իրավունք է տրված համակարգել երկրի գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեությունը, սակայն նրանք ունեն գերատեսչական պատկանելիություն և այդ մարմնի ղեկավարները, որպես քաղաքացիական ծառայողներ, անմիջականորեն ենթարկվում են վերադաս մարմնին՝ ձևական դարձնելով մարզպետի հետ ծառայողայան փոխհարաբերությունները: Նման մոտեցումը բացասական հետևանք է թողնում քաղաքացիական ծառայության մասով կադրերի ու մասնագետների ապահովման հարցում: Դա զգացվում է մասնավորապես կրթության, առողջապահության, սպորտի ոլորտների գործունեության կառավարման ընթացքում մարզպետարանների ընդգրկվածության ցածր մասնակցությամբ:

Ըստ էության մարզպետարանը կապող օղակ է պետական կառավարման և ՏԻՄ-երի միջև, վերջիններս մարզպետարանից ստանում են իրավաօրենսդրական, մասնագիտական, խորհրդատվական տեղեկատվություններ: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված է, որ տեղական իշխանությունների լիազորությունների նկատմամբ վարչական հսկողության գործառույթը դասակարգվում է որպես իրավական, մասնագիտական և ֆինանսական հսկողության տեսակ: Հսկողությունն իրականացվում է մարզպետարանների կողմից՝ համայնքի ղեկավարի և ավագանու լիազորությունների կատարման նկատմամբ: Մարզպետը հսկողությունը կատարում է կառավարության կողմից տարեկան հաստատված ծրագրերին համապատասխան: ՏԻՄ-երի կողմից լիազորությունները չկատարելու կամ թերի կատարելու պարագայում մարզպետը կարող է առաջարկել վերացնել խախտումները սահմանված ժամկետում, իսկ չվերացնելու դեպքում դիմել դատարան՝ ՏԻՄ-երի նկատմամբ պատասխանատվության միջոցներ ձեռնարկելու կամ պարտավորեցնելու դրանց շտկելու ուղղությամբ: Եթե ՏԻՄ-երը համաձայն չեն մարզպետի կողմից իրականացվող գործողությունների հետ, նրանք նույնպես կարող են և իրավունք ունեն բողոքարկել դատարանում:

Նման իրավիճակում կարիք է զգացվում որոշակի բարեփոխումներ իրականացնել մարզպետարանների կառավարման գործառույթների ու կառուցվածքի վերափոխման ուղղությամբ: Մեր կարծիքով անհրաժեշտ է ՀՀ նախագահի «ՀՀ մարզերում պետական կառավարման մասին» հրամանագիրը համապատասխանության բերել ըստ ոլորտների և հատվածների համապատասխան օրենքների

պահանջներին: Վերանայման անհրաժեշտություն է զգացվում նաև մարզպետի լիազորությունները՝ նրա գործունեությունը դիտարկելով մարզի զարգացման ծրագրի իրականացման ապահովման համատեքստում:

Այս ամենը բխում է համայնքների համաչափ զարգացման և նրանց բնակչության շահերից: Որպես սահմանադրական հիմքի ճանաչում, տեղական ինքնակառավարումը ենթադրում է կառավարման ապակենտրոնացման համակարգի հաստատում, ինչը կոչված է իրականացնելու տարածքային զարգացման կառավարման գործընթացը: Նշենք, որ ՏԻՄ-երն ընդգրկված չեն պետական իշխանության համակարգում և, ի տարբերություն տարածքային կառավարման, նրանք չեն դիտվում կառավարման պետական համակարգի բաղադրիչ:

ՀՀ սահմանադրությունը սահմանում է, որ տեղական ինքնակառավարումը իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում ինքնուրույն է, նշանակում է տեղական ինքնակառավարման ամրագրումը ենթադրում է տեղական նշանակության հարցերի առանձնացում, որի շրջանակներում ՏԻՄ-երը գործում են իրենց ծրագրերով, ինքնուրույն են և ազատ են իրենց որոշումների կայացման մեջ: ՀՀ Սահմանադրության (փոփոխություններով) 107-րդ հոդվածը ամրագրում է, որ համայնքն իր ինքնակառավարման իրավունքն իրականացնում է ՏԻՄ-երի՝ համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի միջոցով:

Համայնքի ավագանին տնօրինում է համայնքի սեփականությունը, համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է համայնքի բյուջեն, վերահսկում բյուջեի կատարումը, համապատասխան օրենքներով սահմանում տեղական հարկերը, տուրքերը և մյուս վճարները, ընդունում համայնքի տարածքում պարտադիր կատարման ակտերը: Համայնքային նշանակության խնդիրները տեղական հանրաքվեով լուծելու միջոցով համայնքի անդամները կարող են անմիջապես մասնակցել համայնքի գործերի կառավարմանը, իսկ տեղական հանրաքվեի անցկացման կարգը որոշվում է օրենքով:

Կառավարությունն իր հերթին երաշխավորում է ՏԻՄ-եր ընտրելու և դրանց կազմում ընտրվելու, նրանցում ծառայելու հավասար հնարավորություն, ՏԻՄ-երին դիմելու քաղաքացիների իրավունքը:

Տեղական ինքնակառավարումը ժողովրդաիշխանության ձև է: ՀՀ փոփոխված սահմանադրության 2-րդ հոդվածի համաձայն՝ ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է՝

- անմիջականորեն՝ հանրաքվեների, ընտրությունների միջոցով,
- պետական իշխանության մարմինների միջոցով,
- տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով,
- պաշտոնատար անձանց միջոցով:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված է, որ տեղական ինքնակառավարումը բնակչության բարեկեցության բարելավման նպատակով սեփական պատասխանատվությամբ և օրենքի շրջանակներում ինքնուրույն գործող ՏԻՄ-երի համայնքների խնդիրները լուծելու և համայնքի սեփականությունը տնօրինելու՝ ՀՀ սահմանադրությամբ ու այլ օրենքներով երաշխավորված իրավունքը և համայնքի կարողությունն է: Այդ սահմանումը հնարավորություն է տալիս առանձնացնելու տեղական ինքնակառավարումն ու ժողովրդաիշխանության համակարգում դրա տեղը բնութագրող հատկանիշները: Տեղական ինքնակառավարումն ունի հատուկ սուբյեկտ՝ հանձինս բնակչության, քաղաքացիների, ինչպես նաև տեղական ինքնակառավարումը առանցքային տեղ է զբաղեցնում հասարակության, պետության կառավարման ժողովրդավարական կառուցակարգում: ՀՀ-ում տեղական ինքնակառավարումը և պետական իշխանությունը սերտորեն փոխկապակցված են, ունեն միասնական ակունքներ՝ ժողովրդի իշխանություն:³³

Ռուս տնտեսագետ Ա. Դյոմինը քննարկելով այս հարցը գտնում է, որ տեղական ինքնակառավարման մարմինները, որպես համայնքների կառավարման սուբյեկտ, ունեն մի շարք ընդհանրություններ ինչպես հանրային ծառայության, այնպես էլ նրա կազմի մեջ մտնող պետական ծառայության հետ: Այդ պատճառով էլ պետական և հանրային ծառայությունները եվրոպական մի շարք երկրներում կազմում են մեկ միասնական համակարգ:³⁴

³³ Փարսադանյան Թ. Սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման կառավարման հիմնախնդիրները: Ատենախոսություն. Ը.00-02. - Եր. 2009, էջ 36

³⁴ Демин А. А. Государственная служба: Учебное пособие. - М.: Зерцало-М. 2002.

Տեղական ինքնակառավարումն ունի կառավարման յուրահատուկ օբյեկտ՝ տեղական համայնքային նշանակության հիմնախնդիրներ, որոնք ընդգծվում են տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքում: Տեղական ինքնակառավարման էությունը բնութագրող կարևոր հասկացություններից է ինքնուրույնությունը:

Տեղական ինքնակառավարման հարցերի լուծման նպատակով համայնքի բնակչությունը և իշխանությունը պետք է իրականացնեն համապատասխան կազմակերպա-իրավական մեթոդներով մոտեցումներ: ՀՀ Սահմանադրությունը և օրենսդրությունը տեղական ինքնակառավարման իրականացման կազմակերպա-իրավական ձև են հռչակում ընտրությունները, ինչպես նաև տեղական ինքնակառավարման ընտրովի և նշանակովի մարմինները: Նշված ձևերի միասնությունը, փոխկապվածությունը, զուգակցումը և գործառույթների իրականացումը կազմակերպում են տեղական ինքնակառավարման համակարգում, ինչն էլ ընդգրկում է ինքնակառավարման ամբողջությունը՝ միջհամայնքային միավորումներ, քաղաքացիների կամքի ուղղակի արտահայտման ձևեր ու տեղական ինքնակառավարման կազմակերպա-իրավական իրականացման այլ ձևեր, որոնց միջոցով համայնքի բնակչությունն իրագործում է ՀՀ Սահմանադրությամբ ճանաչված և երաշխավորված իշխանությունը:

Տեղական իշխանության կառուցվածքը բխում է ՏԻՄ-երի կազմակերպման ու գործունեության ընդհանուր սկզբունքներից, որոնք հիմնարար են և որոնց համապատասխան տեղի է ունենում տեղական իշխանության ձևավորումը, իրականացվում է տեղական նշանակության խնդիրների լուծմանը նպատակաուղղված գործունեություն: Այդ սկզբունքներից են՝ ՏԻՄ-երի կազմակերպման ու գործունեության ժողովրդավարական բնույթը, իշխանությունների տարանջատումը, ՏԻՄ-երի տարածքային կազմակերպման, նրանց ինքնուրույնության սկզբունքները: Վերջինս դրսևորվում է նրանց ձևավորման գործընթացում: Սակայն քանի որ համայնքի տարածքում տեղական նշանակության հարցերը լուծելիս համայնքի բնակչությունը հանդիսանում է իշխանության միակ աղբյուրը, հետևաբար ՀՀ գործող օրենսդրությունը սահմանում է, որ տեղական իշխանությունները ձևավորվում են ընտրությունների միջոցով:

Տեղական իշխանության կազմակերպման ու գործունեության ժողովրդավարական բնույթը դրսևորվում է նաև նրանում, որ դրանք օժտված են համապատասխան իրավունքներով, ինչը հնարավորություն է տալիս մասնակցել իշխանությունների ձևավորմանը և համայնքային նշանակության խնդիրների լուծմանը՝ համայնքային ծառայությունների մատուցման միջոցով: Վերջինս իրականացնում է իրեն վերապահված գործառույթները, ֆինանսավորվում է համայնքային ու պետական բյուջեներից, ծառայում է հանրությանը, ինչի համար էլ հանրային ծառայության բաղադրամաս է հանդիսանում:

Համայնքային ծառայության համակարգում իրավական և տնտեսական հարաբերությունները կարգավորվում են ՀՀ Սահմանադրությամբ ու ՀՀ միջազգային պայմանագրերով, ՏԻՄ-երի իրավասությունները սահմանող օրենքներով, այլ նորմատիվ ակտերով, «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքով և դրա կիրառումը կանոնակարգող իրավական ակտերով:³⁵

Անշուշտ, համայնքային ծառայության ձևավորման, համակարգի հետագա զարգացման համար, համայնքային ծառայության կառավարման և կազմակերպման կառուցվածքում նշանակալի դեր ու անելիքներ ունեն ՏԻՄ-երը, որոնք առաջին հերթին ենթադրում են կառավարման ապակենտրոնացման համակարգի հաստատում, նրանք ընդգրկված չեն պետական իշխանության մարմիններում: Նշանակում է նրանք չեն կարող դիտարկվել, որպես կառավարման պետական համակարգի կառուցվածքային բաղադրիչներ:

Համայնքային ծառայության կառավարման ու կազմակերպման համակարգի վերաբերյալ մասնագիտական գրականությունում հանդիպում ենք տարբեր տեսակետների և կարծիքների: Ռուս տնտեսագետ Նեմչինովը այն տեսակետին է, որ համայնքային ծառայության կառավարումն ընդգրկում է դրա կադրային, կազմակերպական ու իրավական ապահովումը, նրանց կողմից իրավունքների ու պարտականությունների իրականացումը, նախատեսված սահմանափակումների պահպանման և երաշխիքների կատարման հանդեպ վերահսկողության ապահովումը:³⁶ Ստարիլովը, կարծիք է հայտնում, որ պետական ու համայնքային ծառայության

³⁵ Համայնքային ծառայություն: Իրավական ակտերի ժողովածու. - Եր. 2007, էջ 3

³⁶ Немчинов А.А. Муниципальная служба. Справочное пособие. - М.: Дело и Сервис. 2002. - С. 363

կառավարումն իրականացվում է կոնկրետ կառույցների և մարմինների գործունեության երաշխիքների ստեղծման ու ապահովման նպատակով:³⁷ Նոզդրաչևը գտնում է, որ ծառայության կառավարման մարմինների, դրանց ստորաբաժանումների իրավասության մեջ են մտնում հասարակության զարգացման համապատասխան ծառայության համակարգի ապահովումն ու հետագա զարգացումը:³⁸

Ներկայումս դրական երևույթ կարելի է համարել այն, որ պետական կառավարման մարմինները հանդես չեն գալիս որպես կառավարման վերադասատյան, որոնք նախկինում ամբողջովին ղեկավարում էին տեղական իշխանությանը, օժտված էին տեղական իշխանության որոշումները բեկանելու իրավունքով: Այստեղ կարևորվում է իշխանությունների հավասարակշռվածության ապահովումը, փոխհարաբերությունների զարգացումը, նրանց միջև վստահության ամրապնդումը և տարաձայնությունների լուծումը քաղաքակիրթ ճանապարհով, լիազորությունների ու գործառույթների բաշխումը կառավարման տարբեր օղակների միջև:

Օրենսդիր իշխանության և ՏԻՄ-երի փոխհարաբերությունները հիմնականում առնչվում է պետական բյուջեից համայնքներին համահարթեցման սկզբունքով հատկացվող դոտացիաների, սուբսիդիաների և այլ տեսակի տրանսֆերտային հարցերին, ինչի միջոցով սահմանվում է համայնքների համաչափ զարգացմանը առնչվող պետական քաղաքականությունը տվյալ տարում:

ՏԻՄ-երը հիմնականում փոխհարաբերությունների մեջ են մտնում գործադիր իշխանության հետ, որոնք առնչվում են, առաջին հերթին, համայնքի ղեկավարի գործունեության հետ: Գործադիր իշխանությունը սահմանված կարգով կազմակերպում և ղեկավարում է կառավարության պատվիրակած լիազորությունները, վարում է համայնքների քաղաքաշինական, գյուղատնտեսական, բնապահպանական կադաստրները, միջոցներ է ձեռնարկում հակահամաճարակային և կարանտինային քաղաքաշտպանության ապահովման ուղղությամբ, տարերային և տեխնաժին աղետների և վտանգների նվազեցման ու հետևանքների վերացման աշխատանքների կազմակերպման գործում: Դրանց իրականացման ժամանակ համայնքի ղեկավարը

³⁷ Старилов Ю.Н. Служебное право, учебник - М.: БЕК. 1996. – С. 101

³⁸ Ноздрачев А.Ф. Государственная служба: Учебник для подготовки государственных служащих. - М.: Статус. 1999. – С. 162-163

անմիջական գործնական հարաբերություններ է ունենում երկրի գործադիր իշխանության մարմինների հետ:

Կան կոնկրետ խնդիրներ, որոնք տեղական իշխանությունները կարող են լուծել միայն կառավարության լիազորված աշխատողների մասնակցությամբ: Դրանցից են՝ համայնքի պարտադիր և պատվիրակված լիազորությունների կատարման համար համայնքի սեփական հողերի, հաղորդակցության ուղիների, գույքի օտարումը, համայնքի սոցիալական ենթակառուցվածքների զարգացման նպատակով ներդրումներ կատարելը, վարկեր ստանալու երաշխիքները և այլն:

Քաղաքաշինության և հողօգտագործման, կարգ ու կանոնի պահպանության, տրանսպորտի և կապի, ֆինանսական հարցերի և օրենքով սահմանված մյուս ոլորտներում համայնքի ղեկավարը կառավարության կողմից պատվիրակված որոշ լիազորություններ իրականացնում է օրենքով սահմանված չափանիշներին ու պահանջներին համապատասխան:

Կառավարության մարմինների և ՏԻՄ-երի փոխհարաբերություններում առկա է նաև վերահսկողական լիազորություններ: Այսպես, օրինակ կառավարության լիազորված մարմինների և (կամ) մարզպետարանի կողմից համանքներում իրականացվում են տարեկան ֆինանսատնտեսական ստուգումներ: Նրանց միջև գոյություն ունեն խորհրդատվական հարաբերություններ, որոնք որպես կանոն իրականացվում են մարզային խորհրդի միջոցով: Համայնքի ղեկավարներն այդ խորհրդում կարող են քննարկման հարց դարձնել համայնքների սոցիալ-տնտեսական կողմերին առնչվող խնդիրներ, որոնք հավանություն ստանալու դեպքում մարզպետի միջոցով ուղղարկվում է համապատասխան իրավասու մարմիններին:

Սոցիալ-տնտեսական և ֆինանսաբյուջետային հարցերի հետ կապված ՏԻՄ-երի ու գործադիր իշխանության միջև գոյություն ունի նաև փոխհարաբերությունների ամբողջություն: Այսպես, պետական ու համայնքային բյուջեների կապը դրսևորվում է հետևյալ տեսակներով՝ սուբսիդիաներ, դոտացիաներ, սուբվենցիաներ, բյուջետային փոխատվություններ, բյուջետային վարկեր և երաշխիքներ, կառավարության պատվիրակված լիազորությունների իրականացման համար հատկացումներ և այլն:

Տեղական ինքնակառավարման մարմինները, որպես քաղաքացիական իրավահարաբերությունների սուբյեկտ, հարաբերությունների մեջ կարող են մտնել

դատաիրավական մարմինների հետ: Համայնքի իրավունքների, շահերի, սեփականության իրավունքի պաշտպանությունը տեղական ինքնակառավարման սկզբունքներից մեկն է: ՏԻՄ-երը դատական լսումների առարկա կարող են դարձնել ցանկացած հարց կապված իրենց իրավունքների առհամարման, այլ անձանց և իշխանական մարմինների, համայնքի ղեկավարի ու ավագանու միջև առաջացած տարաձայնությունների պարզաբանումների հետ:

ՀՀ-ում կառավարման տարբեր մակարդակների լիազորությունների բաշխվածությունը ներկայացվում է աղյուսակ 1.1-ում:

Աղյուսակ 1.1

Լիազորությունների բաշխումը ՀՀ կառավարման տարբեր մակարդակների միջև³⁹

Լիազորություններ	Տեղական ինքնակառավարման մարմիններ	Պետական (կենտրոնական կամ տարածքային) կառավարման մարմիններ
1	2	3
1. <u>Կրթություն՝</u> ա) տարրական, միջնակարգ, տեխնիկական, բարձրագույն բ) նախադպրոցական մասնագիտացված	- x	x -
2. <u>Սոցիալական ապահովություն</u> ծերանոցներ, սոցիալական օգնություն ծերերին և կարիքավորներին, հատուկ ծառայություններ (անտուններ, գաղթականներ և այլն)	-	x
3. <u>Առողջապահություն</u> ա) առաջնային բուժօգնություն բ) առողջության պահպանում, հիվանդանոցներ, պոլիկլինիկաներ	- -	x x

³⁹ Օրդյան Է. Ապակենտրոնացում, հայեցակարգային հիմնադրույթներ. - Եր.: ՕՐ-ԴԱՐ հրատ. 2007, էջ 26

Աղյուսակ 1.1-ի շարունակությունը

1	2	3
4. <u>Մշակույթ, հանգիստ և սպորտ</u> ա) ակումբներ, մշակույթի տներ, մարզական հիմնարկներ բ) գրադարաններ, թանգարաններ, հանգստի վայրեր	x x	- x
5. <u>Տնտեսական ծառայություններ</u> ա) ջրմուղ-կոյուղի, ջեռուցում բ) էլեկտրաէներգիա, գազ	x -	x x
6. <u>Սանմաքրում և շրջակա միջավայրի պահպանություն</u> ա) աղբահանություն, բարեկարգում, գերեզմանատներ բ) շրջակա միջավայրի պահպանություն	x x	- x
7. <u>Հաղորդակցություն և տրանսպորտ</u> ա) ճանապարհներ, հասարակական տրանսպորտ բ) փողոցային լուսավորություն	x x	x -
8. <u>Քաղաքաշինություն</u> ա) համայնքի գլխավոր հատակագծի կազմում, համայնքի տնտեսական զարգացում բ) տուրիզմ	x -	x x
9. <u>Կառավարում</u> ա) իշխանական լիազորություններ (լիցենզավորում և այլն), վարչական այլ լիազորություններ (ընտրողների գրանցում և այլն), քաղաքացիների պաշտպանություն, սպառողների շահերի պաշտպանություն բ) ոստիկանություն, հրշեջ պաշտպանություն	x -	x x

Ծանուցում՝ x – իրականացնում է
 - - չի իրականացնում

ՀՀ-ում լիազորությունների բաշխումը կառավարման տարբեր մակարդակների միջև իրականացվում է որոշակի օրինաչափությամբ: ՏԻՄ-երի և պետական կառավարման մարմինների միջև լիազորությունների բաշխումը կրում է մոդելային բնույթ, որում երկրորդ պլան է մղվում ՏԻՄ-երի նախաձեռնողական ձգտումները և դրանով բարդացնում համայնքների համաչափ զարգացման հարցերի լուծումը: Օրինակ, լիազորությունների մի լայն շրջանակ (կրթություն, սոցիալական ապահովություն, առողջապահություն, գազի և էլեկտրաէներգիայի ծառայություն, տուրիզմ, ոստիկանություն և հրշեջ ծառայություններ) իրականացվում է հիմնականում կենտրոնական կառավարման մարմինների միջոցով, սակայն կառավարման ժողովրդավարացումը պահանջում է աստիճանաբար ապակենտրոնացնել դրանք՝ ընդլայնելով ՏԻՄ-երի լիազորությունների շրջանակները:

«Ներկայումս տեղական ինքնակառավարման մարմինները նշված բնագավառներից բացի ինքնուրույնության բարձրացման խնդիրներ ունեն նաև որոշումների ընդունման և իրականացման, պետական կառավարման մարմինների հետ փոխհարաբերությունների, իրենց գործունեության վրա ֆինանսատնտեսական վերահսկողության, սահմանադրական իրավունքների պաշտպանության, համայնքների ղեկավարների սահմանադրական պաշտպանվածության, ավագանիների դերի բարձրացման, տարաբնույթ համայնքների նկատմամբ տարբերակված մոտեցման ապահովման և այլ ոլորտներում»:⁴⁰ Անհրաժեշտ է, որ օրենսդրական նորմերով փոփոխություններն իրենց իրավական ձևակերպումը ստանան, կիրառվեն համապատասխան իրավական ակտերով, որոնք հիմք պետք է հանդիսանան համայնքների ինքնուրույնության բարձրացմանն ուղղված քաղաքականության մշակման գործում: Դա հնարավորություն կտա յուրաքանչյուր համայնքին իր ունեցած ռեսուրսների շրջանակներում, ելնելով տվյալ տարածաշրջանի բնակլիմայական, աշխարհագրական, ժողովրդագրական առանձնահատկություններից, զարգացնել տնտեսությունը, ենթակառուցվածները, լուծել սոցիալական բնույթի մի շարք հարցեր: ՀՀ Կոտայքի մարզի գյուղական համայնքներում նշված հիմնախնդիրների վիճակին և դրանք հաղթահարելու հնարավորություններին վերաբերվող հարցերը քննարկվում են սույն աշխատանքի հաջորդ գլուխներում:

⁴⁰ Օրդյան Է. Ապակենտրոնացում, հայեցակարգային հիմնադրույթներ. - Եր.: ՕՐ-ԴԱՐ հրատ. 2007, էջ 27:

1.3. Համայնքային ծառայության կառավարման միջազգային փորձը

Դեռևս 19-րդ դարի վերջում Եվրոպական երկրների հանրային կառավարման ոլորտում տեղի ունեցած իրադարձությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն ժամանակ ձևավորվել էր ծայրաստիճան ապակենտրոնացված կառավարություն: Տեղական կառավարման մարմինները (քաղաքները, համայնքները, հատուկ տարածաշրջանները) ունեին լայն շրջանակի ինքնուրույնություն: Կառավարության տարբեր թևեր իրարից տարանջատված էին և ձեռք էին բերել գործողությունների իրականացման որոշակի անկախություն, ինչն իր հերթին առաջացնում էր որոշ խնդիրներ: Առանձին դեպքերում նման ինքնուրույնությունը վեր էր ածվում անբարտավարության, մեկուսացումը՝ լիակատար առանձնացման, անկախությունը՝ քմահաճույքի: Կաշառված լինելով ավարների համակարգի ազդեցությամբ՝ կառավարությունը ոչ միայն ցրված էր, այլև անկազմակերպ և երբեմն նույնիսկ բացահայտորեն անազնիվ:⁴¹

Կառավարման բնագավառի նշանավոր մասնագետ Ուիլսենի կարծիքով, արդյունավետ ու գործարար կերպով գործելու նպատակով, կառավարական գործակալությունները պետք է հեռու մնան քաղաքական գործընթացի անկայունությունից՝ «Կառավարումը գտնվում է քաղաքականության բուն ոլորտից դուրս: Եվ չնայած քաղաքականությունն է առաջադրանքներ դնում կառավարության առաջ, չպետք է թույլ տալ, որպեսզի այն դեկավարի կառավարության ապարատը»:⁴²

Քաղաքականությունը, որպես կանոն, զբաղվում է քաղաքական դաշտում պետության կամքի արտահայտման հարցով, մտահոգված է այդ կամքի իրականացման հարցով:

Կառավարման համակարգի միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ համայնքների համաչափ զարգացման հիմնախնդիրների լուծման հարցում առավելապես մեծ է կենտրոնական և տեղական իշխանությունների համագործակցությունը: Դեռևս 1900 թվականին Ֆրանկ Գուդևուդը գրել է, որ կենտրոնական ու տեղական իշխանությունների պարտականությունների փոխհարաբերություններն

⁴¹Ռոբերտ Բ.Դենհարդ, Հանրային կազմակերպության տեսություններ, 4-րդ հրատ. Թեմփի-Երևան. Անտարես հրատ., 2006. էջ 61

⁴²Теория государства и права.Под ред .Марченко М.Н. - М.: Зерцало-М. 2001. – С. 409

օրենսդրորեն ուղեկցվում են կառավարման ապակենտրոնացմամբ: Տեղական կառավարումն այս դեպքում կարող է փոխել պետության կամքը և այն հարմարեցնել տեղական համայնքների պահանջներին:⁴³

Այստեղ պետք է նշել, որ տարածքային կառավարումը համարվում է հանրային կառավարման ոլորտի բաղադրիչներից, որի աստիճանականությունը ընդգրկում է պետություն-մարզ-համայնք-բնակավայր շղթան: Գրեթե բոլոր երկրներում տնտեսության պետական կառավարումն ի սկզբանե կազմել է վարչական կամ պետական կառավարման կարևորագույն բնագավառներից մեկը, ինչի օբյեկտը երկրի և նրա առանձին տարածաշրջանների տեսությունն է իր բազմաթիվ և բազմաբնույթ ճյուղերով և կազմակերպություններով, ուղղահայաց և հորիզոնական սոցիալ-տնտեսական հարաբերություններով:

Պետք է նշել, որ տվյալ հարցում չկա միասնական ստանդարտ բոլորի համար և յուրաքանչյուր երկիր ելնելով իր տնտեսական զարգացման աստիճանից, անցած քաղաքական ուղիներից, ձևավորված տնտեսական ավանդական փոխհարաբերություններից, նրանց այս կամ այն քաղաքական ու տնտեսական բլոկների (կառույցների) մասնակցության աստիճանից և բազմաթիվ այլ չափանիշներից, անհրաժեշտ է ուսումնասիրել ու վերլուծել որոշ երկրների փորձը, մեր երկրում այդ գործընթացն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով:

Համայնքների համաչափ զարգացման հիմնախնդիրները եղել են արդիական ոչ միայն մեր երկրում, այլ նաև աշխարհի բազմաթիվ երկրների համար: Այդ խնդիրները ամբողջությամբ և վերջնականորեն լուծված չեն նույնիսկ տնտեսապես զարգացած երկրներում: Այսպես, եվրոպական զարգացած երկրները, լինելով բարեկեցության բավարար մակարդակի երկրներ, տարածքային քաղաքականությունը համարում են իրենց ռազմավարական քաղաքականության հիմնական բաղադրիչներից մեկը, այն իրականացնում են որպես առաջնահերթ քայլեր՝ աջակցելով տնտեսապես առավել թույլ զարգացած տարածաշրջաններին, այդ աջակցությունը զուգորդելով տվյալ երկրի կողմից համապատասխան քայլերի իրականացմամբ:⁴⁴

⁴³Ֆրանկ Գուդկոու «Քաղաքականություն և կառավարում», 1900. էջ 16, 50

⁴⁴ Richardson H. W., 1999, Regional Economics: Lokation Theory, Urban Structure and Regional Change, London

1990-ական թվականների վերջերին (1999թ.) Եվրոմիության կողմից տարածքային անհամաչափ զարգացումը կանխելու, հետամնաց տարածաշրջաններին սատարելու նպատակով ստեղծվեցին մի շարք հիմնադրամներ՝

1. «Եվրոպայի տարածքային զարգացման հիմնադրամ», որոնց միջոցները հիմնականում հատկացվում են ենթակառուցվածքների զարգացման համար:
2. «Եվրոպական սոցիալական հիմնադրամ», որի առաջնային խնդիրն է զբաղվել աշխատանքային ռեսուրսների օգտագործման հիմնախնդիրներով, դրանց կառավարման, վերապատրաստման հարցերով:
3. «Եվրոպայի գյուղատնտեսական կառավարման և երաշխավորման հիմնադրամ», որը կոչված է աջակցելու գյուղատնտեսական բարեփոխումների իրականացմանը:⁴⁵

Եվրոմիության երկրներն ունեն տարածքային հիմնախնդիրների լուծման սեփական ծրագրեր, որոնք, կախված կառավարման մակարդակներից որոշակի չափով տարբերվում են իրարից: Այսպես, օրինակ Մեծ Բրիտանիան չունենալով տարածաշրջանային կառավարման միջնորդ օղակ կենտրոնական և տեղական իշխանությունների միջև, այդուհանդերձ դրանց փոխհարաբերություններն ունեն բավականին մեծ տարբերություններ երկրի չորս մասի համար: Կախված որոշակի առանձնահատկություններից, տեղական ինքնակառավարումը երկրի մի շարք մասերում ունի կառավարման երկու մակարդակ՝ համայնքային խորհուրդ և շրջանային խորհուրդ:⁴⁶ Մեծ Բրիտանիայի այն վայրերում, որտեղ գործում է կառավարման երկու մակարդակ, կառավարման մարմինների լիազորությունների քանակը ոչ թե ավելացված է, այլ դրանք բաշխված են երկու մակարդակների վրա: Այստեղ ՏԻՄ-երի ծառայողների գործունեությունը չի վերահսկվում կենտրոնական կառավարության կողմից: ՏԻՄ-երը հաշվետու են իրենց ընտրողների առջև: Սակայն համայնքներում պարտադիր կերպով նշանակվում են աուդիտորներ, որոնք անկախ են նաև կենտրոնական կառավարությունից:

Ֆրանսիայում գործում է սոցիալ-տնտեսական տարածքային զարգացման հիմնադրամ, ինչը հիմնականում ներդրումային ուղղվածություն ունի, ֆինանսավորվում

⁴⁵G. Gorrelak and Kuklinski (eds) Dilemmas of Regional Policies in Eastern and Central Europe, Warsaw: University of Warsaw, 1999

⁴⁶ Managing across levels of government: United Kingdom, OECD, 1997, pp. 461-479

է պետական բյուջեի միջոցներից և ղեկավարվում երկրի գանձապետարանի կողմից: Այդ հիմնադրամի միջոցները, վարկերի տրամադրման միջոցով, օգտագործվում են հանրային ու մասնավոր ընկերությունների ներդրումային ծրագրերի ֆինանսավորման համար:⁴⁷ Ֆրանսիան բաժանված է 26 տարածաշրջանների, որոնք իրենց հերթին ընդգրկում են 100 դեպարտամենտ: Կենտրոնական կառավարությունը դեպարտամենտներում և տարածաշրջաններում նշանակում է պրեֆեկտներ, որոնք քաղաքացիական ծառայողներ են և ներկայացնում են կենտրոնական իշխանությունները կառավարման նշված մակարդակներում: Համայնքներում պետությունը ներկայացնում է բնակչության կողմից ընտրված ղեկավարը, որին տրված են լայն լիազորություններ: Կենտրոնական կառավարման և պետության միջև փոխհարաբերություններն իրականացվում են տարածաշրջանների միջոցով: Ֆրանսիայի տեղական ինքնակառավարման առանձնահատկություններից է նաև, որ կառավարման ապակենտրոնացման աստիճանի ընդլայնմանը զուգընթաց մեծանում է ապակենտրոնացման աստիճանը, որն էլ նպաստում է համայնքների համահարթեցման մակարդակների մոտեցմանը:

Տարածքային կառավարման յուրահատուկ մոդել ունի Գերմանիան, որը բաղկացած է երեք մակարդակներից՝ դաշնային, երկրամասային և մունիցիպալ (տեղական): Առաջին երկուսը համարվում են պետական «ուղղակի» կառավարման ինստիտուտներ, իսկ մունիցիպալ մակարդակը պետական կառավարման «անուղղակի» ինստիտուտ է՝ ինքնակառավարման անկախ մարմինների ձևավորմամբ: Գերմանիան բաղկացած է 16 երկրամասերից:⁴⁸ Երկրամասերը սեփական տարածքում ունեն օրենքների ընդունման և կիրառման պատասխանատվություն: Երկրամասերը ներկայացված են դաշնային օրենսդիր մարմնում (Bundestag)՝ կախված տարածքի մեծությունից, 3-6 անդամով: Այդ երկրում ֆինանսական համակարգը կառավարվում է մի շարք մակարդակներում: ՏԻՄ-երում հավաքագրված հարկերը ուղղվում են տեղական, երկրամասային և դաշնային բյուջեներին: Այնուհետև կատարվում է համահարթեցում երկու ուղղությամբ՝ դաշնային բյուջեից երկրամասերի բյուջեներին, ինչպես նաև երկրամասերի բյուջեներից տեղական բյուջեներին:⁴⁹

⁴⁷ Managing across levels of government: France, OECD, 1997, pp. 195-212

⁴⁸ Managing across levels of government: Germani, OECD, 1997, էջ 213-227

⁴⁹ Համայնքային ծառայության հիմունքներ: (Ուսումնական ձեռնարկ Է. Օրդյանի ընդ. ղեկավ. և խմբ). - Եր.: ՕՐ-ԴԱՐ հրատ., 2009. էջ 41-42

Ոչ միայն Եվրոմիությունում, այլ նաև ամբողջ Եվրոպայում տարածքային զարգացման ամենաարդյունավետ մոդելը գերմանականն է, որը ձևավորվել է 1990-ին երկու Գերմանիաների միավորման հետևանքով: Պատմական այս փաստը ինչ-որ տեղ «ստիպեց» գերմանացիներին կոնկրետ քայլեր ձեռնարկել զարգացման տարբեր մակարդակներում գտնվող երկու պետություններին. հնարավորինս շուտ կրճատել զարգացման մակարդակների տարբերությունները, համահարթեցնել բնակչության կենսամակարդակները, ազգը և պետությունը դարձնել միասնական երկիր: Երկրամասերի և տեղական իշխանությունների կառավարման կառույցների հստակ աշխատանքների շնորհիվ, արդեն 20 տարի անց, այդ երկրում գրեթե չի զգացվում նշանակալի տարբերություններ համայնքների ու երկրամասերի միջև:

Գերմանիայում համայնքների թիվը 24000-ից կրճատվեց մինչև 8500-ի: Այս առումով, զգալի փոփոխության ենթարկվեց Հոենոս-Վեստֆալիան, որտեղ համայնքների թիվը նվազեց 6 անգամ:

Շվեդիայում 1951-1999 թվականներին համայնքների թիվը 2498-ից դարձել է 289:⁵⁰ Էստոնիայում համայնքների թիվը 1890 թվականին կազմում էր 1000 միավոր, իսկ 1939-ին՝ 281:⁵¹ Դանիայում 1970 թվականին իրականացված վարչատարածքային բարեփոխումների արդյունքում 1300 համայնքների թիվը կրճատվեց մինչև 275-ի:⁵²

Ներկայացված տվյալները վկայում են, որ Եվրոպական երկրներում ընթանում է համայնքների թվաքանակի կրճատման համընդհանուր միտում, որը պայմանավորված է իշխանության ապապետականացմանը զուգահեռ տեղերում միջոցների և ռեսուրսների կենտրոնացման անհրաժեշտությամբ: Այդ երևույթի հետ համեմատման համատեքստում Հայաստանի Հանրապետության 930 համայնքների թիվը մտորումների տեղիք է տալիս:⁵³

Արևելյան Եվրոպայի նախկին սոցիալիստական երկրներում անհամաչափ տարածքային զարգացման հիմնախնդիրները հրատապ դարձան 1990-ական թվականներին վարչահրամայական տնտեսական համակարգի փլուզման արդյունքում: Գրեթե բոլոր երկրներում ձևավորվեցին լիդեր տարածաշրջաններ՝ իրենց մայրաքա-

⁵⁰Soren Haggroth "Local Governance the Case of Sweden" Lund, 2000, էջ 12

⁵¹"Local Government in Estonia" Tallinn, 1999, էջ 27

⁵²"Local Government in Denmark" Kommunernes Landsforening, 1999, էջ 10

⁵³Ղազարյան Է.Ֆ. 100 հարց և պատասխան տեղական ինքնակառավարման մասին: Եր: Հեղինակային հրատ. 2006, էջ 14

ղաքներով: Այդ երկրներում դրանք ընդգծված են հիմնականում ծայրամասերում՝ արևելյան շրջաններում, որտեղ անցումային գործընթացը դանդաղ էր ընթացել, քանզի այդ շրջանները գրավիչ չեն արտասահմանյան ներդրումների համար՝ համեմատաբար ցածր է կրթական մակարդակը և մարդկային կապիտալի աստիճանը: Ի հակառակ դրան, այդ երկրների արևմտյան տարածաշրջանները բարեհաջող կերպով իրականացնում են տնտեսական զարգացում՝ ներգրավելով օտարերկրյա ներդրումներ, որոնք դարձան տարածքային գործընթացի հաջողված օրինակներ՝ հաղթահարելով մեկուսացվածության բացասական հետևանքները: Այստեղ իր դրական ազդեցությունը թողեցին արևմտյան հարևանների՝ Գերմանիայի և Ավստրիայի հետ համագործակցությունը, քանզի «Արևմտյան գոտու» աշխարհագրական տեղադիրքն առավելություններ է տալիս:

Սկզբնական շրջանում արևելյան Եվրոպայի նախկին սոցիալիստական երկրների կառավարությունները (բացի Հունգարիայից) այդ հիմնախնդիրների լուծումը փորձեցին իրականացնել շուկայական հարաբերությունների միջոցով՝ թույլ չտալով նոր «տնտեսական քարտեզներ» ձևավորել իրենց երկրներում: Սակայն այդ մեխանիզմը չաշխատեց՝ կապված այդ երկրներում շուկայական օրենքների անտեղեկության և անցումային շրջանի բարդությունների հետ: Միայն 1990-ական թվականների վերջերին գրեթե բոլոր երկրներում մշակվեցին և ընդունվեցին տարածքային տնտեսական զարգացման մասին օրենսդրությունը:

Այսպես, օրինակ, Բուլղարիայում դեռևս 1989 թվականին փորձ կատարվեց օրենսդրական բարեփոխումների միջոցով սահմանափակել կենտրոնական կառավարության ներգործությունը տեղական կառավարման մարմինների վրա: Բուլղարիան ունի 9 տարածաշրջան 262 համայնքներով, որոնք վարչատարածքային միավորներ են, լիազորված են իրականացնել տարածաշրջանային քաղաքականություն՝ պետական կառավարման իրազործում տեղական մակարդակում, համակարգել ազգային և տեղական շահերը:⁵⁴

Բուլղարիայում համայնքները վարչատարածքային հիմնական միավորներն են, որոնք իրականացնում են ինքնակառավարում՝ տեղական կառավարության և

⁵⁴Public management profiles of Central and Eastern European countriesBulgaria. OECD. SIGMA, 1999, pp. 16-22

տեղական կառավարման ակտերի միջոցով: Բուլղարիայում համայնքային խորհրդի հիմնական գործառույթներն են՝.

- տնտեսության զարգացման ուղղության, շրջակա միջավայրի պահպանման, առողջության, սոցիալական, կրթական և մշակույթի գործունեության քաղաքականության սահմանումը,
- սեփական կազմակերպական կառուցվածքի սահմանումը,
- համայնքային կառավարման կառուցվածքի և գործառույթների սահմանումը,
- համայնքային բյուջեի կազմումը,
- տեղական վճարների սահմանումը և այլն:

Նշված գործառույթների և վերապահված լիազորությունների միջոցով այստեղ զգալիորեն կրճատվել են համայնքների միջև սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակների տարբերությունները, որում էական դեր է խաղում կենտրոնական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունների համակարգումը:

Հունգարիայի կառավարությունը ելնելով 1990 թվականին ընտրված ՏԻՄ-երի աշխատանքի արդյունքներից՝ 1994-ին ընդունեց «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություններ՝ յոթ տարածաշրջաններում վերացվեց հանրապետության հանձնակատարի ինստիտուտը, այն վերածվեց հանրային կառավարման գրասենյակների, որոնք հանրային կառավարման իշխանական մարմիններ են:⁵⁵

Այստեղ ստեղծվել են տարածքային զարգացման հիմնադրամ, որի նպատակներն են՝

- ապահովել հետամնաց տարածքների տնտեսության ամրապնդում, աշխատատեղերի ստեղծում, չոռոգվող հողատարածքների օգտագործման արդյունավետության բարձրացում,
- ապահովել գործազրկության բարձր մակարդակ ունեցող բնակավայրերում տնտեսական վերակազմավորում և իրականացնել մրցունակ տնտեսական գործունեություն,

⁵⁵Public management profiles of Central and Eastern European countries Hungary. OECD. SIGMA, 1999, pp. 16-19

- պարզեցնել տարածքային վերակազմավորումը միջտարածքային ենթակառուցվածքների միջոցով,
- ապահովել տարածքային զարգացման տնտեսական ծրագրերի նախագծում և գործարար տեղեկատվության ծառայությունների զարգացում,
- աջակցել կառավարության և պարլամենտի կողմից մշակված տարածքային զարգացման ծրագրերի իրականացմանը և այլն:

Սլովենիան Հունգարիայի նման չունի տարածքային կառավարում: Այստեղ 1995 թվականի հունվարի 1-ից սկսեց կիրառվել հանրային կառավարման տեղական ինքնակառավարման համակարգը, որով ձևավորվեցին նոր համայնքներ, ընտրվեցին խորհուրդներ և քաղաքապետեր: Առկա են տեղական ինքնակառավարման ոլորտը կարգավորող իրավական ակտեր, մասնավորապես, «Տեղական ինքնակառավարման մասին», «Տեղական ընտրությունների մասին» օրենքները: Սլովենիայում համայնքներն իրականացնում են միայն տեղական բնույթի գործառույթներ: Համայնքներն օրենքով կարող են միավորվել և ստեղծել պրովինցիաներ կամ ավելի խոշոր ինքնակառավարվող համայնքներ: Համայնքները սկզբունքորեն ֆինանսավորվում են տեղական հարկերի և այլ տուրքերի ու վճարների հաշվին, ինչպես նաև համայնքի ունեցվածքից ստացված եկամուտներից: Պրովինցիաների և մյուս խոշոր համայնքների գործունեությունը ֆինանսավորվում է այլ համայնքների բյուջեներից, որոնք ձևավորել են դրանք: Համայնքի կառավարման մարմինները համայնքային խորհուրդն է, համայնքապետը, ինչպես նաև համայնքային հանձնաժողովները և վերադաս հանձնաժողովը: Համայնքի խորհուրդը ներկայացուցչական մարմին է՝ համայնքի իրավասության շրջանակներում հիմնական որոշում ընդունողը, որն ընտրվում է չորս տարի ժամկետով:⁵⁶

Արևելյան Եվրոպայի սոցիալիստական երկրներից Լեհաստանը վարչահրամայական տնտեսական համակարգից շուկայականին անցավ շատ երկրների կողմից ընդունված ոչ թե «գրադուալիստական» (աստիճանական), այլ «շուկային թերապիայի» (կտրուկ) մեթոդով, ազատականացնելով գները և արագ կերպով մասնավորեցնելով արտադրության միջոցները, միաժամանակ ձեռնարկեց վարչատարածքային կառուց-

⁵⁶Public management profiles of Central and Eastern European countries Slovenia. OECD. SIGMA, 1999, pp. 18-20

վաճքի ձևափոխումներ: Ճիշտ է լեհական կառավարության մտադրություններն այդ ուղղությամբ վաղուց էին ձևավորվել:

Երկրի Սեյմի որոշմամբ 1990թ. հունվարի 1-ից Լեհաստանը վարչականորեն բաժանվեց 16 վոյեվոդության և 373 օկրուգի, այդ թվում 65 քաղաքային օկրուգներ: Միաժամանակ լուծարվեցին 268 տարածքային ներկայացուցչությունները և դրանց գործառույթների մեծ մասը փոխանցվեց նոր օկրուգներին:⁵⁷

Չեխիայում տեղական ինքնակառավարման իրավական հիմքը երկրի Սահմանադրությունն է, ինչպես նաև այլ հիմնական օրենքներ, որոնք վերաբերվում են կառավարմանը: Դրանցում առանձնանում են հատկապես «Համայնքների մասին» օրենքը և «Պրագայի մասին» օրենքը: Այստեղ համայնքը, որպես տեղական ինքնակառավարման հիմնական միավոր, ինքնուրույն կառավարվող, սեփականությամբ ու լիազորություններով իրավական մարմին է: Համայնքները կամավոր կարող են հիմնադրել կորպորացիաներ՝ արդյունավետ կառավարում իրականացնելու նպատակով: Համայնքները և կամավոր սկզբունքով ձևավորված կորպորացիաները կարող են համագործակցել արտասահմանյան երկրների համայնքների հետ, միանալ ՏԻՄ-երի միջազգային կազմակերպություններին, նրանց մասնակցությամբ հիմնադրել իրավական միավորներ:⁵⁸

Ռուսաստանի Դաշնության (ՌԴ) համար հանրային կառավարման համակարգում համայնքային ծառայության գաղափարը համեմատաբար նոր հասկացություն է, որի գործունեությունն անմիջականորեն կապված է տեղական ինքնակառավարման և այդ համակարգի օրենսդրական ամրագրման հետ: 1993 թվականին Սահմանադրությամբ ամրագրվեց, որտեղական ինքնակառավարման մարմինները չեն մտնում պետական իշխանության մարմինների համակարգի մեջ: 1995 թ.-ին ընդունված «Պետական ծառայության հիմունքների» մասին ՌԴ օրենքով արդեն պետական ծառայությունն առանձնացվեց որպես մասնագիտական գործունեություն՝ ուղղված պետական մարմինների լիազորությունների իրականացման ապահովմանը: Ռուսաստանի Դաշնությունում համայնքային ծառայության իրականացման համար իրավական

⁵⁷Օրդյան Է. Ապակենտրոնացում: Հայեցակարգային հիմնադրույթներ. - Եր.: ՕՐ-ԴԱՐ հրատ., 2007. էջ 30

⁵⁸ Համայնքային ծառայության հիմունքներ: Ուսումնական ձեռնարկ, Է. Օրդյանի խմբ.- Եր.: ՕՐ-ԴԱՐ հրատ., 2009. էջ 50-51

հիմք են հանդիսանում 1998 թվականին ընդունված «ՌԴ համայնքային ծառայության հիմունքների» մասին ՌԴ օրենքը, 1999 թվականին այդ օրենքում փոփոխություններու լրացումներ կատարելու մասին դաշնային օրենքը և 2007 թվականին ընդունված «Համայնքային ծառայության մասին» ՌԴ օրենքը:⁵⁹

ՌԴ-ում համայնքային ծառայողների խրախուսման ձևերը սահմանվում են ըստ առանձին համայնքների՝ նրանց իրավական ակտերով դաշնային օրենքներին և Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների օրենքներին համապատասխան: Համայնքային ծառայության ֆինանսավորումն իրականացվում է տեղական բյուջեների միջոցների հաշվին, որը նույնպես տարբերվում է աշխարհում լայն տարածում ստացած պետական բյուջեից տրամադրվող դոտացիաների կիրառման սկզբունքից:⁶⁰

Այսպիսով, վերլուծելով զարգացման տարբեր մակարդակներում գտնվող երկրների համայնքային ծառայության և տարածաշրջանային կառավարման փորձը համայնքների համաչափ զարգացման հիմնախնդիրների լուծման լույսի ներքո, կարելի է հանգել որոշակի եզրահանգումների՝

1. տարածքային զարգացման անհամաչափություններն ուսումնասիրելով հարց է առաջանում արդյոք պետությունները կարիք ունեն և անհրաժեշտ է միջոցներ ծախսեն տարածքային զարգացման միջև գոյություն ունեցող տարբերությունները կրճատելու ու վերացնելու համար,
2. կարող են դրանք ստեղծել ժամանակակից մրցունակ տնտեսություններ, որոնք կնպաստեն տարածքային զարգացման անհամամասնությունների նվազեցմանը,
3. ինչպիսի ընդհանուր կողմեր և առանձնահատկություններ կան հետազոտվող երկրների տարածաշրջանային կառավարման, ու ինչքանով են դրանք ընդունելի Հայաստանի Հանրապետության գյուղական համայնքների համաչափ զարգացման հիմնախնդիրների լուծման գործում:

Տարածաշրջանային կառավարման առանձին երկրների փորձի ուսումնասիրությունից համոզվում ենք, որ տեղական ինքնակառավարման առանձնահատկությունների և համայնքային ծառայության համակարգերի միջև գոյություն ունեն որոշա-

⁵⁹ Համայնքային ծառայության հիմունքներ: Ուսումնական ձեռնարկ, Է. Օրդյանի խմբ. - Եր.: ՕՐ-ԴԱՐ հրատ., 2009, էջ 39-40

⁶⁰ Федеральный закон Российской Федерации о муниципальной службе в Российской Федерации, 2 марта 2007г. 25-73, 8-я статья

կի համամասնություններ, որոնք արտահայտվում են ապակենտրոնացման բավարար մակարդակ ունեցող երկրներում (Մեծ Բրիտանիա, Գերմանիա և այլն), որոնք հիմնականում ունեն կայուն կերպով գործող հանրային ծառայության համակարգ, որտեղ ներգրավված հանրային ծառայողների (աշխատողների) գործունեությունը զգալիորեն տարբերվում է մյուս մակարդակների գործունեությունից և, որը կարգավորվում է համապատասխան իրավաօրենսդրական ակտերով:

Տարբեր երկրների տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության համակարգերի ուսումնասիրությունների արդյունքում գալիս ենք այն եզրակացության, որ գրեթե բոլոր երկրներում համայնքային ծառայությունները կազմում են հանրային ծառայության բաղադրիչ և գործում են հիմնական երեք մոդելների շրջանակներում.

ա) համայնքային ծառայություն, ինչը տարանջատված է պետական և հանրային ծառայության համակարգից,

բ) համայնքային ծառայություն, ինչն ինտեգրված է պետական հատվածի հանրային ծառայության հետ,

գ) համայնքային ծառայություն, որի կառավարման մակարդակների հանրային ծառայողները դասակարգվում են ըստ մասնագիտությունների:

Տարածաշրջանային կառավարման ապակենտրոնացման բարձր մակարդակ ունեցող երկրներում կառավարման կենտրոնական ու տեղական մակարդակներում իրականացվող հանրային ծառայության տարբերությունները խիստ ընդգծված են լինում, կարգավորվում են հիմնականում տարաբնույթ իրավական ակտերով:

Պետական կառավարման և ՏԻՄ-երում կիրառվող հանրային ծառայության միասնական համակարգի առավելություններից է այն, որ նրանցում բարձրանում է կառավարման արդյունավետությունը, ինչը բերում է վարչական ծախսերի կրճատմանը, մարդկային ու ֆինանսական ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարելավմանը:

Հայաստանի Հանրապետությունում Եվրոմիության երկրների և Ռուսաստանի Դաշնության հետ համեմատած համայնքային ծառայության համակարգի կիրառումն ունի և՛ ընդհանուր գծեր, և՛ տարբերություններ: Հայաստանում ավելի խիստ են տարանջատված համայնքային ու քաղաքացիական ծառայությունների իրավական

հիմքերը: Այդուհանդերձ ՀՀ կառավարման համակարգն ունի ապակենտրոնացման բարձր մակարդակ ունեցող երկրներին հատուկ հանրային ծառայության տարանջատված համակարգ՝ ընդգծված առանձնահատկություններով:

Այսպիսով վերլուծելով Հայաստանի Հանրապետությունում համայնքային զարգացման կառավարման բնորոշ գծերն ու առանձնահատկությունները, միաժամանակ ուսումնասիրելով համայնքային ծառայության կառավարման միջազգային փորձը, կարող ենք նշել, որ շուկայական տնտեսավարման պայմաններում, հանրապետությունում ձևավորված վարչատարածքային միավորները նոր փուլ հանդիսացան տարածքային քաղաքականության մշակման և իրականացման գործում:

Կոնկրետ Հայաստանի համար առավել ընդունելի է Բուլղարիայի, Հունգարիայի, Ռուսաստանի, համայնքների խոշորացման հարցում՝ Ֆրանսիայի, Գերմանիայի և Շվեդիայի փորձը, որոնք կարող են ուղեցույց հանդիսանալ համայնքների համաչափ զարգացման հիմնախնդիրները լուծելիս:

ԳԼՈՒԽ 2. ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՏԵՂԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

2.1. Կոտայքի մարզի ընդհանուր բնութագիրը և ռեսուրսային ներուժը

ՀՀ Կոտայքի մարզը կազմավորվել է «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքով Ազգային ժողովի որոշմամբ՝ 1995 թվականի դեկտեմբերի 12-ին: Կոտայքի մարզն ընդգրկում է Հրազդանի, Աբովյանի և Նաիրիի նախկին վարչական շրջանները: Մարզը զբաղեցնում է պատմական Հայաստանի Այրարատ նահանգի Կոտայք, Մազազ, Նիգ, Վարաժնունիք, Արագածոտն գավառների մի մասը: Պատմական տարբեր ժամանակահատվածներում նրա մոտավոր սահմաններն են եղել Գեղամա ու Ծաղկունյանց լեռներից մինչև Արարատյան դաշտն ընկած սահմանները:

Ներկայիս Կոտայքի մարզը գտնվում է հանրապետության կենտրոնական մասում (միակ մարզն է, որը չունի պետական սահման), ծովի մակերևույթից շուրջ 900-2500 մ բարձրության վրա: Տարածքն ընդգրկում է Հրազդան գետի վերին ու միջին ավազանը և Մարմարիկ գետի ավազանն ամբողջությամբ: Կոտայքի սարավանդն ընկած է Հրազդան գետի միջին հոսանքի ձախափնյա մասի մինչև Գեղամա լեռների արևմտյան ստորոտը: Կոտայքի մարզով են հոսում Գետառն ու Ազատը, որոնք ունեն ոռոգման նշանակություն: Ոռոգման համակարգում կարևոր դեր է խաղում Ակնա լիճը, որով ջրարբիացվում են նաև ամառային արոտավայրերը: Մարզում տիրապետող են կիսանանապատային, լեռնատափաստանային լանդշաֆտները: Կլիմայական գոտին խառն է, իսկ աշխարհագրական դիրքը՝ նպաստավոր: Մարզի տարածքով են անցնում Երևան-Շորժա, Երևան-Հրազդան-Իջևան երկաթուղիները և Երևան-Սևան պետական նշանակության ավտոմայրուղին: Մարզկենտրոն Հրազդան քաղաքից մինչև Երևան 45 կմ է: Մարզի ազգաբնակչության 97.6 տոկոսը հայեր են, իսկ ազգային փոքրամասնություններից են եզդիները, ասորիները, քրդերը, հույները և այլն:

Կոտայքի մարզի սոցիալ-տնտեսական համակարգում առաջատար տեղ է զբաղեցնում Հրազդանի տարածաշրջանը: Այն գտնվում է Հրազդան գետի վերին և միջին ավազանում: Տարածքի մեծ մասն ունի 1500-2400 մ բարձրություն: Հրազդանի տարածաշրջանում են արդյունաբերական քաղաքներ Հրազդանը և Զարենգավանն ու

հանգստյան ու առողջարանային քաղաք Ծաղկաձորը, իսկ գյուղական համայնքներն են՝ Ալափարսը, Աղավնաձորը, Արգականը, Արտավազը, Բջնին, Լեռնանիստը, Կարենիսը, Հանքավանը, Մարմարիկը, Մեղրաձորը, Սոլակը, Ջրառատը, Քաղսին, Ֆանտանը:

Աբովյանի տարածաշրջանը գտնվում է Ազատ և Հրազդան գետերի միջև՝ Կոտայքի սարավանդի վրա: Այս տարածաշրջանում են Աբովյան և Բյուրեղավան քաղաքները: Գյուղական բնակավայրերից են՝ Ակունքը, Առինջը, Արամուսը, Արզնին, Բալահովիտը, Գեղաշենը, Զառը, Զովաշենը, Զովքը, Կաթնաղբյուրը, Կամարիսը, Կապուտանը, Կոտայքը, Հատիսը, Ձորաղբյուրը, Մայակովսկին, Նոր գյուղը, Նուռնուար, Պտղնին, Ջրաբերը, Ջրվեժը, Գետարգելը, Սևաբերդը, Վերին Պտղնին, Գառնին, Գեղադիրը, Գեղարդը, Գողթը, Հացավանը, Ողջաբերդը:

Նաիրիի տարածաշրջանը տեղաբաշխված է Քասախ և Հրազդան գետերի միջև՝ Եղվարդի հրաբխային սարավանդի վրա: Այս տարածաշրջանում են գտնվում Եղվարդ և Նոր Հաճըն քաղաքները, որոնք հասարակությանը հայտնի են որպես մարզական հագուստի, գինու, կոնյակի արտադրությամբ և թանկարժեք քարերի մշակմամբ: Գյուղական համայնքներն են Արագյուղը, Արգելը, Բուժականը, Գետամեջը, Զովունին, Զորավանը, Թեղենիքը, Մրգաշենը, Նոր Արտամետը, Նոր Գեղին, Սարալանջը, Քանաքեռավան, Քարաշամբ, Նոր Երզնկան, Պոռշյանը և Քասախը:

ՀՀ Կոտայքի մարզի գյուղական համայնքների բնակչության թվաքանակը 2012, 2013 և 2014 թվականների հունվարի 1-ի դրությամբ տվյալները բերվում են հավելված 1-ում:

ՀՀ Կոտայքի մարզի վարչատարածքային բաժանման հիմնական տվյալները բերվում են աղյուսակ 2.1-ում:

ՀՀ Կոտայքի մարզը հարուստ է օգտակար հանածոների՝ ոսկու, ալյումինի, երկաթի, պերլիտի, մարմարի, գրանիտի, լիտոիդային պեմզայի, նեֆենելային սիանիտների, անդեզիտի, հրաբխային խարամների, բազալտի, քարաղի, զանազան շինարարական նյութերի և հանքային ջրերի 3 խոշոր հանքավայրերով (Հանքավան, Բջնի, Արզնի): Մարզում գրանցված են թվով 59 գործող և չգործող հանքավայրային տեղամասեր, որոնք պատկանում են 49 տնտեսվարող սուբյեկտների: Երկրաբանահետազոտական աշխատանքներ են կատարում 25-ը՝ բազալտի, պղինձ-մոլիբդենի,

մերգելային կրաքարերի, 17-ը՝ լիտոիդային պեմզայի, 2-ը՝ երկաթի, 3-ը՝ մարմարի, 2-ը՝ գրանիտի, միերալային ներկերի, ջրի պաշարների հարստացման և վերագնահատման ուղղությամբ:

Աղյուսակ 2.1

ՀՀ Կոտայքի մարզի վարչատարածքային բաժանման ցուցանիշները 2014թ-ի
կտրվածքով⁶¹

Nº	Ցուցանիշները	Չափման միավորը	Կոտայքի մարզ
1.	Տարածքը	քառ. կմ	2086
2.	ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը	%	7
3.	Քաղաքային համայնքներ	միավոր	7
4.	Գյուղական համայնքներ	միավոր	60
5.	Գյուղեր	միավոր	62
6.	Քաղաքներ	միավոր	7
7.	Բնակչության թվաքանակը 2014թ հունվարի 1-ի դրությամբ, այդ թվում՝ քաղաքային գյուղական	հազ. մարդ	255.0
		հազ. մարդ	138.5
		հազ. մարդ	116.5
8.	Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	%	54.3
9.	Գյուղական բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	%	45.7
10.	ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	%	8.5
11.	Գյուղական նշանակության հողեր, այդ թվում՝ վարելահողեր	հա	154627.6
		հա	37765.8

Մարզը հարուստ է ջրային ռեսուրսների պաշարներով (Գառնիի, Ալափարսի, Կաթնաղբյուրի, Սուլակի, Արզականի, Նուռնուսի, Մաքրավանի քաղցրահամ ջրերի աղբյուր), որոնք բացի տարածաշրջանի բնակավայրերին, խմելու ջուր են մատակարարում մայրաքաղաքին:

⁶¹ Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2010-2014թթ.-եր., 2015, էջ 280

Մարզի ջրային ավազանը բավականին հարուստ է: Մարզի տարածքով են հոսում, Հրազդան, Մարմարիկ, Մեղրաձոր, Ծաղկաձոր, Դալար, Արջաձոր, Գետառ և Ազատ գետերը: Մարզում են գտնվում Մարմարիկի ջրամբարը՝ 25 մլն մ³ ծավալով, Սևաբերդի ջրամբարը՝ 6, Ախպարայի ջրամբարը՝ 2.5, Ակնալիճը՝ 5, Սագերի լիճը (Ղազիգյուլ)՝ 0.25, Բազմալիճք լիճը՝ 0.24, Լուսնալիճ լիճը (Զեյնալ)՝ 0.11 մլն մ³ ծավալով:

Հանքային ջրերի օգտագործման համար լիցենզիաներ են տրամադրվել Արզնիի և Բջնիի հանքավայրերին շշալցումներ իրականացնելու համար, իսկ Հանքավան ու Արզնի հանքային ջրերը օգտագործվում են նաև բուժական նպատակներով:

Գույքագրման տվյալներով մարզում առկա են 440 բնադրյուրներ և 200-ից ավելի խորքային հորեր: Առատ աղբյուրները շահագործվում են ջրամատակարար ընկերությունների, իսկ փոքր աղբյուրները՝ համայնքների կողմից: Դրա հետ միասին անմխիթար վիճակում են գտնվում հիմնականում լեռնային և անտառային գոտու բնակավայրերի խմելու ջրերի ակունքները, որոնք վտանգված են աղտոտվելու տարատեսակ վնասակար նյութերով:

Կոտայքի մարզը որոշակիորեն հարուստ է անտառներով, սակայն գեղատեսիլ անտառների պարագայում հանքային պաշարներով (մետաղներով հարուստ ընդերք) տարածքները կնպաստեն համայնքների սոցիալ-տնտեսական զարգացմանը, միաժամանակ առաջացնելով բնապահպանական խնդիրներ: Ներկայումս իրականացվում են նաև օգտակար հանածոների հետազոտությունն ու գնահատում, ինչը կարող է փոխել հանքարդյունաբերության կոնյուկտուրան՝ կլուծի մի շարք ռազմավարական խնդիրներ, բայց բնապահպանական տեսանկյունից կառաջացնի լուրջ մտահոգություններ՝ կմեծանա շրջակա միջավայրի աղտոտվածությունը, բնական լանդշաֆտների վերացմանը, կվտանգի անտառների հետագա պահպանումը: Մարզում առկա է 2 հարթավայր՝ Եղվարդի հարթավայրը (ծովի մակերևույթից 1200-1300 մետր բարձրության վրա) և Հրազդանի սարահարթը՝ 1700-1800 բարձրության վրա:

Կոտայքի մարզի ընդհանուր տնտեսության վերաբերյալ կարելի է կարծիք կազմել աղյուսակ 2.2-ի տվյալներից:

Կոտայքի մարզի տնտեսության հիմնական ճյուղերի տեսակարար կշիռը

ՀՀ ընդհանուր ծավալում ⁶² (%)

Տնտեսության ոլորտները	2005 թ.	2012 թ.	2013 թ.	2014 թ.
Արդյունաբերություն	10.3	12.9	13.4	13.0
Գյուղատնտեսություն	9.2	6.3	6.1	6.0
Շինարարություն	3.9	9.2	6.4	4.8
Մանրածախ առևտուր	1.6	2.9	3.1	2.9
Ծառայություններ	1.1	2.9	3.5	3.7

Աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ վերջին 8-9 տարվա ընթացքում մարզի տնտեսության կառուցվածքում, որոշակի տեղաշարժեր են տեղի ունեցել՝ ավելացել են արդյունաբերության տեսակարար կշիռը (2.7 կետով), շինարարության, մանրածախ առևտրի և ծառայությունների տեսակարար կշիռները, նվազել է գյուղատնտեսության բաժինը 3.2 կետով, ինչը մտահոգության առիթ է տալիս, քանի որ գյուղատնտեսությունն էական դեր է խաղում ոչ միայն բնակչության կենսամակարդակի բարձրացման, այլ նաև գյուղական համայնքների համահարթեցման հարցում:

ՀՀ Կոտայքի մարզի արդյունաբերությունը դիվերսիֆիկացված է, արդյունաբերության համախառն արտադրանքի ծավալով այն զիջում է միայն Սյունիքի մարզին, որը թողարկում է հանրապետության ընդհանուր արդյունաբերական արտադրանքի 17.7 տոկոսը:

Կոտայքի մարզի արդյունաբերական արտադրանքի ծավալը 2000-2011 թվականներին ավելացել է ավելի քան երկու անգամ՝ 49.8 մլրդ. դրամից հասնելով 104.7 մլրդ.-ի: Մարզում տարեց-տարի մեծացել է արդյունաբերական արտադրանքի ծավալը, ընդ որում, եթե 1995-2002 թվականներին արդյունաբերական արտադրանքի ծավալն ընթացիկ գներով աճել է ընդամենը 9 %-ով՝ նշված ժամանակահատվածում զիջելով սղաճի ցուցանիշին, ապա 2003-2011 թվականներին արդյունաբերական արտադրանքի ծավալի աճը՝ ընթացիկ գներով գերազանցել է 80 %-ը:

⁶² Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզը թվերով, 2013,2014,2015թ.-էջ 15

Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի, արտադրության և բաշխման ծավալով Կոտայքի մարզը գերազանցում է հանրապետության բոլոր մարզերին, ընդ որում դրանց ծավալի շուրջ 30 տոկոսը բաժին է հասնում Կոտայքին: Հանրապետության մարզերի ամենահզոր վերամշակող արդյունաբերությունը գտնվում է Կոտայքի մարզում, որտեղ իրականացվում է ընդհանուր արտադրանքի ծավալի 25 տոկոսը:

Մեքենաների և սարքավորումների առանձին տեսակներ արտադրվում են բացառապես Կոտայքի մարզում: Հայաստանում դեղագործական արտադրանքների արտադրության ծավալի շուրջ 20 տոկոսը, կաշվի և կաշվե արտադրատեսակների 13 տոկոսից ավելին արտադրվում է Կոտայքի մարզում: հանրապետության մարզերում պատրաստի մետաղե արտադրատեսակների (բացի մեքենաներից և սարքավորումներից), ինչպես նաև ոչ մետաղական հանքային առանձին արտադրատեսակների, արտադրության ծավալի 50 %-ից ավելին թողարկվում է Կոտայքի մարզում: Հանրապետության մարզերի սննդամթերքի 1/5-ը, խմիչքների 1/3-ից ավելին արտադրվում է Կոտայքի մարզում: Հիմնային մետաղների և էլեկտրական սարքավորումների արտադրության 1/6-ը բաժին է հասնում Կոտայքին:⁶³

2007-2011 թվականներին մարզում կառուցվել, գործարկվել, վերազինվել և արդիականացվել են մի շարք ձեռնարկություններ, որն էլ զգալիորեն աշխուժացրել է մարզի տնտեսական կյանքը: 2012թ. գործարկվեց Հրազդանի ջերմաէլեկտրակայանի հինգերորդ էներգաբլոկը, 2008-2011թթ. մարզում կառուցվել է 5 փոքր հիդրոէլեկտրակայան: 2010 թվականին «Սարանիստ» ընկերությունը շահագործման հանձնեց 15 միլիոն միավոր արտադրական հզորության ապակե տարաների արտադրության հոսքագիծը և փաթեթավորման հոսքագիծը: Իտալական SACME ընկերության նախագծով Բյուրեղավանում «Գլաս Ուորլդ Քամփնի» ընկերությունը հիմնել է շշալցման արտադրություն, միաժամանակ արտադրելով ապակե շշերի խցաններ, «TWIST-OFF» կափարիչներ, բարձորակ պիտակներ և փաթեթավորման նյութեր: Միայն վերջին տարիներին կառուցվել են քաղցրահամ և հանքային ջրերի շշալցման գործարան, հո-

⁶³ Կոտայք: ՀՀ Կոտայքի մարզի ձեռքբերումները 2007-2011 թթ., Եր. Տնտես. բարեփոխումների վերլուծ. տեղեկատվական կենտրոն, 2012, էջ 10-13

լանդական վարդերի աճեցման ջերմոցային տնտեսություններ, «Մուլտի Ակվամարին» գործարանը, գործարկվել է «Լորի» ադամանդագործական ընկերությունը և այլն:

Մարզում կարևոր տեղ է զբաղեցնում հանրապետության առաջատար ֆինանսա-արդյունաբերական «Մուլտի գրուպ» կոնցեռնը, որի համակարգում գործում է տնտեսության տարբեր ճյուղերի 37 ընկերություն, որոնցից քարի արդյունաբերական վերամշակման և երեսապատման սալիկների արտադրության «Մուլտի սթոն» ձեռնարկությունը ոլորտի ամենախոշորն է հանրապետությունում, իսկ «Կոտայք» գարեջրի գործարանի հեղինակությունը վաղուց է հայտնի օտարերկրյա սպառողներին:

Կոտայքի արդյունաբերական արտադրանքի իրացման ծավալն անընդհատ աճում է՝ հիմնականում պայմանավորված թռչնամսի, կաթի և կաթնամթերքի, ալյուրի, հանքային ջրերի, հագուստի արտադրության ոլորտում ունեցած հաջողություններով: Արտահանման ծավալների մեջ աճ է գրանցվում հիմնականում ԱՊՀ երկրների ուղղությամբ՝ թռչնամսի, մրգահյութերի, հանքային ջրերի, ցեմենտի, շինանյութերի, ապակե տարանների ոլորտներում:

Կոտայքի մարզում իր տնտեսական նշանակությամբ և թողարկված արտադրանքի ծավալով, աղյուսաբերությունից հետո երկրորդ տեղն է զբաղեցնում գյուղատնտեսությունը, որի հիմնախնդիրների և զարգացման առանձնահատկությունների հարցերի քննարկումը կատարվում է սույն աշխատանքի հաջորդ պարագրաֆում:

Մարզում ծառայություններ են մատուցվում տրանսպորտային, փոստային ծառայությունների, հեռախոսակապերի, ինտերնետային կապերի մատուցմամբ: Մարզում գործում են ավտոբուսային և միկրոավտոբուսային շուրջ 40 ներմարզային երթուղային, որոնցում շահագործվում են մոտ 100 տրանսպորտային միջոցներ: Այստեղ փոստային ծառայություններն իրականացվում են «Հայփոստ» ՓԲԸ-ի 17 քաղաքային և 50 գյուղական բաժանմունքների միջոցով: «Արմենտել» համատեղ կազմակերպությունն ավտոմատ հեռախոսակայաններով ապահովված 45 կայաններով սպասարկում է բնակչությանը: Բջջային կապի ծածկույթը կազմում է ավելի քան 80 տոկոս:

Կոտայքի մարզում, որոշակի չափով զարգացած է նաև մշակութային, կրթական, առողջապահական և մյուս ծառայությունները, որոնց քանակի և ներուժի վերաբերյալ տվյալները բերվում են աղյուսակ 2.3-ում.

Կոտայքի մարզի ձեռնարկությունների, կազմակերպությունների և հիմնարկների
թվաքանակը 2008, 2012 և 2014 թվականներին⁶⁴


№	Ոլորտները	2008	2012	2014
1	2	3	4	5
1.	Հանքարդյունաբերություն	4	6	6
2.	Մշակող արդյունաբերություն	111	117	120
3.	Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում	11	12	12
4.	Գյուղատնտեսություն, որսորդություն և անտառային տնտեսություն	9	9	9
5.	Ձկնորսություն և ձկնաբուծություն	1	1	1
6.	Շինարարություն	22	27	29
7.	Տրանսպորտի	30	27	27
8.	Կապի	4	4	4
9.	Ծառայությունների մատուցում	229	234	236
10.	Թանգարաններ	5	5	5
11.	Գրադարաններ	80	79	79
12.	Սպորտ	10	12	12
13.	Տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկում	1	1	1
14.	Մանկատներ	1	1	1
15.	Հիվանդանոցներ	10	10	10
16.	Ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկներ	43	43	43
17.	Հյուրանոցներ և ռեստորաններ	17	20	22

⁶⁴ ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով 2008-2012, Եր. 2013, էջ 280-284
ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով 2010-2014, Եր. 2015, էջ 283-284

1	2	3	4	5
<u>Մանրաձախ առևտրի օբյեկտներ</u>				
18.	Մանրաձախ առևտրի օբյեկտներ, ընդամենը՝	1448	1545	1193
	այդ թվում՝-խանութներ	535	841	854
	-կրպակներ	852	645	280
	-գյուղատնտեսական արտադրանքների շուկաներ	3	2	2
	-սպառողական ապրանքների շուկաներ	7	5	4
	-առևտրի այլ օբյեկտներ	51	52	53
19.	Կրթական հաստատություններ, ընդամենը՝	197	190	190
	որոնցից՝			
	-նախադպրոցական	50	52	54
	-հանրակրթական պետական դպրոցներ	110	104	104
	-ոչ պետական հանրակրթական դպրոցներ	2	2	1
	-երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ,	26	24	25
	մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	6	6	8
	-պետական միջին մասնագիտական ուսումնական			
	-ոչ պետական բարձրագույն ուսումնական	3	2	1

Վերջին 10-12 տարվա ընթացքում ՀՀ կառավարության և մունիցիպալ իշխանությունների ջանքերով իրականացված միջոցառումների շնորհիվ զգալիորեն կրճատվել է արտագնա աշխատողների թվաքանակը Կոտայքի մարզից, որի վերաբերյալ տվյալները բերվում են գծապատկեր 2 ում: 1998-2011թթ ընթացքում մարզում ամուսնությունների թիվը 860-ից հասել է 1934-ի: Մարզում 2011թ. ծնվել է 40 %-ով ավելի շատ երեխա, քան 2002թվականին: 2002-2011 թվականներին Կոտայքի մարզում բնակչության բնական աճն ավելացել է շուրջ 80 տոկոսով:⁶⁵ Նման դրական ցուցանիշների գրանցմանը նաև իր լուծման է ներդրել գյուղատնտեսության համեմատաբար կայուն զարգացումը:

⁶⁵ Կոտայք: ՀՀ Կոտայքի մարզի ձեռքբերումները 2007-2011թթ. Եր. Տնտես. բարեփոխումների վերլուծ. տեղեկատվական կենտրոն, 2012, էջ 6-9



**Գծապատկեր 2. Կոտայքի մարզից մեկնողների թվաքանակը
ըստ 2000-2014թթ. (մարդ):**

Այսպիսով, ամփոփելով ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր բնութագրի հակիրճ վերլուծությունը, կարելի է նշել, որ առաջադրված հիմնախնդրի լուծման հարցում ամենահիմնականը եղել և մնում է գյուղատնտեսության ոլորտը, որն ապահովում է գյուղական բնակչությանը աշխատանքով, կայուն եկամտով, գյուղացուն «կապում» իր հողին ու բնակավայրին:

2.2. ՀՀ Կոտայքի մարզի գյուղատնտեսության վիճակի տնտեսագիտական վերլուծությունը և զարգացման հիմնախնդիրները

Ագրոպարենային համալիրը (ԱՊՀ) իր տնտեսական նշանակությամբ էական տեղ է զբաղեցնում, ինչպես յուրաքանչյուր երկրի, այնպես էլ նրա առանձին տարածաշրջանների կյանքում: ԱՊՀ-ում վճռորոշ դերը պատկանում է գյուղատնտեսությանը, որը կոչված է ապահովելու երկրի բնակչությանը գյուղատնտեսական մթերքներով, իսկ սննդի ու թեթև արդյունաբերությանը՝ գյուղատնտեսական հումքով: Ցեղիսը, Ռեյկին և Ուգարովը նշում են, որ եթե նախկինում գյուղատնտեսության հասկացության տակ ընդունվում էր միայն բուսաբուծությունն ու անասնաբուծությունը, ապա ներկայումս առավել լայն իմաստով գյուղատնտեսությունը դա տնտեսական գործունեության ձև է, ինչն ուղղված է օրգանական նյութերի ստացմանը՝

բուսաբուծական մթերքներից ու դրանց կենսաբանական և տեխնիկական ձևափոխումից ավելի թանկ ապրանքների:⁶⁶

Գյուղատնտեսական արտադրության ամենաբնորոշ առանձնահատկությունն այն է, որ այստեղ խաչաձևում են արտադրության տնտեսական և բնական գործոնները, ինչը պահանջում է տնտեսական գործոնները հարմարեցնել բնական ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործմանը, քանի որ բնակլիմայական պայմաններն են թելադրում արտադրության կազմակերպման բնույթը: Գյուղատնտեսական արտադրությունն ունի ցածր առաձգականության գործակից՝ հողի սահմանափակությունը հնարավորություն չի տալիս գյուղմթերքների հանդեպ պահանջարկի ու գների բարձրացման պարագայում, արագացնելու արտադրության գործընթացը, չի խթանում կապիտալ ներդրումների ծավալների մեծացմանը (տնտեսական լագի⁶⁷ մեծ տևողության պատճառով), որը շուկայական հարաբերությունների պայմաններում ունի ցածր գրավչություն:

Աշխարհում գնալով պարենային ապահովվածության հիմնախնդիրները ավելի են սրվում, քանի որ մի կողմից ավելանում է աշխարհի բնակչությունը, իսկ մյուս կողմից կրճատվում է գյուղատնտեսական արտադրության հիմնական գործոնի՝ գյուղատնտեսական նշանակության հողատարածքների չափերը, ինչպես նաև մեծանում է բնակչության պահանջարկը բարձրորակ գյուղատնտեսական մթերքների հանդեպ:

Գյուղատնտեսական նշանակության հողատարածքները աշխարհում տեղաբաշխված են խիստ անհամաչափ բնակչության թվի և ֆերմերային տնտեսությունների քանակի նկատմամբ: Կանադայում, Ավստրալիայում և Նոր Զելանդիայում մեկ ֆերմերային տնտեսության հաշվով հողատարածքները համեմատաբար կազմում են 156, 671 և 69 հեկտար, Արևմտյան Եվրոպայում՝ 12, իսկ ՀՀ-ում՝ ընդամենը 1,38 հա: Աշխարհում մեկ բնակչի հաշվով գյուղատնտեսական նշանակության հողատարածքները 3,7 հա է,⁶⁸ իսկ Հայաստանի Հանրապետությունում՝ 0,5 հա:⁶⁹ ՀՀ-ում գյուղա-

⁶⁶ Цедисс Ю., Рейки Э., Угаров А. Управление агропромышленным комплексом. - М.: ИКЦ, "Марц". 2003. - С. 236

⁶⁷ Լագը կապիտալ ներդրումների ետ գնման ժամկետն է

⁶⁸ Ломакин В. К. Мировая экономика, финансы. - М. 1998, - С. 184-185

⁶⁹ Ավետիսյան Ս. Հայաստանի գյուղատնտեսությունը. - Եր.: Լիմուշ հրատ. 2008, էջ 21

տնտեսական նշանակության հողերը կրճատվում են նաև հարաբերականորեն: Օրինակ, Հայաստանում բնակչության մեկ շնչի հաշվով գյուղատնտեսական պիտանի հողատարածությունը 1920 թ. կազմել է 3,0 հա, 2005 թ.՝ 0,43, իսկ 21-րդ դարի վերջում կլինի ընդամենը՝ 0,15 հա: Այս հանգամանքը կստիպի իշխանավորներին, արտադրողներին ուղիներ որոնել արտադրանքի հետագա ավելացման համար, սեփական երկրի մրցունակության և անկախության պահպանման համար դիմել ինտենսիվ մեթոդների: Հողը, ի տարբերություն մյուս արտադրամիջոցների, ճիշտ մշակության դեպքում, ոչ միայն չի մաշում, այլ բարձրացնում է իր բերրիությունը: Դա պայմանավորում է էկոնոմիկայում մի դրույքի զարգացում, համաձայն որի հողի վրա հետագա ներդրումների միջոցով բարձրացնում է նրա արգասաբերությունը: Սակայն դա անսահման չէ: Գիտությունը և պրակտիկան երկար ժամանակ փաստում են հողի վրա հետագա ներդրումների արտադրողականության անկման ոչ ցանկալի տնտեսական երևույթը, այսինքն դրսևորվում են «նվազող հատույցի» և «սահմանային արտադրողականության» օրենքները:⁷⁰

Հայաստանի Հանրապետության ագրարային ոլորտն ունի ռազմավարական կարևոր նշանակություն, քանի որ պարենային ապահովվածությունը մարդու իրավունքների տարրերից է, իսկ պարենային անկախությունը՝ երկրի տնտեսական անվտանգության բաղադրիչներից մեկը: Պարենային ապահովվածությունը կարող է պայմանավորված լինել պարենամթերքի բացակայությամբ, բնակչության անբավարար գնողունակությամբ, որոնք հանդիսանում են նաև տնային տնտեսություններում պարենամթերքի անբավարար օգտագործման հիմնական պատճառները:

Հայաստանի Հանրապետության 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում նշվում է, որ «Հանրապետության 915 համայնքներից 866-ը գյուղական են (գյուղում բնակվում է երկրի բնակչության շուրջ 36,0 %-ը), ուստի գյուղատնտեսությունը ռազմավարական կարևոր նշանակություն ունի նաև գյուղական տարածքների զարգացման առումով: Գյուղատնտեսությունում զբաղված են 437.2 հազ. մարդ, որը երկրի ընդհանուր զբաղվածության 37, իսկ գյուղական բնակավայրերի զբաղվածության 80%-ն է: Գյուղատնտեսությունը սննդի արդյունաբերության արժեքա-

⁷⁰ Գրիգորյան Կ. Գյուղատնտեսության էկոնոմիկայի (ագրարային տնտեսության) առարկան, նրա դասավանդման հիմնախնդիրները ներկա պայմաններում. - Եր.: ՀՊԱՀ հրատ., 2005, էջ 11-12

յին շղթայի կանորագույն օղակն է և գյուղական վայրերում ոչ գյուղատնտեսական զբաղվածության հնարավորությունների ստեղծման, ինչպես նաև տարածքային համաչափ զարգացում ապահովելու առումով չափազանց կարևոր է: Գյուղական բնակավայրերի բնակչության եկամուտների գերակշռող մասը ստացվում է գյուղատնտեսական արտադրությունից և այդ ոլորտում վարձու աշխատանքից: Հետևաբար այդ բնակավայրերում աղքատության մակարդակը մեծապես պայմանավորված է գյուղատնտեսության զարգացման վիճակով»⁷¹:

Այդ ծրագրում նշվում է, որ «Ակնկալվում է գյուղատնտեսության ոլորտի արտադրողականության աճ՝ 2021 թ. ոլորտի արտադրողականությունը պետք է երկու անգամ գերազանցի 2012 թ. ցուցանիշը: Գյուղատնտեսության արժեքային շղթայի մեջ մտնող հարակից ոլորտների զարգացման արդյունքում որոշակիորեն կաճի ոչ գյուղատնտեսական զբաղվածությունը գյուղական վայրերում»:⁷²

Ըստ գոյություն ունեցող ֆիզիոլոգիական նորմերի՝ երկրի պարենային անվտանգությունը համարվում է չափափակված, եթե կյանքի համար կարևորագույն սննդամթերքը կազմում է պահանջարկի 80 %-ից պակաս: Երկրի պարենային ինքնաապահովումը գնահատելիս ընդունված է այն նորմը, որի համաձայն՝ ներմուծվող ապրանքների մատակարարման մակարդակը չպետք է գերազանցի 30 %-ը:⁷³

ՀՀ-ում ագրարային ոլորտը միշտ էլ կարևոր դեր է ունեցել երկրի տնտեսության մեջ, որն ավելի մեծացավ շուկայական տնտեսության անցումային շրջանում, երբ բնակչության հիմնական սննդամթերքի ապահովման խնդիրը դարձավ առաջնային:

Ներկայումս սննդամթերքի նորմատիվային պահանջարկի որոշման հիմք է հանդիսանում դեռևս ԽՍՀՄ բժշկական գիտությունների ակադեմիային սննդի ինստիտուտի կողմից մշակված ֆիզիոլոգիական նորմերը, ըստ որի Հայաստանի համար գնահատվել է 2815 կկալ օրաբաժնի էներգետիկ արժեք:⁷⁴ Ընդ որում ընդհանուրի 73 %-ը պետք է ապահովվի բուսական ծագման սննդամթերքի հաշվին, իսկ 27 %-ը՝ կենդանա-

⁷¹ ՀՀ 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, հաստատված ՀՀ կառավարության 2014թ. մարտի 27-ի № 442-Ն որոշմամբ. - Երևան 2014, էջ 63

⁷² ՀՀ 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, հաստատված ՀՀ կառավարության 2014թ. մարտի 27-ի № 442-Ն որոշմամբ. - Երևան 2014, էջ 71-72

⁷³ Հովհաննիսյան Ա., Անասնաբուծական մթերքի արտադրության զարգացումը՝ պարենային ապահովման կարևոր բաղադրիչ: Հայաստան, ֆինանսներ և էկոնոմիկա, ապրիլ 2008, էջ 94-96

⁷⁴ Չախմախչյան Բ., Մանուկյան Մ., Մկրտչյան Հ. Պարենային շուկայի հիմնախնդիրները և զարգացման ուղիները ՀՀ-ում: Գյուղատնտեսության էկոնոմիկայի ԳՀԻ. - Եր. 2002, էջ 24

կան: Այդ համամասնության ապահովման անհրաժեշտությունը բխում է տարբեր հիվանդությունների կանխարգելման պահանջից:⁷⁵ Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այդ համամասնությունը Կոտայքի մարզում չի ապահովվում, քանի որ մարզում առավել չափով զարգացած է անասնապահությունը՝ սպառումների հնարավորությունները անասնամթերքի ձեռքբերման հանդեպ ավելի մատչելի են, քան բուսաբուծականի:

Ինչպես արդեն նշել ենք, ՀՀ Կոտայքի մարզը արդյունաբերական զարգացման տնտեսական ցուցանիշներով, Սյունիքի մարզից հետո երկրորդն է հանրապետությունում, բայց դրա հետ միասին այստեղ որոշակիորեն զարգացած է գյուղատնտեսությունը, որի համար առկա են համապատասխան նախադրյալներ՝ բնական ռեսուրսներ, գյուղմթերքների իրացման շուկաներ, հանձինս մայրաքաղաք Երևանին, բավարար մակարդակի գյուղատնտեսական ենթակառուցվածքներ, անհրաժեշտ կադրեր ու մասնագետներ և այլ:

Մարզի գյուղատնտեսական նշանակության հողերի տարածքը կազմում է 154627.6 հա (ընդհանուրի 74,1%-ը): Մարզի հողերի բարձրունքային գոտիականությունը համապատասխանում է հանրապետության ընդհանուր բնույթին՝ կլիմայի բոլոր տեսակներով: Այստեղ արևափայլքի տևողությունը տարեկան կազմում է 1920-ից 2400 ժամի սահմաններում, իսկ տեղումների տարեկան քանակը 310-726 մմ:⁷⁶

2014 թվականին ընտանեկան (գյուղացիական) տնտեսությունների կողմից մարզի 37,8 հազար հա վարելահողերից օգտագործվել է 17,1 հազար հա, որից 11,7 հազար հա՝ հացահատիկային մշակաբույսերի տակ: Համայնքներում փաստացի նպատակային ձևով չի օգտագործվել 20,7 հազար հա վարելահող: Դրանք հիմնականում գտնվում են բարձր լեռնային գոտիներում ու բնակավայրերից բավական հեռավորության վրա, քարքարոտ և դժվար մշակվող են:

Կոտայքի մարզում գյուղատնտեսական հողերի օգտագործման կառուցվածքը 2014 թվականին ունեցել է հետևյալ տեսքը՝

- վարելահողեր-37765,8 հա
- բազմամյա տնկարկներ-2292,7 հա

⁷⁵ Ասատրյան Պ., Հիմնական սննդամթերքների սպառման մակարդակը ՀՀ-ում: Գյուղէկոնոմիկայի ԳՀԻ գիտաժողովի նյութեր, 1998, էջ 17-19

⁷⁶ ՀՀ Կոտայքի մարզի 2015-2018 թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր: Հրազդան 2014, էջ 44

- խոտհարքներ-11254,8 հա
- արոտավայրեր-78995,9 հա
- այլ հողատեսքեր-23840,8 հա

Կոտայքի մարզի գյուղատնտեսական նշանակության հողերի կառուցվածքում առավել մեծ տեսակարար կշիռ ունեն արոտավայրերը (51,0 %) և վարելահողերը (24,4%): Գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման մակարդակը 80-85% է, ընդ որում խոտհարքեր՝ 90 % (առանձին համայնքներում՝ մինչև 100 %), արոտավայրեր՝ 100 %, վարելահողեր՝ 50-55 %: Մարզն ունի անասնապահության (միս, կաթ) և բուսաբուծության (հացահատիկ, կարտոֆիլ) արտադրական ուղղվածություն: Դրա հետ միասին մարզի բնակլիմայական պայմանները բարենպաստ են կորիզավոր, հնդավոր պտղատեսակների մշակության համար:

Կոտայքի մարզում գյուղատնտեսական արտադրությունը հիմնականում կազմակերպվում է գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների միջոցով: Մարզում գործում են (2014թ.) 32479 գյուղացիական տնտեսություններ, գյուղատնտեսական մթերքներ վերամշակող 30 կազմակերպություններ:

Հողի սեփականաշնորհումից հետո անցել է ավելի քան 20 տարի, արմատապես փոխվել է գյուղական ընտանիքների սեռահասակային կազմը, իսկ հողատիրությունը մնացել է անփոփոխ: Շատ ընտանիքներ ամբողջովին արտագաղթել են, բայց մնում են հողի սեփականատեր: 2014 թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ-ում գրանցված են շուրջ 340 հազար գյուղացիական տնտեսություններ, սակայն դրանցից 30,4 հազար տնտեսություն (8,4%) փաստորեն բացակայում են, այդ թվում Կոտայքում 6,8% (2190 տնտեսություն):⁷⁷

Մեկ գյուղացիական տնտեսության հաշվով Կոտայքի մարզում բաժին հասնող գյուղատնտեսական հողատեսքերը կազմում են 2,23 հա, այդ թվում՝ վարելահողը՝ 1,17 , բազմամյա տնկարկներինը՝ 0,71, խոտհարքինը՝ 0,35, իսկ անասնազխաքանակը՝ 2,06 պայմանական անասուն, որից խոշոր եղջերավոր անասուն՝ 1,8, այդ թվում՝ կովեր՝ 0,8, ոչխարներ և այծեր՝ 0,5:⁷⁸

⁷⁷ Հարությունյան Հ.Կ. Հողային հարաբերությունների իրավական կարգավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում // Ագրոգիտություն N 3-4, 2014, էջ 115-116

⁷⁸ ՀՀ Կոտայքի մարզի 2015-2018թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր: Հրազդան 2014, էջ 45

Հայտնի է, որ հանրապետությունում հողի սեփականաշնորհման հետևանքով ձևավորվեցին փոքր գյուղացիական տնտեսություններ, որոնցում չեն կարող կիրառել առաջավոր տեխնոլոգիաներ ու տեխնիկական միջոցներ: Սեփականաշնորհման ժամանակ, արդարություն պահպանելու նպատակով, լավագույն հողերը մասնատվեցին, կազմավորվեցին փոքր, բազմաթիվ հողակտորներով տնտեսություններ: Բավական է նշել, որ առկա գյուղացիական տնտեսությունների միայն 4,7%-ն ունեն մեկ ամբողջական հողակտորից բաղկացած հողամաս, 76 %-ն ունեն 2-4, իսկ 17,3 %-ը՝ 5-7 միմյանցից տարածականորեն տարանջատված հողակտորներ:⁷⁹ Դրանք բացասաբար ազդեցին հողօգտագործման արդյունավետության վրա, քանի որ փոքր հողատարածքների վրա գրեթե անհնարին է օգտագործել այն ժամանակվա հանրապետությունում առկա հզոր գյուղատնտեսական ուժային և բանող մեքենաները, կիրառել պարարտացման, բուժման արդյունավետ միջոցառումներ և ցանքաշրջանառություն, ինտենսիվացնել գյուղատնտեսական արտադրությունը: Փոքր հողակտորներով տնտեսության պայմաններում առաջացած միջդաշտային լրացուցիչ ճանապարհները և առուները, մոտավոր հաշվարկներով, 5-6 %-ով կրճատեցին օգտագործելի հողատարածքները: Հանրապետության մասշտաբով դա նկատելի տարածություն է, միայն բաշխված վարելահողերի կտրվածքով 15,3-18,4 հազար հա: ⁸⁰

Գրեթե նույն ճակատագրին արժանացավ անասնապահության ոլորտը, որտեղ սեփականաշնորհման արդյունքում բաշխվեցին նախկին կոլեկտիվ և պետական տնտեսությունների անասունները, շրջանակներից դուրս թողնելով անասնագոմերը և անասունների խնամքի և պահվածքի հետ կապված մյուս շինությունները և ենթակառուցվածքները: Բավական է նշել, որ սեփականաշնորհման նախօրյակին Հայաստանում գործում էին 65 տոհմային և թռչնաբուծական տնտեսություններ, որոնցից 38-ը տավարաբուծության ու 19-ը ոչխարաբուծության բնագավառում: Դրանց սեփականաշնորհումից հետո մնացել էր համապատասխանաբար 5 և 2 տնտեսություն:⁸¹ Սեփականաշնորհման արդյունքում մեկ գյուղացիական տնտեսությանը բաժին հասավ 1,6 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, 1,7 գլուխ ոչխար և 0,2 գլուխ խոզ: Անասնազվա-

⁷⁹ Ավետիսյան Ս.Ս. Հողի շուկայի ձևավորման և գյուղացիական տնտեսությունների օպտիմալացման սոցիալ-տնտեսական գործոնները // Ագրոգիտություն N 2, 1998, էջ 63

⁸⁰ Երոյան Մ.Պ. Հողային ռեսուրսների և դրանց օգտագործման արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները ՀՀ-ում. - Եր.: ՀԳԱ, 2001, էջ 60

⁸¹ Մանասեթյան Ն. Ագրարային հարցը երեկ և այսօր. - Եր. 2007թ: Գիտություն, էջ 102

քանակի սեփականաշնորհումը և հանրային անասնաբուժական համալիրների կազմալուծումը բացառեց տարրական տեխնոլոգիաների կիրառումը, տոհմային անասնաբուժական գենոֆոնդի պահպանումը և զարգացումը, կերարտադրության ու անասունների կերակրման պահանջվելիք մոտեցումները:

Հողի, անասունների և գյուղատնտեսության մյուս արտադրամիջոցների հապճեպ, շատ դեպքերում չհիմնավորված ու չնախապատրաստված սեփականաշնորհումը և մասնավորեցումն ավելի խորացրեց գյուղական համայնքների զարգացման մակարդակների տարբերությունները: Պետք է նշել, որ վարչական շրջանների և գյուղական բնակավայրերի անհամաչափ զարգացումը դրսևորվել էր դեռևս 1970-80-ական թվականներին: Գյուղատնտեսության զարգացման բնորոշ գծերը միշտ էլ իրենց կնիքն են թողնում գյուղական բնակչության կառուցվածքի և գյուղատնտեսական զբաղմունքների վրա: Հողային ֆոնդի բաշխման և մեկ շնչին կամ տնտեսության բաժին ընկնող գյուղատնտեսական նշանակության հողերի տարբերությունները պետք է հաշվի առնվեին վերափոխումների իրականացման ժամանակ:

Հանրապետության գյուղերի մեծ մասի համար օրենքով սահմանված նվազագույն 5 գլուխ խոշոր և քսան գլուխ մանր եղջերավոր անասունները չէր կարող արտացոլել դրանց հնարավորությունները: Գյուղացիների մեծ մասը չունենալով համապատասխան գոմեր, շինություններ և խնամքի անհրաժեշտ այլ պարագաներ, հրաժարվում էր սեփականաշնորհումից: Արդյունքում անասնազվխաքանակի սեփականաշնորհումը կատարվեց լուրջ թերություններով, առանց վերահսկման մեխանիզմների կիրառման, որը բերեց 1992-1993 թթ. զանգվածային մորթի, ինչն էլ իր հերթին վտանգեց անասնապահության զարգացումը:⁸² Սեփականաշնորհման տխուր հետևանքը երևում է հետևյալ թվերից: 1986 թվականին հանրապետությունում առկա էր 860,7 հազար խոշոր եղջերավոր անասուն, որից 319,3 հազար կով և 1902,8 հազար՝ մանր եղջերավոր, 1995 թ. դրանք համապատասխանաբար կազմել էին 503,7; 276 և 636 հազար գլուխ, իսկ 1999թ.՝ 509,6; 277,8 և 578,8 հազար: Ընդհանուր արդյունքում խոշորի գլխաքանակը նվազել է 42%-ով, իսկ մանր եղջերավորներինը՝ շուրջ 3,5 անգամ:

⁸² Գաբրիելյան Մ. Հայաստանի Հանրապետության արդի գյուղացիությունը. - Եր.: ՀՀ ԳԱԱ Գիտություն, 2001, էջ 18

Հայաստանի Հանրապետության և ՀՀ Կոտայքի մարզի գյուղատնտեսության հիմնական ցուցանիշները
2002-2014 թվականներին⁸³

Ցուցանիշներ	Հայաստանի Հանրապետություն						ՀՀ Կոտայքի մարզ					
	2002	2005	2010	2012	2013	2014	2002	2005	2010	2012	2013	2014
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
1. Գյուղատնտեսության համախառն արտադրանք (մլրդ դրամ)	377,6	493,0	636,7	841,5	919,1	993,5	23,8	30,9	39,9	53,0	56,3	59,8
2. Հացահատիկի և հատիկալնդեղենի համախառն բերքը (հազար տոննա)	415,5	396,2	326,4	456,1	548,8	590,6	17,1	24,4	11,6	19,2	27,9	28,0
3. Կարտոֆիլի համախառն բերքը (հազար տոննա)	374,3	564,2	482,0	647,2	660,5	733,2	16,3	12,9	14,1	17,5	16,3	16,8
4. Բանջարանոցային մշակաբույսերի համախառն բերքը (հազար տոննա)	466,0	663,8	707,6	849,0	876,0	954,6	26,6	23,4	21,0	22,8	22,4	22,5

⁸³ Աղյուսակը կազմվել է ըստ՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2007թ. և 2014թ.; ՀՀ ԱՎԾ պարենային ապահովություն և աղքատություն, Եր. 2007թ.; Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը 2010-2014թթ. Եր. 2015թ. էջ 39-43

Աղյուսակ 2.4-ի շարունակությունը

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
5.Պտղի և հատապտղի համախառն բերքը (հազար տոննա)	82,6	315,6	128,5	331,7	338,1	291,0	12,5	16,2	8,6	18,6	19,3	14,2
6.Խաղողի համախառն բերքը (հազար տոննա)	104,0	164,4	222,9	241,4	240,8	261,3	0,4	1,1	0,4	0,5	0,6	0,3
7.Խոշոր եղջերավոր անասուններ (հազար գլուխ)	514,2	573,3	571,4	661,0	677,6	688,6	48,3	55,8	52,0	59,4	61,6	59,4
որից՝ կովեր (հազար գլուխ)	270,1	290,1	272,6	303,3	309,6	313,9	26,6	29,0	24,6	27,4	28,2	27,0
8.Խոզեր (հազար գլուխ)	97,9	89,1	114,8	145,0	139,8	142,4	9,0	11,4	15,1	19,2	15,3	14,8
9.Ոչխարներ և այծեր (հազար գլուխ)	592,1	603,3	532,5	674,7	717,6	745,8	62,0	60,0	35,8	44,2	46,1	45,2
10.Իրացվել է անասուն և թռչուն կենդանի քաշով (հազար տոննա)	89,0	99,1	124,3	130,3	146,8	163,3	10,9	10,0	12,1	12,9	14,7	15,3
11.Արտադրվել է (կաթ հազար տոննա)	489,5	594,6	600,9	618,2	657,0	700,4	48,9	61,2	51,3	53,5	57,9	64,8
12.Ձուլ (մլն հատ)	477,7	518,2	702,2	658,1	615,2	641,8	211,1	206,6	156,4	132,1	117,3	127,5

Առանձնապես վատթար վիճակում հայտնվեցին հանրապետության խոզաբուծությունը և թռչնաբուծությունը: 1991-2000 թվականների ընթացքում խոզերի գլխաքանակը 329,3 հազարից իջավ մինչև 67,9 հազարի, իսկ թռչուններինը՝ 11244,7 հազար թևից մինչև 2907,4 հազարի կամ նվազեց 3,9 անգամ: Միայն պետական թռչնաբուծական տնտեսություններում և միայն 1992թվականին թռչունների քանակը կրճատվեց մոտ 18 անգամ:⁸⁴

Այդուհանդերձ, ժամանակի ընթացքում ՀՀ կառավարության աջակցությամբ և գյուղացիների անձնական ջանքերի շնորհիվ, աստիճանաբար վերականգնվեց և շարունակում է զարգանալ հանրապետության ագրոպարենային ոլորտն ամբողջությամբ, մասնավորապես, գյուղատնտեսությունը, ինչի վերաբերյալ վկայում են աղյուսակ 2.4-ի տվյալները:

Աղյուսակի տվյալներից պարզ երևում է, որ սկսած 2002թվականից, ինչպես ամբողջ հանրապետությունում, այնպես էլ ՀՀ Կոտայքի մարզում տեղի է ունեցել գյուղատնտեսության համախառն արտադրանքի աճ շուրջ 2,4 անգամ, գրեթե բոլոր արտադրատեսակների գծով ավելացել են գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալները, ավելացել է գյուղատնտեսության նյութատեխնիկական բազան, մասնավորապես, անասնագլխաքանակը և որոշակի չափով՝ գյուղատնտեսական տեխնիկան:

ՀՀ Կոտայքի մարզի գյուղատնտեսության ռեսուրսների բազայի 2011-2014թթ. տվյալները բերվում են աղյուսակ 2.5-ում:

Աղյուսակ 2.5-ում ներկայացված են ՀՀ Կոտայքի մարզի գյուղատնտեսության ռեսուրսային բազայի 2011-2014թթ. ցուցանիշները, որից պարզ է դառնում, որ նշված չորս տարիների ընթացքում որոշակի չափով նվազել է մարզի գյուղատնտեսության արտադրական ներուժը: Այսպես, գյուղական բնակչության թվաքանակը կրճատվել է 7800 մարդով (ավելի քան 6%), գյուղատնտեսությունում զբաղվածների թիվը՝ 4670-ով (14,0%), գյուղատնտեսական նշանակության հողերի տարածքը 7040 հա-ով (4,4%): Կրճատվել են նաև վարելահողերի և խոտհարքների տարածքները:

⁸⁴Փահրադյան Հ. Ագրարային արմատական վերակառուցումները Հայաստանի Հանրապետությունում. անհրաժեշտություն, արդյունքներ, հիմնախնդիրներ. - Եր.: ՀՀ ԳԱԱ Գիտություն, 2003, էջ 165

ՀՀ Կոտայքի մարզի գյուղատնտեսության ռեսուրսային բազայի 2011-2014թթ.

(տարեվերջի դրությամբ) ցուցանիշները ⁸⁵

Ցուցանիշները	Չափման միավոր	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.
1	2	3	4	5	6
1.Գյուղական համայնքների թիվը	միավոր	60	60	60	60
2.Գյուղական բնակչությունը	մարդ	124300	117100	116800	116500
3.Գյուղատնտեսությունում զբաղվածները	մարդ	33370	31700	28800	28700
4.Գյուղատնտեսական նշանակության հողերը	հա	161667	154987	154639,2	154627
այդ թվում՝ վարելահող	"	38057	37445,8	37818,7	37765,8
բազմամյա տնկարկ ^x	"	4478	5893	5026	5027
խոտհարք	"	1130	1127	1125,7	1124,8
արոտ	"	79000	79000	79000	79000
5.Խոշոր եղջերավոր անասուններ	գլուխ	52247	59455	61500	59400
այդ թվում կովեր	"	24004	27434	28215	27000
6. Խոզեր	հազ. գլուխ	15.1	19,2	15,3	14,8
7.Ոչխարներ և այծեր	գլուխ	35879	44247	46100	45200
8 .Թռչուններ	գլուխ	894633	1071316	582409	590000
9.Ածան հավեր	"	588397	595195	328336	330000
10.Գյուղատնտեսական տրակտորներ ^{xx}	միավոր	<u>745</u> 606	<u>758</u> 599	<u>787</u> 628	<u>745</u> 590

⁸⁵ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ ՀՀ ԱՎԾ-ի և ՀՀ Կոտայքի մարզպետարանի գյուղատնտեսության վարչության տվյալների հիման վրա

Աղյուսակ 2.5-ի շարունակությունը

1	2	3	4	5	6
11.Բեռնատար ավտոմեքենաներ ^{xx}	"	<u>1666</u> 1288	<u>2164</u> 1688	<u>1905</u> 1455	<u>1475</u> 1174
12.Հացահատիկահավաք կոմբայն ^{xx}	"	<u>82</u> 65	<u>83</u> 65	<u>87</u> 61	<u>87</u> 61
13.Կերահավաք կոմբայն ^{xx}	"	<u>17</u> 15	<u>25</u> 16	<u>27</u> 18	<u>27</u> 18
14.Տրակտորային շարքացաններ ^{xx}	"	<u>103</u> 102	<u>103</u> 102	<u>103</u> 102	<u>103</u> 102
15.Տրակտորային գութաններ ^{xx}	"	<u>253</u> 226	<u>253</u> 226	<u>253</u> 226	<u>253</u> 226
16.Կուլտիվատորներ ^{xx}	"	<u>107</u> 94	<u>107</u> 94	<u>107</u> 94	<u>107</u> 94

x-ներառում է բնակավայրերի տարածքում առկա բազմամյա տնկարկները,
xx-համարիչում ընդհանուր քանակը, հայտարարում սարքին վիճակում գտնվողները:

Դրա հետ միասին քանակական աճ է գրանցվել անասնաբուծության բնագավառում: Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակն 2014 թվականին 2011 թվականի համեմատ ավելացել է 7153-ով (13,7%), կովերինը՝ 2996-ով (12,5%), ոչխարներինը և այծերինը 9321-ով (25,9%): Սակայն նշենք, որ 2014թ. խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը 2013թ. համեմատությամբ նվազել է 2100 գլխով, մանրինը՝ 900 գլխով:

Հայտնի է, որ գյուղատնտեսության արդյունավետության բարձրացման գործում էական դեր է խաղում արտադրության գյուղտեխնիկայով ապահովվածությունը: Կոտայքի մարզում գյուղատնտեսական աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու համար կարևորվում է ոլորտի՝ նորագույն տեխնիկայով համալրումը: Ներկայիս շահագործվող տեխնիկան օգտագործվում է քսան տարուց ավելի, ֆիզիկապես և բարոյապես մաշվածության պատճառով ցանկալի արդյունք չի ապահովում, որն իր հերթին հանգեցնում է վառելանյութի ու քսայուղերի գերաճախսի, բերքի գերնորմատիվային կորուստների, թանկացնում նորոգման և տեխնիկական սպասարկման ծախսերի արժեքը: Տևական ժամանակ գյուղտեխնիկայի հավաքակազմը չհամալրելու, տեխնիկական խնամքներով չապահովելու հետևանքով աստիճանաբար նվազել է դրանց օգտակար գործողության գործակիցը: Հաշվարկները ցույց են տալիս, որ

ներկայումս շահագործվող տրակտորների միայն 4,5%-ն ունի մինչև 12 տարվա շահագործման ժամկետ, մնացածը շահագործվում է 13 տարուց ավելի, որի հետևանքով մեծանում են շահագործման ծախսերը, այդ թվում 1 էտալոնային հա-ի հաշվով վառելիքի ծախսը և միջին հաշվով 30%-ով նվազում է արտադրողականությունը:⁸⁶

Միջին հաշվով 20-25% տեխնիկան անօգտագործելի է՝ անսարք լինելու պատճառով, եղած տեխնիկան քանակապես խիստ անբավարար է գյուղացիական տնտեսություններին անհրաժեշտ ծառայությունների մատուցելու համար: ՀՀ Կոտայքի մարզի 100 գյուղացիական տնտեսության հաշվով գյուղտեխնիկայով ապահովվածության աստիճանի ցուցանիշները ներկայացվում են աղյուսակ 2.6-ում:

Աղյուսակ 2.6

ՀՀ Կոտայքի մարզի գյուղատնտեսական տեխնիկայի ապահովվածությունը 100 գյուղացիական տնտեսության հաշվով 2014թ. հունվարի 1-ի դրությամբ⁸⁷

№	Գյուղտեխնիկայի տեսակները	100 գյուղացիական տնտեսության հաշվով ապահովվածության գործակիցը
1.	Տրակտորներ	2,3
2.	Բեռնատար ավտոմեքենաներ	4,6
3.	Հացահատիկահավաք կոմբայններ	0,3
4.	Տրակտորային կցասայլեր	1,1
5.	Տրակտորային խոտհնձիչներ	0,4
6.	Կերահավաք կոմբայններ	0,1
7.	Հատիկագտիչ մեքենաներ	1,3
8.	Տրակտորային շարքացաններ	0,3
9.	Տրակտորային գութաններ	0,8
10.	Կուլտիվատորներ	0,3
11.	Հավաքիչ-մամլիչներ	0,4

Գյուղատնտեսական տեխնիկայով ապահովվածության գործակիցները խոսում են և պարզ կերպով ցույց են տալիս, որ դրանց քանակը շատ քիչ է, ինչն էլ ուղղակիորեն ազդում է գյուղատնտեսության արդյունավետության վրա: Ներկա պայմաններում

⁸⁶ Ավետիսյան Ս. Հայաստանի գյուղատնտեսությունը և ագրովերամշակումը. - Եր.: Լիմուշ հրատ. 2010, էջ 112

⁸⁷ ՀՀ Կոտայքի մարզի 2015-2018թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր, Հրազդան 2014, էջ 55

իրավիճակի բարելավման համար ամենառացիոնալ ուղին մնում է գյուղտեխնիկայի սպասարկման միջհամայնքային ծառայությունների և գյուղտեխնիկայի օգտագործման կոոպերատիվների ստեղծումը, որոնց միջոցով հնարավոր է բարձրացնել դրանցից օգտվողների հասանելիության աստիճանը:

Այդուհանդերձ, նույնիսկ այս պայմաններում Կոտայքի մարզի գյուղատնտեսության ոլորտը շարունակում է զարգանալ, տարեց-տարի բարելավվում են տնտեսական ցուցանիշները, որն էլ երևում է աղյուսակ 2.7-ի տվյալներից:

Աղյուսակ 2.7-ի ցուցանիշների ուսումնասիրությունից տեսնում ենք, որ մարզի գյուղատնտեսությունը առկա նյութատեխնիկական բազայի հիման վրա ձեռք է բերել որոշակի կայուն արտադրա-տնտեսական մակարդակ, որի շրջանակներից դուրս գալը պահանջում է լրացուցիչ ջանքեր, ներդրումներ և տեխնոլոգիաներ: Համեմայնդեալ, ներկա վիճակում մարզը տալիս է հանրապետության հացահատիկի և հատիկաընդեղենի շուրջ 5%-ը, կարտոֆիլի 2,5-3%-ը, պտղի և հատապտղի 4-5%-ը և ընդհանրապես բուսաբուծական արտադրանքի ընդամենը 3,5%-ը, ինչը հիմնավորվում է գյուղատնտեսական նշանակության հողատարածքների փոքր չափերի և անբարենպաստ բնակլիմայական պայմաններով:

Դրա հետ միասին, անասնաբուծության գծով մարզը առաջատար տեղ է զբաղեցնում հանրապետությունում, արտադրելով նրա անասնաբուծական մթերքների 10%-ից ավելին: Իհարկե, այստեղ պետք է հաշվի առնվի այն փաստը, որ Կոտայքի մարզում են տեղաբաշխված «Լուսակերտի տոհմային թռչնաբուծական ֆաբրիկա» ՍՊԸ-ն, Արզնու ԹԽՏ ԲԲԸ-ն, «Մուլտի ագրո» ՍՊԸ-ն և անասնաբուծական մթերքների վերամշակման 13 մասնագիտացված ընկերություններ՝ «Թամարա» ՍՊԸ, «Թամարա ֆուդ» ՍՊԸ, «Չանախ» ՍՊԸ, «Բեկոն պրոդուկտ» ՍՊԸ, «Նորմա կաթ» ՍՊԸ և այլն:

Մարզի անասնաբուծության ցուցանիշներից երևում է, որ դեռևս ցածր է գյուղատնտեսական անասունների մթերատվությունը, արտադրության ծավալների աճը տեղի է ունենում հիմնականում էքստենսիվ եղանակով:

Մարզում լայն թափ է ստանում մեղվաբուծությունը: 2014թ. հունվարի 1-ի դրությամբ մարզում առկա էր 22714 մեղվաընտանիք, իսկ մեկ տարի հետո՝ 26046, 2014-ին աճը կազմել է 14,6%:

ՀՀ և ՀՀ Կոտայքի մարզի գյուղատնտեսության համախառն արտադրանք 2011-2014 թթ. տվյալներով ⁸⁸

(մլրդ. դրամ)

Մթերքների անվանումը	2011թ.			2012թ.			2014թ.		
	ՀՀ	ՀՀ Կոտայքի մարզ	ՀՀ Կոտայքի մարզի տեսակարար կշիռը ՀՀ-ում, %	ՀՀ	ՀՀ Կոտայքի մարզ	ՀՀ Կոտայքի մարզի տեսակարար կշիռը ՀՀ-ում, %	ՀՀ	ՀՀ Կոտայքի մարզ	ՀՀ Կոտայքի մարզի տեսակարար կշիռը ՀՀ-ում, %
1	2	3	4	5	6	7	8	9	10
Ընդամենը բուսաբուծություն	465,1	16,21	3,5	516,0	18.1	3,5	605,7	19,3	3,2
Ընդամենը անասնապահություն	329,9	34,5	10,5	326.0	34.9	10,7	387,8	40,5	10,4
Ընդամենը գյուղատնտեսությունում	795,0	50,8	6,4	841.5	53.0	6,3	993,5	59,8	6,0

⁸⁸ Աղյուսակը կազմված է՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2014թ., ՀՀ մարզերը և Երևան քաղաքը 2010-2014թթ. Եր. 2015թ., ՀՀ Կոտայքի մարզպետարանի գյուղատնտեսության վարչության տվյալների հիման վրա:

Շուկայական տնտեսավարման պայմաններում գյուղատնտեսության զարգացման կարևոր գործոն է համարվում արտադրանքի իրացման կազմակերպումը և ապրանքայնության մակարդակի բարձրացումը: Դա գյուղատնտեսության կայունության, գյուղացիական տնտեսությունների եկամուտների ապահովման և գյուղատնտեսության վերարտադրության հիմնական գրավականն է: Չնայած որոշակի տեղաշարժեր են գրանցվել գյուղմթերքների իրացման և արտահանման ուղղությամբ, այդուհանդերձ, իրացման հիմնախնդիրները Կոտայքի մարզում դեռևս նշանակալի են:

Մարզի գյուղատնտեսության համար կարևոր հիմնախնդիր է մնում ապրանքայնության մակարդակի բարձրացումը, որի ուղղությամբ պետք է իրականացնել համապատասխան միջոցառումներ, ինչը կհանգեցնի գյուղացիական տնտեսությունների կայունացմանը և գյուղական համայնքներում աղքատության կրճատմանը:

ՀՀ Կոտայքի մարզում գյուղատնտեսության համախառն և ապրանքային արտադրանքի կառուցվածքների 2011-2014թթ. վերաբերյալ տվյալները բերված են աղյուսակ 2.8-ում:

Աղյուսակի տվյալներից տեսնում ենք, որ Կոտայքի մարզի գյուղատնտեսական արտադրանքի ապրանքայնության մակարդակը բավականին համեստ ցուցանիշ ունի, հատկապես բուսաբուծության ոլորտում, որը միջին հաշվով 2011թվականին կազմել է 54,0, 2012թ.՝ 48,3, իսկ 2014թ.՝ 57,7%: Ապրանքայնության աստիճանը համեմատաբար բարձր է անասնապահության ոլորտում, որը 2011թ. կազմել է 80,3 , 2012թ.՝ 79,7, իսկ 2014թ.՝ 79.5%: Նշանակում է անասնապահության արտադրանքի միայն 1/5 մասն է ենթարկվում սեփական սպառման:

Անշուշտ, արտադրանքի ապրանքայնության մակարդակի ու ծավալների աճի ամենակայուն ուղին մնում է գյուղմթերքների վերամշակման աշխատանքների կազմակերպման կատարելագործումը, որը չնայած վերջին ժամանակներում որոշակիորեն զարգացել է, այդուհանդերձ, այն բավարար չէ և գյուղացին ամբողջությամբ չի կարողանում իրացնել դժվարությամբ աճեցված գյուղատնտեսական արտադրանքը: Ներկայումս այդ արտադրանքի մի մասը ենթարկվում է ապրանքափոխանակության (բարտերի), տրվում է տնտեսության համար իրականավցած ծառայությունների դիմաց, օտարվում է բնամթերքով և սպառվում տնտեսության կարիքների համար: Մնացած

**ՀՀ Կոտայքի մարզի գյուղատնտեսության համախառն և ապրանքային արտադրանքը,
նրա կառուցվածքը 2011-2014 թթ. տվյալներով⁸⁹**

Մթերքների անվանումը	2011թ.				2012թ.				2014թ.			
	Համախառն արտադրանքը, մլն դրամ	Ապրանքայ- նության մա- կարդակը, %	Ապրանքային արտադրանքի արժեքը, մլն դրամ	Տեսակարար կշիռը, (%)	Համախառն արտադրանքը, մլն դրամ	Ապրանքայ- նության մա- կարդակը, %	Ապրանքային արտադրանքի արժեքը, մլն դրամ	Տեսակարար կշիռը, (%)	Համախառն արտադրանքը, մլն դրամ	Ապրանքայ- նության մա- կարդակը, %	Ապրանքային արտադրանքի արժեքը, մլն դրամ	Տեսակարար կշիռը, (%)
Հացահատիկ և հատիկաբնույթներ	3200	41,1	1315,2	3,6	3400	35,5	1207,0	3,3	5100	56,5	2881,5	6,9
Կարտոֆիլ	2500	56,9	1422,5	3,9	1700	48,1	817,7	2,2	2300	64,4	1481,2	3,6
Բանջարեղեն	2000	42,7	854	2,3	2800	31,7	887,6	2,4	3300	67,0	2211,0	5,3
Պտուղ և հատապտուղ	3400	67,1	2281,4	6,3	3800	58,3	2215,4	6,1	2700	45,0	1215,0	2,9
Խաղող	110	25,0	27,5	0,1	100	25,0	25,0	0,1	70	13,3	9,3	0,02
Այլ բուսաբուծական արտադրանք	5000	57,0	2850	7,8	6300	57,0	3591	9,8	5830	59,0	3439,7	10,1
Ընդամենը բուսաբուծություն	16210,0	54,0	8750,6	24,0	18100,0	48,3	8743,7	23,9	19300,0	58,2	11237,7	27,1
Միս	15600	89,8	14008,8	38,4	16400,0	89,4	14661,6	40,1	18900	91,2	17236,8	41,5
Կաթ	8500	70,0	5950	16,3	7900,0	67,9	5364,1	14,7	9300	64,3	5979,9	14,4
Ձու	7100	80,7	5729,7	15,7	7300,0	79,1	5774,3	15,8	8600	56,0	4816,0	11,6
Բուրդ	140	89,7	125,6	0,3	130,0	84,5	109,9	0,3	200	61,4	122,8	0,3
Այլ անասնապահական արտադրանք	3200	60,0	1920	5,3	3200	60,0	1920,0	5,2	3500	58,8	2058,0	5,0
Ընդամենը անասնա- պահություն	34540,0	80,3	27734,1	76,0	34930,0	79,7	27829,9	76,1	40500,0	74,6	30213,5	72,9
Ընդամենը	50750,0	71,9	36484,7	100,0	53030,0	69,0	36573,6	100,0	59800,0	69,3	41451,2	100,0

⁸⁹ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ ՀՀ ԱՎԾ-ի և ՀՀ Կոտայքի մարզպետարանի գյուղատնտեսության վարչության տվյալների հիման վրա

մասն իրացվում է երկու հիմնական ուղղություններով՝ վաճառք վերամշակող ձեռնարկություններին և իրացում շուկայում: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դեռևս լիարժեք չեն գործում գյուղմթերքի գնման, վերամշակման և իրացման ենթակառուցվածքներն ու ստորաբաժանումները, չկան գյուղատնտեսական մեծածախ շուկաներ:

Դրա հետ միասին լիարժեք ձևավորված չեն շուկայական ենթակառուցվածքները, չկա ներդրումների արդյունավետ համակարգ, չեն մշակվում հակամենաշնորհային օրենսդրական ակտեր, դեռևս իրական չեն այն գործառույթները, որոնք պետք է ծավալվեն ֆերմերային տնտեսությունների կարիքներն ապահովող ֆինանսավարկային, հարկային և ապահովագրական կազմակերպությունների կողմից: Գյուղատնտեսական մթերքներ արտադրող և վերամշակող արդյունաբերական ձեռնարկություններում շարունակում են գոյություն ունենալ բազմաթիվ հիմնախնդիրներ, որոնց լուծումը առանց ֆինանսական լուրջ ներդրումների գործնականում անհնար է:⁹⁰

Դրա հետ միասին սպառողների ցածր վճարունակության և նվազ պահանջարկի պատճառով հանրապետության պարենամթերքի ներքին շուկան հագեցված է, լուրջ խնդիրներ կան գյուղմթերքի իրացման գործում: Գյուղատնտեսական արտադրանքի իրացման բնագավառում ստեղծված իրավիճակը հետևանք է մի շարք հիմնախնդիրների, որոնցից կարելի է առանձնացնել՝

- գյուղմթերքի և դրանց վերամշակումից ստացված արտադրանքի իրացման համակարգի անկատարությունը, մեծածախ շուկայի համակարգի բացակայությունը,
- վերամշակող ընկերությունների արտադրական ներուժի օգտագործման ցածր մակարդակը և տեխնիկական հագեցվածության անբավարար վիճակը,
- միջազգային չափանիշներին համապատասխանող սննդամթերքի որակի երաշխավորման համակարգի դեռևս ոչ լիարժեք գործունեությունը, սննդա-

⁹⁰ Հովհաննիսյան Ա. Անասնաբուժական մթերքներ արտադրողների և վերամշակողների միջև առկա փոխհարաբերությունները և կատարելագործման ուղիները. Տեղեկատվական տեխնոլոգիաներ և կառավարում, Երևան, Հունվար-փետրվար, 2009, էջ 228-235

մթերքի իրացման, արտահանման գործընթացը խթանող իրավական դաշտի կատարելագործման անհրաժեշտությունը,

- արտահանման ենթակա վերամշակող արդյունաբերության արտադրանքը որակական հատկանիշներով դեռևս չի համապատասխանում եվրոպական չափանիշներին:⁹¹

Ամեն դեպքում ցանկացած տնտեսական գործունեության արդյունքներ գնահատվում են ոչ միայն քանակական, այլ որ ամենակարևորն է՝ որակական ցուցանիշներով, որոնք առավել ճիշտ են բնութագրում տնտեսական ռեսուրսների օգտագործումը, աշխատանքի և արտադրության կազմակերպման արդյունավետությունը և ընդհանրապես, ձեռնարկատիրական գործունեությունը: Աղյուսակ 2.9-ում ներկայացված են ՀՀ Կոտայքի մարզի գյուղատնտեսության ոլորտի հիմնական արտադրատնտեսական ցուցանիշները:

Աղյուսակի տվյալների վերլուծությունից պարզվում է, որ աշխատանքի արտադրողականությունը Կոտայքի մարզի գյուղատնտեսության ոլորտում շուրջ 15%-ով ցածր է ճյուղի հանրապետական միջին մակարդակից: Հանրապետությունում գյուղատնտեսության աշխատանքի արտադրողականությունը 2011 թվականին կազմել է 1738 հազար դրամ, 2012թ.՝ 1924 հազար դրամ, 2013թ.՝ 2177 հազար դրամ, 2014թ.՝ 2516 հազար դրամ:⁹² Տնտեսական որակական ցուցանիշների համակարգում առանցքային տեղ են զբաղեցնում ապրանքային արտադրանքի ինքնարժեքը, որին տնտեսագիտությունը համարում է արտադրության «հայելի», քանի որ նրա մեջ է արտացոլվում արտադրության բոլոր ծախսերը, ինչպես նաև շահույթի և շահութաբերության ցուցանիշները: Մարզի գյուղատնտեսության ապրանքային արտադրանքի արժեքը համախառն արտադրանքի մեկ դրամի հաշվով կազմել է 2011 թվականին 0,71 դրամ, 2012թ.՝ 0,68 և 2014թ.՝ 0,69 դրամ:

⁹¹ Աղասարյան Լ. Հովհաննիսյան Ա. Գյուղմթերքի արտադրության, վերամշակման և իրացման ոլորտներում առկա խնդիրները և դրանց լուծման ուղիները // Հայաստան, ֆինանսներ և էկոնոմիկա N 12, 2010, էջ 47-50

⁹² Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2015թ., էջ 57 և 290

ՀՀ Կոտայքի մարզի գյուղատնտեսության 2011-2014 թթ. հիմնական
արտադրատնտեսական ցուցանիշները⁹³

№	Ցուցանիշները	Չափման միավոր	2011թ.	2012թ.	2014թ.
1	Գյուղատնտեսության համախառն արտադրանքը	մլն դրամ	50750,0	53030,0	59800,0
1.1	այդ թվում՝ բուսաբուծություն	մլն դրամ	16210,0	18100,0	19300,0
1.2	անասնաբուծություն	մլն դրամ	34540,0	34930,0	40500,0
2	Գյուղատնտեսությունում գրադվածները	մարդ	33370	31700	28700
3	Աշխատանքի արտադրողականությունը	հազ. դրամ	1520,8	1672,9	2083,6
4	Գյուղատնտեսական ապրանքային արտադրանքը	մլն դրամ	36484,7	36573,6	41451,2
4.1	այդ թվում՝ բուսաբուծությունից	մլն դրամ	8750,6	8743,7	11237,7
4.2	անասնաբուծությունից	մլն դրամ	27734,1	27829,9	30213,5

Աղյուսակ 2.10-ում բերվում են ՀՀ գյուղատնտեսության և գյուղի զարգացման ցուցանիշները 2012-2025թթ., որոնց միջոցով կարելի է պատկերացում կազմել, թե ինչ զարգացումներ են սպասվում այս ոլորտում առաջիկա 10 տարվա ընթացքում:

ՀՀ կառավարության «ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարության» ծրագրով նախանշվել են ագրարային քաղաքականության հիմնական ուղղությունները և դրանց իրականացումն ապահովող միջոցառումները, սահմանվել են գյուղատնտեսության ոլորտի գերակայությունները: Մշակվել և իրականացվում են նաև գյուղացիական տնտեսությունների վարկավորման, գյուղատնտեսական մթերքների իրացման շղթայի ապահովման, ցորենի ու գարու սերմնաբուծության և սերմնարտադրության, տեղական կենսաապարարտանյութերի ար-

⁹³ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ ՀՀ ԱՎԾ-ի և ՀՀ Կոտայքի մարզպետարանի վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա

տադրության, տավարաբուծության զարգացման, գյուղտեխնիկայի վերազինման, գյուղատնտեսության միջավայրի բարելավմանն ուղղված ծրագրեր:

Աղյուսակ 2.10

ՀՀ գյուղատնտեսության և գյուղի զարգացման ցուցանիշները 2012-2025թթ.⁹⁴

Ցուցանիշները	2012թ. փաստ.	2017թ. ծրագ.	2021թ. ծրագ.	2025թ. ծրագ.
Գյուղատնտեսությունում ստեղծված ավելացված արժեք (ՀՆԱ) մլրդ. դրամ	764	1116,7	1524,7	2046,8
Գյուղատնտեսության ՀՆԱ-ի իրական աճ (%)	9,5	4,0	3,8	3,5
Գյուղատնտեսության մասնաբաժինը ՀՆԱ-ում (%)	19,1	17,9	16,3	14,6
Աշխատանքի արտադրողականությունը գյուղատնտեսությունում (հազար դրամ)	1748	2554	3487	4682
Աշխատանքի արտադրողականությունը ոչ գյուղատնտեսական ոլորտում (հազար դրամ)	4396	6440	9009	12562
Ոչ գյուղատնտեսական զբաղվածության թվաքանակը գյուղերում (հազար մարդ)	108,2	116,2	121,2	126,2
Գյուղատնտեսության վարկավորում (մլն. դրամ)	91890	162229	251982	379206
Գյուղատնտեսության վարկավորում / ՀՆԱ (%)	12,0	14,5	16,5	18,5
Վարելահողերի նպատակային օգտագործումը (%)	67,9	74,0	82,0	90,0
Ապրանքայնության միջին մակարդակը (%)	56,1	60,0	67,0	75,0

Այստեղ եզրակացությունը միանշանակ է՝ Հայաստանի Հանրապետության ներկայիս տարածքում և նոր արտադրահարաբերությունների զարգացման պայմաններում գյուղատնտեսության զարգացումը հիմնականում կարող է ընթանալ ինտենսիվ ուղիով՝ միայն հիմնական միջոցների և աշխատանքի մեծածավալ ներդրումների միջոցով:⁹⁵

⁹⁴ Գյուղատնտեսական հանրագիտարան ՀՀ ԳԱԱ. - Եր. Հայկական հանրագիտարան հրատ., 2015, էջ 21

⁹⁵ Ղազարյան Է.Ս. Հայաստանի Հանրապետության ագրարային տնտեսագիտության դերն ու տեղը շուկայական տնտեսության զարգացման գործում. - Եր.: Հայագիտակ, 2003, էջ 31

Այսպիսով, վերլուծելով Հայաստանի Հանրապետության և ՀՀ Կոտայքի մարզի գյուղատնտեսության ոլորտի արտադրատնտեսական գործունեության արդյունքները գալիս ենք այն եզրակացության, որ արդյունավետության բարձրացման հիմնական պայմաններից է աշխատուժի և գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործման սեզոնայնության նվազեցումը: Այդ հիմնախնդիրն 20-րդ դարի 70-ական թվականներին առաջ է քաշել Մ. Ադոնցը,⁹⁶ որն արդիական է նաև ներկայիս շուկայական հարաբերությունների պայմաններում: Քանի որ Կոտայքի բնակլիմայական պայմանները գյուղատնտեսության համար խիստ են, հետևաբար այստեղ սեզոնայնության նվազեցումը կարող է իրականացվել հետևյալ ուղղություններով՝

- ջերմոցային տնտեսությունների վերականգնում և զարգացում,
- ցրտադիմացկուն մշակաբույսերի աճեցում,
- գյուղական համայնքներում վերամշակող արտադրության կազմակերպում:

Դրանք, ինքնըստինքյան կնպաստեն գյուղական համայնքների զարգացման մակարդակների համահարթեցմանը:

Խորհրդային տարիներին Կոտայքի տարածաշրջանում ջերմոցային տնտեսությունները զարգացած էին, որոնք տարվա ոչ սեզոնային ժամանակահատվածում բավարարում էին ոչ միայն ներքին պահանջարկը, այլ արտադրանքի մեծ մասն արտահանվում էր: Սակայն սեփականաշնորհման ընթացքում ջերմոցային տնտեսությունների նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերվեց միայն արտադրության միջոցների (խողովակներ, ապակիներ և այլն) հանդեպ, այլ ոչ թե արտադրություն կազմակերպելու ցանկությամբ: Արդյունքում, փոշիացվեց այդ արտադրությունը, մարզն ու հանրապետությունը զրկվեցին եկամտաբեր տնտեսություններից:

Գյուղատնտեսության սեզոնայնության մեղմացմանը կարող է նպաստել նաև ցրտադիմացկուն մշակաբույսերի ցանքատարածությունների ավելացումը, հետևաբար արդյունավետ կլինի անասնակերերի մշակումը (եգիպտացորեն, գարի, կերային ճակնդեղ և այլն): Այդ նպատակով ցանքատարածություններ պետք է հատկացվի առաջին հերթին պետական պահուստային հողերից այն գյուղացիական տնտեսություններին, որոնք զբաղվում են անասնապահությամբ և (կամ) անասնակերերի արտադրությամբ:

⁹⁶ Ադոնց Մ.Հ. Միջտնտեսական կոոպերացիան և ագրոարդյունաբերական ինտեգրացիան. - Եր. 1978, էջ 62

Գյուղական բնակչության աշխատանքային ռեսուրսների արդյունավետ օգտագործման, արտադրության սեզոնայնության համահարթեցման ամենահիմնավոր ուղին մնում է գյուղական համայնքներում փոքր ձեռնարկությունների և գյուղմթերքի վերամշակող տնտեսությունների, գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծումը, որոնք կընպաստեն ոչ միայն տարվա ընթացքում աշխատուժի համաչափ օգտագործմանը, այլ նաև՝ գյուղատնտեսության զարգացմանը:

Հարկ է նշել, որ երբ ավարտվեց սեփականաշնորհման գործընթացը, սեփականաշնորհվեցին հողը և մասնավորեցվեց արտադրամիջոցները, լուծարվեցին կոլեկտիվ և խորհտնտեսությունները, վրա հասավ տնտեսական ճգնաժամը, մարդիկ աստիճանաբար հարմարվեցին շուկայական հարաբերություններին ու շուկայի օրենքների պահանջներին, սկսեցին ուսումնասիրել ձեռներեցության կանոնները և ձեռնամուխ եղան մասնավոր գործարարության իրականացմանը: Այն դրսևորվեց տնտեսության տարբեր ոլորտներում, որտեղ ձեռներեցների կողմից որոշակի հետաքրքրություն ցուցաբերեցին նաև ջերմոցային տնտեսությունների հանդեպ:

Այստեղ տրամաբանականն այն է, որ ջերմոցային տնտեսությունների վերականգնումը և զարգացումը սկսվեց Կոտայքի մարզից, որտեղ բացի տնտեսական պայմաններից առկա են նաև դրա վարման ավանդույթները:

2011թ. մայիսին հիմնադրվեց «Էկոտոմատո» ընկերությունը Գողթ համայնքում՝ ժամանակակից տեխնոլոգիաներով զինված ջերմոցային տնտեսություն, գյուղմթերքների արտադրության նպատակով: 2011թ. դեկտեմբերին ընկերությունը շահագործման հանձնեց հոլանդական վարդեր աճեցնելու 2 հա մակերեսով ջերմոցային տնտեսություն, որի համար ներդրվեց 1,9 մլրդ. ՀՀ դրամ: 2012թ. կառուցեց 3 հա-ով նոր տնտեսություն, 2014թ. ևս 3 հա ջերմոցային տնտեսություն: 2015 թվականին այդ ընկերության ջերմատնային համալիրը կազմում է 8 հա ընդհանուր մակերես, որի համար ներդրվել է 77 մլրդ ՀՀ դրամ: Այստեղ աշխատում են շուրջ 120 աշխատողներ, նաև շրջակա գյուղերից, որոնց 80%-ը կանայք են: Համալիրում աճեցվում է 24 տեսակի հոլանդական վարդեր, արտադրանքի 70-80%-ն արտահանվում է Ռուսաստան, Բելառուս և Վրաստան, 20-30%-ը սպառվում է ներքին շուկայում: Գողթ համայնքում կա ևս մեկ ջերմոցային տնտեսություն, 6 հա մակերեսով վարդերի և 10 հա մակերեսով վարունգի արտադրության համար: Նույն համայնքում է գտնվում նաև «Армянский

урожай» ՍՊԸ-ն, որի ստեղծման համար ծախսվել է 10 մլրդ ՀՀ դրամ: Ֆրանսիական «Richel Group» ընկերության նորագույն տեխնոլոգիաներով կառուցվել է 10,5 հա ընդհանուր մակերեսով ջերմոցային համալիր, որն ընդգրկում է նաև 0,8 հա մակերեսով սածիլանոց: Ընկերությունում աշխատում է 280 մարդ:

Հայաստանում ջերմատների զարգացման համար առկա են բարենպաստ պայմաններ, ինչպես հարկային քաղաքականության, այնպես էլ կլիմայական և բնական ռեսուրսների առումով: Այդ իսկ պատճառով, եթե մինչև 2011թ. Հայաստանում շահագործվում էր ընդամենը 2 հա ընդհանուր մակերեսով ժամանակակից տեխնոլոգիաներով ջերմատներ, այն էլ միայն Կոտայքի մարզում, ապա ներկայումս՝ շուրջ 80 հա ընդհանուր մակերեսով նոր ջերմատներ՝ Կոտայքի, Արարատի և Արմավիրի մարզերում, որոնց ընդհանուր ներդրումները գնահատվում են 30-40 մլրդ ՀՀ դրամ:

2015թ. մայիս ամսվա դրությամբ հանրապետությունում շահագործվում են ավելի քան 760 հա մակերեսով ջերմատներ, այդ թվում՝ 80 հա նորագույն տեխնոլոգիաներով, որից 48,7 հա-ը՝ Կոտայքի, 1 հա-ը՝ Արմավիրի և 30,3 հա-ը Արարատի մարզերում: 2015 թվականի ընթացքում կառուցվել են նոր տեխնոլոգիաներով շուրջ 36 հա ջերմատներ, որից Արարատի մարզում՝ 20, իսկ Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնքում՝ 16 հա մակերեսով: ՀՀ ջերմոցային տնտեսություններում ներկայումս աշխատում է 10-12 հազար մարդ:⁹⁷

Սակայն, վերջին հաշվով ոչ ավանդական տնտեսությունների զարգացումը չի կարող լուծել գյուղատնտեսության հիմնախնդիրները: Դրա համար անհրաժեշտ է նպաստել ընդհանուր բուսաբուծության, անասնապահության և գյուղմթերքների վերամշակման արդյունաբերության զարգացմանը:

Այսպես, ՀՀ Կոտայքի մարզի բուսաբուծության ոլորտի արդյունավետ վարման կարևոր նախապայմաններից է սերմնաբուծության ու տնկարանային տնտեսության զարգացումը: Այդ համակարգը դեռևս կատարյալ չէ և կատարելագործման խիստ կարիք ունի: Ճիշտ է, ՀՀ գյուղնախարարության, Կոտայքի մարզպետարանի, միջազգային կազմակերպությունների ու դոնոր երկրների և առանձին տնտեսվարող

⁹⁷ Գասպարյան Ա. Մրցունակ արտադրանք՝ արտաքին շուկաներում: «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 16 մայիս, 2015թ.

սուբյեկտների կողմից միջոցառումներ են ձեռնարկում սերմերի ու տնկանյութի արտադրության կազմակերպման ուղղությամբ, սակայն դրանք շոշափելի արդյունքներ չեն տալիս հիմնախնդրի ամբողջությամբ լուծման առումով:

Բուսաբուծության ոլորտում երաշխավորված և բարձր բերք ստանալու ամենահիմնական պայմաններից է ոռոգման աշխատանքների կազմակերպումը: Կոտայքի մարզի 37818,7 հա վարելահողերից ոռոգման ենթակա են 18760 հա-ը, սակայն ոռոգվում է՝ 11500 հա-ը, ինչը խիստ բացասաբար է ազդում գյուղատնտեսական արտադրության արդյունքների վրա: 2013թվականին մարզի գյուղացիական տնտեսություններին մատակարարվել է 32,8մ³ ջուր, ոռոգման վարձավճարների գանձման մակարդակը կազմել է 84,4%, 2012-ի 80,1%-ի հանդեպ:

Ոռոգման բնագավառի աշխատանքների կազմակերպման բարելավման համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները.

- իրականացնել ոռոգման առկա համակարգերի և ոռոգման պահանջների գույքագրում,
- ինքնահոս ջրամատակարարումների ցանցի ընդլայնում և էներգակիրների ծախսերի կրճատում,
- փոքր և միջին ջրամբարների կառուցում, ոռոգման ջրի վերաբերյալ գոյություն ունեցող խնդիրների ուսումնասիրում և դրանց լուծման միջոցառումների ժամանակացուցի կազմում:

2011-2014 թվականներին մարզի 12 համայնքներում պետբյուջեի միջոցներով հիմնանորոգվել և կառուցվել են 24,7 կմ ոռոգման ջրագծեր, ինչի արդյունքում ոռոգելի հողատարածքներն ընդլայնվել են 1500 հա-ով: 2011 թվականին «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի միջոցներով 7 գյուղական համայնքներում իրականացվել են 3-րդ կարգի ջրանցքների վերանորոգման աշխատանքներ՝ 613 մլն դրամ այդ հիմնադրամից և 105 մլն համայնքների բյուջեներից:

Ինչպես արդեն նշել ենք մարզում անասնապահությունն առաջատար դիրք է գրավում գյուղատնտեսության ոլորտում, որտեղ արտադրվում է ճյուղի համախառն արտադրանքի 2/3-ը: Սակայն այն զարգանում է միայն էքստենսիվ ճանապարհով, քանի որ տոհմաբուծության աշխատանքները գտնվում են շատ ցածր մակարդակի վրա: Լուրջ խնդիրներ կան կովերի արհեստական սերմնավորման գործում, որոնց տե-

սակարար կշիռը կազմում է ընդհանուրի ընդհամենը 10-13%-ը: Ներկայումս առաջնային խնդիր է արհեստական սերմնավորմամբ դրանց աստիճանը հասցնել 40-50%-ի, ինչը կնպաստի կովերի կաթնատվության բարձրացմանը և հիվանդությունների կանխմանը:

Անասնապահության կայուն զարգացմանը զգալիորեն խոչընդոտում են կենդանիների վարակիչ հիվանդությունները, որոնց կանխելու նպատակով թեև կատարվում են հակահամաճարակային միջոցառումներ, սակայն դրանք ոչ լրիվ կերպով են արգելափակում այդ հիվանդությունների տարածմանը: Բավական է նշել, որ նախկինում հանրապետությունում պայքարի միջոցառումներ իրականացվում էին տնային կենդանիների 55 անվանում վարակիչ հիվանդությունների դեմ: Ներկայումս այդ անվանացանկը կրճատվել է շուրջ 8 անգամ, ինչն էլ վատթարացրել է հակահամաճարակային իրավիճակը: 2011-2013 թվականներին պետպատվերի շրջանակներում կատարվել է միայն բրուցելոզ և տուբերկուլոզ հիվանդությունների դեմ տարեկան երկու անգամ ախտորոշիչ հետազոտություն ու սիբիրախտ, դաբաղ, խշխշան պալար, պաստերելոզ ու ժանտախտ հիվանդությունների դեմ՝ բուժպրոֆիլակտիկ պատվաստումներ:

Մարզում գործում է «ՀՀ գյուղնախարարության սննդամթերքի անվտանգության և անասնաբուժական պետական տեսչության» մարզային կենտրոն, որն իրականացնում է վերահսկողություն սննդամթերքի անվտանգության ու անասնաբուժության բնագավառում: Մարզի գյուղացիական տնտեսությունների անասնաբուժական ծառայություններ են տրամադրում 50 անասնաբույժներ, որոնք էլ իրականացնում են անասնաբուժական միջոցառումներ: Պարբերաբար կատարվել են նաև պրոֆիլակտիկ միջոցառումներ՝ սիբիրախտ, պաստերիոզ, էմկար, խոզերի ժանտախտ, թռչունների ժանտախտ, մեղուների վարիատոզ հիվանդությունների դեմ: Պետպատվերի շրջանակներում 90-98%-ով կատարվել են անասունների հիվանդությունների դեմ պատվաստումներ:

ՀՀ Կոտայքի մարզում ստեղծված իրավիճակում առաջնային խնդիր է անասնաբուժական պարտադիր միջոցառումների մեջ ընդգրկվող հիվանդությունների ցանկի ընդլայնումը, սննդամթերքի անվտանգության և անասնաբուժական պետական տեսչության մարզային կենտրոնի բազայի ամրապնդումը:

Ամփոփելով ՀՀ Կոտայքի մարզի գյուղատնտեսության զարգացման ներկա վիճակը, կարելի է միանշանակ ընդունել, որ այն ունի հնարավորություններ մեծացնելու արտադրության ծավալները, բարձրացնելու ռեսուրսների օգտագործման արդյունավետության աստիճանը, ինտենսիվացնելու արտադրության գործընթացը և նպաստելու մարզում աղքատության կրճատմանն ու գյուղական համայնքների անհամաչափ զարգացման տարբերությունների նվազեցմանը:

Այսպես, մարզում գյուղատնտեսության զարգացման ոլորտներից կարող է դառնալ, խորհրդային տարիներին զարգացում ապրած, ծխախոտի հումքի արտադրությունը: Օրինակ, միայն Աբովյանի շրջանում 1982 թվականին ծխախոտի ցանքատարածությունները կազմել են 150 հա, ստացվել է 1860 տոննա ծխախոտի հումք, միջին բերքատվությունը հեկտարից՝ 12,4 ցենտներ:⁹⁸ Ներկայումս, երբ Հայաստանն ունի ծխախոտ վերամշակող և արտադրող կազմակերպություններ, պետք է օգտվել այդ հնարավորությունից:

Մարզի բոլոր տարածաշրջաններում անհրաժեշտ է ստեղծել կամ վերագործարկել կաթի մթերման և վերամշակման, մսամթերք վերամշակող կազմակերպություններ, կազմակերպել պտղի, բանջարեղենի չորացման արտադրամասեր, ծխախոտի չորացման, ֆերմետացիայի ու բուսայուղերի արտադրության արտադրամասեր, բրդի ընդունման և լվացման ծառայություններ, կաշվի, մորթեղենի վերամշակման, դեղաբույսերի աճեցման և փաթեթավորման արտադրություններ և այլն:

Այստեղ կարևոր նշանակություն ունի ֆինանսական միջոցների առկայությունը, որտեղ դրամաշնորհներից ու պետական բյուջեի միջոցներից բացի, պետք է օգտագործել վարկային միջոցները: Կառավարությունը պետք է սուբսիդավորի գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույքի մի մասը, և որ ամենակարևորն է, հանդես գա գյուղացիական վարկառուների կողմից, որպես վարկի վերադարձման երաշխավոր, հաշվի առնելով գյուղատնտեսական արտադրության ռիսկայնության բարձր աստիճանը:

Բացի ֆինանսական սատարումից, կառավարությունը գյուղատնտեսության նախարարության միջոցով, պետք է ապահովի խորհրդատվական ծառայությունների մատուցում՝ ուսուցողական-խորհրդատվական դասընթացներ գյուղմթերքների արտադրության և վերամշակման առաջավոր տեխնոլոգիաների վերաբերյալ, սեմինար-դաս-

⁹⁸ ՀՀ Կոտայքի մարզի 2015-2018թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր, Հրազդան, 2014, էջ 57

ընթացները տնտեսվարման արդյունավետ ձևերի, մասնավորապես տարատեսակ գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծման ու զարգացման ուղղությամբ և այլ կարգի մասնագիտական ծառայությունների տրամադրում:

Ընդհանրապես, ինչպես ցանկացած ոլորտում, այնպես էլ ագրոարդյունաբերական համալիրում, տնտեսական զարգացմանը կարող են խթանել անհրաժեշտ ենթակառուցվածքների առկայությունը, որը հնարավորություն է տալիս ապահովել «արտադրություն-վերամշակում-իրացում-սպառում» շղթայի անխափան գործունեությունը, նպաստում է գյուղացիական տնտեսությունների իրական եկամուտների ավելացմանը, ինչն էլ իր հերթին՝ գյուղական համայնքներում աղքատության կրճատմանը:

2.3. Արտադրական ենթակառուցվածքների դերը ՀՀ Կոտայքի մարզի գյուղական համայնքների համաչափ զարգացման հիմնախնդիրների լուծման գործում

Ենթակառուցվածք իրենից ներկայացնում է տնտեսության ճյուղերի համալիր, ընդգրկում է ճանապարհները, ջրանցքները, ջրավազանները, կամուրջները, օդանավակայանները, էներգետիկ տնտեսությունը, շինարարությունը, տրանսպորտը, կապը, ջրամատակարարումը և կոյուղին, կրթությունը, գիտությունը, առողջապահությունը և այլն:⁹⁹

Սոցիալ-տնտեսական կյանքի յուրաքանչյուր օղակ, կառույց և համակարգ ունի իր ենթակառուցվածքները՝ ձեռնարկություններ, ֆիրմաներ, ծառայություն մատուցող կազմակերպություններ: Բնակավայրերը, համայնքները, տարածաշրջանները, վարչական միավորները և նույնիսկ ամբողջ երկիրն իր կառուցվածով, կոչված են ապահովելու տնտեսական հարաբերությունների արդյունավետ գործունեությունը:¹⁰⁰

Ենթակառուցվածքներն իրենց գործունեության բնույթով հիմնականում լինում են արտադրական, սոցիալական և շուկայական, որոնք առանձին դեպքերում կրում են

⁹⁹ Советский Энциклопедический словарь. - М.: Советская Энциклопедия. 1985. –С. 499

¹⁰⁰ Տնտեսագիտության տեսություն, Գ. Կիրակոսյանի և Ի. Խլիլայանի ընդհ. խմբ., - Եր.: Տնտեսագետ. 2009, էջ 159

համալիր ձև, քանզի առանձին տեսակի ենթակառուցվածքներ կրում են և արտադրական և սոցիալական (ճանապարհները, տրանսպորտը, կապը, էլեկտրաֆիկացիան, գազամատակարարումը և այլն), կամ էլ՝ արտադրական և շուկայական (ֆինանսավարկային կառույցներ, առևտրային և ապրանքային բորսաներ, աճուրդներ, առևտրային բանկեր և այլն):

Որպես կանոն, գրեթե բոլոր երկրներում համապետական ենթակառուցվածքների պահպանման և զարգացման ծախսերն իր վրա է վերցնում կառավարությունը, քանի որ սովորաբար դրանք պահանջում են համեմատաբար մեծ ծախսեր, շահույթ կամ եկամուտ չեն ակնկալում: Հենց դրա համար էլ մասնավոր բիզնեսը խուսափում է այդ ոլորտից, լավագույն դեպքում նրանք կարող են մասնակից լինել միկրոմակարդակով ենթակառուցվածքների զարգացմանը: Ենթակառուցվածք կատեգորիան տնտեսագիտությունը բնորոշում է, որպես ծառայությունների, ինստիտուտների կառուցվածքների ամբողջություն, որոնք անմիջականորեն չեն մասնակցում հիմնական գործընթացին, այլ սպասարկում են դրան՝ նպաստում արտադրության ու ծառայության արդյունավետության բարձրացմանը:

Ենթակառուցվածքների զարգացման հարցն ավելին է կարևորվում գյուղական համայնքների համար, կապված դրանց տեղաբաշխման ցրվածության, հեռավորությունների, բնակեցման նոսրության աստիճանի հետ: Խորհրդային իշխանության տարիներին այդ խնդիրները հեշտ էին լուծվում, որտեղ կառավարությունն էր դրա իրականացնողն ու պատասխանատուն, նա էր պահպանում և զարգացնում ենթակառուցվածքները:

Անցյալ դարի 90-ական թվականների սկզբին իրականացված բարեփոխումները զգալիորեն փոխեցին ենթակառուցվածքների հանդեպ չափանիշները, տասնամյակների ընթացքում ստեղծված գյուղատնտեսության արտադրական և գյուղի սոցիալական ենթակառուցվածքները դարձան գրեթե անօգտագործելի՝ մանր տնտեսությունների պայմաններում, ինչը օբյեկտիվորեն պահանջում է ուղղիներ փնտրել այդ ծառայությունների վերականգման համար, այլապես տնտեսության փոքր չափերի պարագայում դրանց մեծ մասը կմնան զուտ բնամթերային տնտեսություններ, առանց ապրանքային արտադրության:

Գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքի փոփոխությունները, վերամշակող ձեռնարկությունների ցածր վճարունակությունը, անմրցունակ արտադրանքի թողարկումն ու արտադրանքի իրացման դժվարությունները բացասաբար են անդրադարձել նաև վերամշակող արդյունաբերության վրա: Ագրոպարենային համակարգի ձեռնարկությունները սեփական և փոխառու միջոցների անբավարարության պատճառով հայտնվել են ֆինանսական ծանր վիճակում և, ըստ էության, զրկված են շրջանառու միջոցների համալրման ու ընդլայնման, վերարտադրություն կազմակերպելու հնարավորությունից:¹⁰¹

Ենթակառուցվածքների զարգացումը կարող է նպաստել որոշակի չափով լուծելու այդ հիմնախնդիրները: Ելնելով դրա պահանջներից ՀՀ Կոտայքի մարզի ենթակառուցվածքների հարցերը քննարկվում են գյուղատնտեսության արտադրական և գյուղական համայնքների սոցիալական ենթակառուցվածքների համատեղ օգտագործման պահանջներից ելնելով: Կոտայքի մարզային և համայնքային ենթակառուցվածքների զարգացումը մարզի զարգացման ծրագրի գերակայություններից է: Մարզում արտադրական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացման հիմնախնդիրներն առանչվում են ճանապարհաշինության (տրանսպորտային ենթակառուցվածքներ), խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (մաքրման կայանների վերակառուցման և նորերի կառուցման), գազամատակարարման խնդիրների հետ: Ենթակառուցվածքների զարգացման խնդիրներն առավել մեծ կարևորություն են ստանում հատկապես այն գյուղական համայնքների համար, որոնց բնակչությունը հեռանում է գյուղից, և այդ գյուղերում գրանցվում է բնակչության թվաքանակի նվազման միտում:

Բնակչության սոցիալական վիճակը բնութագրող կարևոր ցուցանիշ է աղքատության մակարդակը: Այն հեռավոր գյուղական համայնքներում ավելի բարձր է, քան մեծ քաղաքներին և ճանապարհներին մոտ գտնվող գյուղերում: ՀՀ «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրում» աղքատությունը բնորոշվում է որպես կենսաբանական, սոցիալական, հոգևոր-մշակութային նվազագույն պահանջմունքները բավարարելու անհնարինություն, որն անմիջականորեն ազդում է մարդկային կապիտալի վերարտադրության վրա: Փաստորեն աղքատության և մարդկանց տեղաշարժման հնարավորությունների միջև գոյություն ունի ուղղակի հակադարձ կապ,

¹⁰¹ Մակրոտնտեսական կարգավորում, Հ. Ղուշչյանի խմբ. - Եր.: Տնտեսագետ. 2003, էջ 182-183

իջքան ցածր է այդ հնարավորությունների իրականացումը, այնքան բարձր է աղքատության մակարդակը:

«Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջական հետազոտության» արդյունքներից պարզվում է, որ գյուղերում բնակվող այն տնտեսությունները, որոնք տեղակայված են կոշտ ծածկույթով ճանապարհների և շուկաների մոտակայքում, առավել ունևոր են, քան ճանապարհներից հեռու բնակվողները: Համաձայն այդ տվյալների՝ սովորաբար ամսվա ընթացքում գյուղաբնակ տնային տնտեսության որևէ անդամ օգտվում է ճանապարհային երթևեկության միջոցներից, պարարտանյութ, սերմեր գնելու համար՝ 2.2 օր, գյուղմթերք վաճառելու համար՝ 7.3 օր, համայնքից դուրս աշխատանքի՝ 18.3 օր, այլ նպատակների համար՝ 5.9 օր: Գյուղաբնակ տնային տնտեսության անդամը բուժհաստատություն հասնելու համար ծախսում է միջինը 29 ռուպե, դեղատոն հասնելու համար՝ 40 ռուպե, համայնքի գրասենյակ՝ 16, մանկապարտեզ՝ 34, տարրական դպրոց՝ 23, միջնակարգ դպրոց՝ 19 ռուպե:¹⁰²

Տրանսպորտային ենթակառուցվածքներն անմիջապես ներգործում են աղքատության և բնակչության կենսամակարդակի վրա՝ կապված բարիքների ստեղծման, եկամուտների բաշխման ու սոցիալական ծառայությունների հասանելիության հետ: Այդ ոլորտում իրականացվող քաղաքականությունը պետք է նպատակաուղղված լինի առաջին հերթին ճանապարհների վերականգմանն ու պահպանմանը, հատկապես մեծ ուշադրություն պետք է դարձվի գյուղական համայնքային ճանապարհների կառուցմանը:

Ներկայումս Հայաստանի Հանրապետության համար տրանսպորտային հանգույցի կարևոր մաս է կազմում ավտոմոբիլային ճանապարհացանցը, որոնք առաջնային նշանակություն ունեն ինչպես ամբողջ հանրապետության, այնպես էլ նրա յուրաքանչյուր մարզի, համայնքի ու բնակավայրի համար: Բավական է նշել, որ բեռնատար ու ուղևորատար փոխադրումների շուրջ 95%-ն իրականացվում է ավտոտրանսպորտի միջոցով:

2014 թվականի դրությամբ ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր օգտագործման ճանապարհային ցանցի երկարությունը կազմում է 579.48 կմ, որից՝

- միջպետական նշանակության ավտոճանապարհները – 56.18 կմ,
- հանրապետական նշանակության ավտոճանապարհները – 267.2 կմ,

¹⁰² Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը: Վիճակագրական վերլուծական զեկույց. - Եր. 2008, էջ 57-58

- մարզային (տեղական) նշանակության ավտոճանապարհները – 256.1 կմ:¹⁰³

Մարզում գործում է 12 փոխադրող կազմակերպություններ, որոնց միջոցով իրականացվում է 38 ներմարզային երթուղիների սպասարկում: Կոտայքի մարզը սահմանակից է հանրապետության վեց մարզերի և մայրաքաղաքի հետ, որի պատճառով էլ ավտոճանապարհների մեծ մասը տարանցիկ է, պահանջում է ապահովել անխափան երթևեկություն:

Անշուշտ, շատ մեծ է ավտոճանապարհների դերը հատկապես հեռավոր, բարձր լեռնային և ծայրամասային գյուղական համայնքների համար կրթական, մշակութային, սոցիալական և ամենահիմնականը տնտեսական հարցերի լուծման հետ առանչվող ենթակառուցվածքների մատչելիության գործում: Կոտայքի մարզում աղքատ գյուղական համայնքների մեծ մասը գտնվում է՝ լեռնային և բարձր լեռնային գոտիներում, որոնք ունեն դժվարամատչելի տրանսպորտային կապ, հաճախ ձմեռվա ամիսներին երկար ժամանակով ճանապարհները դառնում են անանցանելի, ինչն էլ ուղակիորեն ազդում է բնակչության սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա:

Միջպետական, հանրապետական և մարզային նշանակության ավտոճանապարհների պահպանության և շահագործման աշխատանքները կատարվում են Կոտայքի մարզի չորս ճանապարհաշինական կազմակերպությունների կողմից, որոնց ներուժը և տեխնիկական միջոցները չեն բավարարում, հատկապես ձմեռվա ընթացքում, անխափան կազմակերպելու երթևեկությունը, ինչի հետևանքով առաջանում են ճանապարհային խցանումներ և բարդություններ մարդկանց ու բեռների փոխադրումների համար:

Ինչպես յուրաքանչյուր սոցիալ-տնտեսական քաղաքականության իրականացման, այնպես էլ ճանապարհների պահպանման, դրանց որակի բարձրացման, նոր ճանապարհների կառուցման, կամուրջների ու ջրատարների թողունակության բարելավման գործում ամենահիմնական հարցերի հարցը մնում է ֆինանսական ռեսուրսների հարաբերական սակավությունը: ՀՀ կառավարությունը և Կոտայքի մարզպետարանն իրենց ֆինանսական միջոցներից տրամադրում են այդ նպատակի համար որոշակի գումարներ: Այսպես, 2011-2013 թվականներին Կոտայքի մարզում առաջնահերթ հիմ-

¹⁰³ ՀՀ Կոտայքի մարզի 2015-2018 թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր, Հրազդան, 2014, էջ 131

նախնդիրների լուծման նպատակով իրականացվել են հետևյալ ավտոճանապարհների հիմնանորոգման աշխատանքներ (տես աղյուսակ 2.11):

Աղյուսակ 2.11

ՀՀ Կոտայքի մարզում ավտոճանապարհների հիմնանորոգման աշխատանքները
2011-2013 թվականներին¹⁰⁴

(մլն. դրամ)

№	Օբյեկտի անվանումը	Ծրագրի արժեքն ըստ տարիների			
		2011 թ.	2012 թ.	2013 թ.	ընդամենը
1.	գ.Ալափարսի կենտրոնական փողոցի հիմնանորոգում	104,0	-	-	104,0
2.	գ.Մեղրաձորի ներհամայնքային ճանապարհների վերանորոգում	46,3	48,06	18,13	112,49
3.	Չարենցավանի փողոցների ասֆալտապատում	38,53	172,31	-	210,84
4.	ք.Հրազդանի փողոցների ասֆալտապատում	43,42	252,02	139,8	435,24
5.	Արտավազ համայնքի ներհամայնքային ճանապարհների վերանորոգում	-	28,14	27,45	55,59
6.	Նոր Գեղի-Արգել-Քարաշամբ ճանապարհի վերանորոգում	-	67,11	-	67,11
7.	Արագյուղ-Քարաշամբ ճանապարհի վերանորոգում	-	51,7	-	51,7
8.	Աբովյան համայնքի ճանապարհների ասֆալտապատում	-	76,57	-	76,57
9.	Նոր Երզնկա համայնքի ներհամայնքային ճանապարհների վերանորոգում	-	-	46,16	46,16
10.	Գետամեջ համայնքի ներհամայնքային ճանապարհների վերանորոգում	-	-	34,48	34,48
11.	Եղվարդ համայնքի Աբովյան փողոցի ասֆալտապատում	-	-	33,39	33,39
Ընդամենը		232,25	695,91	303,41	1231,57

Աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ 2012-2013 թթ. ընթացքում ճանապարհների վերականգնման համար կատարվել են 1231,5 մլն. դրամի աշխատանքներ, որի 18.8%-ը 2011թ., 56.6%-ը 2012թ., 24.6%-ը 2013 թվականին: Այստեղ զավեշտալին այն է, որ ընդհանուր աշխատանքների ավելի քան 70 %-ն իրականացվել է քաղաքային

¹⁰⁴ ՀՀ Կոտայքի մարզի 2015-2018 թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր, Հրազդան, 2014, էջ 133

համայնքներում: Ավելացնենք, որ 2014 թ. պլանով նախատեսված շուրջ 350 մլն. ՀՀ դրամի ճանապարհների վերանորոգման ծախսերից միայն 50 մլն. է հատկացված Թեղենիքի և Գողթի ներհամայնքային ճանապարհների վերանորոգմանը:

ՀՀ Կոտայքի մարզպետարանի կողմից մշակված 2015-2018 թթ. զարգացման ռազմավարության ծրագրում նախատեսվում է երեք տարվա ընթացքում իրականացնել 140,9 կմ ավտոճանապարհների ու առանձին հատվածների վերակառուցման և հիմնանորոգման աշխատանքներ: Ֆինանսական միջոցների առկայության պարագայում առաջնահերթությունը տալով հետևյալ սկզբունքներին՝

1. անմիջապես վիճակում գտնվող դժվարանցանելի ճանապարհահատվածներ,
2. չավարտված կառուցվող ճանապարհներ,
3. ճանապարհային տարրերի հետագա քայքայումը կանխելու նպատակով նորոգվող ճանապարհները,
4. գործող շիննորմերին և ստանդարտներին համապատասխանեցնելու նպատակով բարեկարգվող հատվածներ:

2015-2018 թթ. մարզի ճանապարհաշինության ոլորտում նախատեսվում է իրականացնել 16592,3 մլն աշխատաքներ, որից մարզյաին ենթակայության ավտոճանապարհների պահպանման ու շահագործման համար 328,3 մլն դրամ: Բացի այդ նախատեսվում է նորոգել 1 կամուրջ (40 մլն դրամ) և մարզային ավտոճանապարհների կահավորման աշխատանքներ՝ 300 մլն դրամ ընդհանուր գումարով:

Ճանապարհների վիճակի բարելավումն իր հերթին կնպաստի բեռների տեղափոխման և ուղևորների փոխադրումների՝ ժամանակի կրճատման միջոցով, բարձրացնել տնտեսության տարբեր ճյուղերի գործունեության արդյունավետությունը, կրճատել ավտոմեքենաների շահագործման ու վերանորոգման ծախսերը, գյուղական համայնքների բնակչությանը հնարավորություն կտա ավելի արագ, քիչ ծախսերով իրացնել դժվարությամբ աճեցրած իր գյուղատնտեսական մթերքները:

Մարդկային կենսագործունեության հիմնական նախապայմաններից է նաև բնակչությանը խմելու ջրով ջրամատակարարման ապահովումը, որը լինելով բնության կողմից տրված բարիք, հավասարաչափ չէ բաշխված երկրագնդի և նույնիսկ առանձին երկրների ու տարածաշրջանների կտրվածքով: ՀՀ Կոտայքի մարզում ջրամատակարարման ոլորտի խնդիրը ոչ թե ջրային ռեսուրսների անբավարարության, այլ

ջրամատակարարման համակարգի աշխատանքների կազմակերպման, ջրամատակարարման համակարգի մաշվածության, նրա պահպանման և վերականգման համար ֆինանսական ռեսուրսների բացակայության, ջրային զգալի կորուստների, ջրի օգտագործման դիմաց վարձի գանձումների ցածր աստիճանի մեջ է:

Կոտայքի մարզն ունի խմելու ջրի մեծ պաշարներ, որը գերազանցում է մարզի անհարժեշտ պահանջարկը: Բնակչության կողմից խմելու ջրի տնօրինվող ռեսուրսները կազմում է 1929 լիտր/վրկ, ինչը հանրապետության խմելու ջրի պաշարի շուրջ 30 տոկոսն է: Մարզի յոթ քաղաքային և 60 գյուղական համայնքների ջրամատակարարումն իրականացվում են «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից 22, «Երևան ջուր» ՓԲԸ-ի 19 և սեփական ուժերով՝ 26 համայնքներում: Մարզի խմելու ջրի արտաքին ցանցի երկարությունը կազմում է 566,9 կմ, որից քաղաքային համայնքներում՝ 107, իսկ գյուղական համայնքներում՝ 459,9 կմ: Ներքին ցանցի երկարությունը 1280 կմ է, քաղաքայինը՝ 708, գյուղականը՝ 572 կմ: Ջրամատակարարման համակարգում առկա են 50 բաց աղբյուրներ, 16 խորքային հորեր, 13 պոմպակայան, 60 օրվա կարգավորման ջրամբարներ՝ 174,9 մ³ ընդհանուր ծավալով, խմելու ջրի մաքրման և կոյուղու (չգործող) մեկական կայաններ:

Ջրամատակարարումը մարզում իրականացվում է հիմնականում մեխանիկական եղանակով, սակայն աստիճանաբար ավելանում է ինքնահոս մատակարարման տեսակարար կշիռը: Մարզում ջրամատակարարման միջին տևողությունը կազմում է շուրջ 14 ժամ, բաշխվում է հետևյալ ռեժիմով՝ ընդհանուր բաժանորդների 2,4 %-ը՝ 1-4 ժամ, 25,2 %-ը՝ 6-12 ժամ, 72,4 %-ը՝ 14-24 ժամ:

Ջրաչափերի տեղադրման առումով ամենաբարձր ցուցանիշն ունի «Երևան ջուր» ՓԲԸ-ն՝ 98 %, «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ն՝ 90,5 %, իսկ համայնքների կողմից սպասարկվող (հիմնականում գյուղական համայնքներում)՝ ընդհամենը 5 տոկոս: Այս ոլորտում ներդրումների հիմնական աղբյուրները հանդիսացել են՝ ՀՀ պետբյուջեի, նշված ՓԲԸ-երի, Համաշխարհային բանկի (ՀԲ), Ասիական և Եվրոպական զարգացման ու վերակառուցման բանկերի կողմից հատկացված միջոցներից:

2011-2014 թվականներին ջրամատակարարման վիճակը բարելավելու նպատակով պետական և համայնքային բյուջեների և միջազգային կառույցների կողմից տրամադրված 7250,8 մլն դրամ գումարով մարզում կառուցվել և վերակառուցվել են

353 կմ ջրագիծ, 12,5 կմ կոյուղագծեր, 150 մ³ տարողությամբ ջրամբար, վերակառուցվել է երկու պոմպոկայան: Կատարված աշխատանքների և ներդրումների շնորհիվ ջրամատակարարման օրական միջին տևողությունը հասցվեց 13-14 ժամվա, իսկ սպառված ջրի վարձի գանձման ցուցանիշը՝ 90-95 տոկոսի:

Յուրաքանչյուր համայնքում, կամ նույնիսկ փոքր բնակավայրում ջրամատակարարման գործընթացին հաջորդում է ջրահեռացումը, որն իր սոցիալական և սանիտարահիգիենիկ նշանակությամբ ոչ պակաս նշանակություն ունի, քան ենթակառուցվածքների մյուս տեսակները: Այն ուղղակիորեն առնչվում է մարդկանց առողջապահական և բնապահպանական հիմնախնդիրների հետ, իսկ դրանք ունենալով համակարգային բնույթ չեն կարող իրագործվել միայն մարզային մակարդակով, ուստի անհրաժեշտ է պետական միջամտություն:

Ներկայումս Կոտայքի մարզի համայնքների կոյուղատարրերի մաշվածության պատճառով առաջանում են բազմաթիվ վթարներ, որի արդյունքում կեղտաջրերը լըցվում են առուները, ճանապարհները և կեղտոտում շրջապատը: «Հազարամյակի մարտահրավերներ» հիմնադրամի փորձագետների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ միայն Հրազդանի տարածաշրջանում կոյուղաջրերի մաքրման ժամանակակից կայանի կառուցման համար, անհրաժեշտ է շուրջ 10,0 մլն ԱՄՆ դոլլար:

Ջրերի էկոլոգիական պահպանության առաջնահերթ խնդիրներից է մնում, կեղտաջրերի մաքրման և հեռացման աշխատանքների կազմակերպումը: Մաքրման կայանների բացակայության և կոյուղատարների վթարների հետևանքով կեղտաջրերը լցվում են Դալար, Ծաղկաձոր, Մարմարիկ, Հրազդան գետեր՝ հասնելով մինչև Ախպարայի ջրամբար:

Վերջին տարիներին միջոցներ են ձեռնարկվում լուծելու մարզի հանգստյան տներից դուրս եկող կեղտաջրերի մաքրման հարցը: Համապատասխան կառույցների կողմից տնտեսվարողներին ներկայացվել են ժամանակակից տեղային մաքրման կայանների նախագծեր և առաջարկվել է հնարավորինս շուտ լուծումներ գտնել: Այդուհանդերձ, լուծելով տեղային մաքրման կայանների հարցը, խիստ անհրաժեշտություն է զգացվում Հրազդանի տարածաշրջանում կառուցելու նոր հզոր մաքրման՝ դրա հետ միասին վերականգնելով Հանքավանի ու Ծաղկաձորի կոյուղու կոլեկտորները, որը

հնարավորություն կտա տարածաշրջանում վերջնականորեն լուծել ջրային ավազանները կեղտաջրից զերծ պահելու հարցը:

Ամփոփելով ՀՀ Կոտայքի մարզի ջրամատակարարման և ջրահեռացման հետ կապված հիմնախնդիրների վերլուծությունը, նշենք, որ այն ունի լուծման կարիք, իսկ դրա համար ամենամեծ բարդությունը կապված է նորից ֆինանսական միջոցների հայթհայթման հետ, որը ներկա պահին ոլորտի առաջնային հարցերից է:

Արտադրական ու սոցիալական ենթակառուցվածքների շարքում կարևոր տեղ է զբաղեցնում գազամատակարարումը, որը արտադրության կազմակերպման հիմնական գործոններից մեկն է և բնակչության կենսամակարդակի ապահովման նախադրյալներից է: Կոտայքի մարզում բնակարանների գազաֆիկացումը խիստ անհրաժեշտ է՝ երկարատև ձմեռները և այլընտրանքային էներգակիրների բացակայությունը պահանջում են կազմակերպել մարզի գյուղական համայնքների գազաֆիկացում:

Մարզում գազամատակարարումն իրականացվում է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի «Կոտայք» և «Աբովյան» գազամատակարարման և գազաֆիկացման մատակարարումների միջոցով: 2014 թվականի հունվարի 1-ի դրությամբ 67 համայնքներից (7 քաղաքային, 60 գյուղական) գազաֆիկացված է 62-ը, բացառությամբ 5 գյուղական համայնքների՝ Հանքավան, Սևաբերդ, Ողջաբերդ, Սարալանջ, Բուժական: Բաժանորդների թիվը 2015 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմում է 63222, որից 24952 գյուղական համայնքներում, որը կազմում է հանրապետության գազաֆիկացված բնակարանների 9,6 %-ը (2015թ. հունվարի 1-ի դրությամբ հանրապետությունում գազաֆիկացված է 661386, գյուղերում՝ 166041, բնակարաններ): Գազի բաշխիչ գործող ցանցի միագիծ երկարությունը հանրապետությունում կազմել է 11345,6 կմ, այդ թվում Կոտայքի մարզում՝ 1049,63 կմ:^{105,106} ՀՀ Կոտայքի մարզի գազաֆիկացված գյուղական համայնքների վերաբերյալ ցուցանիշները բերված են հավելված 2-ում:

Չնայաց տարեց-տարի մարզի համայնքներում ավելանում է գազօգտագործողների քանակը, այնուհանդերձ մարզում գազաֆիկացման միջին ցուցանիշը կազմում է 71,8 %: Մարզի 8 համայնքներ գազաֆիկացված են 100 %-ով, իսկ 6 գյուղական հա-

¹⁰⁵ Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2014թ. էջ 194

¹⁰⁶ ՀՀ մարզերը և Երևան քաղաքը 2010-2014թթ., Եր. 2015, էջ 195-197

մայնքներում դրանց մակարդակը չի հասնում 50 տոկոսի, որոնց վերաբերյալ տվյալները ներկայացվում են աղյուսակ 2.12-ում:

Աղյուսակ 2.12

ՀՀ Կոտայքի մարզի 50 տոկոսից ցածր գազաֆիկացված համայնքները 2014թվականի հունվարի 1-ի դրությամբ¹⁰⁷

Գյուղական համայնքներ	Բնակելի տների քանակը	Գազաֆիկացման աստիճանը (%-ով)
Արտավազ	324	27
Կարենիս	310	48
Մեղրաձոր	798	19
Գեղարդ	126	18
Արագյուղ	286	31
Նուռնուս	168	6,5
Ընդհանուր բնակչության թիվը՝ (մարդ)	6772	

50 տոկոսից ցածր մակարդակով գազաֆիկացված վեց համայնքներում բնակչության թիվը 2012-2014 թվականներին նվազել է 590-ով (8.7 %), այն դեպքում, երբ մարզի ընդհանուր գյուղական բնակչությունն ավելացել է 3138-ով (2.5%-ով)՝ տես հավելված 1:

Գազաֆիկացման ցածր աստիճանն առաջին հերթին պայմանավորված է բնակչության ցածր վճարունակության և այդ համայնքներում համեմատաբար էժան էներգիառեսուրսների առկայության հետ: Ներկայումս գազի մատակարարման բնագավառում առաջնային են համարվում չգազաֆիկացված և ցածր աստիճանի գազաֆիկացված գյուղական համայնքների գազաֆիկացումը, ինչը հնարավորություն կտա բնակչությանն ու կազմակերպություններին կիրառել էկոլոգիապես մաքուր վառելիք: Հաշվի առնելով, որ համայնքային բյուջեներին հնարավորություն չեն տալիս սեփական միջոցներով լուծել այդ խնդիրը, հետևաբար անհարժեշտ է պետական աջակցություն: Ավելացնենք, որ մարզի գազաֆիկացման 2015-2018թվականների ծրագրով անհարժեշտ ֆինանսական ներդրումների ընդհանուր ծավալը կազմում է 487,0 մլն դրամ:

¹⁰⁷ ՀՀ Կոտայքի մարզի 2015-2018թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի Հրազդան, 2014թ., էջ 139-141

Գազամատակարարման բնագավառում իրականացվող ներդրումային քաղաքականությունը պետք է թիրախավորվի դեպի գազամատակարարման հասանելիության աստիճանի բարձրացմանը: Գազաֆիկացման արդյունքներն արդեն հաստատել են, որ մեր հանրապետությունում միջին հաշվով յուրաքանչյուր գազաֆիկացված բնակարան հնարավորություն է տալիս խնայել տարեկան 10-12 մ³ վառելափայտ, ինչը աղքատ անտառային ռեսուրսներով Հայաստանի համար էական նշանակություն ունի:

Ամփոփելով ենթակառուցվածքների վիճակի հետազոտության այս հատվածը կարելի է նշել, որ համայնքային ենթակառուցվածքները գտնվում են ոչ բարվոք վիճակում: Ճիշտ է որոշ ծրագրերի շնորհիվ կատարվում են ներդրումներ այդ ոլորտում, բայց դրանք արմատապես չեն լուծում խնդիրները: Համայնքային ենթակառուցվածքների քայքայումը պահանջում է անհրաժեշտ լուծումներ, որի ուշացումը բերում է գյուղական բնակավայրերից բնակչության արտահոսքին:

ՀՀ Կոտայքի մարզի բնակչության եկամուտների ավելացման և գյուղական համայնքների համաչափ զարգացման գործում որոշակի դեր կարող է կատարել զբոսաշրջությունը, այն լինելով ծառայության մատուցման ոլորտ, ենթակառուցվածքի տեսակ «մուլտիպլիկատորի էֆեկտով» կխթանի ամբողջ տնտեսության զարգացմանը: Զբոսաշրջությունը համաշխարհային մաշտաբով արագ զարգացող ինդուստրիա է, որի աճի տեմպերը գերազանցում է տնտեսական աճի տեմպերին: Եթե աշխարհում 1995-2000 թվականներին տնտեսական աճի միջին տարեկան տեմպը կազմել է 3 տոկոս, ապա արդեն 2002-ին՝ ավելի քան 4 %:¹⁰⁸ Համաշխարհային զբոսաշրջությունն աշխարհում կազմում է արտահանվող ծառայությունների 35 %-ը: Մինչև 2020 թվականը, միջազգային զբոսաշրջային այցելուների թիվը կհասնի 1,6 միլիարդ մարդու, ծախսերի գումարը՝ 2 տրիլիոն ԱՄՆ դոլլար, իսկ ոլորտում աշխատողների թիվը՝ 262 մլն:¹⁰⁹

ՀՀ-ում զբոսաշրջությունը հայտարարված է տնտեսության զարգացման գերակա ոլորտ: Աստիճանաբար զարգանում են զբոսաշրջության ենթակառուցվածքները՝ ճանապարհները, հյուրանոցային տնտեսությունը, հասարակական սննդի և զվարճանքի մատուցման ծառայությունները, միջազգային չափանիշների պահանջներին համապատասխանող օդանավակայանը: Վերջին 15 տարվա ընացքում Հայաստանի ներգնա զբոսաշրջությունը բնութագրվում է զբոսաշրջային այցելուների քանակի կայուն տարե-

¹⁰⁸ Международная экономические отношения. - М. 2005. - С. 173

¹⁰⁹ Զբոսաշրջության զարգացման հայեցակարգ, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն. - Եր. 2008, էջ 3

կան աճով: 2001-2015 թթ. ներգնա զբոսաշրջային այցելուների միջին տարեկան աճը կազմել է 18.0 %:¹¹⁰

Զբոսաշրջությունը Հայաստանի տնտեսության կայուն զարգացող ու հեռանկարային ոլորտներից է, որը կարող է էական դեր խաղալ երկրի սոցիալ-տնտեսական զարգացման գործում: Մեր հանրապետությունը համաշխարհային զբոսաշրջային շուկայում նոր երկիր է, սակայն ունի մեծ ներուժ, քանի որ զբոսաշրջիկներն առաջին հերթին զբոսաշրջային ուղղություն ընտրելիս հաշվի են առնում երկրի բնությունը, պատմամշակութային արժեքները, ավանդույթները և հայկական սփյուռքի առկայությունը: Հայաստանում կան զբոսաշրջության զարգացման համար նպաստավոր պայմաններ, որոնց արդյունավետ օգտագործումը կարող է դառնալ հանրապետության տնտեսության կարևոր ճյուղերից մեկը:

Զբոսաշրջությունը և հանգստի կազմակերպումը Հայաստանի տնտեսության գերակա ճյուղերից է, որը 1998 թվականից գտնվում է համապատասխան կառույցների ուշադրության ներքո, ինչի շնորհիվ զբոսաշրջիկների թիվը դինամիկորեն աճում է: Զբոսաշրջային ոլորտի մարկեթինգային քաղաքականության շրջանակներում ծրագրային միջոցառումները հիմնականում ուղղված են եղել միջազգային շուկայում Հայաստանի՝ որպես զբոսաշրջության համար բարենպաստ երկրի:

ՀՀ-ում շուրջ 20 հազար մարդ աշխատում է զբոսաշրջության ոլորտում (երկրի աշխատողների 1,7 %-ը), որն ապահովում է հանրապետության ՀՆԱ-ի շուրջ 4,7 %-ը: 2008 թ. փետրվարի 13-ի ՀՀ կառավարության «Զբոսաշրջության զարգացման հայեցակարգով» նախատեսվում է մինչև 2030 թվականն այն հասցնել 12 %-ի: Ակնկալվում է, որ մինչև 2020թ. կայցելեն 1,5 մլն, իսկ 2030-ին 3 մլն զբոսաշրջիկ:

Զբոսաշրջության զարգացման գործընթացում իր լուսնան ունի Կոտայքի մարզը, իր նպաստավոր բնակլիմայական պայմաններով, պատմամշակութային ու բնական հուշարձանների բազմազանությամբ, պահպանված ավանդույթների և այլ զբոսաշրջային ռեսուրսների հաշվին կարող է նպաստել ոչ միայն սովորական զբոսաշրջության զարգացմանը, այլ նաև ագրոզբոսաշրջության գյուղական տուրիզմի, էքստրիմալ տուրիզմի, լեռնադահուկային և այլ տուրիստական ձևերի զարգացմանը:

¹¹⁰ Վերլուծությունը կատարվել է ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից հրապարակված 2001-2015թթ. Հայաստան կատարած ներգնա զբոսաշրջային այցելուների քանակի աճի դինամիկային հիման վրա

Հայաստանի և մասնավորապես ՀՀ Կոտայքի մարզի համար առավել արդյունավետ կարող է լինել ագրոգրոսաշրջությունը: Այն բնորոշվում է որպես գործունեություն, ձեռներեցություն, որը համատեղում է գյուղատնտեսության և զբոսաշրջության հիմնական տարրերը, յուրահատկությունները, այցելուներին հնարավորություն է տալիս ձեռք բերել փորձառություն, խթանում է տնտեսական գործունեությունը, ավելացնում է ֆերմերային տնտեսության և համայնքի եկամուտները: Ագրոգրոսաշրջությունը հանգստի տեսակ է, որի դեպքում զբոսաշրջիկի հյուրընկալությունը կատարվում է գյուղական վայրերում:

Ագրոգրոսաշրջությունը արագ զարգացող ոլորտներից է, ի շնորհիվ իր առանձնահատկությունների՝

- այն հասանելի է բնակչության գրեթե բոլոր խավերին, համեմատաբար էժան է:

Օրինակ, մեկ մարդ/օր հանգիստը 2-3 անգամ էժան է քան զբոսաշրջության ավանդական այլ տեսակներ, իսկ ընտանեկան հանգստի դեպքում ծախսերը նվազում են 30-40 %-ով,

- հանդիսանում է ընտանեկան զբոսաշրջության տարատեսակ, ինչը հնարավորություն է տալիս բարելավելու երեխաների առողջական վիճակը, նրանց սովորացնել աշխատելու հմտություն, շփվելու գյուղական կյանքին,
- ագրոգրոսաշրջության կազմակերպումը մեծ ներդրումներ է ցուցաբերում պահանջում, խթանում է գյուղատնտեսության զարգացմանը:

Ագրոգրոսաշրջությունը տնտեսական արդյունքներից բացի ունի նաև սոցիալական էֆեկտ՝ հնարավորություն է տալիս գյուղական համայնքներում բարձրացնել կյանքի որակը, բարելավելու բնակչության հիգիենիկ վիճակը, բարեկամական հարաբերություններ հաստատել զբոսաշրջիկների ու գյուղացիների միջև, թուլացնելու լարված սոցիալական հարաբերությունները, նվազեցնելու տարբերությունները տարածաշրջանների միջև:¹¹¹

Կոտայքի մարզը Երևանից հետո երկրորդն է հյուրանոցային տնտեսության օբյեկտների քանակով: Բարձրորակ հյուրանոցային ծառայությունների տրամադրումը և հանրային սննդի կազմակերպումը զբոսաշրջության զարգացման հիմնական նախա-

¹¹¹ Հարությունյան Ա., Եղիազարյան Կ. Ագրոգրոսաշրջության զարգացումն որպես ՀՀ գյուղական բնակչության սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման ուղի: Տնտեսության զարգացման և կառավարման հիմնախնդիրներ: Գիտական աշխատանքների ժողովածու / Տնտեսագիտության և կառավարման ինստիտուտ. -Եր: ՕՐ-ԴԱՐ հրատ. գիրք 7, 2014, էջ 83-98

դրյալն է: Մարզում կայացած զբոսաշրջության կենտրոններն են՝ Ծաղկաձորը, Աղավնաձոր-Հանքավան, Աղվերան հանգստյան գոտիները, Գառնի-Գեղարդ պատմամշակութային վայրերը: Մարզն ունի բավարար ավտոճանապարհային ցանց, ամբողջովին ընդգրկում է մարզի գրեթե բոլոր համայնքները և պատմամշակութային վայրերը:

Ունենալով զբոսաշրջության զարգացման նշանակալի ռեսուրսներ և հնարավորություններ՝ մարզում առկա են նաև դրան խոչընդոտող բազմաթիվ գործոններ, որոնցից կարելի է առանձնացնել՝

- զբոսաշրջության ենթակառուցվածքների անհամաչափ տեղաբաշխումը,
- մարզի զբոսաշրջության զարգացման հայեցակարգի բացակայությունը,
- մարզի և նրա առանձին կառույցների մասին գովազդային-տեղեկատվական նյութերի բացակայությունը, գիդերի բացակայությունը,
- որոշ մարզային ենթակայության և առանձին համայնքային ճանապարհների անմխիթար վիճակը,
- միջազգային շուկայում զբոսաշրջային ծառայությունների տրամադրման անմրցունակ վիճակը,
- զբոսաշրջության համաշխարհային շուկայում Հայաստանին բարենպաստ, գրավիչ և ապահով երկիր համակողմանիորեն չներկայացնելու հանգամանքը,
- զբոսաշրջության ոլորտում ներդրումային ծրագրերի անբավարար մակարդակը և այլն:

ՀՀ Կոտայքի մարզում առաջիկա երեք տարիների զբոսաշրջության զարգացման ապահովման համար կարևոր են հետևյալ միջոցառումների կազմակերպումը.

1. մարզի զբոսաշրջային տնտեսության միջոցների գույքագրում,
2. գովազդային նյութերի պատրաստում,
3. մարզում զբոսաշրջության կենտրոնների ստեղծում,
4. զբոսաշրջության ոլորտի զարգացման պատասխանատուների, աշխատակիցների վերապատրաստում և միջազգային փորձի ու հմտությունների յուրացման նպատակով դասընթացների կազմակերպում,
5. զբոսաշրջային ծառայություններ մատուցող կազմակերպությունների և փոքր ու միջին ձեռներեցության (ՓՄՁ) զարգացմանն աջակցողների հետ համագործակցության ապահովում:

Ընդհանուր առմամբ համայնքների համաչափ զարգացման տեսանկյունից, արտադրական և սոցիալական ենթակառուցվածքների համակարգը չի սահմանափակվում միայն վերը հիշատակված ոլորտներով: Այն ընդգրկում է նաև բնապահպանական հարցեր (աղբահանություն, մաքրման կայանների, պոչամբարների ստեղծում, անտառ-տնտեսության զարգացում և այլն), քաղաքաշինության (բնակավայրերի հատակագծերի նախագծում, համատեղ կեցության պայմանների ապահովում, սողանքների և ջրհեղեղների դեմ նախապատրաստում), գյուղատնտեսության ոլորտում կարկտահարության, ցրտահարության և մյուս ռիսկային անցանկալի երևույթների դեմ պայքարի միջոցառումների իրականացում և այլն:

Այսպիսով վերլուծելով ՀՀ Կոտայքի մարզի արտադրական ենթակառուցվածքների առկա վիճակը, գալիս ենք այն եզրակացության, որ գյուղատնտեսության ոլորտի բարեփոխումների ժամանակ գրեթե ոչինչ չի ձեռնարկվել գյուղական համայնքների համաչափ զարգացման հիմնախնդիրների լուծման ուղղությամբ, չի մշակվել նպատակային ռազմավարություն և չկար իրագործման հստակ քաղաքականություն:

Ճիշտ է բացարձակ իմաստով երբեք հնարավոր չէ ապահովել համայնքների համաչափ զարգացում՝ կապված բազմաթիվ օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառների հետ (բնակլիմայական պայմաններ, տեղաբնակների անավդույթները տեղաքաշխմածություն, համայնքների չափեր, հողի բերրիություն, արոտավայրեր, ոռոգման հնարավորություններ, մեկ տնտեսության հաշվով հողատարածքներ, ծովի մակերևույթից բարձրություն, բնակչության կազմն ու կառուցվածքը և այլն), այսուհանդերձ միշտ էլ առկա են չօգտագործված ռեսուրսներ, որոնք կարող են նպաստել հիմնախնդրի լուծմանը: Այստեղ կարելի է առանձնացնել սոցիալական ոլորտի զարգացումը, ինչը բերում է բնակչության ինտելեկտուալ ռեսուրսների բարելավմանը, մարդկային կապիտալի ներուժի մակարդակի բարձրացմանը, ինչպես նաև համայնքների զարգացման ծրագրերի մշակման ու իրագործմանը, համայնքների մեզոկառավարման ու շուկայական տնտեսության պետական կարգավորման գործընթացների բարելավմանը և այլն:

ԳԼՈՒԽ 3. ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՉԱՓ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

3.1. ՀՀ Կոտայքի մարզի սոցիալական ոլորտի դերը գյուղական համայնքների համաչափ զարգացման խնդիրների լուծման գործում

Հայաստանի Հանրապետությունում անցումը պլանային տնտեսական համակարգից շուկայական հարաբերություններին արմատապես փոխեց սոցիալական ոլորտի հանդեպ մոտեցումները: Եթե նախկինում սոցիալական հարցերի գերակշիռ մասն իրականացվում էր պետության կողմից՝ կրթություն, առողջապահություն, սպորտ, նույնիսկ հանգստի մի մասը, ապա շուկայական տնտեսավարման պայմաններում, դրանցից ավելի քիչ մասն է պետությունը վերցնում իր վրա, հիմնականը թողնում է սպառողի վրա: Այդուհանդերձ շուկայի պայմաններում սոցիալական ապահովությունն անհրաժեշտ է այն բոլորի համար (թոշակառուներ, հիվանդներ, երեխաներ, հաշմանդամներ, գործազուրկներ, որբեր), ովքեր չեն մտնում շուկայական հարաբերությունների մեջ և չեն կարող ազգային արդյունքից ստանալ իրենց բաժինը աշխատանքի կամ կապիտալի կիրառման դիմաց: Պետությունը պարտավոր է նաև իրականացնել աշխատուժի շուկայում ընդգրկված աշխատողների երաշխավորված վճարումները, որպեսզի գործատուները վարձու աշխատողներին վճարեն նվազագույն կենսապահանջմունքները բավարարող աշխատավարձ:¹¹²

Ըստ պահանջմունքների բավարարման բնույթի սոցիալական ոլորտի ճյուղերը բաժանվում են՝

ա) ճյուղեր, որոնց գործունեությունն ուղղված է մարդու սոցիալ-մշակութային, հոգևոր, մտավոր պահանջմունքների բավարարմանը, բնականոն կենսագործունեության ապահովմանը (կրթություն, գիտություն, առողջապահություն, մշակույթ, սպորտ),

բ) ճյուղեր, որոնց գործունեության նպատակը նյութական բարիքների ստեղծման գործընթացի ավարտն է ու դրանք սպառողին հասցնելը (մանրածախ առևտուր,

¹¹²Մակրոտնտեսական կարգավորում: Ուս. ձեռնարկ. -Եր: Տնտեսագետ, 2002, էջ 19

հանրային սնունդ, կենցաղային սպասարկում, բնակարանային կոմունալ տնտեսություն):¹¹³

Դրանք իրականացնելու համար, պետությունը նախապես պետք է մշակի սոցիալական քաղաքականություն, որի գլխավոր օբյեկտը երկրի բնակչությունն է, իսկ նպատակը հասարակության անդամների կողմից կենսական պահանջմունքների բավարարումը: Սակայն, սոցիալական քաղաքականությունը կոչված է ապահովելու բնակչության ոչ բոլոր կենսական պահանջմունքները, այլ միայն նրանք, որոնք մարդիկ, ելնելով օբյեկտիվ պատճառներից (հաշմանդամություն, ժամանակավոր անաշխատունակություն և այլն) չեն կարող ինքնուրույն ապահովել: Դրանք համարվում են պասիվ, քանի որ այս դեպքում շահառուի կողմից ներդրում չի կատարվում, իսկ այն պահանջմունքները, որոնք մարդիկ կարող են և պետք է բավարարեն ինքնուրույն, կոչվում են ակտիվ, բայց պետությունը պարտավոր է բարենպաստ պայմաններ ապահովել, որպեսզի մարդիկ օգտագործեն իրենց առկա ռեսուրսները: Սոցիալական քաղաքականությունը պետք է աջակցի այս կամ այն օբյեկտիվ պատճառներով աշխատանք չունեցող քաղաքացիներին, ներառելով գործազրկության նպաստի վճարումը, որակավորման դասընթացների կազմակերպումը և այլն:¹¹⁴

Սոցիալական քաղաքականությունը, նախ դրսևորվում է որպես մարդկանց սոցիալական պաշտպանության իրականացում՝ տնտեսական, սոցիալական, իրավական և մի շարք այլ իրավունքների ու շահերի ապահովումով: Երկրորդ՝ ուղղված է սոցիալական հարցերի լուծմանը: Սոցիալականը՝ չբավարարված պահանջմունքներն են, կոնկրետ նյութական և հոգևոր բարիքների նկատմամբ: Այդ պատճառով էլ սոցիալական պաշտպանությունը չպետք է բավարարվի սոցիալապես անպաշտպան և անապահով մարդկանց հարցերի լուծմամբ: Դրա կարիքն ունեն նաև ապահովված բնակչությունը, առաջին հերթին, կրթության, առողջապահության և մի շարք այլ բարիքների ստացման պարագայում: Հետևաբար սոցիալական քաղաքականության առանցքը սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներն են, որով պետք է զբաղվեն կառավարման բոլոր օղակների

¹¹³Ղուշյան Հ., Ավագյան Գ. Մակրոտնտեսական կարգավորում. հարցեր և պատասխաններ - Եր.: Հեղինակային հրատարակություն. 2008, էջ 196

¹¹⁴Մարկոսյան Ա., Գեղամյան Ն. Սոցիալական քաղաքականության պետական կարգավորման հարցերը Հայաստանի Հանրապետությունում. -Եր.: Տիգրան Մեծ, 2006, էջ 13

համապատասխան մարմինները՝ կառավարությունը, մարզպետարանները, ՏԻՄ-երը և այլն:

Սոցիալական ոլորտի կարևոր բաղադրիչը կրթությունն է, որն ունի ամենամեծ շահառուները, կոչված է բարձրացնելու մարդկային կապիտալի արժեքը և ապահովելու աշխատանքային ռեսուրսների վերարտադրությունը: Դրա համար էլ մեր հանրապետությունում ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության մեջ առանձնակի տեղ է հատկացվում կրթությանը և կրթական բարեփոխումների հարցերին:

Իրավական պետության կառուցումը, հասարակական-տնտեսական զարգացման միջազգային կառույցներին ինտեգրվելը պահանջում են բարեփոխումներ, որոնք ընդգրկում են կրթության որակը բարձրացնող միջոցառումներ, ինչպես ամբողջ հանրապետության, այնպես էլ նրա յուրաքանչյուր տարածաշրջանի առումով:

ՀՀ Կոտայքի մարզի կրթության զարգացման տեսլականը պետք է դիտարկել երկրի ընդհանուր զարգացման, ազգային անվտանգության ապահովման հետևյալ հիմնական թիրախների հաղթահարման համատեքստում:¹¹⁵

1. Կայուն տնտեսական աճի ապահովում,
2. քաղաքացիական հասարակության զարգացում,
3. բարեկեցության ապահովում և աղքատության հաղթահարում:

Կրթության գլոբալացման և մրցակցության ապահովման անհրաժեշտությունից ելնելով կրթության առջև ծառացած են բազմաթիվ հիմնախնդիրներ, որը պետք է համահունչ լինի ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի «Կրթություն՝ հանուն կայուն զարգացման» ռազմավարությանը, ուղղված լինի երկրի տնտեսական աճին, աղքատության կրճատմանը, բարեկեցության բարձրացմանը և քաղաքացիական հասարակության զարգացման գործընթացների իրականացմանը:

Այս պահանջներից ելնելով, ՀՀ Կոտայքի մարզի կրթության ռազմավարությունը դիտարկենք այն փուլերով, որով անցնում է մարդն իր կյանքի ընթացքում: Կրթության առաջին փուլը նախադպրոցական կրթությունն է, որը կոչված է ապահովելու երեխայի հետագա ձևավորումը, հասարակական կյանքում նրա ինտեգրումը և կյանքում իր

¹¹⁵ ՀՀ Կոտայքի մարզի 2015-2018 թթ. սոցիալական տնտեսական զարգացման ծրագիր, Հրազդան, 2014, էջ 75

տեղը գտնելու հարցում: ՀՀ ազգային ժողովը դեռևս 2005 թվականին ընդունել է «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքը, որին համապատասխանեցվում և կատարելագործվում է իրավական դաշտը:

Նախադպրոցական կրթությունը կրթական համակարգի առաջին և բաղկացուցիչ մասն է, որի նպատակն է երեխայի ֆիզիկական ու հոգեկան առողջության պահպանումը և ամրապնդումը, ներդաշնակ զարգացումը և դաստիարակությունը, դպրոցական ուսուցման նախապատրաստումը:

Նախադպրոցական կրթության իրականացման գործում հինական դերը վերապահված է նախադպրոցական ուսումնական հաստատություններին, որոնք 1996 թվ. անցել են համայնքների ենթակայության տակ: Անկախության առաջին տարիներին երկրում սոցիալ-տնտեսական իրավիճակի վատթարացման պատճառով նվազեցին այդտեղ հաճախող երեխաների թիվը, փակվեցին բազմաթիվ նախադպրոցական հաստատություններ, հատկապես գյուղական համայնքներում: Հետագայում դրանք վերականգնվեցին և ավելացան հաճախող երեխաների թիվը:

Այսպես, 2011-2014 թթ. մարզի մի շարք գյուղական համայնքներում վերաբացվեցին նախադպրոցական հաստատությունները: 2014 թվականին մարզում գործում է 55 նախադպրոցական հաստատություն՝ 240 խմբով, որում ընդգրկված են 6423 երեխա: Սակայն մարզի մինչև 6 տարեկան երեխաների շուրջ 30%-ն է ընդգրկված դրանում: Մարզի 60 գյուղական համայնքներից 35-ում չեն գործում նախադպրոցական հաստատություններ, իսկ դրանցից 25-ում չկան համապատասխան շենքեր և շինություններ:¹¹⁶ Փաստորեն գյուղերի երեխաների մի ստվար մասը զրկված է այդ կրթությունը ստանալու հնարավորություններից: Գյուղական համայնքներում նախադպրոցական կրթության մատչելիությունը պայմանավորված է այդ հաստատությունների բացակայությամբ, ինչպես նաև համայնքային բյուջեների սղությամբ: Ըստ էության առաջին դասարան հաճախող երեխաները, որոնք չեն անցել նախադպրոցական հաստատություններով հայտնվում են մեկնարկային անհավասար պայմաններում:

¹¹⁶ ՀՀ Կոտայքի մարզի 2015-2018 թթ. սոցիալական տնտեսական զարգացման ծրագիր, Հրազդան, 2014, էջ 76

Որպես դրական երևույթ նշենք, որ 2014-2015 թթ. ուսումնական տարում մարզի 15 գյուղական համայնքներում սկսեցին գործել նախակրթարանների 20 խումբ, որում ընդգրկված են 495 երեխա: Նախատեսվում է 2015-2018 թվականներին դրանց մասնակցությունը հասցնել 100 տոկոսի, ինչի համար պետք է բարելավել մեծ մասի շենքային պայմանները, լուծել լոկալ ջեռուցման խնդիրները, բարելավել սննդի ռացիոնը և որակը, թարմացնել գույքը, օգտագործել ուսուցողական դիդակտիկ պարագաներ, խաղալիքներ և այլն: Որպեսզի նախակրթարանները գործեն ըստ իրենց նշանակության կարևոր խնդիր է մնում մասնագետ մանկավարժների հարցը, որն առավել դժվար լուծելի է գյուղական համայնքներում, ինչին պետք է ավելի մեծ ուշադրություն դարձնեն համապատասխան կառույցների ղեկավարները:

Կրթական համակարգի հիմնական օղակը մնում է միջնակարգ կրթությունը, որի համար էլ պետական կրթական քաղաքականության մեջ ընդունվում է որպես գերակա ուղղություն: ՀՀ-ում կրթական ոլորտի բարեփոխումները, սկսվեց 2006 թվականին և ավարտվեց 2012 թվականին: Այդ գործընթացով Կոտայքի մարզի 6 քաղաքային և 1 գյուղական համայնքներում առկա են 11 ավագ դպրոցներ: Ավագ դպրոցները դիտվում են որպես նախամասնագիտական կրթություն ապահովող հիմնական օղակ, կոչված են սովորողների հակումներին, ընդունակություններին և նախասիրություններին համապատասխան նախնական, միջին և բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու հնարավորություն և ինքնուրույն կյանք վարելու պատրաստվածության ապահովում:

Մարզում 2011-2014թթ. հաշիվ դպրոցների ուսումնաօժանդակ անձնակազմի օպտիմալացման և ուսուցիչների ծանրաբեռնվածության բարձրացման բարելավվել է հանրակրթությանը տրամադրվող պետական ֆինանսական միջոցների արդյունավետությունը, ինչի մասին վկայում են աղյուսակ 3.1 տվյալները:

Տարեցտարի ավելանում են ֆինանսական հատկացումները կրթական համակարգին ոչ միայն ամբողջությամբ, այլ նաև մեկ աշակերտի հաշվով: Մարզում մեկ աշակերտին բաժին հասնող տարեկան միջին գումարը 2012թ. կազմել է 165600 դրամ, իսկ 2013թ.՝ 171400 դրամ: Բարձրացել է նաև ուսուցիչների միջին աշխատավարձը՝ 2013թ. կազմել է ամսեկան 114200 դրամ:

ՀՀ Կոտայքի մարզում 2011-2014թթ. կրթության ոլորտի ՀՀ պետական բյուջեից
հատկացումները¹¹⁷

(հազար դրամ)

№	Կրթության ոլորտները	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2014թ. 2011թ. նկատմամբ (%)
	Ընդամենը այդ թվում՝	4640671.5	4642485.6	4777367.7	5342141.3	115.1
1.	Հանրակրթություն	4520612.6	4517777.5	4652535.0	5171226.0	114.3
2.	Հատուկ կրթություն	89343.4	93992.6	91611.8	104949.8	117.4
3.	Արտադպրոցական դաստիարակություն	30715.5	30715.5	33220.9	47965.5	156.0

2014 թվականին մարզում գործում են 105 հանրակրթական ուսումնական հաս-
տատություն, որից՝ 1 հատուկ, 2 կրթահամալիր և 1 ոչ պետական դպրոց, դա Նաիրիի
ոչ պետական միջնակարգ դպրոցն է: Դպրոցներից 91-ը գործում են մարզպետարանի,
իսկ 11 ավագ դպրոցները և Աբովյանի կրթահամալիրը՝ ՀՀ ԿԳՆ ենթակայության ներ-
քո: Կոտայքի մարզում է տեղաբաշխված ռազմական թեքումով գիշերօթիկ «Փոքր
Միեր» կրթահամալիրը:

Գնալով ավելանում է առաջին դասարան հաճախողների թիվը: Այն 2011-2012
թվականներին կազմել է 3300, հաջորդ տարին՝ 3375, իսկ 2013-2014 ուս. տարում՝
3620 աշակերտ:

Կրթական համակարգում, որպես ֆինանսավորման ցուցանիշ կիրառվում է
աշակերտ-ուսուցիչ հարաբերությունը, որի վերաբերյալ ըստ ՀՀ մարզերի 2011-2012 և
2012-2013 ուսումնական տարիների տվյալները բերվում են աղյուսակ 3.2-ում:

¹¹⁷ ՀՀ Կոտայքի մարզի 2015-2018 թթ. սոցիալական տնտեսական զարգացման ծրագիր, Հրազդան,
2014, էջ 78

Աշակերտ-ուսուցիչ հարաբերակցությունն ըստ ՀՀ մարզերի¹¹⁸

Մարզերը	2011-2012 ուս. տարի			2014-2015 ուս. տարի		
	աշակերտ-ներ	ուսուցիչ-ներ	հարաբե-րակցու-թյունը %	աշակերտ-ներ	ուսուցիչ-ներ	հարաբե-րակցու-թյունը %
ք. Երևան	117629	10832	10.9	114402	10213	11.2
Արագածոտն	19330	3025	6.4	17483	2812	6.2
Արարատ	34604	3354	10.3	32017	3163	10.1
Արմավիր	36732	3881	9.5	33446	3644	9.2
Գեղար-քունիկ	33135	3789	8.7	29301	3542	8.3
Լոռի	33236	3845	8.6	29760	3604	8.3
Կոտայք	35084	3327	10.5	33703	3107	10.8
Շիրակ	34353	4042	8.5	30618	3560	8.6
Սյունիք	17733	2487	7.1	16451	2329	7.1
Տավուշ	7421	1090	6.8	6518	1023	6.4
Վայոց Ձոր	17182	2085	8.2	15860	2021	7.8
ՀՀ	386439	41757	9.2	359559	39018	9.2

Աղյուսակի տվյալներից տեսնում ենք, որ աշակերտ-ուսուցիչ հարաբերակցության ցուցանիշով Կոտայքի մարզը երկրորդն է հանրապետությունում Երևան քաղաքից հետո և շուրջ 15%-ով գերազանցում է հանրապետության միջինին: Բայց դրա հետ միասին մարզի 23 գյուղական դպրոցներ հաճախում են 100-ից պակաս աշակերտներ: Այդ դպրոցներում դասարանի միջին խտությունը ցածր է 7-ից, իսկ ուսուցիչ-աշակերտ հարաբերակցությունը՝ 4-ից (ավելի քան երեք անգամ պակաս նորմատիվից):

¹¹⁸ ՀՀ ԿԳՆ 3845 վիճակագրական տեղեկագիր, Հանրակրթությունը Հայաստանում 2012-2013 ուսումնական տարի և ՀՀ մարզերը 2010-2014թթ, Եր. 2015, էջ 123

2014-2015 ուսումնական տարում Կոտայքի մարզի 105 հանրակրթական դպրոցներում սովորել են 33703 աշակերտ, դասարանների քանակը կազմել է 15,8, միջին հաշվով մեկ դասարան հաճախել են 20,6 աշակերտ (հանրապետության միջինը կազմում է 16.2, Երևան քաղաքը՝ 21.2), մանկավարժների թվաքանակը կազմել է 3107, մեկ դպրոցում աշխատող մանկավարժների թվաքանակը՝ 29.6 մարդ:¹¹⁹

Մարզի դպրոցներից ոչ բոլորն են ապահովված ժամանակակից ուսումնական լաբորատորիաներով, սարքավորումներով և նյութերով: «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի միջոցով արդիականացվել է մարզի 19 դպրոցների լաբորատորիաները: Լոկալ ջեռուցմամբ ապահովված են ոչ բոլոր գյուղական համայնքների դպրոցները, նախատեսվում է այդ գործընթացն իրականացնել ամբողջությամբ 2015-2018 թվականներին: Բոլոր դպրոցներն ապահովված են համակարգիչներով և ինտերնետ կապով:

Անժխտելի է, որ կրթության որակը կախված է ոչ միայն նյութատեխնիկական բազայի առկայությունից, այլ նաև ուսուցիչների գիտելիքների մակարդակից: Ներկայումս արդիական խնդիր է ուսուցիչների գիտելիքների ու հմտությունների համապատասխանեցումը արդի պահանջներին: Կարևորվում է նրանց մասնագիտական և մանկավարժական վերապատրաստումը: Նշենք, որ պարտադիր ատեստավորման նպատակով տարեկան վերապատրաստվում են ուսուցիչների մոտ 20 %-ը:

Ինչպես ամբողջ հանրապետությունում, այնպես էլ ՀՀ Կոտայքի մարզում դժվար լուծվող խնդիր է դարձել միջին մասնագիտական կադրերի պատրաստումը: Ներկայումս մարզում գործում են վեց միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ, որոնք պատկանում են տարբեր գերատեսչությունների:

Նախնական մասնագիտական կրթության ոլորտում գործունեության նպատակն է եղել որակյալ մասնագետների պատրաստումը և նրանց մասնակցության բարձրացումը աշխատաշուկայում, կրթական ծրագրերի համապատասխանեցումը հանրապետության տնտեսական զարգացման պահանջներին:

Գնալով այս բնագավառում իրավիճակն ավելի է սրվում, քանի որ մի կողմից նվազում է պետական պատվերներն այդ կրթության հանդեպ, իսկ մյուս կողմից՝ չունեն բավարար պայմաններ՝ ուսումնական բազա, արհեստավարժ մանկավարժական

¹¹⁹ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով 2010-2014. - Եր. 2015, էջ 123

անձնակազմ, հետևաբար նրանց պատրաստած մասնագետները աշխատաշուկայում պահանջարկ չեն վայելում:

Կոտայքի մարզում գործում է պետության կողմից հավատարմագրված մեկ բուհ՝ Հրազդանի հումանիտար ինստիտուտը, որը պատրաստում է «Մանկավարժություն և մեթոդիկա», «Ֆինանսներ ու վարկ» և «Իրավագիտության» գծով մասնագետներ: Այն հիմնադրվել է 1996 թվականին, համագործակցում է ԱՄՆ-ի Ֆլորիդա նահանգի գյուղատնտեսության և մեխանիկայի, ինչպես նաև Մոսկվայի ինդուստրիալ համալսարանների հետ:

Մարզում գործում է 3 հենակետային դպրոց՝ ք. Աբովյանում երաժշտական և գեղարվեստի, ք. Հրազդանում՝ արվեստի դպրոցներ: ՀՀ մշակույթի նախարարության կողմից 2012-2014 թթ իրականացվել են մի շարք կրթական ծրագրեր, որոնց մասնակցել են Կոտայքի մարզի գեղարվեստական կրթություն իրականացնող հաստատությունները: 2012-2014թթ ուսումնամեթոդական օժանդակության, վարպետության դասեր են ստացել 1509 աշակերտ և 350 մանկավարժ, վերապատրաստվել են 210 մանկավարժ:

Մարզում մշակութային կյանքը որոշակի չափով զարգացած է, սակայն գյուղական համայնքների մեծ մասի մշակույթի տները գտնվում են ոչ բավոք վիճակում, ունեն հիմնանորոգման և գույքի համալրման կարիք, ինչի պատճառով էլ այդ համայնքներում մշակութային ծառայությունների մատուցման մակարդակը շատ ցածր է:

Ամփոփելով ՀՀ Կոտայքի մարզի կրթական ու մշակութային համակարգում առկա վիճակը, կարելի է համոզված կերպով նշել, որ կրթությունը և մշակույթը այդ տարածաշրջանում մեծ հարգանք է վայելում, մարդիկ միշտ էլ գիտակցել են, որ գիտելիքը մարդկային կապիտալի առաջնային չափանիշն է, այն նպաստում է լուծելու սոցիալ-տնտեսական բազմաթիվ խնդիրներ: Սակայն դրա հետ միասին բարձրագույն կրթությունը ոչ բոլորին է հասանելի, հատկապես գյուղական բնակչությանը, որոնք թեև գիտակցում են կրթության արժեքը, բայց մի շարք օբյեկտիվ պատճառներով չեն կարողանում ձեռք բերել (հիմնականում ֆինանսական դժվարությունների հետ կապված):

Սոցիալական ոլորտի կարևոր բաղադրիչներից է առողջապահությունը, որը հասնդիսանում է մարդկային կապիտալի մեծացման չափանիշներից մեկը, նպաստում է երկրի տնտեսության զարգացմանը և բնակչության կենսամակարդակի բարձրաց-

մանն ու աղքատության կրճատմանը: Պետական ֆինանսավորման համեմատաբար ցածր պայմաններում, Հայաստանն ունի զարգացած առողջապահական համակարգ, որի մի զգալի մասը ժառանգել է խորհրդային կարգերից: Պաշտոնական տվյալներով 1991 թվականին հանրապետության 100 հազար բնակչի հաշվով առկա էր 853 հիվանդանոցային մահճակալ և 370 բժիշկ, որը գերազանցում էր եվրոպական միջին ցուցանիշներին:

Անկախությունից հետո կրճատվեցին հիվանդանոցների քանակը, հատկապես գյուղական համայնքներում: 1991-2003 թվականներին հիվանդանոցային մահճակալների քանակը կրճատվեց մոտ երկու անգամ, իսկ բժիշկների թիվը՝ 20 տոկոսով:

Հետագա տարիներին ֆինանսավորման տարբեր աղբյուրների, հատկապես պետական բյուջեի միջոցների հաշվին որոշակիորեն բարելավվեցին համակարգի հիմնական ցուցանիշները: 2015 թվականի հունվարի 1-ի դրությամբ մարզում աշխատում են 500 բժիշկ, 1083 միջին բուժանձնակազմ, հիվանդանոցային մահճակալների քանակը կազմում է 658 միավոր:

Կոտայքի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման գործում առողջապահության ոլորտում գերակա է համարվում առաջնային բուժօգնությունը, ծրագրային մակարդակով հատուկ կարևորվում է մոր և մանկան առողջության պահպանումը, մանկական հիվանդանոցային և շտապ օգնության ծառայությունների արդիականացումը, վարակիչ ու կառավարելի ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման խնդիրները:

Մարզում առաջնային բուժօգնության ոլորտում որակյալ բժշկական ծառայությունների մատուցման համաչափությունն ապահովելու ուղղությամբ 2000-2014 թվականների ընթացքում ՀԲ-ի վարկային ծրագրերով կատարվել է շուրջ 960.0 մլն դրամի ներդրում, որի արդյունքում կառուցվել և հիմնանորոգվել է, արդի բժշկական սարքավորումներով, կահավորանքով հագեցվել են մարզի 23 առողջության առաջնային պահպանման կենտրոնները, ընտանեկան բժշկության մասնագիտացման ծրագրով մասնագիտացվել են 140 բժիշկ և 161 բուժքույր:

Մարզային առողջապահությանը բնորոշ են որոշակի առանձնահատկություններ, որոնք պայմանավորված են գյուղական համայնքներում բնակվող մարդկանց դեմոգրաֆիկ ցուցանիշներով: Այստեղ բնակչությունը «ծերացած» է՝ 60-ից բարձր տարիքի

մարդկանց տեսակարար կշիռը 12%-ից ավելին է: Այդ պայմաններում ավելանում է խրո-
նիկ հիվանդություններով հիվանդացության ցուցանիշը, փոխվում է նրանց սեռա-
տարիքային կառուցվածքը, որոնք ավելի շատ հոգատարության և ուշադրության
կարիք են զգում: Հետևաբար ՀՀ Կոտայքի մարզի գյուղական համայնքների
բնակչությանը պետական պատվերի շրջանակներում մատուցվող որակյալ
արտահիվանդանոցային բուժօգնության համաչափության ապահովումը գերակա
խնդիր է հանդիսանում:

Առողջապահական համակարգի աշխատանքների բարելավման հիմնական
գրավականը, առաջին հերթին, նրա կադրային, նյութատեխնիկական և ֆինանսական
ապահովածությունից է կախված: Աղյուսակ 3.3-ում բերվում են Հայաստանի
Հանրապետության և Կոտայքի մարզի առողջապահական համակարգի վերաբերյալ
տվյալներ՝ 2009-2014 թվականների համար:

Աղյուսակ 3.3

ՀՀ և ՀՀ Կոտայքի մարզի առողջապահական համակարգի 2009-2014թթ
հիմնական ցուցանիշները¹²⁰

№	Ցուցանիշները	Հայաստանի Հանրապետությունում					Այդ թվում Կոտայքի մարզում				
		2010	2011	2012	2013	2014	2010	2011	2012	2013	2014
1.	Բժիշկների թվաքանակը	13591	13490	12938	12664	12896	502	514	503	491	500
2.	Միջին բուժանձնակազմ	18649	18820	18784	18426	18053	1168	1174	1142	1128	1083
3.	Հիվանդանոցային մահճակալների քանակը	12160	12236	12241	12268	12514	673	673	658	658	658
4.	Ամբուլատոր- պոլիկլինիկաներ	504	506	513	514	509	44	44	44	45	45
5.	Պոլիկլինիկա հաճախողների քանակը (հազար)	11318	11502	11531	11656	11676	825	851	844	858	854

¹²⁰ ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2007-2011, 2008-2012, 2010-2014թթ, էջ 104-106

Աղյուսակ 3.3-ի շարունակությունը

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
6.	10 հազար բնակչի հաշվով										
ա.	բժիշկների թվաքանակը	41.7	41,2	42,7	42.0	42.8	17.8	18,1	19,7	19.3	19.6
բ.	միջին անձնակազմի թվաքանակը	57.2	57,5	62,1	61.1	60.0	41.4	41,4	44,7	44.2	42.5
գ.	հիվանդանոցային մահճակալների քանակը	37.3	37,4	40,4	40.7	41.6	23.9	23,7	25,8	25.8	25.8
դ.	ամբուլատոր-պո- լիկլինիկաների քանակը	1.5	1,5	1,7	1.7	1.7	1.6	1.6	1.7	1.8	1.8

Ներկայումս առողջապահության ոլորտի զարգացմանն ավելի շատ խոչընդոտում է ֆինանսական միջոցների սակավությունը: Համակարգին պետության կողմից ֆինանսավորվում է երկրի ՀՆԱ-ի 1,6 տոկոսը, որը զգալիորեն ցածր է նույնիսկ ԱՊՀ երկրների համեմատ: Բնակչության կողմից առողջապահության նպատակով կատարված ծախսերը շուրջ 3,4 անգամ գերազանցում է պետության կողմից դրան հատկացված միջոցներին:

Ինչպես 2015-2018 թվականների, այնպես էլ հետագա ծրագրերի իրականացման համար մշակվող քաղաքականությունը պետք է ուղղված լինի հանրային առողջապահական ծառայությունների մակարդակի բարձրացմանը, հիվանդությունների կանխարգելմանը, առողջ կենսակերպի պայմանների ստեղծմանը: Առողջապահական ծառայությունների որակի բարելավման նպատակով անհրաժեշտ է.

- ՀՀ կառավարության կողմից իրականացվող հանրային առողջապահության պետական քաղաքականության մշակում և իրականացում, օրենսդրական դաշտի բարելավում,
- իրականացնել վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելմանն ուղղված միջոցներ,
- զարգացնել մարզի առողջապահության լաբորատոր համակարգը և այլն:

Կոտայքի մարզում գործում են բարեգործական միջազգային կազմակերպություններ, որոնց գործունեությունը որոշակիորեն նպաստում է առողջապահական խնդիրների բացահայտմանը և դրանց լուծմանը, դրանք կազմակերպում են.

- վերապատրաստման դասընթացներ,
- բաց դռների օրեր, ինչից առավել օգտվում են գյուղական բնակավայրերի բնակիչները,
- հաշմանդամների սպասարկում,
- շարժական մասնագիտացված բժշկական խմբերի կողմից այցելություններ գյուղեր և այլն:

Խիստ կարևորվում է նաև դեղերի և առողջապահական նշանակության այլ ապրանքների անվտանգության, և որակի ապահովումը, որի համար անհարժեշտ է անվտանգ, արդյունավետ, որակյալ ու մատչելի դեղեր, դեղերի շրջանառության փուլերի կանոնակարգում, պետական հսկողության խստացում և այլն:

Սոցիալ-տնտեսական բարեկեցության հիմնական գրավականը բարիքների ձեռք բերումն ու եկամուտներով ապահովվածությունն է, որի կատարման առաջնային երաշխիք հանդիսանում է մարդու աշխատանքային զբաղվածությունը: Զբաղվածությունը ընդհանրական տնտեսական կատեգորիա է, որը կոչված է լուծելու ոչ միայն սոցիալ-տնտեսական խնդիրները, այլ նաև մարդուն ներկայացնում է որպես հասարակության պիտանի անդամ: Զբաղված անձը իրեն զգում է հասարակական կյանքից մեկուսացված, նույնիսկ, առանձին դեպքերում, չգնահատված և արհամարված:

Տնտեսական վիճակագրության մեթոդիկայում նշվում է՝ «զբաղված են համարվում ինչպես վարձու, այնպես էլ ոչ վարձու աշխատողները՝ անկախ նրանից աշխատանքը եղել է մշտական, ժամանակավոր, սեզոնային, պատահական կամ միանգամյա: Զբաղված են համարվում նաև տվյալ ժամանակահատվածում տարբեր պատճառներով աշխատանքից ժամանակավոր բացակայողները»:¹²¹ Համաձայն Աշխատանքի միջազգային կազմակերպության և (կամ) Եվրոստատի կողմից առաջարկված մեթոդաբանության, ՀՀ-ում տնտեսապես ակտիվ բնակչության միջին տարեկան թվաքանակը 2014թ կազմել է 1375.7 հազ. մարդ, որոնց 82,4 %-ը կամ 1133,5 հազ. մարդ զբաղված են եղել տնտեսության մեջ, իսկ 17,6 %-ը կամ 242,1 հազ. մարդ եղել են գործազուրկ: Միաժամանակ 2014 թ. հանրապետությունում 62,1 հազ. մարդ գրանցվել

¹²¹ Հայաստանի վիճակագրական տարեգիրք. - Եր., 2014, էջ 49

են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «ՀՀ զբաղվածության պետական ծառայության» գործակալությունում և ստացել են գործազուրկի կարգավիճակ:¹²²

Շուկայական տնտեսավարման պայմաններում աշխատանքային շուկայի քաղաքականությունը, երկրի սոցիալ-տնտեսական քաղաքականության հիմնական բաղադրիչներից է, որտեղ խաչաձևում են աշխատողների և գործատուների շահերը: Աշխատանքի շուկան առաջարկի և պահանջարկի փոխհարաբերության տնտեսական համակարգ է, որը կարգավորում է աշխատողների և գործատուների հարաբերությունը:

Զբաղվածության բնագավառում երկրի կողմից իրականացվող քաղաքականությունը տեսանելի չէ, միայն արտահայտվում է գործազրկության ժամանակավոր զսպմանն ուղղված մակերեսային միջոցառումներով՝ չապահովելով երկարաժամկետ արդյունավետություն: Հանրապետությունում ժամանակակից աշխատանքի շուկայի ձևավորման համար անհրաժեշտ է կատարել տնտեսագիտական վերլուծություն և հիմնավորված առաջարկություններ, որոնք պետք է նպատակաուղղված լինեն պետության կողմից արդյունավետ տնտեսական և սոցիալական քաղաքականության իրականացմանը՝ նպատակ ունենալով խթանելու զբաղվածության աճը և գործազրկության մակարդակի նվազումը:¹²³

Աշխատանքային ռեսուրսները ներառում են աշխատունակ բնակչությունը, որի մեջ ընդգրկված են տնտեսապես ակտիվ բնակչությունը և տնտեսապես ոչ ակտիվ՝ չաշխատող և աշխատանք չփնտրող աշխատունակ մարդիկ: Աշխատանքային ռեսուրսները ձևավորվում են աշխատունակ տարիքի բնակչությունից (ՀՀ-ում 16-63 տարեկանները, բացառությամբ 1-ին և 2-րդ խմբի չաշխատող հաշմանդամներ), աշխատող թոշակառուներից և աշխատող դեռահասներից:

Ըստ ՀՀ գործող օրենսդրության գործազուրկ են համարվում աշխատանք փնտրող աշխատունակ և գործունակ այն չզբաղված անձիք, ովքեր չեն ստանում օրենսդրությամբ սահմանված կենսաթոշակներ, աշխատանքի տեղավորման նպատակով հաշվառված են զբաղվածության պետական ծառայությունում, պատրաստակամ են անցնելու հարմար աշխատանքի և ստացել են գործազուրկի կարգավիճակ:

¹²²ՀՀ Մարզերը և Երևան քաղաքը թվերով 2010-2014 թվերով. ՀՀ ԱՎԾ Երևան. 2015, էջ 25

¹²³Մարկոսյան Ա., Գեղամյան Ն. Սոցիալական քաղաքականության պետական կարգավորման հիմնահարցերը ՀՀ-ում. - Եր.: Տիգրան Մեծ, 2006, էջ 258

Այդ պատճառով էլ որոշակի տարբերություն կա գործազուրկների և աշխատանք փնտրողների թվի միջև: Այսպես, Կոտայքի մարզում 2014թվականի հունվարի 1-ի դրությամբ պաշտոնապես գրանցված գործազուրկների թիվը 6242 մարդ է, իսկ աշխատանք փնտրողներինը՝ 6384, իսկ զբաղվածների թիվը՝ 83096 մարդ:¹²⁴

Հայաստանի Հանրապետությունում գործազրկության մակարդակը 2014 թվականին կազմել է շուրջ 17,6 %: Սակայն այս ցուցանիշը հավաստիություն չի ներշնչում, քանզի ինչպես հասկանալ, որ «տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջական հետազոտության» տվյալներով 2014 թվականին հանրապետությունում քաղաքային բնակչության գործազրկության մակարդակը կազմել է 24,8%, իսկ գյուղականը՝ 6,8%, Կոտայքի մարզում համապատասխանաբար՝ 29,2 և 14,3 %:¹²⁵ Դա նրանից է, որ գյուղական համայնքներում ճիշտ չեն հաշվառում զբաղվածներին և գործազուրկներին:

Զբաղվածության քաղաքականության առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այստեղ վերլուծության օբյեկտը դինամիկ գործընթաց է և կառավարման համար պահանջում է տնտեսական, գաղափարախոսական և սոցիալ-հոգեբանական մեթոդների համալիր կիրառում՝ ի տարբերություն կազմակերպչական կառուցվածքների, որոնք ունեն համեմատաբար կայուն բնույթ և կառավարվում են ուղղակիորեն տնօրինության կողմից:¹²⁶

Ներկայումս հստակ ձևով հիմնավորված չէ, թե մանր գյուղացիական տնտեսությունների պայմաններում աշխատանքային պարզունակ գործիքների կիրառմամբ, գյուղական բնակչության որ մասն է ընդգրկված գյուղատնտեսական աշխատանքների մեջ: Այուամենայնիվ գյուղատնտեսական աշխատանքների մեջ ընդգրկվածության աստիճանը հնարավոր է հաշվարկել այն ժամանակ, եթե տվյալ դեպքում կիրառվում է վարձու աշխատանք, ինչը կընձեռի իրատեսական հնարավորություններ հաշվարկել աշխատանքային ռեսուրսները, զբաղվածների թիվը և գործազրկության մակարդակը, ընդ որում միայն այն դեպքում, եթե առկա լինեն արտադրության մեջ աշխատանքային ծախսումների հիմնավորված նորմատիվներ:

¹²⁴ ՀՀ Կոտայքի մարզի 2015-2018թթ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր, Հրազդան, 2014, էջ 116

¹²⁵ Կոտայքի մարզը և Երևան քաղաքը թվերով 2010-2014թթ., Երևան 2015, էջ 90

¹²⁶ Հակոբյան Լ. Հայաստանի աշխատանքի շուկայի մակրոտնտեսական վերլուծություն // Ֆինանսներ և էկոնոմիկա № 4-5, 2002, էջ 94-99

Սակայն ներկայումս հնարավոր չէ հաշվարկել գյուղական բնակչության զբաղվածության մակարդակը գյուղատնտեսական արտադրության մեջ: Հայտնի է միայն, որ գյուղերում, անհրաժեշտության դեպքում, գյուղատնտեսական աշխատանքներին մասնակցում են ամբողջ ընտանիքով: Այդուհանդերձ, սոցիալ-տնտեսական վիճակագրությունը ստույգ ձևով չի կարողանում որոշել գյուղատնտեսության մեջ աշխատանքի կիրառման, զբաղվածության և գործազրկության չափանիշները: Որպես կանոն գյուղական համայնքներում չի հաշվառվում և հաշվարկվում գործազրկությունը: Այդ իսկ պատճառով հետազոտողները հիմք են ընդունում մասնագիտական գրականությունում և վիճակագրական ժողովածուներում հրապարակված նյութերը: Այսպես, 2009 թվականին՝ համաձայն տնային տնտեսությունների կենսամակարդակի հետազոտության արդյունքների, գյուղական համայնքներում աշխատանքային ռեսուրսների օգտագործումը գտնվում է ցածր մակարդակի վրա: 2009թ. հող կամ անասուն ունեցող գյուղաբնակ տնտեսությունների 76%-ը ցույց է տվել գյուղատնտեսական գործունեությունից ստացված եկամուտ, ինչպես նաև 2009թ. գյուղաբնակ տնային տնտեսությունների 62.6%-ն է զբաղվել միաժամանակ թե՛ բուսաբուծությամբ, թե՛ անասնապահությամբ:¹²⁷

Այս տվյալները որոշակի չափով հավատ չեն ներշնչում, քանի որ գյուղատնտեսության մեջ աշխատանքի հաշվարկման մեթոդիկան չի տարբերակում զբաղվածության ոլորտները, աշխատանքի ռեժիմները, սեզոնայնությունը և բազմաթիվ այլ չափանիշներ: Այստեղ հիմնականում ընդունվում է սեփականաշնորհված և (կամ) վարձակալած հողատարածքները, որտեղ մեկ հեկտարի համար ընդունվում է որպես 1,5 զբաղվածություն, առանց հաշվի առնելու դրա կատեգորիան (ոռոգելի է, թե անջրդի), կադաստրային արժեքը, մշակաբույսի տեսակը (տնկարկ է, թե ցանքս) և մի շարք այլ բազմաթիվ առանձնահատկություններ: Իսկ ինչպես վարվել անասնաբուծության ոլորտում՝ հիմք ընդունել անասունների գլխաքանակը, թե արոտավայրերի տարածքները, շաբաթական կամ ամսական քանի ժամ ընդունել կթվորի և հովիվի աշխատաժամերը, երբ հանրապետությունում աշխատաշաբաթը ընդունված է 40, իսկ ամսվա համար՝ 168 ժամ: Եթե նրանցից որևէ մեկը աշխատում է ավելի պակաս ռեժիմով, նրանց համարել զբաղված, թե թաքնված գործազուրկ, որը մեր վիճակագրության մեջ կիրառելի չէ: Օրինակ, Ամերիկայի Միացյալ Նահանգներում, օրենսդրությամբ շաբաթվա համար աշ-

¹²⁷ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը: Վիճակագրական-վերլուծական զեկույց.- Երևան. 2010.-էջ 64

խատաժամանակը սահմանված է 35 ժամ, բայց եթե մարդը աշխատել է թեկուզ մեկ ժամ պակաս, նա համարվում է թաքնված գործազուրկ:¹²⁸

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ներկայումս ընդունված 1 հա 1,5 զբաղվածություն ապահովող սկզբունքը չպետք է կիրառել ամբողջ հանրապետության համար, քանի որ դրանք պահանջում են տարբեր աշխատանքային ծախսումներ, առանձին տարածաշրջաններում: Այսպես, Արարատյան դաշտում, մեկ հեկտարի հաշվով կատարված աշխատանքային ծախսումները զգալիորեն գերազանցում են բարձր լեռնային գոտիներում կատարված աշխատանքային ծախսումներին: Նույնը օրինաչափությունը դիտարկվել է նաև Կոտայքի մարզում, մասնավորապես՝ Նաիրիի տարածաշրջանում բուսաբուծությունում կատարվող հիմնական աշխատանքները զգալի գերազանցում են նույն մարզի բարձր լեռնային գյուղերում իրականացվող աշխատանքներին, որտեղ հիմնականում զբաղված են անասնապահությամբ:

Դրա համար առաջարկվում է կիրառել հողի կադաստրային արժեքի 100 բալանոց համակարգը և գործակիցներով հաշվարկել գյուղատնտեսությունում բնակչության զբաղվածության աստիճանը, որն անհրաժեշտ է իրականացնել աղյուսակ 3.4-ում բերված գործակիցների միջոցով:

Աղյուսակ 3.4

Զբաղվածության հաշվարկման գործակիցները գյուղատնտեսության ոլորտում¹²⁹

Հողի կադաստրային բալերը	Սեփական և վարձակալված հողատարածքներ			
	զբաղվածության նորմատիվային մակարդակը			
	մինչև 1 հա	1-1,5 հա	1,5-2 հա	2 հա-ից ավել
80-100	1,5	2	3	4
60-80	1	1,5	2,5	3
40-60	0,75	1,25	2	2,5
0-40	0,5	1	1,5	2,0

Հողի 100 բալանոց համակարգը գնահատվել է ըստ հողի որակական հատկությունների, հողերի տիպի և տեսակների, և որքան բարձր է կադաստրային բալը, այնքան բարձր է հողի որակական գնահատականը:

¹²⁸ Գողթնի Զ. և ուրիշներ Տնտեսագիտություն, ԵՊՏԻ, (թարգմանություն), - Եր. 1999, էջ 205

¹²⁹ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից

Միևնույն ժամանակ առաջարկվում է ոռոգելի հողատարածքների, ինչպես նաև բանջարաբուստանային մշակաբույսերի մշակության համար վերը նշված գործակիցների նկատմամբ կիրառել 1,5-2,0 աճի գործակից՝ ոռոգման աշխատանքների կատարման, մշակաբույսերի մշակման, բերքահավաքի և իրացման հետ կապված, քանի որ այն պահանջում է լրացուցիչ աշխատանքային ծախսումներ: Առաջարկում ենք նաև նույն սկզբունքը կիրառել անասնաբուծության մեջ՝ հիմնվելով անասունների խնամքի, պահվածքի (արոտներում թե գոմերում), մթերատվության և այլ հատկանիշների վրա:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Կոտայքի մարզում գործազուրկների մեջ գերակշռում են 40-55 տարեկանները, որոնք երկարատև գործազուրկներ են, հիմնականում արդեն կորցրել են իրենց մասնագիտական ունակությունները և փորձում են գտնել նույնիսկ ոչ մասնագիտական, ցածրորակ պահանջարկ ունեցող աշխատանքներ:

Գործազրկությունը լուրջ խնդիր է, որն ունի բացասական ազդեցություն բնակչության կենսագործունեության վրա՝ բերում է եկամտի կորստին և արդեն իսկ ապացուցված է, որ՝

- մեկ տարուց ավելի մասնագիտությամբ չաշխատելը հանգեցնում է մասնագիտական հմտության կորստի,
- եկամուտների բացակայությունը, հասարակության մեջ սոցիալական դիրքի նվազումը մեկուսացման ու բարոյազրկման պատճառ է դառնում
- աշխատանք փնտրելու անհաջող փորձերը սթրեսների, վարքագծի շեղումների, հարբեցողության պատճառ են դառնում:

Գյուղական համայնքներում ամենախոցելին մնում է երիտասարդությունը, որը չհարմարվելով գյուղատնտեսական աշխատանքներին և գյուղի սոցիալական պայմաններին, լրացնում է գործազրկության շարքերը, իսկ հաճախ էլ հեռանում իրենց բնակավայրերից:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ապագայում էլ գյուղական աշխատանքի շուկան մնալու է ամենալարված հատվածներից մեկը, որի լուծումը հանդիսանում է երկրի զբաղվածության ապահովման հիմնական ուղղությունը:

Ժամանակին ակադեմիկոս Վ. Խոջաբեկյանը գրել է, որ «Գյուղական բնակավայրերում զբաղվածության կայուն ոլորտ է համարվում անձնական օժանդակ տնտե-

սությունը, որին կոչում են ոչ պաշտոնական զբաղվածություն»:¹³⁰ Դրան խոչընդոտում է իրավական դաշտի բացակայությունը, ուստի անհրաժեշտ է ընդունել «Անձնական օժանդակ տնտեսության մասին» օրենք, որում պետք է ներառվեն մարդկանց սոցիալական ապահովության հարցերը: Անձնական օժանդակ տնտեսությունները դրանք բնակչության կողմից վայրի բույսերի, հատապտուղների հավաքումն և իրացումն իրականացնող, որսորդությամբ, ձկնորսությամբ զբաղվող, ինչպես նաև դայակության, խնամակալությանը, ագրոգրոսաշրջության ծառայություն մատուցելն է, որոնք որոշակի չափով բարձրացնում են զբաղվածության մակարդակը, սակայն չեն կարող հանդիսանալ գործազրկության կրճատման կայուն միջոց: Դրանք հիմնականում կրում են սեզոնային և կարճաժամկետ բնույթ, համարվում են ոչ պաշտոնական զբաղմունք:

Սակայն Յու. և Ն. Սուվարյանները, նշում են, որ «գյուղական բնակչությունը լրացուցիչ եկամուտ է ստանում տարաբնույթ շինարարական, բեռնափոխադրումների, գյուղատնտեսական աշխատանքների մատուցումից: Վերջերս տարածվել է ագրոտուրիզմը, որը ներառում է հետևյալ ծառայությունների համալիրը՝ բնակարաններ վարձակալության համար, կենվորի լրիվ և ոչ լրիվ պարենավորմամբ պանսիոնների հաստատումը, առողջարարական և զվարճալի ծառայություններ (լոգանքներ, ձիավարություն, որս, էթնիկական ավանդույթներ) և այլն»:¹³¹

Սոցիալական ապահովության ոլորտի նպատակն է նպաստել բնակչության աղքատության նվազեցմանը և հաղթահարմանը: «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքով, սոցիալական աջակցության համար սահմանված նպաստներ են, որոնք մարզերում իրականացվում են «ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով այդ ծրագրերի համար նախատեսված ֆինանսական միջոցներով: Դրանք նույնպես նպատակաուղղված են համայնքների համաչափ զարգացմանը:

Կոտայքի մարզում, զբաղվածության ու գործազրկության հիմնախնդիրներից հետո կարևոր տեղ են զբաղեցնում փախստականների խնդիրները, որոնք նույնպես էական ազդեցություն են թողնում գյուղական համայնքների համաչափ զարգացման վրա: Մարզը 1990-ական թվականների սկզբին ընդունեց Ադրբեջանից բռնագաղթված

¹³⁰Ходжабебян В.Е. Возможная пути регулирования миграции населения Республики Армения. Проблемы теории и практики управления, 2000, № 3. – С. 29

¹³¹Սուվարյան Յու., Սուվարյան Ն. Քողարկված զբաղվածություն, թաքնված գործազրկություն // Ֆինանսներ և էկոնոմիկա, № 2, Եր. 2001, էջ 66-71

ավելի քան 12 հազար փախստականներ, ովքեր տեղաբաշխվեցին մարզի բոլոր տարածաշրջաններում:

2014 թվականի հունվարի 1-ի դրությամբ մարզում բնակվում է 10081 փախստական:


Փախստականների 60-69 տարեկանների տեսակարար կշիռը 1,5-3,5 անգամ ավելին է քան մինչև 4 տարեկան երեխաներին և 25-29 տարեկան երիտասարդներին: Փախստականների մեջ մոտ 3-4 անգամ շատ են միայնակ ընտանիքները, միայնակ ծերերը, 1,5 անգամ պակաս են երիտասարդ տղամարդիկ, 2-3 անգամ 5-14 տարեկան երեխաները: Փախստականների մոտ ցածր է զբաղվածության աստիճանը, 1,7 անգամ քիչ են գործատուները, 2 անգամ՝ արտադրության մեջ զբաղվածները, 3 անգամ՝ մշտական աշխատանք ունեցողները: Նրանց համար ամենամեծ խնդիրը դեռևս մնում է բնակարանի հարցը, այսօր էլ հարյուրավոր փախստական ընտանիքներ բնակվում են անբարեկարգ ժամանակավոր կացարաններում և հանրակացարաններում:

Սոցիալական ապահովությունը բացի վերը նշված խնդիրներից ընդգրկում է նաև տարատեսակ տրանսֆերտների տրամադրում, տարբեր կատեգորիաների թոշակառուների վճարում, հաշմանդամներին ծառայությունների մատուցում, միայնակ տարեցներին օգնությունների ցուցաբերում և այլն: Այստեղ, առավել վիճահարույց է աշխատող թոշակառուների, հատկապես գյուղատնտեսության ոլորտի աշխատողների կենսաթոշակային ստաժի սահմանման և վճարման հարցը:

ՀՀ-ում կենսաթոշակի չափի որոշման համար հիմք է ծառայում աշխատանքային ստաժը և դրան հավասարեցված գործունեությունը՝ առկա ուսուցումը, կանանց համար ծննդաբերությունը (մեկ երեխան 3 տարվա աշխատանքային ստաժ): Սակայն այստեղ, ամենամեծ բացթողումն այն է, որ հաշվի չի առնվում նրանց կողմից կատարած հատկացումների չափը կենսաթոշակային ֆոնդին, քանի որ որքան բարձր է աշխատավարձը, այնքան մեծ է հատկացված գումարները: Սխալ է նաև այն, որ հաշվի չի առնվում աշխատանքի ռեժիմը, ծանրությունը, վայրը և այլ չափորոշիչներ: Ինչու պետք է նույն քանակի ստաժ համարվի ուսանողի, դոնապահի, ծուլարանում, հանքում, գյուղատնտեսությունում, թունավոր վնասակար արտադրություններում աշխատողների համար:

Տվյալ դեպքում անհարժեշտ է կիրառել ստաժի վերահաշվարկում գործակիցների միջոցով, ինչպիսին ներկայումս կատարվում է պատերազմի մասնակիցների պարագայում՝ ակտիվ ռազմական գործողության մասնակիցների համար մեկ տարին ընդունվում է երեք տարվա ստաժ: Ուստի, առաջարկվում է, որ այստեղ կիրառեն 2-3 գործակից (կախված աշխատանքի ծանրությունից, բարդությունից, վնասակարությունից և այլն), իսկ գյուղատնտեսության ոլորտի աշխատողների նկատմամբ, գործակիցներն անհրաժեշտ է կիրառել Հայաստանի Հանրապետությունում գործող կենսաթոշակի նվազագույն չափի նկատմամբ՝ այդ ոլորտում աշխատած տարիների համար, քանի որ այս ոլորտի աշխատողները համարվում են զբաղվածներ, սակայն թոշակային տարիքը լրանալիս՝ նրանց համար ներկայումս կենսաթոշակային ստաժ չի հաշվարկվում:

Կենսաթոշակառուների թվաքանակը ՀՀ-ում և Կոտայքի մարզում ներկայացված է գծապատկեր 3-ում՝



Գծապատկեր 3. Կենսաթոշակառուների թվաքանակը ՀՀ-ում և Կոտայքի մարզում՝ ըստ 2011-2014թթ. (մարդ):¹³²

Ինչպես երևում է գծապատկեր 3-ից Կոտայքի մարզում կենսաթոշակառուների թիվը 2014թվականին 2011թվականի համեմատ նվազել է 7,5%-ով, քանի որ նշված ժամանակահատվածում նվազել է նաև մարզի բնակչությունը 6,3%-ով, սակայն երեք տարիների ընթացքում մարզի միջին կենսաթոշակային չափը բարձրացել է 25,7%-ով:

¹³² Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզը թվերով, 2015թ.- էջ 48

Այսպիսով վերլուծելով ՀՀ Կոտայքի մարզի սոցիալական ոլորտի հիմնախնդիրները, կարելի է փաստել, որ այն սոցիալական պաշտպանության շարժուն գործընթաց է, որն իրականացվում է մի շարք գործոնների ազդեցության ներքո, որտեղ ամենա-հիմնականը մնում է երկրի տնտեսության զարգացումը, նրա համաչափ զարգացման ապահովումն ըստ երկրի տարածաշրջանների, համայնքների, ճյուղերի, ոլորտների, տնտեսությունների կտրվածքով, իսկ ինչ վերաբերվում է Կոտայքի մարզի գյուղական համայնքների սոցիալ-տնտեսական հարցերին, ապա անհրաժեշտ է տնտեսական հարցերի քննարկման և լուծման հետ միասին ուշադրություն դարձնել նաև գյուղական բնակավայրերի ու համայնքների խոշորացմանը, որպես համայնքների անհամաչափ դրսևորումների հաղթահարման ուղու:

3.2. Գյուղական համայնքների միավորումը, որպես դրանց համաչափ զարգացման հիմնախնդիրների լուծման ուղիներից մեկը

Ինչպես ամբողջ պատմական Հայաստանի, այնպես էլ ՀՀ Կոտայքի մարզի գյուղական բնակավայրերի բնակեցումը տեղի է ունեցել աշխարհագրական, բնակլիմայական, պաշտպանական և մի շարք այլ գործոնների ազդեցության ներքո, որոնց պատճառով էլ առանձին բնակավայրերում ստեղծվել են անհավասար պայմաններ մարդկանց ապրելու և արարելու համար: Այդ հիմնախնդրի բացահայտումը և լուծումը կարևոր նշանակություն ունի յուրաքանչյուր տարածաշրջանի համալիր զարգացման գործում, որոնք պետք է իրականացնեն ներկա իշխանությունները՝ նպատակ հետապնդելով հնարավորինս փոքր ծախսերով շտկելու նախկինում թույլ տրված սխալներն ու բացթողումները: Այստեղ գլխավոր նպատակը մնում է տարածաշրջանի տնտեսական ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործումը և մարդկանց իրենց բնակավայրերում պահելը:

ՀՀ-ում տեղական ինքնակառավարման համակարգի կայացումից հետո, նրա հիմնախնդիրներից մեկը մնում է վարչատարածքային մասնատվածության բարձր աստիճանը: Հանրապետության 915 համայնքներից 866-ը գյուղական են, որոնցից շատերում մատուցվող ծառայություններն իրականացվում են ցածր մակարդակով, կամ էլ

ընդհանրապես չեն մատուցվում: Վարչատարածքային բաժանման գործող համակարգն ընդգրկեց մեծ թվով համայնքներ, որոնց միջև առկա են զգալի տարբերություններ՝ տարածքային չափերով, բնակչության թվաքանակով, ֆինանսատնտեսական ռեսուրսների հնարավորություններով, համայնքների կարգավիճակով և այլն, իսկ օրենսդրությունն անկախ նշված գործոններից, բոլորին օժտել է նույն լիազորություններով: Ավելացնենք, որ բոլոր համայնքների համար, անկախ նրանց չափերից, գործում է միևնույն օրենսդրական համակարգը, վերապահելով նրանց լիազորությունների միևնույն շրջանակ:

Շատ գյուղական համայնքներ, լինելով սուղ ֆինանսական պայմաններում, չեն կարողանում իրականացնել իրենց վերապահված պարտադիր լիազորությունները: Մասնավորապես՝

- համայնքային ենթակայության դպրոցների, մանկապարտեզների, մշակույթի օջախների, գրադարանների և այլ հիմնարկների գործունեության կազմակերպումը և կառավարումը,
- ներհամայնքային հաղորդակցության ուղիների, ջրմուղ-կոյուղու շահագործումն ու կառավարումը,
- համայնքի բարեկարգումը և կանաչապատումը,
- աղբահանության կազմակերպումը,
- համայնքային ենթակայության ճանապարհների, կամուրջների, ինժինեռական մյուս կառույցների պահպանումն ու շահագործումը:

Ինչպես ամեն մի վարչական տարածք, այնպես էլ Կոտայքի մարզում բնակչության բնակեցումն իրականացվել է վերը նշված գործոնների ազդեցության ներքո: Այսպես՝ մարզի ցածրադիր շրջաններում (Նաիրիի տարածաշրջան) բնակեցումը ձևավորվել է այգեգործական, խաղողի, բանջարաբուստանային, հացահատիկային մշակաբույսերի, նախալեռնային գոտում՝ բուսաբուծության և անասնաբուծության, իսկ բարձր լեռնային տարածաշրջաններում՝ անասնաբուծության վարման վրա: Նման մասնագիտացումը պայմաններ է ստեղծում այդ տնտեսությունների միջև արտադրատնտեսական կապերի ձևավորման և հետագա զարգացման համար: Սակայն, մարզի սոցիալ-մշակութային հարցերի լուծումը մնում է բաց: Կրթական, առողջապահական, մշակութային, կոմունալ-կենցաղային և ծառայությունների մատուցման մյուս ոլորտ-

ներում գյուղական համայնքների միջև կապերը շատ թույլ են դրսևորվում: Սովորաբար արտադրությունն ավելի ճկուն է տեղաբաշխման հարցերում, քան մարդկանց բնակեցումը: Այսպես, խոշոր գյուղական բնակավայրերում սպասարկումն ավելի արդյունավետ է կատարվում, քան փոքրերում: Դրա հետ միասին փոքր համայնքներում սեփականաշնորհման հետևանքով, բնակչությունը համեմատաբար մեծ հողատարածքներ ու արտադրության միջոցներ է ստացել, քան մեծ համայնքներում, որտեղ տեղի է ունենում նաև ժամանակի կորուստ բնակության վայրերի ու աշխատատեղերի տեղաբաշխման պատճառով, ինչն էլ բերում է ռեսուրսների օգտագործման արդյունավետության նվազեցմանը:

Փոքր գյուղական բնակավայրերում ավելի շատ սոցիալական բնույթի մեծ հարցեր են առաջանում, քան տնտեսական բնույթի: Փաստորեն, արտադրանք արտադրողի համար նշանակություն չունի, թե նա բնակվում է մեծ կամ փոքր բնակավայրում: Սակայն սոցիալական և սպասարկման տեսանկյունից այն ունի կարևոր նշանակություն: Կրթության, առողջապահության, մշակույթի, կենցաղային սպասարկման, առևտրի, կապի և այլ բարիքների հանդեպ պահանջարկը կրում է ամենօրյա բնույթ, անկախ բնակավայրի տեղաբաշխման վայրից և չափից: Մասնավորապես, պարենային խանութի, կապի բաժանմունքի, ակումբի, դպրոցի, մանկապարտեզի, բուժկետի բացակայությունը որևէ գյուղական համայնքում կամ բնակավայրում էապես ազդում է բնակչության ամենօրյա տարածաժամանակային կենսագործունեության արդյունավետության վրա, մեծացնում ժամանակային և նյութական ծախսումները:¹³³

Կոտայքի մարզի, ինչպես նաև ամբողջ հանրապետության բարձր լեռնային գյուղական բնակավայրերի բնակչության թվի և նրանց ապրանքներով ու ծառայություններով մատուցման ծավալների միջև գոյություն ունի ուղիղ ֆունկցիոնալ կապ: Բնակչության թվաքանակի նվազում և արտահոսք գրանցվում է այն բնակավայրերում, որտեղ վատ են կազմակերպվում առևտրային, կենցաղային, կրթական և առողջապահական սպասարկումները, որը շատ դեպքերում պայմանավորված է ֆինանսական ռեսուրսների սղությամբ, իսկ դրան կարող է նպաստել հենց այդ ծառայությունների զարգացումը: Նշանակում է, այդ երկու կատեգորիաները գտնվում են դիալեկտիկական կապի մեջ՝

¹³³Մանասյան Մ.Գ. ՀՀ գյուղական համայնքների զարգացման մի քանի հարցեր // Ագրոգիտություն N° 1-2, 2011, էջ 3-7

մեկի զարգացումը (սպասարկումը) նպաստում է մյուսի զարգացմանը (ֆինանսական հնարավորությունների), քանի որ «համայնքի բյուջեն համալրելու կարևոր աղբյուր են դառնում նաև ծառայությունների դիմաց վճարումները»:¹³⁴

Գյուղական համայնքների համաչափ զարգացման գործընթացում էական նշանակություն է ստանում համահարթեցման նպատակով պետական բյուջեից հատկացվող սուբսիդիաները (լրավճարները), իսկ դրանց ընդհանուր մեծությունը հաշվարկելիս հիմք են ընդունում նախորդ բյուջետային տարում համախմբված բյուջեի փաստացի եկամուտների ընդհանուր գումարի առնվազն 4%-ը:¹³⁵

ՀՀ պետական բյուջեից համահարթեցման սկզբունքով համայնքներին հատկացվող դոտացիաների ընդհանուր գումարը յուրաքանչյուր տարվա համար սահմանվում է այդ տարվա պետական բյուջեի մասին օրենքով և հավասար է հավաքագրված բյուջեի եկամուտների առնվազն չորս տոկոսին: Համահարթեցման դոտացիաների բաշխելու անհրաժեշտությունը բխում է այն իրավիճակից, որ Հայաստանում կան բնակչության փոքր թվաքանակ ունեցող մեծ թվով համայնքներ, որոնք նույնիսկ բարձր բյուջետային ապահովվածության գործակցի պայմաններում, չունեն բավարար ֆինանսական միջոցներ տարրական ծառայություններ իրականացնելու համար: Նմանատիպ համայնքների համար, միայն՝ ըստ բյուջետային ապահովվածության գործակցի, դոտացիաների բաշխումը չի կարող ապահովել բավարար արդյունք (անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացում), քանի որ այդ համայնքների ընթացիկ ծախսերի մեջ, հաստատուն մասի բաղադրիչը մի քանի անգամ ավելի մեծ է թվաքանակից կախված (փոփոխական) մասից:¹³⁶

Ըստ «Ֆինանսական համահարթեցման մասին» օրենքի, համայնքի բնակչության թվաքանակը դրանց տրամադրվող դոտացիաների մեծության հաշվարկման գործոններից է, որը չի կարող լուծում տալ ոլորտի խնդիրներին, ինչը նշանակում է, որ անհրաժեշտ է բարեփոխումներ իրականացնել՝ կրճատել համայնքների քանակը, մեխանիկորեն ավելացնելով դրանց բնակչության թվաքանակը: Ներկայումս համայն-

¹³⁴ Սովարյան Յու, Չոբանյան Մ. Համայնքների ֆինանսավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում // Բանբեր, ՀՊՏՀ, № 3, 2009, էջ 55

¹³⁵ «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 20

¹³⁶ Մովսիսյան Վ. «Ֆինանսական համահարթեցման մեխանիզմի զարգացումը Հայաստանում» - Եր.: Նոյան տապան, 2007, էջ 27-36

քային բյուջեների եկամուտներում մեծ տեսակարար կշիռ ունեն պետության կողմից ֆինանսական համահարթեցման նպատակով տրամադրվող դոտացիաները, որոնց բաշխման առումով նույնպես առկա են զգալի տարբերություններ՝ մինչև 300 բնակիչ ունեցող համայնքները ստանում են 3.5 մլն դրամի դոտացիա, մինչդեռ դրանից մի փոքր ավել բնակչություն ունեցող համայնքը ստանում է զգալիորեն քիչ դոտացիա:¹³⁷ Համաձայն ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի¹³⁸ ՏԻՄ-երի լիազորությունները համընդհանուր ու համահավասար բնույթ ունեն, տարածվում են բոլոր համայնքների վրա, անկախ համայնքի մեծությունից, ինչը հաճախ բերում է որոշակի բարդությունների: Փոքր գյուղական համայնքների բնակչությունը չի կարողանում ստանալ կենսական անհրաժեշտ ծառայություններ: Նշանակում է, օրենքով վերապահված լիազորությունները, ֆինանսական միջոցների սակավության պատճառով համայնքը չի կարողանում իրականացնել իր բնակչության համար:

Ներկայումս ՀՀ Կոտայքի մարզի 60 գյուղական համայնքներից 2 համայնք ունեն 101-200 բնակիչ, 5 համայնք՝ 201-500, 12 համայնք՝ 501-1000, 29 համայնք՝ 1001-3000, 5 համայնք՝ 3001-5000 և 7 համայնք՝ 5001-10000 բնակիչ, որոնց վերաբերյալ ցուցանիշները ներկայացվում են աղյուսակ 3.5-ում

Աղյուսակ 3.5

ՀՀ Կոտայքի մարզի գյուղական համայնքների բնակչության թվաքանակը 2015թ.

հունվարի 1-ի դրությամբ^{139,140}

Հ/Հ	Դասակարգումն ըստ բնակչության թվի	Համայնքների թիվ	Բնակչության ընդհանուր թիվը տվյալ համայնքներում /մարդ/	Միջինը մեկ համայնքում
1.	101-200	2	272	136
2.	201-500	5	1741	348
3.	501-1000	12	8559	713

¹³⁷ Համայնքների խոշորոցման և միջհամայնքային միավորների ձևավորման հայեցակարգ. ընդունված ՀՀ կառավարության 2011թվականի նոյեմբերի 10-ի նիստի № 44 արձանագրություն:

¹³⁸ ՀՀ ՊՏ 2004/6, 29.01.2004

¹³⁹ ՀՀ Կոտայքի մարզի 2015-2018 թթ. սոցիալական տնտեսական զարգացման ծրագիր, Հրազդան, 2014, էջ 147

¹⁴⁰ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզը թվերով, 2015թ., էջ 17-18

Աղյուսակ 3.5-ի շարունակությունը

1	2	3	4	5
4.	1001-3000	29	55534	1915
5.	3001-5000	5	18312	3662
6.	5001-10000	7	42429	6061
Ընդամենը		60	126847*	2114

*Գյուղական համայնքների այս տվյալների սկզբնաղբյուրը՝ գյուղական համայնքների կողմից տարեկան կտրվածքով ներկայացվող «Գյուղական բնակչության սեռատարիքային կազմը» պետական վիճակագրական հաշվետվություններն են, որն ունի որոշակի շեղում բնակչության ընթացիկ հաշվառման համանուն տվյալներից, որոնք խարսխված են ՀՀ արդարադատության նախարարության և ՀՀ ոստիկանության վարչական ռեգիստրների տվյալների վրա (շեղումը՝ 01.01.2015թ.-ի դրությամբ ՀՀ մասշտաբով՝ կազմել է +12.5%, իսկ Կոտայքի մարզում 8,6%): Շեղումը հիմնականում պայմանավորված է գյուղական համայնքների միջև խնդրո առարկա տեղեկատվության փոխանակման, համադրման և անվանական տվյալների մակարդակով ստուգաճշտման համակարգի բացակայությամբ:

Բացի նշված դասակարգմանը, մարզի համայնքները 1998թ.-ի նոյեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության բնակավայրերն ըստ բարձունքային նիշերի դասակարգելու մասին» № 756 որոշման համաձայն՝ գոյություն ունի 19 լեռնային և 5 բարձր լեռնային գյուղական համայնք:

Գյուղական համայնքների համար կարևոր հիմնախնդիր է մնում նրանց ներուժի զարգացումը, ինչը թույլ կտա մեղմելու համայնքների անհամաչափ զարգացման խնդիրները: Դրա վճռորոշ նախապայմաններից է դոտացիաների տրամադրումը, որը համայնքներին հատկացվում է 100 տոկոսով: Սակայն դա չի նպաստում հիմնախնդրի լուծմանը, քանի որ համայնքների բյուջեն եկամուտներով չի ապահովվում սեփական եկամուտների հավաքագրման հաշվին:

Հաշվի առնելով գյուղական համայնքների խոշորացման սոցիալ-տնտեսական հետևանքները՝ պետք է դա իրականացնել փուլերով՝ ուսումնասիրել բնակչության կարծիքը և սոցիոլոգիական հարցումների արդյունքների հիման վրա մշակել զարգացման հեռանկարային ծրագիր, օգտագործելով նաև միջազգային փորձի արդյունքները, հատկապես 20-րդ դարի երկրորդ կեսի եվրոպական երկրների արդյունքները:

Օրինակ, Արևմտյան Գերմանիայում 1965-1975 թվականների ընթացքում իրականացված համայնքային բարեփոխումների արդյունքում բարելավվեց գյուղական

բնակավայրերում տեղական ինքնակառավարումը և այդ ընթացքում համայնքների թիվը կրճատվեց 2/3-ով՝ 24 հազարից հասնելով 8500-ի: Շվեդիայում 1951-1999 թթ.-ին համայնքների թիվը կրճատվեց ավելի քան 8 անգամ՝ 2498-ից հասավ 289-ի: Լեհաստանում 1975 թվականին Սեյմի որոշմամբ երկիրը բաժանվեց 16 վոյեվոդությունների և 373 օկրուգների: Էստոնիայում համայնքների թիվը 1000-ից հասցվեց 253-ի:¹⁴¹

Հայաստանում նույնպես օրինաչափորեն կրճատվում են գյուղական համայնքների քանակը: 1959 թվականի մարդահամարի տվյալներով Հայաստանում առկա էր 1192 գյուղական բնակավայր, 1987 թվականին կազմեց 914: Ընդհանուր առմամբ 1926-1986 թվականներին Հայաստանի քարտեզից վերացել է 271 գյուղական բնակավայր, որոնցից մեծամասնությունը՝ փոքր:¹⁴²

Միջազգային փորձը վկայում է, որ համայնքների թվի կրճատումը հնարավորություն է տալիս չփոշիացնել ֆինանսական ռեսուրսները, միավորված միջոցներով լուծել փոքր գյուղական համայնքների սոցիալական հիմնախնդիրները և մեծացնել դրանց ներուժը:

Հասկանալի է, որ փոքր գյուղական համայնքներում հնարավոր չէ կազմակերպել բոլոր տեսակի ծառայությունները և սպասարկումները, բայց անկախ ամեն ինչից, պետք է ապահովել առաջին անհրաժեշտության պահանջմունքները՝ բուժսպասարկում, մանկապարտեզ, տարրական դպրոց, ուղևորափոխադրումներ: Մ. Մանասյանը գրտնում է, որ պարբերական օգտագործման ծառայությունների ողջ համալիրը՝ բնակչության տարածաժամանակային գործունեության արդյունավետության տեսանկյունից, նպատակահարմար է ունենալ այն համայնքներում, որոնք ունեն առնվազն 2-3 հազար բնակիչ և հանդիսանում են տարաբնակեցման տեղական կենտրոններ:¹⁴³

Սովորաբար բնակչության սպասարկման առանձնահատկությունները պայմանավորում են համայնքների բնակչության թվաքանակը, համայնքի հեռավորությունը կենտրոններից, մարդկանց զբաղմունքի տեսակները, տրանսպորտի մատչելիությունը և այլն: Որպես կանոն, ոչ ամենօրյա պահանջարկ ունեցող ծառայություններ տրա-

¹⁴¹ Ղազարյան Է. ՀՀ վարչատարածքային բաժանման կատարելագործման հայեցակարգային ուղղությունները. -Եր.: Դար, 2004, էջ 63-83

¹⁴² Մանասյան Վ., Փոքր գյուղական բնակավայրերի վերականգնման հիմնահարցերը. - Եր.: Էկոնոմիկա. 1991, № 9-10, էջ 38

¹⁴³ Մանասյան Մ.Գ. ՀՀ տարաբնակեցման համակարգը. - Եր.: Պետական համալսարանի հրատ. 2005.

մադրողները ձգտում են տեղաբաշխվել խոշոր և կենտրոնական մայրուղիներին մոտ գտնվող համայնքներում:

Բավականին բարդ է վիճակը լեռնային և հատկապես բարձր լեռնային բնակավայրերի պարագայում, որոնք հեռու են իրարից, ճանապարհներն անբարեկարգ են, որի համար էլ նրանք «պարտադրված են» իրականացնել ինքնասպասարկում, առողջապահական, մշակութային, կենցաղային, կրթական (սովորաբար այդ գյուղերում չկան ավագ դպրոցներ) ոլորտներում: Կոտայքի մարզի լեռնային և բարձր լեռնային գյուղերում կատարած ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դրանց բնակչությունը «քիչ է շփվում» արտաքին աշխարհի հետ: Հեռավոր բարձր լեռնային գյուղերի բնակչության 10-15 տոկոսն է դուրս գալիս բնակավայրի սահմաններից: Քաղաքային համայնքներին մոտ տեղաբաշխված գյուղերի աշխատունակ բնակչության մի զգալի մասը առևտրակենցաղային և աշխատանքային նպատակներով հաճախում են քաղաքներ:

Համայնքների բնակչության կենսագործունեության վրա ազդում են հետևյալ գործոնները՝

1. Ծովի մակարդակից գյուղական համայնքի բարձրությունը, որի աճին համապատասխան նվազում է բնակչության կենսագործունեության պայմանները:

2. Գյուղական համայնքի հեռավորությունը մարզկենտրոնից և գլխավոր մայրուղիներից:

3. Գյուղական բնակավայրի բնակչության թվաքանակը, ինչքան քիչ է բնակչության թիվը, այնքան վատ է պայմանները:

4. Ընտանեկան մեկ ծխի հաշվով վարելահողերի և այգիների տարածքը:

5. Համայնքի բնակչության մեկ շնչի հաշվով եկամուտների մեծությունը: Սա համարվում է ամենակարևորը, քանի որ կենսագործունեության պայմաններն առաջին հերթին կախված է եկամուտների չափից:

Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման համակարգի ձևավորումից հետո կարևորվում է նրա մասնատվածության հաղթահարումը, որի պատճառով էլ փոքր գյուղական համայնքներին մատուցվող ծառայությունների մի զգալի մասն իրականացվում է մասնակիորեն, կամ էլ գրեթե չեն իրականացվում:

Ձևավորված իրավիճակում այլևս հնարավոր չէ խորացնել ապակենտրոնացման ջրջանակները, համայնքներին տրամադրել նոր լիազորություններ:

Այս պարագայում ՀՀ կառավարությունը խնդրի լուծումը տեսնում է երկու տարբերակով՝

1. համայնքների միավորում,
2. միջհամայնքային համագործակցության ինստիտուտի տրամադրում:

Նշենք որ, ՀՀ օրենսդրությունը, որպես միջհամայնքային համագործակցության ձև ամրագրել է միջհամայնքային միավորումների ինստիտուտը (ՀՀ Սահմանադրության 110 հոդված, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք՝ գլուխ 8): Ըստ օրենքի «Համայնքների որոշակի խնդիրներ համատեղ լուծելու և ծախսերը նվազեցնելու նպատակով ՏԻՄ-երը կարող են ստեղծել միջհամայնքային միավորներ, որոնք ունեն իրավաբանական անձի կարգավիճակ»: Ավելացնենք, որ միջհամայնքային միավորումների խնդիրները և իրավասությունները սահմանված չեն որևէ օրենքով: Այդ պատճառով էլ ներկայումս ՄՀՄ-ներ չեն ստեղծվել: Հանրապետությունում միջհամայնքային համագործակցությունը փաստացի գործում է համայնքների միությունների միջոցով, որոնք արդարադատության նախարարությունում գրանցված են, որպես իրավաբանական անձանց (համայնքների) միություններ: 2013 թվականի հունվարի 1-ի դրությամբ Հայաստանում գրանցված են 25 համայնքային միություններ, որոնց կազմում ընդգրկված են 495 համայնքներ¹⁴⁴ (Կոտայքի մարզում՝ 0):

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը գտնում է, որ գյուղական համայնքների խոշորացմամբ է միայն հնարավոր էական արդյունքների հասնել ռեսուրսների կենտրոնացման և դրանց առավել արդյունավետ տնօրինման հարցերում, ինչը հնարավորություն կտա նաև խորացնել ապակենտրոնացման քաղաքականությունը նոր կազմավորված խոշոր համայնքներում՝ ՏԻՄ-երին օժտելով ավելի մեծ ծավալի լիազորություններով:¹⁴⁵ Այստեղ հիմնական հարցը մնում է այն, թե ի՞նչ չափանիշներով և սկզբունքով պետք է խոշորացվեն համայնքները: Էական է նաև կենտրոնի ընտրության հարցը՝

¹⁴⁴ Տեղական ինքնակառավարմը Հայաստանում (2012թ և 2013թ), Դավիթ Թումանյանի խմբ., գիրք 6. - Եր., 2015, էջ 24-25

¹⁴⁵ Մելքոնյան Ա. Ի՞նչ չափորոշիչներով են խոշորացվելու համայնքները: «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 25 նոյեմբեր, 2011, թիվ 217

- կենտրոնը պետք է լինի առավել մեծ բնակավայր,
- միավորվող բնակավայրերի համար լինի կենտրոնական դիրք ունեցող,
- տրանսպորտային հանգույց մյուս բնակավայրերի ճանապարհների հետ:

Այստեղ առաջին պայմանն այն է, որ խոշորացված համայնքն պետք է ունենա բավարար չափի կադրային ու ֆինանսական ռեսուրսներ, ենթակառուցվածքներ, որն էլ կարող է դառնալ միավորված համայնքի կենտրոն: Բայց պետք է ցուցաբերել անհատական մոտեցումներ: Նախ փոքր համայնքները մտավախություն ունեն, որ իրենց կանտեսեն և իրենց խնդիրների լուծման գործում միայն կմոտենան մնացորդային սկզբունքով: Այնուհետև, կան համայնքներ, որոնք երկար տարիներ ապրելով ու գործելով հարևանությամբ, միշտ եղել են անհաշտ և դրանց միավորումն անիմաստ է: Նշանակում է, պետք է ցուցաբերել տեղային անհատական մոտեցումներ:

ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից մշակված համայնքների խոշորացման չափանիշներն են.

1. Միացվող համայնքների ընդհանուր վարչական սահմանների առկայությունը,
2. Նոր ձևավորվող համայնքի կենտրոնը պետք է ունենա կենտրոնական դիրք, առնվազն 3000 բնակիչ և նվազագույն ծավալի ենթակառուցվածքներ,
3. Բնակավայրերի հեռավորությունը համայնքի կենտրոնից չպետք է գերազանցի 20 կմ-ը,
4. Ձևավորվող համայնքում պետք է առկա լինեն ՏԻՄ-երի պարտադիր իրականացման անհրաժեշտ ենթակառուցվածքներ՝ մանկապարտեզ, բուժկետ, ակումբ և այլն,
5. Բնակավայրերի միջև տրանսպորտային հաղորդակցության առկայություն,
6. Նոր ձևավորվող համայնքի բնակավայրերին նախկինում համատեղ կառավարման մարմնի առկայություն՝ գյուղխորհուրդ, ավանային խորհուրդ

Մեր կարծիքով առաջարկվող չափանիշները մասնակիորեն են համապատասխանում Հայաստանի պայմաններին: Երկրորդ կետն անընդունելի է մեր իրական կյանքի համար, քանի որ՝

ա) ՀՀ-ում շատ քիչ չեն 3000-ից ավելի բնակիչ ունեցող համայնքները, որոնք կարիք ունեն միավորվելու,

բ) այստեղ ոչ թե միավորում է, այլ համակենտրոնացում՝ խոշորները «կուլ են» տալիս մանրերին, առանձին դեպքերում անտեսելով վերջիններիս շահերը:

Համայնքները խոշորացնելիս չպետք է դիմել ծայրահեղությունների այն համայնքների համար, որոնց աշխարհագրական դիրքը, ռելիեֆը թույլ չի տալիս միավորվելու հարևան համայնքներին: Դա վերաբերվում է հիմնականում բարձր լեռնային համայնքներին:

Անկախ բնակավայրի չափից, որոշ համայնքներ աշխատում են արդյունավետ, իրականացնում են օրենքով վերապահված իրենց լիազորությունները: Նման պարագայում այդ համայնքը պետք է ստանա կառավարման արտոնյալ կարգավիճակ: Այս դեպքում անհրաժեշտ է խուսափել ավելորդ ծայրահեղություններից, արդյունքները լինում են առավել շատ բացասական, քան դրական: Միավորվող համայնքների միջև դրսևորվում են անհամաձայնություններ՝ կապված ջրային ռեսուրսների, հողի, արոտավայրերի և ենթակառուցվածքների օգտագործման հետ: Ամեն դեպքում անհրաժեշտ է իրականացնել բազմակողմանի ուսումնասիրություն համայնքների միավորման ուղղությամբ:

Գյուղական համայնքների միավորումը վարչական մեթոդով չի կարող ընդունվել բոլորի կողմից դրականորեն և միշտ չէ, որ բխում է բնակչության շահերից: «Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիայի» 5-րդ հոդվածում գրված է. «Տեղական ինքնակառավարման ցանկացած փոփոխության դեպքում անհրաժեշտ է նախապես խորհրդակցել տեղական ինքնակառավարման համապատասխան մարմինների հետ, իսկ եթե օրենքը թույլ է տալիս կարելի է անցկացնել հանրաքվե»:¹⁴⁶ Նման պարագայում, ՀՀ Սահմանադրությունը (2015թ. վերափոխված տարբերակ) իրավունք է տալիս անցկացնել համայնքային հանրաքվե: Մեր կարծիքով, դա միշտ չէ, որ կբերի ցանկալի արդյունքների, քանզի դրան կխոչընդոտեն ոչ թե բնակիչները, այլ համայնքների ղեկավարները, որոնք համայնքների միավորման դեպքում կկորցնեն իրենց պաշտոնները: Բացի այդ, հանրաքվեով իրականացված փոփոխությունները առանձին դեպքերում չեն կարող լինել արդյունավետ, հնարավորություն չտալով լավագույն տարբերակն ընտրել: Այս պարագայում Կոտայքի մարզի, հատկապես

¹⁴⁶ «Տեղական ինքնակառավարման մասին» Եվրոպական խարտիա, Ստրասբուրգ, 15.10.1985թ.

բարձր լեռնային համայնքների համար առավելապես ընդունելի է ոչ թե խոշորացումը, այլ միջհամայնքային միավորումների ստեղծումը:

Ամեն դեպքում վարչատարածքային բարեփոխումներ իրականացնելիս առաջարկում ենք հետևյալ 3 փուլային գործողությունները՝

1-ին փուլ՝ առկա վիճակի բնութագրում (ներկայացնել վարչատարածքային բաժանման կառուցվածքը, դրա ձևավորման նախապատմությունը և հիմնական գործոնները):

2-րդ փուլ՝ առկա վիճակի վերլուծություն հետևյալ ուղղություններով՝

- ծառայությունների մատուցում՝ պարզել ՏԻՄ-երի կողմից մատուցվող ծառայությունների որակը, մատչելիությունը և արդյունավետությունը,
- համայնքների ֆինանսները և բյուջեն՝ բացահայտել բյուջեի եկամուտների աղբյուրները և ծախսերի հոդվածները,
- բնական ու աշխատանքային ռեսուրսների գնահատում՝ պարզել բնական պաշարների առկայությունը համայնքում, հողային ռեսուրսների օգտագործման աստիճանը, բնակչության թվաքանակը, սեռահասակային և մասնագիտական կառուցվածքը:
- արտադրական և սոցիալական ենթակառուցվածքներ՝ ճանապարհներ, ջրամատակարարում ու կոյուղի, գազամատակարարում, հեռահաղորդակցություն, դրանց շահագործման պիտանիության աստիճանը:

3-րդ փուլ՝ առաջարկվող լուծումներ, որոնք կարող են լինել՝

ա) համայնքների խոշորացում,

բ) միջհամայնքային միավորումների ձևավորում,

գ) նպատակային միությունների և կոոպերատիվների ստեղծում:

Որպես խնդրի լուծման մի տարբերակ միջհամայնքային միավորումների կազմավորումը կարող է անցումային դեր խաղալ համայնքային ծառայությունների մատուցման և լիազորությունների իրականացման ոլորտում: Համայնքների խոշորացման և դրանց կարողությունների աճման արդյունքում և միջհամայնքային միավորումների հիման վրա երկրում հնարավոր երկմակարդակ տեղական ինքնակառավարման համակարգի անցման պատճառով միջհամայնքային միավորները կարող են իրենց հիմնական խնդիրը լուծած համարել և պահպանել միայն առանձին այն

գործառույթների իրականացման ոլորտում, որոնք կպահանջեն մի շարք համայնքների ջանքերի համատեղում:

Միջհամայնքային միավորումների կազմավորման իրավունքն ամրագրված է «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 9-րդ հոդվածում ներկայացված սկզբունքներով, որով կանոնակարգում է միջհամայնքային միավորումներ ստեղծելու իրավունքը, կարգը և դրանց կառավարման մարմինների ձևավորումը, որում սահմանվում է ծախսերը կրճատելու և հարցերը համատեղ լուծելու նպատակով տեղական իշխանությունները կարող են ձևավորել միջհամայնքային միավորներ:

Միջհամայնքային միավորումները (ՄՀՄ) կարող են ստեղծվել կամավորության սկզբունքով: Սակայն, դա գտնվում է չկարգավորվող օրենսդրական դաշտում, առկա են մի շարք խոչընդոտներ, որոնց լուծման համար պետք է կարգավորել կազմակերպատիրական հարաբերությունները: ՄՀՄ-ները կազմավորվում են որպես իրավաբանական անձանց միություն, որը չի կարող հանդես գալ համապատասխան լիազորություններով օժտված մարմին: Սահմանված չէ դրա ներքին կառուցվածքը, որոշումների ընդունման սկզբունքները մշակվում են կանոնադրության մակարդակով, ինչը բավարար չէ ՄՀՄ-ների ձևավորման և արդյունավետ գործունեություն իրականացնելու համար: ՄՀՄ ձևավորվող համայնքները չեն կարող կատարել իրենց խնդիրները, քանի որ դեռևս չկա ֆինանսավորման և համատեղ բյուջեի ձևավորման հստակ մեխանիզմ, ֆինանսական հոսքերը գոյանում են դրամաշնորհներից և անդամակցվող համայնքների մասհանումներից: ՄՀՄ-ն չի կարող իրականացնել վարչական գործառույթներ, այդ միավորումն իրավական ակտով չի սահմանվում, որպես տեղական ինքնակառավարման կամ էլ պետական կառավարման ու կարգավորման մարմին:

Որպես կանոն, համաշխարհային պրակտիկայում ՄՀՄ-ի նպատակը հարևանությամբ գտնվող բնակավայրերի տնտեսական ու վարչական ռեսուրսների միավորումն է, դրա շնորհիվ ընդլայնելու սոցիալական ծառայության շրջանակներն ու ծավալները, հզորացնելու տնտեսական ներուժը, ինչը հնարավոր չէ իրականացնել առանձին-առանձին փոքր համայնքների միջոցներով: ՄՀՄ-ները կարող են ստեղծվել կոնկրետ հիմնախնդիրների լուծման նպատակով, որն առավել կիրառելի է բարձր լեռնային համայնքների պարագայում, որտեղ համեմատաբար դժվար է դրանց խոշորացումը:

Օրինակ, եթե համայնքները միավորվել են ճանապարհների, ջրատարների, կոյուղու կառուցման, բնապահպանական հարցերով, կամ կոնկրետ անասնաբուծության և բուսաբուծության հիվանդությունների դեմ պայքարի իրականացման նպատակով, ապա այն չի զբաղվի սոցիալական բնույթի և ծառայությունների մատուցման հարցերով: Միջհամայնքային միավորումը լինելով նպատակային կազմակերպություն, գործունեությունը կդադարեցնի կոնկրետ խնդրի լուծումից հետո:

Ներկայումս Կոտայքի մարզի գյուղական համայնքների համար առավելապես ընդունելի է գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծումը, որն այնուհետև կարող է դառնալ անցումային փուլ միջհամայնքային միավորումների ստեղծման պարագայում: ՄՀՄ-ներ գյուղատնտեսական կոոպերատիվների սկզբունքով Կոտայքի մարզում կարելի է ստեղծել հացահատիկի ու անասնակերերի արտադրության, բույսերի և կենդանիների հիվանդությունների, կարկտահարության դեմ պայքարի, անասնամթերքների վերամշակման և իրացման գծով բաժր լեռնային գոտիներում, ցածրադիր շրջաններում՝ պտուղ-բանջարեղենի վերամշակման, իսկ ամբողջ մարզի կտրվածքով՝ սանիտարա-հիգիենիկ, բնապահպանական աշխատանքների իրականացման ոլորտներում:

ՄՀՄ կազմավորման և կառավարման գործում պետք է աջակցություն ցուցաբերվի մարզային և պետական կառավարման մարմինների կողմից՝ մասնագիտական, օրենսդրական խորհրդատվություններ, համայնքների միջև առաջացած տարաձայնությունների կարգավորում, սուբսիդիաների և դոտացիաների արդարացի տրամադրում, այլապես այդ հակասությունները ժամանակի ընթացքում կարող են վերածվել դիմակայությունների: ՄՀՄ-ներին պետք է վերապահվի կառավարության և մարզպետարանի կողմից տրվող լիազորությունների կատարումը:

ՄՀՄ բյուջեի իրավական կարգավորումը կատարվում է «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով, «Ֆինանսական համահարթեցման մասին» օրենքով կարգավորվում է պետության ու ՏԻՄ-երի փոխհարաբերությունները:

ՄՀՄ բյուջեն ձևավորվում է հետևյալ աղբյուրների հաշվին՝.

- միավորվող համայնքներից հատկացումներ՝ ըստ համայնքի բնակչության թվի և բյուջեի հաշվարկված գործակցի,

- միավորված համայնքների տարածքներից հողի, գույքի և ավելացված արժեքի հարկերից մասհանումներ,
- մասհանումներ տեղական հարկերից,
- հատկացումներ պաշտոնական տրանսֆերտներից,
- օրենքով չարգելված այլ մուտքեր (վարկեր, փոխառություններ):

Այսպիսով, միանշանակ կարելի է փաստել, որ համայնքների խոշորոցումը հնարավորություն կտա զգալի արդյունքների հասնել ռեսուրսների կենտրոնացման և դրանց արդյունավետ օգտագործման հարցում, խորացնել ապակենտրոնացման քաղաքականությունը՝ ՏԻՄ-երին վերապահելով ավելի մեծ լիազորություններ՝ մեծացնելով դրանց դերը հանրային կառավարման համակարգում:

Գյուղական համայնքների խոշորացման և ՄՀՄ-ների կազմավորմանն ուղղված տարաբնակեցման քաղաքականությունը արդիական է հատկապես լեռնային և բարձր լեռնային տարածաշրջաններում, որի համար առաջարկում ենք մշակել համալիր ծրագրեր և իրականացնել գործնական բնույթի մոտեցումներ:

3.3. Գործարար ծրագրերի դերը համայնքների համաչափ զարգացման ապահովման գործում

Համայնքների համաչափ զարգացման հարցում էական դերակատարություն ունեն գործարար ծրագրերը, որոնք հիմնականում իրականացվում են տեղական ռեսուրսների (բնական և աշխատանքային) օգտագործման միջոցով: Նախկին վարչահրամայական, տնտեսական համակարգում ռեսուրսների բաշխումը և օգտագործումն իրականացվում էր վերևից իջեցված պլանային առաջադրանքների հիման վրա՝ բոլորովին տեղ չթողնելով տեղական իշխանությունների և գործարարների նախաձեռնողական դրսևորումներին, ինչն էլ սահմանափակում էր նրանց կողմից ռեսուրսների օգտագործման հնարավորությունները: Շուկայական տնտեսավարման պայմաններում հրատապ է դառնում ոչ միայն տեղական իշխանությունների, այլ նաև բնակչության նախաձեռնողական ակտիվացումը ռեսուրսների օգտագործման հարցում:

Գործարար ծրագրերը կարելի է դիտարկել որպես համայնքի, տարածաշրջանի, մարզի և նույնիսկ երկրի ընդհանուր զարգացման ռազմավարության բաղադրիչ, իսկ գործարար ծրագրավորումը՝ շուկայական տնտեսավարմանը բնորոշ տարածքային ու տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթ: Կառավարման տարածքային մարմինները, ելնելով արտաքին միջավայրի պայմաններից, պետք է խթանեն ձեռնարկատիրական գործունեությունը, մշակեն գործարար ծրագրեր՝ հիմնվելով կառավարման շուկայական լծակների վրա: Տարածքային գործարարության հետագա զարգացումը կարտահայտվի ձեռնարկատիրության տարատեսակ դրսևորումներով, որտեղ գյուղական համայնքների համար, ելնելով նրանց բնորոշ գծերից, առավել ընդունելի ու արդյունավետ տարբերակը մնում է փոքր և միջին ձեռնարկատիրությունը (ՓՄՁ):

ՓՄՁ-ի տնտեսական նշանակությունը բարձրանում է շուկայական հարաբերությունների պայմաններում, քանի որ այն հնարավորություն է տալիս ձևավորել շուկայական միջավայր, տնտեսության մեջ ներառել բնակչության աշխատանքային և ֆինանսական ռեսուրսներ, թուլացնել սոցիալական լարվածությունը, և որ ամենակարևորն է՝ ստեղծել նոր աշխատատեղեր: Փոքր բիզնեսը շուկայական հարաբերությունների հիմքն է, որն իր մեջ ընդգրկում է տնտեսվարող սուբյեկտներին, մատակարարներին և վաճառողներին, արտադրողներին և սպառողներին, այսինքն տնտեսության բոլոր օղակներին՝ թույլ չտալով մնացորդային դրսևորումներ: Փոքր բիզնեսը լրացնում է տնտեսության «դատարկ» տեղերը, որոնք չեն զբաղեցվում խոշոր ֆիրմաների կողմից: Նրանք գործում են հազվագույտ սպառողական ապրանքների, ծառայությունների մատուցման, սպասարկումների, առևտրի, հասարակական սննդի ոլորտներում: Շուկայական տնտեսությունում փոքր բիզնեսի կարևորությունը պայմանավորված է նաև նրանով, որ մշտական մրցակցության միջավայր է ապահովում տնտեսության մեջ՝ միաժամանակ մեղմացնելով արտադրության մոնոպոլացման դրսևորումները: Դա հնարավոր է դառնում փոքր ձեռնարկությունների բազմաքանակության և ճկունության, ապրանքների և ծառայությունների ոչ բարձր գների շնորհիվ:¹⁴⁷

¹⁴⁷ Տնտեսագիտության տեսություն (ուսումնական ձեռնարկ). - Եր.: ԵՊՏՀ, Տնտեսագետ, 2009 էջ 434-435:

ՀՀ-ում ՓՄՁ պետական աջակցության ուղղությամբ իրականացվող քաղաքականության արդյունքում վերջին տարիներին արձանագրվում է այդ ոլորտը բնութագրող ցուցանիշների դինամիկ աճ: Այսպես, 2011 թվականին ՓՄՁ սուբյեկտների շրջանառության ծավալների տեսակարար կշիռը հանրապետության համախառն ներքին արդյունքի մեջ կազմել է 25,9 տոկոս, իսկ 2012 թվականին՝ 27,1 տոկոս: Հատկանշական է, որ ՀՆԱ-ում ՓՄՁ տեսակարար կշռի կառուցվածքում առավել մեծ մասնաբաժին ունեն գերփոքր կազմակերպությունները՝ 2012 թվականին գերփոքրի բաժինը կազմել է 92,0, փոքրինը՝ 6,8 և միջին ձեռնարկություններինը՝ 1,2 տոկոս:¹⁴⁸

Փոքր և միջին ձեռնարկության պետական քաղաքականության մեջ տնտեսական նպատակների առանցք է հանդիսանում հանրապետության մարզերի և յուրաքանչյուր մարզի ներսում տնտեսական զարգացման անհամամասնությունների հաղթահարումը՝ օգտագործելով յուրաքանչյուր տարածաշրջանի (համայնքի) զարգացման բնորոշ գծերն ու առանձնահատկությունները, ներուժը՝ խթանելով տնտեսվարող սուբյեկտների միջև միջմարզային և միջհամայնքային համագործակցության զարգացմանը:

ՀՀ Կոտայքի մարզի զարգացման ծրագրով ՓՄՁ աջակցության միջոցառումներն իրականացվում է «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի (Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ) գործունեության շրջանակներում: Կոտայքի մարզի ՓՄՁ ոլորտում նկատելի առաջընթաց է գրանցվում: Մարզում գործում է 5200 ՓՄՁ, որը կազմում է հանրապետությունում գրանցված ՓՄՁ սուբյեկտների շուրջ 7 տոկոսն է: Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի Կոտայքի մասնաճյուղի կողմից ՓՄՁ պետական աջակցության 2011-2013 թվականներին բոլոր ուղղություններով տրամադրված հայտերն՝ ըստ ծրագրային ուղղությունների, տվյալները բերվում են աղյուսակ 3.6-ում:

¹⁴⁸ ՀՀ Կոտայքի մարզի 2015-2018թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր: Հրազդան, 2014, էջ 34

ՀՀ Կոտայքի մարզի ՓՄՁ հայտերի քանակը 2011-2013թթ.¹⁴⁹

Աջակցության ուղղությունները	2011թ.	2012թ.	2013թ.
1. Վարկային երաշխավորությունների տրամադրում	1	2	0
2. Սկսնակ գործարարների ձեռներեցության աջակցություն	12	50	40
3. Սկսնակ գործարարների ֆինանսական աջակցություն	6	11	9
4. Տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն	600	710	780
5. Ուսուցողական աջակցություն	0	480	270
6. ՓՄՁ սուբեյկտների կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) շուկաների առաջնության աջակցություն	4	6	2
7. Ձեռնարկությունների եվրոպական ցանցի հաղորդակցման կենտրոնի գործունեության շրջանակներում աջակցություն	7	8	10
8. Տեղական տնտեսական զարգացում	0	36	10

Նշենք, որ գործարար ծրագրի շրջանակներում աջակցություն ստացողների տարածքային բաշխվածության մեջ գերակշռում են քաղաքային համայնքներում գործող փոքր և միջին գործարարությունը, որն էական դեր չի խաղում գյուղական համայնքների համաչափ զարգացման գործում: Անհրաժեշտ է միջոցառումներ ձեռնարկել փոխելու այդ ծրագրերի կիրառության հասցեները՝ դեպի գյուղական համայնքներ, որտեղ դրա կարիքն ավելի շատ են զգում, ինչը հնարավորություն կստեղծի ծրագրի աջակցման մեխանիզմներն ավելի հասանելի դարձնել գյուղական համայնքների համար, որտեղ գործող ՓՄՁ-ների թիվը ներկայումս շատ փոքր է: Այդ նպատակով Կոտայքի մարզպետարանը պետք է իր լծակներով մեծացնի գյուղական համայնքներից ընդգրկվող շահառուների քանակը և տեսակարար կշիռն ավելացնի հետագա տարիների ընթացքում: Դրանում կարևոր դեր ունեն իրականացնելու նաև ՏԻՄ-երը, որոնց

¹⁴⁹ Աղբյուրը՝ ՓՄՁ ԶԱԿ-ի Կոտայքի մարզային կենտրոն

մասնակցությունը ՓՄՁ աջակցման ծրագրերի պլանավորման և իրագործման գործընթացներում դեռևս բավարար չափով չի դրսևորվում:

Ընդհանուր առմամբ գյուղական համայնքների համաչափ զարգացմանը մեր կարծիքով կարող է զգալիորեն նպաստել տնտեսության մասնավոր հատվածը, որի համար պետք է իրականացվի որոշակի կոնկրետ քաղաքականություն՝ մշակվի ծրագրեր, տրամադրվի հասցեագրված աջակցություն, ընտրվի մարտավարության կոնկրետ մեխանիզմներ:

Մարզային զարգացման ՓՄՁ ծրագիրը որոշակիորեն բարելավվել է վարկային ռեսուրսների հասանելիությունը մարզի գործող և սկսնակ այն ՓՄՁ-ների համար, որոնք գրավային ռեսուրսների անբավարարության պատճառով չէին կարողանում օգտվել վարկավորման եղած հնարավորություններից: Այսպես, եթե 2011-2012 թվականներին Կոտայքի մարզում վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագրի շրջանակներում մատուցվել է 24,0 մլն դրամի երաշխավորություն 17 փոքր և միջին ձեռներեցների, ապա 2013 թվականին՝ 28,8 մլն երաշխավորություն՝ 9 ձեռներեցի:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՓՄՁ աջակցության ծրագրով իրականացվող միջոցառումները բավարար չեն Կոտայքի մարզի մասնավոր հատվածի կայուն զարգացումն ապահովելու համար: Մարզում մասնավոր հատվածը գործում է հիմնականում հետևյալ բնագավառներում.

ա) արտադրության ոլորտում՝ տեղական գյուղմթերքների վերամշակում, տեղական հումքից շինանյութերի արտադրություն, հացամթերքների, զովացուցիչ ըմպելիքների արտադրություն և այլն

բ) առևտրի ոլորտում՝ մանրածախ առևտրի օբյեկտներ

գ) ծառայությունների ոլորտում՝ կենցաղային ծառայություններ, հանրային սննդի և զբոսաշրջության կազմակերպում

դ) շինարարության ոլորտում՝ շինարարության և վերանորոգման աշխատանքներ:

Մարզում ձեռնարկատիրական գործունեության հետագա զարգացման հնարավորությունները սպառված չեն և կարող են իրականացվել հետևյալ ուղղություններով՝

- համայնքներում մասնագետների ու փորձառու մարդկանց սեփական գործ ձեռնարկելու առկայությունը

- հաշվի առնելով առանձին գյուղական համայնքների բնակլիմայական պայմանները, զբոսաշրջության զարգացման բարենպաստ ռելիեֆը և անհրաժեշտ ենթակառուցվածքները՝ միջոցառումներ ձեռնարկել էկոտուրիզմի զարգացմանը
- օգտագործելով տեղացի արտագնա ձեռներեցների ներդրումներ կատարելու պատրաստակամությունը՝ համայնքներում ապահովել համապատասխան պայմաններ դրա իրագործման համար:

Գյուղական համայնքներում ՓՄՁ զարգացման համար անհարժեշտ է ապահովել համայնքների ղեկավարների ակտիվ մասնակցությունը համայնքի մասնավոր հատվածի զարգացման ծրագրերի մշակման գործում, որտեղ ցանկալի է նաև դոնորների, ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի, տեղացի ու օտարերկրյա մասնավոր ներդրողների մասնակցությունը:

Դրա հետ միասին գոյություն ունեն մասնավոր ներդրումները սահմանափակող գործոններ՝

- ա) կարևորելով համայնքներում մասնավոր ներդրումների անհրաժեշտությունը՝ այդուհանդերձ չեն խրախուսվում ներդրումները համայնքների ղեկավարների կողմից
- բ) չկա անհրաժեշտ մասնագետներ և կադրեր կոնկրետ գործունեության ուղղությամբ:

ՀՀ Կոտայքի մարզի մասնավոր ձեռներեցության զարգացման հարցերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հետագա զարգացման համար կարևորվում է առանձին ՓՄՁ-ներին ցուցաբերվող աջակցությունը, հիմնականում ուշադրություն դարձնելով գյուղական համայնքների ծրագրային միջոցառումների իրականացմանը հետևյալ հաջորդականությամբ.

1. Մասնավոր հատվածի տարածաշրջանային զարգացման ծրագրերի մշակում, հատկապես փոքրաթիվ բնակչությամբ և հեռավոր բարձր լեռնային համայնքներին, որոնք պետք է հատկացնեն բիզնեսի զարգացման համար անհրաժեշտ ռեսուրսներ (հողատարածքներ, արտադրական հրապարակներ, խորհրդատվություն և այլն):
2. Տարածաշրջանի գերակա ուղղությունների ծրագրերի մշակում, որտեղ Կոտայքի մարզի համար անասնապահական մթերքների վերամշակումն ու իրացումն է, որում ավելի բարձր է տնտեսական ռիսկը, ինչն իր հերթին պահանջում է բացահայտել շուկայական իրավիճակը և պահանջարկը:

3. Մասնավոր ներդրումների իրականացում, որոնք զգալիորեն կբարելավեն գործարար միջավայրը և ներդրումների մրցակցային պայմանները, արտադրանքի (ծառայության) մրցունակության աստիճանը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ներդրումներ իրականացնելու ցանկություններ են ունենում և՛ ներքին, և՛ արտաքին ձեռներեցները, սակայն դրանք հաճախ ձգձգվում են կամ էլ չեն իրականացվում շահագրգռվածության բացակայության պատճառով: Այս պարագայում անհրաժեշտ է մշակել միջհամայնքային և տարածաշրջանային ներդրումային առաջարկների փաթեթ, կազմակերպել տեղեկատվությունների տրամադրում ներդրողների համար:

Գործարար ծրագրերը, ընդհանուր առմամբ հանդիսանում են տարածաշրջանային սոցիալ-տնտեսական կարգավորման միջոց, որը տարածքային մարկենտինգի կիրառման շնորհիվ նպաստում է տնտեսական ու կառուցվածքային խնդիրների լուծմանը: Տարածաշրջանային գործարար ծրագրի մոդելի կառուցվածքը համալիր ձևով բնութագրում է տվյալ տարածաշրջանի յուրաքանչյուր համայնքի կառավարման հիմնական մոտեցումները: Գործարար ծրագրի մոդելը ներառում է հետևյալ բաղադրիչները.¹⁵⁰

1. Տարածաշրջանի զարգացման հայեցակարգը բնութագրում է տարածքային սոցիալ-տնտեսական նպատակներին հասնելու հնարավորությունները և նախատեսում է տարածաշրջանի արտադրողական ուժերի զարգացումը, ինչը միաժամանակ բացահայտում է տարածքային ձեռներեցության առավելությունները, թերություններն ու խոչընդոտները, որոնց հետ կարող են բախվել ծրագրերի իրականացման ընթացքում: Դրանք պետք է ուղղված լինեն բնակչության սոցիալ-տնտեսական հարցերի լուծմանը, կապված արտադրության ընդլայնման, ներդրումների ներգրավման և տնտեսական ռեսուրսների օգտագործման հետ:
2. Բացահայտվում է գործարար ծրագրի իրականացման մեխանիզմները և գործոնները, որոնց միջոցով պետք է կիրառվեն այդ ծրագրերը, դրանք ուղղված լինեն կոնկրետ համայնքի արտադրատնտեսական գործունեության ծախսերի և աղյուսների համեմատմանը, որտեղ պետք է արտացոլվի տարածաշրջանի գործարար ծրագրերի միջև տարբերությունները: Այսպես եթե գործարարության

¹⁵⁰ Предпринимательство в конце XX века, под общ. ред. А.А. Динкина. - М.: Наука 1992. - С. 87

կոնկրետ նպատակը շահույթի ստացումն է, ապա այն պետք է ապահովի բարենպաստ պայմաններ համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական զարգացմանը, տարածաշրջանի համար հասարակական բարքերի ստեղծմանը և հետագա տնտեսական աճի նախադրյալների ձևավորմանը, որում գերակայությունը պետք է տրվի բնակչության սոցիալական պաշտպանությանն ու համայնքային բյուջեների եկամուտների մեծացմանը:

Գործարար ծրագրերի իրականացման ժամանակ էական ազդեցություն կարող են թողնել որոշ գործոններ, որոնք կարելի է դասակարգել երեք խմբով.

1. Տարածաշրջանի արտադրական մասնագիտացումը, գիտատեխնիկական ռեսուրսների առկայությունը, արտադրական կոոպերացումը համայնքների և տնտեսության ճյուղերի միջև, տնտեսության ներսում առողջ մրցակցության առկայությունը:
2. Սոցիալական բնույթի գործոններ, որոնք անմիջապես առնչվում են մարդկանց նյութական, սոցիալական և հոգևոր պահանջմունքների բավարարման հետ: Այսպես էական նշանակություն է ունենում ՏԻՄ-երի և կենտրոնական կառավարման մարմինների միասնական նպատակաուղղվածությունը մարդկանց պահանջմունքների բավարարման հարցում:
3. Երկրի տարածաշրջանների միջև տնտեսական հարաբերությունների մեխանիզմը, որը խթանում է տարբեր բնակավայրերի մասնակցությունը համատեղ գործունեության իրականացմանը, ինչպես նաև սահմանափակում միջտարածաշրջանային արգելանքների ազդեցությունը գործարար ծրագրերի իրականացման վրա:

Գործարար ծրագրերը հանդիսանում են տարածաշրջանային կառավարման բաց համակարգ, ինչին կարող են մասնակից դառնալ, ինչպես պետական, այնպես էլ մասնավոր կառույցները: Դրանում էական դեր կարող են խաղալ միջհամայնքային միավորումները: Համայնքներն, ունենալով միանման բնակլիմայական պայմաններ, ռեսուրսներ և նպատակներ, միջհամայնքային միավորների միջոցով կարող են տնտեսապես արդյունավետ ձևով իրար հետ միասին պայքարել տնտեսության մեջ բացասական դրսևորումների դեմ, ստեղծել միջտարածաշրջանային կոոպերատիվ

կապեր: Դա զգալիորեն կնպաստի գյուղական համայնքների համաչափ զարգացման գործընթացի բարելավմանը:

Գործարար ծրագիրը ռազմավարական գործառույթների համակարգ է, ինչն ընդգրկում է տարածաշրջանի մնացած բոլոր միջոցառումներն ու ծրագրերը, մասնավորապես՝

- տարածաշրջանի մարկետինգի կիրառում,
- գործարար ծրագրավորման մեխանիզմի ձևավորում, որը կապահովի համայնքների համատեղ զարգացման կայունությունը,
- միասնական սոցիալ-տնտեսական կառույցի ձևավորում տարածաշրջանում և նրանում զարգացումն ապահովող ծրագրերի համակարգում:

Շուկայական հարաբերությունների վարման սկզբունքով գործարար ծրագիրը պետք է լինի համալիր, ավարտուն փաթեթ, համադրի սոցիալ-տնտեսական զարգացման բոլոր ծրագրերին: Երկրի վարչական բաժանմանը համապատասխան պետք է մշակվեն յուրաքանչյուր համայնքի համար գործարար ծրագրեր, որոնք տնտեսական ռեսուրսների արդյունավետ օգտագործման միջոցով պետք է հաշվեկշռեն տարածքային կառավարման մասնակիցների ծրագրերը:

Համայնքի գործարար ծրագիրը մի փաստաթուղթ է, ինչը ներառում է համայնքի (տարածաշրջանի) զարգացման հայեցակարգը, մարզպետարանի, ՏԻՄ-երի և տնտեսվարող սուբյեկտների գործունեության չափանիշները, իրականացման փուլերը, եղանակները և մեթոդները:

Հայաստանի Հանրապետությունում տնտեսական բարեփոխումների արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ դեռևս հստակ մշակված չեն կառավարման տարբեր մակարդակների իշխանական մարմինների շահերի համակարգումը և իրավական մեխանիզմները, դրանց կարգավիճակները, ինչի պատճառով էլ նրանց միջև չկա գործառույթների բաշխում և աշխատաքների հստակեցում: Նման իրավիճակում տարածաշրջանային տնտեսական գործունեության արդյունավետությունն անմիջապես կապվում է գյուղական համայնքների բնակչության պահանջմունքների բավարարման հետ, որին հասնելու համար պետք է մեծ ուշադրություն դարձնել գործարար ծրագրերի մշակմանը, քանի որ դրանք ունեն կոնկրետ պահանջներ և մոտեցումներ:

- ելնելով շուկայական տնտեսավարման պահանջներից՝ անհրաժեշտ է աստիճանաբար անցում կատարել բյուջետային ֆինանսավորումից տնտեսական զարգացման ինքնաֆինանսավորմանը
- կրթության, առողջապահության, մշակույթի և գիտության պետական սուբվենցիաների կրճատման հետևանքով անհրաժեշտ է բնակչության սոցիալական աջակցության սատարման համար հայթայթել ֆինանսական ռեսուրսների նոր աղբյուրներ:

Գործարար ծրագրերը, տարածաշրջանային զարգացման տեսանկյունից հնարավորություն են տալիս հստակեցնել տարածաշրջանի և նրա առանձին համայնքների զարգացման ուղղությունը, իրականացնել համակողմանի վերլուծություն, վեր հանել նպատակները և խնդիրները, մատնանշել նպատակներին հասնելու միջոցառումների համակարգը, որի համար պետք է մշակել նաև առանձին կառույցների գործունեության ծրագրեր:

Իրականացված հետազոտություններից և վերլուծություններից պարզվում է, որ ՀՀ Կոտայքի մարզի գյուղական համայնքների ՓՄՁ գործունեության բարելավման գործում իրականացված միջոցառումները դեռևս բավարար չեն մասնավոր հատվածի կայուն զարգացումը ապահովելու համար: Մարզի գյուղական մի շարք համայնքներում (Քասախ, Բջնի, Սոլակ, Արզական) մեր կողմից կատարվել են ուսումնասիրություններ մոտ 30 փոքր ու միջին տնտեսավարող սուբյեկտներ, հարցազրույցներ են անցկացվել 9 փորձառու ձեռներեցների և 4 համայնքների ղեկավարների հետ:

Ըստ հարցվածների գերակշիռ մասի գործարարության զարգացման հիմնական խոչընդոտը ֆինանսական միջոցների սակավությունն է: Նրանք գտնում են, որ ֆինանսական միջոցները հազիվ են լրացնում շրջանառու միջոցների նորմատիվները: Նշում են նաև, որ բանկերից վարկ ստանալը դժվար չէ, սակայն վարկատուների կողմից առաջ քաշված պայմաններն են բարդ՝ վարկի վերադարձելիության ժամկետը կարճ է (մինչև 3 տարի), որը կարելի է օգտագործել միայն առևտրի ու կենցաղային ծառայությունների ընդլայնման ոլորտում, իսկ գյուղատնտեսության, վերամշակող արդյունաբերության և շինարարության ոլորտում դա անհիմաստ է, քանի որ դրանցում կապիտալ ներդրումների ետ գնման ժամկետը (լազը) զգալիորեն երկարաժամկետ է:

Հարցման ենթարկվածներն իրենց մտահոգությունն են արտահայտում աջակցություն ստացողների հարցում, որտեղ գերակշռում են քաղաքային համայնքների ու մարզկենտրոնի փոքր ու միջին ձեռներեցները և գրեթե բացակայում են փոքր ու բարձր լեռնային գյուղական համայնքների ներկայացուցիչները: Ավելի մեծ ուշադրություն պետք է դարձվի հենց այդ բնակավայրերին, որպես սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծման գրավականներից մեկին:

Գործարար ծրագրերի իրականացմանը խոչընդոտում են շուկաներ մտնելու արգելքն ու արտադրանքի իրացման դժվարությունները: Հարցման ենթարկվածները նշում են, որ արտադրանքի մոտ 40 տոկոսն իրացնում են տեղական շուկաներում, 30 տոկոսը՝ մարզի տարածքում, 15 տոկոսը՝ այլ մարզերում կամ արտերկրում, իսկ 15 տոկոսը ենթարկվում է բարտերային փոխանակության:

Մասնավոր հատվածում դրա զարգացմանը խանգարում է նաև գործարարների կառավարման գիտելիքների ու փորձի բացակայությունը, որի պատճառով էլ նրանք չեն կարողանում արդյունավետ իրականացնել ձեռներեցի գործառույթները՝ ռեսուրսներն օգտագործել արդյունավետ, արտադրությունը կազմակերպել խելացի, դրսևորել ստեղծագործական ունակություն:

Առանձին դեպքերում մասնագիտական ունակությունների բացակայությունը հնարավորություն չի տալիս ձեռներեցներին կազմելու բիզնես պլան, ինչի պատճառով էլ նրանք չեն կարողանում հստակ տնտեսապայմանագրային հարաբերություններ ձևավորել բանկերի, ֆինանսական և իրացման կազմակերպությունների, պետական և տեղական կառավարման մարմինների և այլ տնտեսավարող սուբյեկտների հետ, որը կարող է բարձրացնել ձեռնարկատիրական գործունեության մակարդակը: «Ձեռնարկատիրության բարձր մակարդակը հանդես է գալիս որպես ժամանակակից շուկայական տնտեսության կարևորագույն շարժիչ ուժ, նպաստում է տնտեսության մրցունակության բարձրացմանը, հասարակության մեջ սոցիալական նոր խմբերի ձևավորմանը և տնտեսության կայուն զարգացմանը»:¹⁵¹

Այսպիսով, ամփոփելով գործարար ծրագրերի մշակման և ներդրման դերը համայնքների համաչափ զարգացման ապահովման գործում հարցի քննարկումը,

¹⁵¹ Օհանջանյան Ս. Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական կարգավորման խնդիրները Հայաստանում. -Եր.: Լիմուշ, 2010, էջ 47

հանգում ենք այն եզրահանգման, որ դրանում կարևոր առաքելություն ունեն ՏԻՄ-երը, որոնց մասնակցությունը ՓՄՁ աջակցման ծրագրերի պլանավորման ու իրագործման գործընթացում դեռևս ամբողջությամբ չեն դրսևորվում ՀՀ Կոտայքի մարզի գյուղական համայնքներում, որոնց գործունեությունում նույնպես զգացվում է բացթողումներ համայնքների սոցիալ-տնտեսական զարգացմանը խթանելու և անհամաչափությունները մեղմելու ուղղությամբ:

3.4. Տարածքային կառավարումը և համայնքների փոխհարաբերությունների կատարելագործումը

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման ներկայիս համակարգը ներառում է մարզպետը, մարզպետարանի աշխատակազմը, մարզային ենթակայության կազմակերպությունները, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումները: Հայաստանի մարզերում տարածքային կառավարման օրենսդրական դաշտը կազմում է իրավական նորմատիվային ակտերը, որոնցով կարգավորվում են դրանց փոխհարաբերությունները: Սակայն, գործնական կյանքը ցույց է տալիս, որ այդ հարաբերությունների կարգավորման համար անհրաժեշտ է ունենալ առանձին օրենք, քանզի օրենքով կարգավորումը հստակ կդարձնի տարածքային կառավարման իրավական հիմքերը, կհստակեցնի պետական կառավարման և ՏԻՄ-երի լիազորությունների բաշխումը, հնարավորություն կտա շրջանցել կրկնվող գործառույթները, կապահովի մարզերի և համայնքների համաչափ զարգացումը:

Հայաստանի անցումը շուկայական հարաբերություններին պայմաններ ապահովեց տնտեսության պետական ու մասնավոր հատվածներին ինտեգրվելու համար: Դրա հետ միասին առաջացրեց նաև մի շարք խնդիրներ և պահանջներ, որոնց լուծման պարագայում միայն հնարավոր կլինի իրականացնել համաչափ տնտեսական զարգացում յուրաքանչյուր համայնքի, մարզի և ամբողջ հանրապետության համար: Դրանում կարևորվում է յուրաքանչյուր համայնքի տնտեսական ռեսուրսների համակողմանի օգտագործումը, գործարարության ակտիվացումը, ինչը հնարավոր է ապահովել միայն պետության կողմից իրականացվող ենթակառուցվածքների զարգացման հաշվին,

որոնք էլ կնպաստեն գյուղական համայնքների տնտեսական ու սոցիալական խնդիրների լուծմանը:

Համայնքն իր մեջ ներառում է այն բոլոր տնտեսություններն ու կազմակերպությունները, որոնք կոչված են ծառայելու համայնքի բնակչությանը և բավարարելու նրանց պահանջմունքները: Այդ կառույցների գործունեությունը համակարգվում է ՏԻՄ-երի կողմից: Նշանակում է համայնքների սոցիալ-տնտեսական զարգացումը հնարավոր է միայն տեղական իշխանությունների կողմից նպատակային քաղաքականության մշակման ու իրականացման միջոցով:

Համաձայն 2002թ. մայիսի 7-ին ընդունված «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի, մասնավոր հատվածի հետ հարաբերություններում համայնքի ղեկավարը պարտավոր է միջոցներ ձեռնարկել պաշտպանելու համայնքի բնակչության և տնտեսվարող սուբյեկտների իրավունքներն ու շահերը, խթանի տնտեսական գործունեության ծրագրերի իրականացմանը, օժանդակի համայնքում դրանց կատարմանը: Համայնքներում ձեռնարկատիրական գործունեությանն ուղղված մեծ իրավունքներ է տրված ՏԻՄ-երին՝ խաղի կանոնների սահմանում, մասնագիտական և իրավական աջակցություն, արտոնությունների տրամադրում, համայնքի զարգացման ծրագրի կազմում և այլն: Համայնքի զարգացման ծրագիրը, որպես մեկ ամբողջություն, իր մեջ ներառում է համայնքի զարգացման ռազմավարությունը՝ հիերարխիկ, փոխներթափանցված իրական նպատակներով, որոնք պետք է ձևավորվեն համայնքի վրա արտաքին միջավայրի ներազդեցություն համակողմանի վերլուծության, ինչպես նաև համայնքի սոցիալ-տնտեսական ներքին իրավիճակի համալիր գնահատման, հիմնախնդիրների վերհանման, առկա հնարավորությունների (բնական, աշխարհագրական, տնտեսական, ֆինանսական, մարդկային) հաշվառման արդյունքում: Սակայն ծրագիրը միայն համայնքի ռազմավարության ու ժամանակային կտրվածքով նպատակների սահմանում չէ: Ծրագիրը հիմնարար է, երբ նպատակների հետ մեկտեղ պարունակում է լուծման անհրաժեշտության խնդիրների ամբողջություն, դրանց լուծման տրամաբանական քայլերի հաջորդականություն:¹⁵²

¹⁵² Տեղական ինքնակառավարման հիմունքներ. կառավարչական հմտություններ. Է. Օրդյանի ընդ. խմբ., - Եր.: Պետական ծառայություն, 2003, էջ 6-7

ՀՀ Կոտայքի մարզի համալիր զարգացումը կապված է մարզի համայնքների զարգացման հետ: Առկա հիմնախնդիրների լուծումն առաջին հերթին ենթադրում է համայնքնային խնդիրների լուծում: Մարզի զարգացումն ավելի է կարևորվում համայնքների ներուժի և ՏԻՄ-երի լիազորությունների արդյունավետ իրագործման համատեքստում: ՀՀ սահմանադրության¹⁵³ 104-րդ հոդվածի համաձայն տեղական ինքնակառավարումը ոչ միայն համայնքի տեղական նշանակության հարցերը լուծելու պարտականությունն է, այլ նաև իրավունքն ու կարողությունը: Հետևաբար համայնքները պետք է ունենան բավարար ռեսուրսներ, որպեսզի լուծեն տեղական ինքնակառավարման՝ օրենսդրությամբ վերապահված հարցերն ու իրականացնել լիազորությունները:

Հայաստանի Հանրապետության կառավարման ապակենտրոնացման քաղաքականությունը հիմնականում պայմանավորված է տարածքային կառավարման մարմիններից ՏԻՄ-երին որոշակի լիազորությունների ու իրավասությունների փոխանցմամբ, որտեղ կարևորվում է մեկ հիմնական սկզբունքի խստագույն պահպանում՝ եթե հարցերն ավելի արդյունավետ կարող է լուծվել համայնքներում, ապա լիազորությունների փոխանցումը նպատակահարմար է, իսկ եթե լիազորությունների փոխանցումից հետո դրանք չեն կատարվում, ապա նման ապակենտրոնացումը կարող է միայն վնաս հասցնել համայնքներին և հանրությանը: Այդ խնդրի էությունը կայանում է նրանում, որ ապակենտրոնացումը չպետք է լինի ինքնանպատակ, այլ ապահովի օպտիմալություն և արդյունավետություն, ինչն առավել խնդրահարույց է փոքր համայնքներում, որոնցում անբավարար է սեփական ներուժը լիազորություններն իրականացնելու համար:

Հայաստանին միշտ էլ բնորոշ է եղել տարածքային զարգացման անհամաչափությունները, որն ավելի խորացավ շուկայական հարաբերություններին անցնելուց հետո և ներկայումս դա զգացվում է երկրի մաշտաբով մայրաքաղաքի ու մարզերի միջև: Անհամաչափ տարածքային զարգացումը նորանոր խնդիրներ է առաջացնում ինչպես երկրի ներքին կայունության առումով, այնպես էլ նպաստում է տնտեսապես թույլ զարգացած տարածաշրջաններից բնակչության արտահոսքին դեպի մարզկենտրոններ և մայրաքաղաք Երևան:

¹⁵³ ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով), ՀՀ ՊՏ.05.12.2015

Ընդհանուր առմամբ մարզի զարգացման ծրագրի գերակայություններից է մարզի և նրա համայնքների զարգացման ծրագրերի համաչափության (ներդաշնակության) ապահովումը: Մարզի զարգացման ծրագիրը կարելի է դիտարկել որպես մարզի համայնքների զարգացման ծրագրերի հանրագումար, որտեղ համայնքներին պետք է վերաբերվել որպես շահառուներ, իսկ ՏԻՄ-երին ու պետական կառավարման մարմիններին՝ ծրագրային դրույթների իրականացնողներ: Այս տեսակետից ճիշտ կլինի հստակեցնել պետական և տարածքային կառավարման մարմինների ու ՏԻՄ-երի լիազորությունները, պատասխանատվությունը մարզի զարգացման ծրագրում:

Որպիսզի արդյունավետ գործեն մարզի ու համայնքային զարգացման ծրագրերը, անհրաժեշտ է, որ համայնքները իրենց քառամյա զարգացման ու ոլորտային ծրագրերը մշակելիս հիմք ընդունեն և առաջնորդվեն Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի և կառավարության կողմից հավանության արժանացած մարզային, տարածաշրջանային զարգացման ծրագրերով: Արդյունքում համայնքի քառամյա զարգացման ծրագիրը կլինի առավել իրատեսական:

Այսպես, կոնկրետ ՀՀ կառավարության 2014թվականի մայիսի 19-ի № 511-Ա որոշմամբ և ՀՀ կառավարության 2014թվականի մարտի 27-ի № 442-Ն որոշմամբ ընդունված «ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում» ուշադրության են արժանացել Հայաստանում խորացող տարածքային զարգացման անհամաչափությունների վերացման խնդիրները, հաստատվել է ՀՀ Կոտայքի մարզի 2015-2018թթ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի համաձայն, համայնքի ղեկավարների ներկայացմամբ ավագանին հաստատում է համայնքի քառամյա զարգացման ծրագիրը և ներկայացնում են մարզպետարան: Ծրագրեր կազմելու համար մարզպետարանը տրամադրում է խորհրդատվություն: Չնայած, որ տեղական ինքնակառավարման օրենդրությունը համայնքային զարգացման ծրագրերի մշակման միասնական մոտեցումներ ու պահանջներ չի սահմաննել, այդուհանդերձ, Կոտայքի մարզպետարանը միասնական մեթոդաբանական ուղեցույցներ է պատրաստել ծրագրերի կազմման համար և տրամադրել համայնքներին: Դա էլ հնարավորություն է տվել գյուղական համայնքների զարգացման ծրագրերը որոշակիորեն բերել

կառուցվածքային միասնական չափանիշների, որի շնորհիվ էլ համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերը որոշակի իրատեսական հիմնավորումներ ունեն:

Պետք է նշել, որ հանրապետությունում համայնքների զարգացման ծրագրերի մշակման գործում որոշակի փորձ է կուտակվել: Սակայն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դրանք դեռևս բավարար չեն համայնքի ամբողջական հարցերի լուծման համար:

Այսպես, ՀՀ Կոտայքի մարզի 2015-2018թթ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրում տրված է համայնքների զարգացման ռազմավարությունը հետևյալ առաջնահերթություններով:¹⁵⁴

- 1) Տեղական ինքնակառավարման արդյունավետության բարձրացում, ՏԻՄ-երի կողմից մատուցվող ծառայությունների որակի բարձրացում, միջհամայնքային համագործակցության խթանում,
- 2) Տեղական ինքնակառավարման ոլորտում կառավարման հմտությունների ու ունակությունների բարձրացում, հանրային ծառայությունների տեղեկատվական կենտրոնների ստեղծում,
- 3) Բարձր լեռնային համայնքի և փախստաբնակ համայնքներում ծրագրերի իրականացում,
- 4) Քաղաքացիներին համայնքի կառավարմանը մասնակցելու խթանման ուղղված ծրագրերի իրականացում,
- 5) Նպաստել համայնքների ավագանիների կայացմանը և դրանց աշխատանքների հրապարակայնության ու թափանցիկության բարձրացմանը,
- 6) Բարձրացնել համայնքների բյուջեներին պետական ֆինանսական օժանդակության համակարգի արդյունավետությունը: Կատարելագործել ֆինանսական համահարթեցման մեխանիզմները,
- 7) Համայնքի համար տեղեկատվական միացյալ բանկի ստեղծում,
- 8) Աջակցություն համայնքներին՝ միջհամայնքային միավորումների ստեղծման գործում,

¹⁵⁴ ՀՀ Կոտայքի մարզի 2015-2018թթ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր, Հրագրան, 2014, էջ 153-154

- 9) Համայնքային ենթակառուցվածքների (ճանապարհներ, ջրամատակարարում, գազամատակարարում) զարգացման ուղղությամբ աշխատանքների իրականացում,
- 10) ՏԻՄ-երի կողմից մատուցվող ծառայությունների մատչելիությանը և որակի բարձրացնելուն նպատակաուղղված գործողությունների իրականացում,
- 11) Համայնքներից բնակչության արտագաղթի կանխման նպատակով համալիր ծրագրի մշակում և իրականացում:

Ինչպես տեսնում ենք առաջարկվող ծրագրային ռազմավարությունն ավելի շատ կրում է դեկլարատիվ, կարգախոսային բնույթ, չունի կոնկրետ նպատակադրված ուղղվածություն, չկա համայնքային զարգացման ռազմավարության նպատակը և դրան հասնելու ուղիների ու միջոցների կիրառման հիմնավորվածությունը:

Այս ամենը հաշվի առնելով՝ առաջարկում ենք մշակել զարգացման ռազմավարական ծրագրեր՝ իր մեջ ներառելով հետևյալ փուլային աշխատանքները.

ա) Համայնքի տնտեսության կառուցվածքի վերլուծություն, ընդգրկելով համայնքի ներուժի՝ տնտեսական բազայի, գործարար ակտիվության ու բնութագրերի վերլուծությունները: Մասնավորապես համայնքի գերակա ոլորտները, առկա գործող ձեռնարկությունները, համայնքի տնտեսության մասնագիտացումը, բնակչության զբաղվածությունը և աշխատանքային ռեսուրսների առկայությունը, մատուցվող ծառայությունների վիճակը, ենթակառուցվածքների հասանելիությունը և այլն: Վերլուծության արդյունքների հիման վրա ՏԻՄ-ն արդեն իսկ բացահայտում է, թե ինչպիսի առավելություն ունի տվյալ համայնքը և ինչ ռեսուրսներ են անհրաժեշտ թերությունները վերացնելու և զարգացում ապահովելու համար:

բ) Առաջարկում ենք ստեղծել տնտեսական ու իրավական խմբեր՝ համայնքի զարգացման նպատակների հիմնավորման համար: Այդ խմբերը պետք է ուսումնասիրեն համայնքի տնտեսական վիճակը, վերլուծեն տեղեկատվական բազան, գնահատեն առկա ռեսուրսները և գործոնները, բացահայտեն համայնքում ձևավորված շուկայական ու տնտեսական հարաբերությունները, որոնք այս կամ այն կերպով կարող են ազդել համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման վրա: Այնուհետև համայնքում գործող յուրաքանչյուր կազմակերպություն իր ձեռնարկատիրական գործունեության

զարգացման նպատակները մշակելիս անհրաժեշտ է, որպեսզի հիմքում դնի համայնքի զարգացման ռազմավարությունը:

գ) Ռազմավարական ծրագրի վերջնական ձևակերպում: Այն դիտարկվում է ձեռներեցության զարգացում երեք ուղղություններով՝

- գործող կազմակերպությունների և ձեռնարկությունների կարողությունների պահպանում և ընդարձակում,
- համայնքի կողմից աջակցություն նոր ստեղծվող ձեռնարկություններին, դրանց զարգացման ծրագրերի մշակում,
- նոր կազմակերպությունների և ձեռնարկությունների ներգրավում ընդհանուր զարգացման ծրագրերի մեջ:

Գրեթե բոլոր համայնքներում միշտ էլ կլինեն տնտեսություններ, ձեռնարկություններ (պետական, օտարերկրյա, հասարակական), որոնց վրա չեն տարածվում համայնքի կառավարման մարմինների գործառույթները: Սակայն դրանք իրենց ազդեցությունն են թողնում տվյալ համայնքի կենսագործունեության վրա՝ ապահովում են զբաղվածություն, բնակչության եկամուտները, վճարում են հարկեր, տուրքեր և այլն, հետևաբար համայնքային զարգացման ծրագիրը պետք է ընդգրկի նաև համայնքի տարածքում տեղաբաշխված բոլոր տնտեսվարող սուբյեկտների (ֆիզիկական ու իրավաբանական անձանց) գործունեությունը: Այդուհանդերձ, համայնքային զարգացման կարևոր բաղադրիչը համայնքային տնտեսությունն է, որը պետք է հանդիսանա ամբողջ տնտեսության բազան և առանցքը ծրագրերի մշակման պարագայում, ինչն էլ կնպաստի տնտեսության բոլոր հատվածների միջև տնտեսական կապերի ամրապնդմանն ու ծրագրային հարցերի լուծմանը:

Քանի որ համայնքի համար ավելի կարևոր է բնակչության կենսամակարդակի բարձրացումը, սոցիալ-տնտեսական վիճակի բարելավումը, ապա համայնքային զարգացման ծրագրում գերակայությունը պետք է տրվի համայնքային տնտեսության զարգացման նպատակների հիմնավորմանը և առավել մեծ ուշադրություն դարձվի ծրագրում այդ հարցերի լուծմանը: Ծրագրի հիմնավորված մշակումը պայմանավորված է անհրաժեշտ տեղեկատվական բազային առկայությունով, որի համար պետք է ունենալ համայնքի տեղեկատվական բանկը:

Համայնքային ծրագրերի կազման կարևոր սկզբունք է համարվում նաև այդ գործընթացի իրականացման թափանցիկությունը, դրանում բնակչության, հասարակական խմբերի, կազմակերպությունների մասնակցությունը: Սակայն, ներկայումս նկատի ունենալով, որ բնակչությունը և հասարակական կազմակերպությունները դեռևս ակտիվ մասնակցություն չեն ցուցաբերում համայնքային ծրագրերի մշակման ու քննարկման գործընթացում, նպատակահարմար է, որ սկզբնական շրջանում պետության աջակցությամբ, համայնքի տարածքում գործող ակտիվ հասարակական կազմակերպությունների և տեղեկատվական-վերլուծական կենտրոնների մասնակցությամբ, իսկ հետագայում համայնքի բնակչության շրջանում անցկացված հարցումների միջոցով, պարզաբանել համայնքի բնակչության կարիքները, դժգոհությունները, ցանկությունները, խնդիրների լուծման առաջնահերթությունները: Դրանք հետագայում օգտագործել նկատված թերությունները շտկելու, ծրագրի իրականացման ժամանակացույցն ապահովելու, խնդիրների լուծման հնարավորություններն առավել իրատեսական դարձնելու համար:

Համայնքային ծրագրերի մշակման ժամանակ կարևորվում է նաև դրանց զարգացման հիմնական ուղղությունների նախանշման անհրաժեշտությունը և նախապայմանները, որոնցից կարևորվում են հետևյալները.

- ա) համայնքային ենթակառուցվածքների զարգացում (ճանապարհներ, ջրամատակարարում և ջրահեռացում, գազամատակարարում, կապի ապահովում, սոցիալական ենթակառուցվածքներ),
- բ) քաղաքացիական հասարակության և հանրային կազմակերպությունների ցանցի ընդլայնում, համայնքների պաշտոնական և ոչ պաշտոնական ինստիտուցիոնալ կառուցվածքի արդիականացում,
- գ) համայնքների բնակիչների իրազեկության մակարդակի բարձրացում, ինչը հնարավորություն կտա իրականացնել երաշխավորել և պաշտպանել նրանց մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը, որոշումների կայացմանը և այլ գործընթացներին,
- դ) համայնքների և արտաքին սուբյեկտների միջև կառուցողական համագործակցության ու փոխհարաբերությունների հաստատում,
- ե) միջհամայնքային միավորումների ստեղծում և համայնքների խոշորացում:

Համայնքների զարգացման հիմնախնդիրների լուծմանը նպաստում է նաև համայնքների ուժեղ և թույլ կողմերի վերլուծությունը, որը հնարավորություն է տալիս անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկել թույլ կողմերը վերացնելու կամ առնվազն նվազեցնելու համար:

ՀՀ Կոտայքի մարզի գյուղական համայնքների տնտեսական զարգացման ուժեղ կողմերն են՝

- գյուղատնտեսական նշանակության հողատարածքները մեկ գյուղացիական տնտեսության հաշվով շուրջ 70 %-ով գերազանցում է միջին հանրապետական ցուցանիշին,
- բնակլիմայական պայմանների բազմազանությունը, որն էլ թելադրում է գյուղատնտեսության մասնագիտացումը և արտադրության դիվերսիֆիկացիան,
- էկոլոգիական մաքուր գյուղմթերքների արտադրության պայմանների առկայությունը,
- իրացման շուկաների համամատաբար մեծ հնարավորությունը և այլն:

Թույլ կողմերն են՝

- բնական ռեսուրսների անարդյունավետ և ոչ ռացիոնալ օգտագործումը,
- գյուղական համայնքների աշխատուժի թերբեռնավածությունը,
- գյուղատնտեսական արտադրանքի ապրանքայնության ցածր մակարդակը,
- հողատարածքների և արտադրության մասնատվածությունը, ինչը հնարավորություն չի տալիս արդյունավետ օգտագործել գյուղ տեխնիկական և կիրառել ագրոտեխնիկական միջոցառումներ,
- ոռոգման համակարգի ցածր մակարդակը,
- սերմնաբուծական և տոհմային տնտեսությունների անմխիթար վիճակը,
- գյուղատնտեսական տեխնիկայի ֆիզիկական և բարոյական մաշվածության բարձր աստիճանը,
- գյուղացիական կոոպերատիվների ստեղծման դանդաղկոտությունը և թույլ ուշադրությունն այդ հարցին,
- գյուղական համայնքներում գյուղատնտեսական հումքի վերամշակման արդյունաբերության գրեթե բացակայությունը,
- գյուղատնտեսության ապահովագրական համակարգի բացակայությունը և այլն:

Համայնքների զարգացման ծրագրերում, անկախ ամեն ինչից կան հարցեր, որոնք պարտադիր կերպով ենթակա են քննարկման և իրենց արտացոլումը պետք է գտնեն տվյալ ծրագրում: Դրանցից են.

1. Համայնքի տնտեսական բազայի և սոցիալական վիճակի բնութագիրը, որտեղ տրվում է տվյալ համայնքի սոցիալ-տնտեսական ցուցանիշների փաստացի գնահատականը: Ելնելով ծրագրի նպատակից և հիմնախնդիրների պահանջներից, նրանում առանձնացվում է այն հարցերի խորացված ուսումնասիրությունը, ինչը կնպաստի դրանց լուծմանը: Միաժամանակ պետք է բացահայտել ծրագրի բաժինների միջև կապերը, առաջնային լուծում պահանջող հարցերը, գնահատել կորուստները և հիմնավորել հիմնախնդրի լուծման հնարավորությունները:

2. Համայնքային զարգացման միտումները և կանխատեսումները: Ցանկացած տնտեսական երևույթ միշտ էլ գտնվում է դինամիկ շարժման մեջ, քանզի դրա վրա ազդում են բազմաթիվ գործոններ, որոնց փոփոխության օրինաչափությունը, ճանաչումը և ձևակերպումը հնարավորություն է տալիս որոշակի ժամկետի համար կանխատեսել զարգացման ուղղությունները: Զարգացման կառավարումը ենթադրում է դրա բնականոն ընթացքի ուղղորդում կոնկրետ նպատակների իրականացմանը, ինչը կհանգեցնի գյուղական համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման կանխատեսմանը:

Համայնքային ծրագրի դեպքում հնարավոր է կանխատեսել զարգացման հետևյալ ուղղությունները՝

ա) տնտեսության զարգացման ուղղությունների վերաբերյալ պատկերացում տվող ցուցանիշների գնահատում,

բ) պլանավորվող ժամանակաշրջանի համար հաշվարկային ցուցանիշների բնութագրում, որոնք հնարավոր չէ ծրագրավորել,

գ) միջոցառումների իրականացման արդյունքների կանխատեսում և ազդեցության գնահատումը ծրագրի մեջ և այլն:

3. Համայնքի զարգացման նպատակադրումներն ու հեռանկարի մշակումը: Ծրագրի այս բաժինը համարվում է ամենահիմնականը, որը կապ է սահմանում ռեսուրսային բազայի և սպասվելիք արդյունքների միջև, ընդգրկում է աշխատանքների հետևյալ փուլերը.

ա) համայնքի ռեսուրսների և համեմատական առավելության օգտագործման միջոցով զարգացման հեռանկարի որոշում,

բ) այլընտրանքային միջոցառումների մշակում և ընտրություն,

գ) ժամկետների սահմանում և անհրաժեշտ ռեսուրսների հաշվարկում,

դ) դրանց հիման վրա ընդհանուր ծրագրի տարեկան կտրվածքների առանձնացում:

Ծրագրի նպատակների հստակեցման գործում կարևորվում է դրանց առաջնահերթությունների գնահատումը, ինչի հիման վրա էլ ծրագիր մշակողները ձևավորում են տվյալ ժամանակահատվածի լուծում պահանջող խնդիրների ընտրությունը:

4. Ծրագրային միջոցառումների արդյունավետության գնահատումը: Գյուղական համայնքի տնտեսական (սահմանափակ) ռեսուրսների արդյունավետ օգտագործումն անհրաժեշտություն է առաջացնում ռեսուրսներն ուղղորդել դեպի այն բնագավառները, որտեղ կարելի է ստանալ առավել բարձր արդյունք: Այստեղ էական նշանակություն է ստանում տնտեսական արդյունավետության ցուցանիշը, որում արտացոլվում է յուրաքանչյուր գործունեության (միջոցառման) իրականացման ծախսերի և ստացված արդյունքների համեմատությունը:

Համայնքային ծրագրի մշակելուց առաջ, անհրաժեշտ է մշակել համայնքի հիմնախնդրի լուծման այլընտրանքային տարբերակներ՝ հիմքում դնելով որոշակի չափորոշիչներ, իհարկե առաջնահերթությունը տալով սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը, այնուհետև դրանք տնտեսապես հիմնավորել և հետո նոր համայնքային ծրագրում ներառելու համար ներդնել առավել արդյունավետ տարբերակը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնասիրելով ՀՀ Կոտայքի մարզի գյուղական համայնքների օրինակով համայնքների համաչափ զարգացման հիմնախնդիրները՝ հանգել ենք որոշակի եզրակացությունների և կատարել առաջարկություններ.

1. Տարածքային զարգացման քաղաքականությունը հանդիսանում է պետական կառավարման մարմինների գործունեության հիմնական ուղղություններից մեկը, ինչը ընդգծում է նրա տարածքային հատկանիշները, որն իրենից ներկայացնում է տարածքային կառուցվածքի վրա ազդելու նպատակով ստեղծված կառավարման սկզբունքների, գերակա ուղղությունների, մեթոդների և միջոցառումների ամբողջական համակարգ՝ ուշադրություն դարձնելով պետական տարածքային քաղաքականության ընդհանուր չափանիշների վրա:

2. Հանրապետության տարածքային զարգացման քաղաքականության վերլուծությունը հնարավորություն է տվել բացահայտել մի շարք մարտահրավերներ.

- սոցիալ-տնտեսական զարգացման և բնակչության կենսամակարդակի անհամաչափությունների խորացում,

- գյուղական համայնքներում ենթակառուցվածքների ու մատուցվող ծառայությունների բարելավման հասանելիության և արդյունավետության բարձրացման անհրաժեշտություն,

- տարածքային զարգացման անհամաչափությունների կրճատմանը նպատակաուղղված պետական, համայնքային, դոնորական և մասնավոր ներդրումների և ծրագրերի համակարգման անհրաժեշտություն,

- միջհամայնքային համագործակցության ընդլայնման ու համայնքների միավորման ու խոշորացման անհրաժեշտություն և այլն:

3. Գյուղական համայնքների համաչափ զարգացման գործում էական ազդեցություն են թողնում արտադրական և սոցիալական ենթակառուցվածքները, որոնց զարգացման խնդիրները Կոտայքի մարզում առնչվում են ճանապարհաշինության, ջրամատակարարման ու ջրահեռացման, գազամատակարարման հետ:

Մարզում ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների ոլորտում լուծում պահանջող խնդիրներից են՝

- ջրամատակարարման ու ջրահեռացման ծառայությունների ինքնաձախսա-
ծածկման ցածր մակարդակը,

- նոր ջրատարների կառուցման և շահագործվող ջրագծերի վերանորոգման
համար ֆինանսական միջոցների անբավարարությունը,

- խողովակների ֆիզիկական մաշվածությունը և անբավարար թողունակությու-
նը,

- համայնքային ենթակայության համակարգերում խմելու ջրի վարակազերծման
միջոցառումների ցածր մակարդակը,

- ջրահավաք կառույցների շահագործման և պահպանման ցածր մակարդակը,

- կենցաղային կեղտաջրերի մաքրման կայանների գրեթե բացակայությունը:

Գազամատակարարման բնագավառում առաջնային է համարվում չգազաֆի-
կացված գյուղական համայնքների գազաֆիկացումը, որը հնարավորություն կտա
բնակչությանը, կազմակերպություններին օգտագործել էկոլոգիապես մաքուր վառելիք:

Մարզի գազաֆիկացման 2015-2018թթ. ծրագրերով հաշվարկված է, որ անհրա-
ժեշտ է 480 մլն դրամի ֆինանսական ներդրումներ:

4. Կոտայքի մարզում զբոսաշրջության զարգացման համար անհրաժեշտ է իրա-
կանացնել հետևյալ միջոցառումները՝

- ա) մարզի զբոսաշրջային տնտեսության միջոցների գույքագրում,

- բ) գովազդային նյութերի պատրաստում,

- գ) զբոսաշրջության ոլորտի պատասխանատուների վերապատրաստում ,

- դ) պետության կողմից զբոսաշրջանային ծառայություն մատուցող կազմակեր-
պություններին աջակցություն:

5. ՀՀ Կոտայքի մարզի առողջապահական ծառայությունների որակի բարելավ-
ման նպատակով անհրաժեշտ է.

- կառավարության կողմից իրականացվող հանրային առողջապահության պե-
տական քաղաքականության մարզային միջոցառումների մշակում և իրականացում,

- վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելմանն ուղղված միջո-
ցառումների իրականացում,

- զարգացնել մարզի առողջապահության լաբորատոր համակարգը և այլն:

6. Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ներկայումս զբաղվածության
հաշվառման 1 հեկտար գյուղատնտեսական նշանակության հողատարածքի հաշվով 1.5

զբաղվածությունն ապահովող սկզբունքը չպետք է կիրառել ամբողջ հանապետության համար: Առաջարկում ենք, որ ճիշտ կլինի հիմք ընդունել հողի կադաստրային արժեքի 100 բալանոց համակարգը և գործակիցներով հաշվարկել գյուղատնտեսությունում բնակչության զբաղվածության մակարդակը: Միննույն ժամանակ առաջարկում ենք ոռոգելի հողատարածքների, ինչպես նաև բանջարաբուստանային մշակաբույսերի մշակության համար վերը նշված գործակիցների նկատմամբ կիրառել 1,5-2,0 աճի գործակից՝ ոռոգման աշխատանքների կատարման, մշակաբույսերի մշակման, բերքահավաքի և իրացման հետ կապված, քանի որ վերջիններս պահանջում են լրացուցիչ աշխատանքային ծախսումներ:

Նույն սկզբունքը առաջարկվում է կիրառել նաև անասնաբուծության մեջ՝ հիմնվելով անասունների խնամքի, պահվածքի (արոտներում թե գոմերում), մթերատվության և այլ հատկանիշների վրա:

7. Վերլուծելով ՀՀ-ում կենսաթոշակի չափի որոշման մեթոդիկան, պարզ է դառնել, որ վերջինիս հաշվարկման համար հիմք է ծառայում աշխատանքային ստաժը և դրան հավասարեցված գործունեությունը՝ առկա ուսուցումը, կանանց համար ծննդաբերությունը (մեկ երեխան 3 տարվա աշխատանքային ստաժ): Սակայն ամենամեծ բացթողումն այն է, որ հաշվի չի առնվում աշխատողի կողմից կենսաթոշակային ֆոնդին կատարած հատկացումների չափը, քանի որ որքան բարձր է աշխատավարձը, այնքան մեծ է հատկացված գումարները, ինչպես նաև աշխատանքի ռեժիմը, ծանրությունը, վայրը և այլ չափորոշիչներ: Ուստի, կախված աշխատանքի ծանրությունից, բարդությունից, վնասակարությունից և այլ չափանիշներից՝ կենսաթոշակի հաշվարկման համար անհրաժեշտ է կիրառել 2-3 գործակից, իսկ գյուղատնտեսության ոլորտի աշխատողների նկատմամբ, գործակիցներն անհրաժեշտ է կիրառել ՀՀ-ում գործող նվազագույն կենսաթոշակային շեմի նկատմամբ՝ այդ ոլորտում աշխատած տարիների համար, քանի որ այս ոլորտի աշխատողները համարվում են զբաղվածներ, սակայն թոշակային տարիքը լրանալիս՝ նրանց համար ներկայումս կենսաթոշակային ստաժ չի հաշվարկվում:

8. Համայնքների խոշորացման գործընթացի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հատկապես գյուղական համայնքների միավորումը վարչական մեթոդով չի կարող ընդունվել բոլորի կողմից դրականորեն և միշտ չէ, որ բխում է բնակչության շահերից: Պետք է խուսափել ծայրահեղություններից, վարչական մեթոդով միավորում-

ները հաճախ բերում են բացասական հետևանքների: Միավորվող համայնքների միջև դրսևորվում են անհամաձայնություններ կապված տեղաբնակների ավանդույթների, ջրային ռեսուրսների, արոտավայրերի, հողատարածքների, ենթակառուցվածքների օգտագործման հետ: Տնտեսավարման արդի ժամանակաշրջանում հատկապես բարձր լեռնային համայնքների համար, առավել ընդունելի է ոչ թե համայնքների խոշորացումը, այլ միջհամայնքային միավորումների ստեղծումը, որը կարող է դիտարկվել որպես խնդրի լուծման տարբերակ, ինչը կարող է անցումային դեր խաղալ համայնքային ծառայության մատուցման և լիազորությունների իրականացման ոլորտում:

9. Գործարար ծրագրերը պետք է դիտարկել որպես համայնքի, տարածաշրջանի և մարզի զարգացման ռազմավարության կարևոր բաղադրիչ: Դրանում իր արժանի տեղն է զբաղեցնում տնտեսության մասնավոր հատվածը, որի գործունեության համար անհրաժեշտ է իրականացնել հստակ քաղաքականություն, մշակել ծրագրեր, տրամադրել հասցեագրված աջակցություն, ընտրել մարտավարության կոնկրետ մեխանիզմներ: Գործարար ծրագիրը պետք է լինի համալիր, ավարտուն փաթեթ, համադրի սոցիալ-տնտեսական զարգացման բոլոր ծրագրերը՝ ներառելով համայնքի զարգացման համակարգը, մարզպետարանի, ՏԻՄ-երի և տնտեսավարող սուբյեկտների գործունեության չափանիշները, իրականացման փուլերը, եղանակներն ու մեթոդները:

10. Մարզի զարգացման ծրագիրն անհրաժեշտ է դիտարկել որպես համայնքների զարգացման ծրագրերի հանրագումար, որտեղ համայնքները հանդես են գալիս որպես շահառուներ, իսկ ՏԻՄ-երը և պետական կառավարման մարմինները՝ ծրագրային դրույթների իրականացնողներ: Այստեղ պետք է հստակեցվի պետական, տարածքային կառավարման մարմինների ու ՏԻՄ-երի լիազորությունների պատասխանատվությունը մարզի զարգացման ծրագրում: Համայնքային զարգացման ծրագիր մշակելուց առաջ, անհրաժեշտ է մշակել համայնքի հիմնախնդրի լուծման այլընտրանքային տարբերակներ՝ հիմքում դնելով որոշակի չափորոշիչներ, իհարկե առաջնահերթությունը տալով սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը, այնուհետև դրանք տնտեսապես հիմնավորել և հետո նոր համայնքային ծրագրում ներառելու համար ներդնել առավել արդյունավետ տարբերակը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

1. ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով), ՀՀ ՊՏ. 2005 (հատուկ թողարկում). 05.12.2005
2. «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենք, ՀՀ ՊՏ. 1998/26, 16.10.1998
3. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, ՀՀ ՊՏ. 2003/25. 02.02.2003
4. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, ՀՀ ՊՏ 2004/6 29.01.2004
5. «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք
6. ՀՀ ՊՏ 2004/6. 29.01.2004
7. Տեղական ինքնակառավարման մասին Եվրոպական Խարտիա, Ստրասբուրգ. 15.10.1985
8. ՀՀ կառավարության 2014թ. մարտի 27-ի N° 442-Ն որոշում
9. ՀՀ կառավարության 2011թ. նոյեմբերի 10-ի նիստի N° 44 արձանագրություն
10. ՀՀ կառավարության 2005թ. մայիսի 19-ի թիվ 633-Ն որոշում
11. ՀՀ Կոտայքի մարզի 2015-2018 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր, Հրազդան, 2014

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՓԱՍՏԱՂԹՆԵՐ

12. Առողջություն բոլորի համար տվյալների բազա: ԱՀՀ/Եվրոպա 2005
13. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2007թ.
14. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2014թ.
15. Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը վիճակագրական-վերլուծական զեկույց: Եր. 2008
16. Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը: Վիճակագրական-վերլուծական զեկույց. Եր. 2010

17. Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2007-2011, Եր. 2012
18. Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2008-2012, Եր. 2013
19. Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2009-2013, Եր. 2014
20. Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2010-2014, Եր. 2015
21. ՀՀ ԱՎԾ պարենային ապահովություն և աշխատունակություն. Եր. 2007թ.
22. Հայաստանի Հանրապետության զբոսաշրջության բնագավառի վերլուծություն 2010թ., ՀՀ էկոնոմիկայի նախարարություն. Եր. 2011թ.
23. ՀՀ ԿԳՆ Վիճակագրական տեղեկագիր, Հանրակրթությունը Հայաստանում, 2012-2013թթ. ուս. տարի Եր. 2014
24. ՀՀ Կոտայքի մարզը թվերով, Եր. 2014թ.

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

25. Ադոնց Մ. Միջտնտեսական կոոպերացիան և ագրոարդյունաբերական ինտեգրացիան. - Եր.-1987,
26. Աղասարյան Լ. Հովհաննիսյան Ա. Գյուղմթերքների արտադրության, վերամշակման և իրացման ոլորտներում առկա խնդիրները և դրանց լուծման ուղիները // Ֆինանսներ և էկոնոմիկա, № 12, 2010, էջ 47-50
27. Ասատրյան Պ., Հիմնական սննդամթերքների սպառման մակարդակը ՀՀ-ում: Գյուղէկոնոմիկայի ԳՀԻ գիտաժողովի նյութեր, 1998, էջ 17-19
28. Ավետիսյան Ս. Հայաստանի գյուղատնտեսություն. - Եր.: «Լիմուշ» հրատ., 2008.- 71 էջ
29. Ավետիսյան Ս. Հողի շուկայի ձևավորման և գյուղացիական տնտեսությունների օպտիմալացման սոցիալ-տնտեսական գործոնները // Ագրոգիտություն, 1998, № 2, էջ 61-65

30. Ավետիսյան Ս. Հայաստանի գյուղատնտեսությունը և ագրովերամշակումը: -Եր.: «Լիմուշ» հրատ., 2010, -238 էջ
31. Գաբրիելյան Մ. Հայաստանի Հանրապետության արդի գյուղացիությունը. - Եր.: «Գիտություն», ՀՀ ԳԱԱ, 2001.- էջ 80
32. Գասպարյան Ա. Մրցունակ արտադրանք արտաքին շուկաներում / "Հայաստանի Հանրապետություն" օրաթերթ, 16 մայիս 2015թ
33. Գևորգյան Մ., Մանասյան Հ. ՀՀ տնտեսական քաղաքականությունը և էկոնոմիկայի վրա դրա ազդեցության վերլուծությունը. - Եր. 1999, էջ 171
34. Գրիգորյան Կ. Գյուղատնտեսության էկոնոմիկայի (ագրարային տնտեսության) առարկան, նրա դասավանդման հիմնախնդիրները ներկա պայմաններում. - Եր.: ՀՊԱՀ հրատ. 2005
35. Գյուղատնտեսական հանրագիտարան, ՀՀ ԳԱԱ. - Եր. «Հայկական հանրագիտարան» հրատ. 2015, էջ 1096
36. Գոռթնի Զ. և ուրիշ. Տնտեսագիտություն, ԵՊՏԻ, (թարգմանություն). - Եր. 1999, 1152 էջ
37. Դավթյան Գ., Հովհաննիսյան Ա. Տարածաշրջանային անհավասարությունների խնդիրը և դրա մեղմացման դրույթները: Տնտեսության զարգացման և կառավարման հիմնախնդիրներ, գիտական աշխատանքների ժողովածու, գիրք 7. - Եր.: «ՕՐ-ԴԱՐ» հրատ., 2014, էջ 46-47
38. Դարբինյան Ա. Սարգսյան Լ. ՀՀ տարածքային միավորների զարգացման մակարդակների անհավասարաչափությունների մեղմացման հայեցակարգային մոտեցումներ: Տնտեսության զարգացման և կառավարման հիմնախնդիրներ: Գիրք 3. - Եր. «ՕՐ-ԴԱՐ». 2011, 211 էջ
39. Երոյան Մ.Պ. Հողային ռեսուրսների և դրանց օգտագործման արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները ՀՀ-ում: Եր.: ՀՀ գյուղակադեմիա, 2001, էջ 60
40. Զբոսաշրջության զարգացման համակարգ, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն. - Եր. 2008, էջ 56

41. Խուդավերդյան Ա., Հանրային ոլորտի կառավարման բարեփոխումները Հայաստանի Հանրապետությունում. - Եր. 2008, էջ 300
42. Կոտայք: ՀՀ Կոտայքի մարզի ձեռքբերումները 2007-2011թթ. Տնտեսական բարեփոխումների վերլուծ. տեղեկատվական կենտրոն, 2012, էջ 68
43. Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման հետազազարգացման և իշխանության ապակենտրոնացման ռազմավարական մոտեցումներ. - Եր, 2012, էջ 26
44. «Հայացք տնտեսությանը», ՀՀ կառավարության տնտեսական բարեփոխումների վերլուծական տեղեկատվական կենտրոնի տեղեկագիր, թիվ 11 (23), 2002, էջ 11-17
45. Համայնքային ծառայության հիմունքներ: (Ուսումնական ձեռնարկ, Է. Օրդյանի ընդ. խմբ.). - Եր.: «Օր-դար» հրատ. 2009, էջ 336
46. Համայնքային ծառայություն: Իրավական ակտերի ժողովածու. - Եր. 2007
47. Հարությունյան Հ.Կ. Հողային հարաբերությունների իրավական կարգավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում // Ագրոգիտություն, գիտական ամսագիր, № 3-4, 2014, էջ 114-118
48. Հարությունյան Ա., Եղիազարյան Կ. Ագրոգբոսաշրջության զարգացումը, որպես ՀՀ գյուղական բնակչության սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման ուղի: Տնտեսության զարգացման և կառավարման հիմնախնդիրներ: Գիտական աշխատանքների ժողովածու /Տնտեսագիտության և կառավարման ինստիտուտ/: - Եր.: «Օր-դար» հրատ. գիրք 7, 2014թ էջ 334
49. Հակոբյան Լ. Հայաստանի աշխատանքի շուկայի մակրոտնտեսական վերլուծություն // Ֆինանսներ և էկոնոմիկա, № 4-5, 2002, էջ 94-99
50. Հովհաննիսյան Ա. Անասնաբուծական մթերքների արտադրության զարգացումը՝ պարենային ապահովման կարևոր բաղադրիչ // Ֆինանսներ և էկոնոմիկա, ապրիլ 2008, էջ 94-96
51. Հովհաննիսյան Ա. Անասնաբուծական մթերքներ արտադրողների և վերամշակողների միջև փոխհարաբերությունները և կատարելագործման

- ուղիները. - Եր.: Տեղեկատվական տեխնոլոգիաներ և կառավարում, հունվար-փետրվար, 2009, էջ 228-235
52. Ղազարյան Է. Ն. Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման կատարելագործման հայեցակարգային ուղղությունը. - Եր.: Հայագիտակ, 2004, էջ 128
53. Ղազարյան Է.Ֆ. 100 հարց և պատասխան տեղական ինքնակառավարման մասին. - Եր. Հեղինակային հրատ. 2006, էջ 120
54. Ղազարյան Է.Ս. Հայաստանի Հանրապետության ագրարային տնտեսագիտության դերն ու տեղը շուկայական տնտեսության զարգացման գործում. - Եր.: Հայագիտակ, 2003, էջ 184
55. Ղուշյան Հ., Ավագյան Գ. Մակրոտնտեսական կարգավորում, հարցեր և պատասխաններ. - Եր. Հեղինակային հրատ. 2008, էջ 300
56. Մանասյան Մ. Գ. ՀՀ գյուղական համայնքների զարգացման մի քանի հարցեր // Ագրոգիտություն, գիտական ամսագիր, № 1-2, 2011, էջ 3-7
57. Մանասյան Վ. Փոքր գյուղական բնակավայրերի վերականգման հիմնահարցերը. -Եր.: Էկոնոմիկա, 1991, № 9-10, 37-41 էջ
58. Մանասյան Մ.Գ. ՀՀ տարաբնակեցման համակարգը. -Եր.: Պետ. համալսարանի հրատ., 2005
59. Մարկոսյան Ա., Գեղամյան Ն. Սոցիալական քաղաքականության պետական կարգավորման հարցերը Հայաստանի Հանրապետությունում. -Եր. Տիգրան Մեծ, 2006, էջ 396
60. Մովսիսիյան Վ. Ֆինանսական համահարթեցման մեխանիզմի զարգացումը Հայաստանում. – Եր.: Նոյան տապան, 2007, էջ 126
61. Մակրոտնտեսական կարգավորում, Հ. Ղուշյանի խմբ. - Եր.: Տնտեսագետ, 2002, էջ 480
62. Մանասերյան Ն. Ագրարային հարցը երեկ և այսօր. - Եր.: Գիտություն, էջ 265
63. Մասնակցային ժողովրդավարությունը տեղական ինքնակառավարման համակարգում, Ձեռնարկ. – Եր.: Աստղիկ, 2013, էջ 118

64. Մելքոնյան Ա. Ի՞նչ չափորոշիչներով են խոշորացվելու համայնքները:
"Հայաստանի Հանրապետություն" օրաթերթ, 25 նոյեմբեր, 2011, № 2017
65. Մենեջմենթ, երրորդ՝ լրացված, բարեփոխված հրատ. Յու.Մ. Սուվարյանի խմբ. -
Եր.: Տնտեսագետ, 2009, էջ 607
66. Մենեջմենթ, երկրորդ՝ լրացված բարեփոխված հրատարակչություն. Յու. Սուվարյանի խմբ. - Եր.: Տնտեսագետ, 2002, էջ 522
67. Թախմախչյան Բ., Մանուկյան Մ., Մկրտչյան Հ. Պարենային հիմնախնդիրները
և զարգացման ուղիները ՀՀ-ում: Գյուղատնտեսության էկոնոմիկայի ԳՀԻ, - Եր.
2002, էջ 128
68. Ռոբերդ Բ. Դենհարդ, Հանրային կազմակերպության տնտեսություններ, 4-րդ
հրատ. Թեմփի-Երևան, Անտարես, 2006, էջ 314
69. Սուվարյան Յու., Սուվարյան Ն. Քողարկված զբաղվածություն, թաքնված գոր-
ծազրկություն // Ֆինանսներ և էկոնոմիկա, № 2, - Եր., 2001. էջ 66-71
70. Սուվարյան Յու., Չոբանյան Մ., Համայնքների ֆինանսավորման
հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում // Բանբեր, ՀՊՏՀ, № 3,
2009, էջ 53-57
71. Տեղական ինքնակառավարման հիմունքներ, Է. Օրդյանի խմբ. Պետական
ծառայություն. - Եր. 2002, էջ 167
72. Տեղական ինքնակառավարման Հայաստանում (2012թ և 2013թ), գիրք 6, խմբ.
Դավիթ Թումանյանի. - Եր. 2015, էջ 392
73. Տեղական ինքնակառավարման հիմունքներ. կառավարչական հմտություններ.
Է. Օրդյանի ընդ. խմբ. - Եր.: Պետական ծառայություն, 2003, էջ 150
74. Տնտեսագիտական տեսություն Գ. Կիրակոսյանի և Ի. Խլիլայանի ընդ. խմբ. -
Եր.: Տնտեսագետ, 2009, էջ 729
75. Տերտերյան Վ., Դարբինյան Ա., Սարգսյան Լ. Գյուղական համայնքների
սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակների ամփոփ գնահատման
մեթոդաբանության շուրջ: Տնտեսության զարգացման և կառավարման
հիմնախնդիրներ (գիտական աշխատանքների ժողովածու) գիրք 4. - Եր. «ՕՐ-
ԴԱՐ» հրատ. 2012, էջ 256

76. Փարսադանյան Թ. Սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման կառավարման հիմնախնդիրները: Ատենախոսություն, Ը.00.02. – Եր. 2009, էջ 145
77. Քոչարյան Տ.Լ. Պետությունը և շուկան (նյութեր դասախոսությունների համար). - Եր.: ԵՃՊՇՀ. 2005, էջ 24
78. Օհանջանյան Ս. Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական կարգավորման խնդիրները Հայաստանում / Սերժ Օհանջանյան. -Եր.: Լիմուշ, 2010, էջ 208
79. Օրդյան Է. Ապակենտրոնացում: Հայեցակարգային հիմնադրույթներ. - Եր.: «Օրդար», 2007, էջ 66
80. Ֆահրադյան Հ., Ագրարային արմատական վերակառուցումները Հայաստանի Հանրապետությունում. անհարժեշտություն, արդյունքներ, հիմնախնդիրներ. - Եր.: Գիտություն, ՀՀ ԳԱԱ. 2003, էջ 212
81. Ֆրանկ Գուդևու. Քաղաքականություն և կառավարում, 1900, էջ 16-50
82. Демин А.А. Государственная служба: Учебное пособие. - М.: Зерцало-М. 2002, стр 482
83. Дикарева А.А. Мирская М.И. Социология труда. - М.: Высшая школа. Политиздат, стр. 328
84. Как провести социологическое исследование. Под ред. М. Горшкова, Ф. Шепенг. - М.: Политиздат, 1990, стр 141
85. Кейнс Дж. Общая теория занятости, процента у денег. - М. 1977
86. Коваленко Х.Я. Экономика сельского хозяйства. - М.: Колос 1999, стр 448
87. Ломакин В.К. Мировая Экономика, финансы. - М. 1998, стр 728
88. Международные экономические отношения. - М.: Финансы. 2005, стр 228
89. Советский энциклопедический словарь. - М.: Советская энциклопедия, 1985, стр 1600
90. Современный менеджмент. Теория и практика, под ред. А.Г. Комарова, Г.Г. Муфтиева. Киев-Харьков-Минск. 2004, стр 218
91. Старилов Ю.Х. Служебное право. Учебник. - М.: БЕК, 1996, стр 215
92. Немчинов А.А. Муниципальная служба. Справочное пособие. - М.: Дело и Сервис. 2002, стр 422

93. Ноздрачев А.Ф. Государственная служба: Учебник для подготовки государственных служащих, - М.: Статуш, 1999, стр 215
94. Организация управления общественным производством. Под ред. Г.Х. Попова, Г.А. Джавадова. - М.: Моск. Университет, 1979, стр. 217
95. Предпринимательства в конце XX века, под ред А.А. Динкина. - М.: Наука, 1992, стр. 188
96. Теория государства и права, Под ред. Марченко М.Н. - М.: Зерцало-М, 2001. стр. 482
97. Тейлор Ф.У. Принципы научного менеджмента. - М. Косталтинг. стр. 153
98. Управление агропромышленным комплексом. - М.: ИКЦ, Марц, 2003, стр 125
99. Федеральный закон Российской Федерации о муниципальной службе в российской федерации, 2 марта 2007 г. № 25-ФЗ, 8-я статья
100. Федкин А. Карьерный рост можно рассчитать (служба кадров), 2002, № 1, стр. 68-71
101. Ходжабекян В.Е. Возможные пути регулирования миграции населения Республики Армения. Проблемы теории и практики управления, 2000, №3, тг 27-33
102. Цедис Ю., Рейки Э., Угаров А. Управление агропромышленным комплексом. - М.: ИКЦ, Марц, 2003, стр. 416
103. Экономическая энциклопедия. М. 1999, стр. 1055
104. Armstrong, H., Taylor (2000) Regional Economics and Policy, 2000
105. G. Gorrelak and A. Kuklinski (eds), Dilemmas of Regional Policies in Eastern and Central Europe, Warsaw, University of Warsaw, 1999
106. Kalman, J., possible Structural Funds Absorption Problems: The political Economy With Application to the Hungarian Regional development. Budapest, 2001
107. Kickert, J.M., Klijn, E.H., Koppenjan J.F.M. (Eds) (1997) Managing Complex Networks: Strategies for the public Sector.
108. Lasuen J.R., On Growth. In Hanser N. M. (1972) Growth Center in regional Economic development.
109. "Local Government in Estonia", Tallinn, 1999, тг 27
110. "Local Government in Denmark" Kommunernes Landsforening. 1999, тг 10

111. Sukora L (2002) " Prague" in I. Berry and S. McCreal (eds) European. Cities, Planning Systems and Property Markets, London,
112. SorenHaggroth " Local Coverence the Case of Sweden" Lund, 2000, t₂ 12
113. Richardson H.W., 1999, Regional Economics: Location Theory, Urban Structura and Regional Chande London
114. Managing across levels of government: United Kingdom.OECD, 1997, t₂ 461-479
115. Managing across levels of government: France, OECD, 1997, t₂ 195-212
116. Managing across levels of government: Germani, OECD, 1997, t₂ 213-227
117. Public management profiles of Central and Eastern European conutries Bulgaria. OECD, SIGMA, 1999, t₂ 16-22
118. Public management profiles of Central and Eastern European conutriesHungary. OECD, SIGMA, 1999, t₂ 16-19
119. Public management profiles of Central and Eastern European conutriesSlovenia. OECD, SIGMA, 1999, t₂ 18-20
120. Public management profiles of Central and Eastern European conutriesCzech Republic. OECD, SIGMA, 1999, t₂ 15-19
121. <http://epp.eurostat>,
122. <http://minagro.am>
123. <http://armstat.am>

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀՀ Կոտայքի մարզի գյուղական համայնքների բնակչության թիվը առ 01.01**(մարդ)¹⁵⁵**

№	Համայնքների անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը			2015 թ. շեղումը	
		2013 թ.	2014 թ.	2015 թ.	2013 թ.-ից	2014 թ.-ից
1	2	3	4	5	6	7
1	Ալափարս	2332	2336	2343	+4	+7
2	Ակունք	2164	2194	2198	+30	+4
3	Աղավնաձոր	1245	1287	1298	+42	+11
4	Առինջ	5700	5901	5978	+201	+77
5	Արագյուղ	1139	1140	1140	+1	0
6	Արամուս	3682	3711	3674	+29	-37
7	Արգել	3339	3351	3157	+12	-194
8	Արզական	2800	2752	2811	-48	+59
9	Արզնի	2425	2467	2482	+42	+15
10	Արտավազ (Փյունիկ)	1016	1102	1028	+86	-74
11	Բալսահովիտ	3530	3535	3537	+5	+2
12	Բջնի	2890	2888	2894	-2	+6
13	Բուժական	1674	1748	1755	+74	+7
14	Գառնի	7740	7494	7400	-246	-94
15	Գեղադիր	730	738	740	+8	+2
16	Գեղաշեն	3986	3998	4204	+12	+206
17	Գեղարդ	370	379	368	+9	-11
18	Գետամեջ	792	786	787	-6	+1
19	Գետարգել	811	845	799	+34	-46
20	Գողթ	2025	2055	2058	+30	+3
21	Զառ	1357	1534	1481	+177	-53

¹⁵⁵ ՀՀ Կոտայքի մարզը թվերով 2013, 2014, 2015թթ.- էջ 17,18,19

Հավելված 1-ի շարունակությունը

1	2	3	4	5	6	7
22	Զովաշեն	168	170	171	+2	+1
23	Զովունի	5530	5641	5765	+111	+124
24	Զովք	1015	1023	1048	+8	+25
25	Զորավան	1486	1656	1665	+170	+9
26	Թեղենիք	687	583	587	-104	+4
27	Լեռնանիստ	2853	2864	2920	+11	+56
28	Կաթնաղբյուր	724	741	747	+17	+6
29	Կամարիս	2418	2422	2428	+4	+6
30	Կապուտան	1215	1275	1277	+60	+2
31	Կարենիս	852	859	853	+7	-6
32	Կոտայք	1952	2001	2044	+49	+43
33	Հանքավան	86	103	101	+17	-2
34	Հատիս	293	295	308	+2	+13
35	Հացավան	615	620	578	+5	-42
36	Ձորաղբյուր	2456	2553	2409	+97	-144
37	Մայակովսկի	2187	2140	2137	-47	-3
38	Մարմարիկ	860	862	755	+2	-107
39	Մեղրաձոր	2601	2622	2631	+21	+9
40	Մրգաշեն	2125	2187	2277	+62	+90
41	Նոր Արտամետ	1066	1207	1248	+141	+41
42	Նոր Գեղի	6009	6089	6131	+80	+42
43	Նոր Գյուղ	1557	1531	1548	-26	+17
44	Նոր Երզնկա	1804	1874	1870	+70	-4
45	Նուռնուս	602	632	634	+30	+2
46	Ողջաբերդ	1003	1019	1022	+16	+3
47	Պողոշյան	5206	5594	5212	+388	-382
48	Պտղնի	1624	1628	1602	+4	-26

Հավելված 1-ի շարունակությունը

1	2	3	4	5	6	7
49	Ջրաբեր	444	447	435	+3	-12
50	Ջրառատ	577	571	571	-6	0
51	Ջրվեժ	6611	6408	6165	-203	-243
52	Սալրալանջ	370	373	375	+3	+2
53	Սոլակ	2485	2483	2493	-2	+10
54	Սևաբերդ	292	286	255	-6	-31
55	Վերին Պտղնի	743	730	792	-13	+62
56	Քաղսի	2454	2481	2402	+27	-79
57	Քանաքեռական	3549	3720	3740	+171	+20
58	Քասախ	5727	5721	5778	-6	+57
59	Քարաշամբ	688	700	716	+12	+16
60	Ֆանտան	1041	1080	1025	+39	-55

ՀՀ Կոտայքի մարզի գազաֆիկացված գյուղական համայնքները 01.01.2014թ.

դրությամբ¹⁵⁶

№	Համայնքը	Կենտրոնացված գազամատակարարմանը միացված տնային տնտեսությունների թիվը
1	2	3
1	Ալափարս	510
2	Ակունք	400
3	Աղավնաձոր	190
4	Առինջ	1466
5	Արագյուղ	132
6	Արամուս	700
7	Արգել	688
8	Արզական	520
9	Արզնի	600
10	Արտավազ (Փյունիկ)	138
11	Բալասիովիտ	655
12	Բջնի	540
13	Բուժական	0
14	Գառնի	1432
15	Գեղադիր	150
16	Գեղաշեն	710
17	Գեղարդ	30
18	Գետամեջ	220
19	Գետարգել	167
20	Գողթ	312
21	Զառ	230
22	Զովաշեն	23

¹⁵⁶ ՀՀ Կոտայքի մարզի 2015-2018թթ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր, Հրազդան, էջ 139-141

Հավելված 2-ի շարունակությունը

1	2	3
23	Զովունի	961
24	Զովք	117
25	Զորավան	234
26	Թեղենիք	102
27	Լեռնանիստ	530
28	Կաթնաղբյուր	133
29	Կամարիս	420
30	Կապուտան	215
31	Կարենիս	150
32	Կոտայք	362
33	Հանքավան	0
34	Հատիս	78
35	Հացավան	152
36	Ձորաղբյուր	860
37	Մայակովսկի	421
38	Մարմարիկ	220
39	Մեղրաձոր	355
40	Մրգաշեն	272
41	Նոր Արտամետ	152
42	Նոր Գեղի	840
43	Նոր Գյուղ	268
44	Նոր Երզնկա	250
45	Նուռնուս	80
46	Ողջաբերդ	0
47	Պռոշյան	914
48	Պտղնի	453
49	Ջրաբեր	80

Հավելված 2-ի շարունակությունը

1	2	3
50	Ջրառատ	84
51	Ջրվեժ	1550
52	Սալրալանջ	0
53	Սոլակ	500
54	Սևաբերդ	0
55	Վերին Պտղնի	240
56	Քաղսի	440
57	Քանաքեռավան	650
58	Քասախ	1673
59	Քարաշամբ	128
60	Ֆանտան	218
Ընդամենը		23915